

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



- Ս. ՀԱԿՈՐՅԱՆ
- Ա. ՓՈՔՐԻԿՅԱՆ
- Շ. ՂԱԶԱՐՅԱՆ
- Ն. ՂԱԶԱՐՅԱՆ
- Ա. ԽԱԶԱՆՅԱՆ



$$x^2 =$$



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ



ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հակոբյան Ա., Փոքրիկյան Ա., Ղազարյան Շ.,
Ղազարյան Ն., Խաչանյան Ա.

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

5-11-րդ դասարաններ

ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 51(076.1)
ԳՄԴ 22.1g7
Մ 151

Հաստատված է
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
22.07.2022 թ. N1358-Ա/2 հրամանով

«Մաթեմատիկա» և «Հանրահաշիվ» առարկաներում
Մ 151 ինտեգրված ֆինանսական կրթության խնդիրների և
առաջադրանքների ժողովածու / Ս.Է. Հակոբյան,
Ա.Լ. Փոքրիկյան, Շ.Մ. Ղազարյան, Ն.Ա. Ղազարյան,
Ա.Ա. Խաչանյան.– Եր.: Տպարան ԷՅԷՄ, 2022.- 196 էջ:

«Մաթեմատիկա» և «Հանրահաշիվ» առարկաներում ինտեգրված ֆինանսական կրթության խնդիրների և առաջադրանքների ժողովածուն նախատեսված է «Մաթեմատիկա» և «Հանրահաշիվ» առարկաների ուսուցիչների համար: Այն մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 09.10.2018թ. N1359-Ա/2 հրամանով հաստատված ֆինանսական կրթության առարկայական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա:

Ժողովածուի բովանդակությունը գտնվում է պարբերական բարելավման փուլում, ուստի թարմացումները, ինչպես նաև ֆինանսական կրթության հետ կապված այլ նյութեր և տեղեկություններ կարող եք տեսնել www.abcfinance.am կայքի «Ես ուսուցիչ եմ» բաժնում: Ձեր խորհուրդները և դիտարկումները չափազանց կարևոր են: Խնդրում ենք Ձեր առաջարկներն ուղարկել հետևյալ էլ. հասցեին՝ consumerinfo@cba.am:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և ՀՀ կենտրոնական բանկը պատասխանատվություն չեն կրում ներկայացված տեղեկատվության թյուրլմբոնման համար: Ձեռնարկի բովանդակությունը հեղինակային աշխատանք է և կարող է չհամապատասխանել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշումներին:

ՀՏԴ 51(076.1)
ԳՄԴ 22.1g7

ISBN 978-9939-9182-5-9

© Ս.Է. Հակոբյան, Ա.Լ. Փոքրիկյան,
Շ.Մ. Ղազարյան, Ն.Ա. Ղազարյան,
Ա.Ա. Խաչանյան
© ՀՀ ԿԲ

Նախաբան

Կարևորելով ֆինանսական կրթությունը ՀՀ բնակչության շրջանում՝ որպես երկրի ֆինանսական կայունության, ֆինանսական ներգրավվածության և քաղաքացիների տնտեսական բարեկեցության կարևոր նախադրյալ, ՀՀ կենտրոնական բանկը 2007 թ-ից իրականացրել է ֆինանսական կրթության բազմաթիվ միջոցառումներ:

2014 թվականի նոյեմբերի 13-ին ՀՀ կառավարության N47 նիստի արձանագրային որոշմամբ հավանության արժանացավ ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը (ՖԿԱՌ), որում ներառված **«Ֆինանսական կրթությունը դպրոցում»** ծրագիրը սահմանված է որպես առաջնային կարևորություն ունեցող: «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի **նպատակը** ՀՀ կրթական համակարգին և համընդհանուր մոտեցումներին համահունչ արդյունավետ ֆինանսական կրթության ծրագրի իրականացման միջոցով սովորողների անձնական ֆինանսների կառավարման կարողությունների զարգացումն է:

2015-2016 թվականների ընթացքում ՀՀ ԿԲ սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնը, համագործակցելով ՀՀ կրթության և գիտության նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի, Երևանի քաղաքապետարանի, Խնայողական բանկերի միջազգային համագործակցության միավորման (ԽԲՄՀՍ) հայաստանյան ներկայացուցչության, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության հետ, մշակեց **«Սովորողների ֆինանսական կոմպետենցիաների մատրից» փաստաթուղթը**, որը սահմանում է սովորողների համար **անհրաժեշտ նվազագույն ֆինանսական գիտելիքը, հմտությունները, վերաբերմունքը և վարքագիծը՝** ըստ կրթական մակարդակների: Ֆինանսական կրթությունը ներառում է **7 թեմատիկ ոլորտներ**.

1. Ընդհանուր տնտեսական հասկացությունների տիրապետում,
2. Անձնական բյուջեի կառավարում,
3. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում,
4. Պարտքերի կառավարում,
5. Ֆինանսական ծառայությունների արդյունավետ ընտրություն,
6. Անձնական իրավունքների պաշտպանություն,
7. Ֆինանսական խարդախությունների և զեղծարարությունների կանխարգելում և պաշտպանություն:

Համատեղ քննարկումների արդյունքում ընտրվեցին նաև այն **4 առարկաները**, որոնց ծրագրում **ինտեգրվելու** է ֆինանսական կրթության բաղադրիչը՝

- «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ)
- «Մաթեմատիկա» (2-6-րդ դասարաններ)
- «Հասարակագիտություն» (8-11-րդ դասարաններ)
- «Հանրահաշիվ» (7-11-րդ դասարաններ)

2016 թվականի նոյեմբերին ձևավորվեց 11 փորձագետից բաղկացած **աշխատանքային խումբ**, որը սկսեց Ծրագրի շրջանակում բովանդակային նյութերի մշակումը: Աշխատանքային խմբում ներգրավվեցին **կրթության և ֆինանսական** ոլորտի առաջատար **փորձագետներ**, ինչպես նաև **ուսուցիչներ և հոգեբան**: Աշխատանքային խմբին էականորեն աջակցել է նաև ԽԲՄՀՄ հայաստանյան ներկայացուցչության կողմից հրավիրված կրթության ոլորտի **միջազգային փորձագետ** Սելիա Ալլաբին (Մեծ Բրիտանիա):

Ծրագրի լիակատար իրականացման նպատակով աշխատանքային խումբը յուրաքանչյուր առարկայի համար մշակվել է հետևյալ փաստաթղթերը՝

1. Առարկայական չափորոշիչ և ծրագիր
2. Ուսուցիչների վերապատրաստման մոդուլ և ծրագիր
3. Ուսուցիչների մեթոդական ձեռնարկ

Հիմք ընդունելով առարկայական չափորոշիչները և ծրագրերը՝ ուսուցիչների վերապատրաստման մոդուլներով 2017 թվականին **վերապատրաստվեցին 14 դպրոցների 46 ուսուցիչներ**, որոնք ՀՀ կրթության և գիտության նախարարի 31.08.2017 N995-Ա/2 հրամանով 2017-2018 ուսումնական տարվա ընթացքում փորձարկել են ծրագիրը՝ ֆինանսական կրթության բովանդակությունը առարկաներում ինտեգրելու միջոցով: 2018-2021 թվականների ընթացքում 4 առարկաների մասով վերապատրաստվել են 1399 դպրոցների 9560 ուսուցիչներ: Փորձարկումն ու վերապատրաստումներն ուղեկցվել են պարբերական մշտադիտարկմամբ, որի արդյունքների հիման վրա աշխատանքային խումբը փաստաթղթերում կատարել է լրամշակումներ: Ծրագրի ներդրումը դրական են գնահատել ինչպես տնօրենները և ուսուցիչները, այնպես էլ աշակերտներն ու ծնողները: Ծրագրի արդյունավետությունը գնահատվել է նաև անկախ փորձագիտական խմբի և կազմակերպության կողմից հատուկ ֆոկուս խմբերի կազմակերպման, քանակական հետազոտությունների միջոցով:

Ուղերձ ընթերցողին

Սիրելի՛ գործընկեր

«Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի հիմքում դրված են **10 սկզբունքներ**, որոնց կիրառումն ավելի արդյունավետ և կառուցողական կդարձնի Ձեր աշխատանքը: Խնդրում ենք վերաբերվել դրանց որպես պատվիրանների և պահպանել այդ արժեքները ծրագրի իրականացման ընթացքում:

1. **Ֆինանսական առողջություն**

Ֆինանսական կրթությունը որպես կյանքի հմտություն

Առօրյայում մարդիկ, անկախ տարիքից, առնչվում են փողի հետ: Ուստի կարևոր է ձևավորել անհրաժեշտ գիտելիք, հմտություններ, վերաբերմունք և վարքագիծ, որոնք կնպաստեն անձի գիտակցված, արդյունավետ և պատասխանատու ֆինանսական որոշումների կայացմանը: Ֆինանսական կրթությունը չունի մասնագիտական բնույթ. կապված է կյանքի հմտությունների հետ, ինչպես օրինակ՝ լողալը կամ համակարգչից օգտվելը:

2. **Փողը պաշտամունք չէ**

Փողի՛ որպես գործիքի ընկալումը

Իրական կյանքում հաճախ են լինում իրավիճակներ, երբ փողը ֆետիշացվում է և ընկալվում որպես նպատակ: Ծրագրի ընթացքում կարևոր է բացառել նման դրսևորումները: Սովորողների մեջ անհրաժեշտ է ձևավորել վերաբերմունք, որ փողը գործիք է նպատակներին հասնելու և անկանխատեսելի դեպքերին պատրաստ լինելու համար: Առանձնահատուկ կարևորություն ունի փողը բարիք գործելու նպատակով կիրառելու գիտակցության ձևավորումը: Երեխաները պետք է համոզվունք ունենան, որ ոչ թե փողն է ինքնին արժեք, այլ կարևոր է դրա՝ որոշակի նպատակներով գիտակցաբար կիրառումը՝ ի նպաստ անձի, ընտանիքի, հասարակության:

3. **Պատասխանատու որոշումներ**

Չկան բացարձակ ճշմարտություններ

Անձնական ֆինանսների կառավարումն ունի սուբյեկտիվ բնույթ՝ կախված անձից և իրավիճակից: Ֆինանսական կրթության ինտեգրման ընթացքում անհրաժեշտ է քննարկել իրավիճակին համապատասխան հնարավոր լուծումները, այլ ոչ թե տրամադրել պատրաստի արդյունքներ, պետք է սովորողներին թույլ տալ ինքնուրույն զարգացնել որոշումներ կայացնելու կարողությունը, այլ ոչ թե ներկայացնել որևէ կոնկրետ պատասխան: Այս մոտեցումը կօգնի սովորողներին հետագայում գիտակցված, արդյունավետ և պատասխանատու որոշումներ կայացնելու, ինչպես նաև կրելու դրանց պատասխանատվությունը:

4. **Ակտիվ ուսուցում**

Ուսուցման կապը իրական կյանքի հետ

Ֆինանսական կրթության իրականացման ընթացքում ցանկալի է կիրառել ուսուցման աշակերտակենտրոն մոտեցում՝ համադրելով ակտիվ ուսուցման մեթոդները.

✓ **Խաղերի և խմբային աշխատանքների** կիրառումը կխթանի սովորողի ինքնադրսևորումը, ինքնակազմակերպումը, իրավիճակին համապատասխան կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու ունակությունը:

✓ **Նախագծային առաջադրանքները** կնպաստեն անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու, դիտումներ և վերլուծություն կատարելու, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու, հետազոտության արդյունքները ներկայացնելու կարողությունների զարգացմանը:

✓ **Էքսկուրսիաներն ու այցելությունները** ֆինանսական կազմակերպություններ կարևոր նշանակություն ունեն դրանց ներքին աշխատանքին ծանոթանալու և որպես սպառող ինքնավստահություն ձեռք բերելու հարցում:

5. Ազդեցության մասշտաբի էֆեկտ

Ուսուցիչից՝ սովորողին, սովորողից՝ ընտանիքին

Ֆինանսական կրթությունը դպրոցում հնարավորություն է տալիս ոչ միայն ձևավորելու անհրաժեշտ գիտելիք, հմտություններ, վերաբերմունք և վարքագիծ սովորողների մեջ, այլև այդ գործընթացին ակտիվորեն ներգրավելու ուսուցիչներին ու սովորողներին ծնողներին: Սովորող, ուսուցիչ և ծնող արդյունավետ համագործակցության շնորհիվ հնարավոր կլինի խթանել ֆինանսական ունակությունների զարգացումը հասարակության բոլոր շերտերում:

6. Զուգահեռ ինտեգրում

Ֆինանսական կրթությունը ինքնին առարկա չէ

Հաշվի առնելով սովորողների առարկայական ծանրաբեռնվածությունը և միջազգային փորձը՝ ֆինանսական կրթությունը ներդրվել է հանրակրթական դպրոց ինտեգրման եղանակով: Կարևորվում է ֆինանսական կրթության ինտեգրումը առարկայական թեմաներում այնպես, որ դասերի ընթացքում հավասարապես շեշտադրվեն և՛ առարկայական, և՛ ֆինանսական կրթական նպատակները:

7. Համակարգային մոտեցում

«Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Հասարակագիտություն»

Արդյունավետ ինտեգրման տեսանկյունից կարևոր է ֆինանսական կրթության համակարգային մոտեցումը՝ ըստ կրթական մակարդակների: Ընտրված 4 առարկաներն ունեն փոխլրացնող բնույթ և ապահովում են ֆինանսական կրթության շարունակականությունը: Զուգահեռաբար երկու ուսումնական առարկաների առկայությունը գրեթե բոլոր դասարաններում ապահովում է գիտելիքի և հմտությունների սիներգիկ զարգացում: Բացի այդ՝ կարևորվում է նաև

տվյալ ուսումնական առարկաների ուսուցիչների սերտ համագործակցությունը ֆինանսական թեմաների ուսումնասիրման ժամանակ:

8. Նվազագույն կոմպետենցիաներ

Ֆինանսները դինամիկայի մեջ

Ներկայումս համընդգրկուն և ազգային զարգացումները էապես ազդում են նաև ֆինանսական աշխարհի վրա: Չնայած անձնական ֆինանսները կառավարելու հիմնարար սկզբունքներն անփոփոխ են՝ ի հայտ են գալիս ֆինանսական նոր ծառայություններ, գործիքներ և իրավիճակներ: Այս տեսանկյունից ֆինանսական կրթությունը դպրոցում շեշտադրում է բազային նվազագույն անհրաժեշտ կարողությունները, որոնք կօգնեն սովորողներին հետագայում արդյունավետ կողմնորոշվելու դինամիկ զարգացող ֆինանսական աշխարհում:

9. Շարունակականություն

Տարրական, միջին և ավագ դպրոցներ՝ 2-11-րդ դասարաններ

Ֆինանսական կրթությունը շարունակական է: Սկսած տարրական դպրոցից (2-րդ դասարան)՝ պարզից բարդին անցնելու սկզբունքով դա համակարգված շարունակվում է մինչև ավագ դպրոց (մինչև 11-րդ դասարան), ընդ որում՝ բոլոր հոսքերում և ենթահոսքերում: Շարունակականության ապահովումը նպաստում է անձի զարգացման վաղ տարիքից ֆինանսներ կառավարելու հմտությունների ձևավորմանը, որոնք զարգանալու են նրա ողջ կյանքի ընթացքում: Կարևոր է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ուսուցիչների կողմից ուսումնական նյութի հարմարեցումը նրանց հնարավորություններին:

10. Աստիճանական աճ

Պարզից բարդին անցում

Ֆինանսական կրթությունը նպատակահարմար է իրականացնել տարրական կարողություններից աստիճանաբար բարդին անցնելու սկզբունքով՝ շեշտադրելով գործնական գիտելիքը: Ծրագրի ներդրման սկզբնական շրջանում բարձր դասարաններում բովանդակության յուրացման տեսանկյունից դժվարություններ կառաջանան ավելի ցածր դասարաններում նախատեսված կարողությունների բացթողման պատճառով: Ուստի կարևորվում է ուսուցչի դերը սովորողներին ընթացիկ աջակցություն ցուցաբերելու և հնարավորության դեպքում ցածր դասարանների նյութը ուսումնասիրելու տեսանկյունից: Միաժամանակ, պետք է խուսափել տվյալ տարիքի երեխային ավելի բարձր դասարանների համար նախատեսված տեղեկատվություն հաղորդելու գայթակղությունից:

Ժողովածուի բովանդակություն

Նախաբան	3
Ուղերձ ընթերցողին	5
Ժողովածուի բովանդակություն	8
Գլուխ 1. Ֆինանսական իրադրություններին վերաբերող մաթեմատիկական խնդիրներ	12
1.1. Խնդիրներ 5-6-րդ դասարանների համար	12
1.2. Խնդիրներ 7-9-րդ դասարանների համար	27
1.3. Խնդիրներ 10-11-րդ դասարանների համար	46
1.4. Լրացուցիչ խնդիրներ տարբեր դասարանների համար	74
Գլուխ 2. Ֆինանսական կոմպետենցիաների զարգացման և ստուգման առաջադրանքներ	83
2.1. Քննարկումների, գործնական և հետազոտական աշխատանքների առաջադրանքներ	83
2.2. Ֆինանսական կոմպետենցիաների ստուգման հարցեր	140
Գլուխ 3. Օժանդակող նյութեր	169
3.1. Չափորոշչային պահանջներ	169
3.2 Ֆինանսական տերմինների համառոտ բառարան	172
3.3. Ուսումնամեթոդական լրացուցիչ գրականություն և տեղեկատվության աղբյուրներ	186
Պատասխաններ և ցուցումներ	188

Ներածություն

Խնդիրների և առաջադրանքների սույն ժողովածուի նպատակն է նպաստել միմյանց հետ սերտորեն կապված և իրար փոխլրացնող կրթական երկու հիմնախնդիրների լուծմանը: Հիմնախնդիրներից մեկը վերաբերում է ներկայի արագընթաց փոփոխվող դարաշրջանում այնպիսի քաղաքացու ձևավորմանը, որը, որպես կյանքի հմտություն, կունենա բավարար կրթվածություն՝ իր անձնական ֆինանսները արդյունավետ կառավարելու համար: Սակայն պարզվում է, որ տարբեր իրադրություններում կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկացվածություն ունենալու, իր ֆինանսների վերաբերյալ արդյունավետ որոշումներ կայացնելու և ճիշտ գործողություններ ձեռնարկելու համար պահանջվում են մաթեմատիկական մոտեցումներ՝ հիմնավոր հաշվարկներ ու վերլուծություններ, իսկ հաճախ նաև հնարավորությունների ու ռիսկերի գնահատում: Սա նշանակում է, որ վերոհիշյալ հիմնախնդրի լուծմանը ծառայող ֆինանսական կրթության իրականացումը անմիջական կախվածություն ունի մաթեմատիկական կրթությունից:

Մյուս հիմնախնդիրը վերաբերում է բուն մաթեմատիկական կրթությանը, որի համար խիստ արդիական է իրական կյանքի հետ դրա բովանդակության կապի ուժեղացումը, կիրառական նշանակության բացահայտումը և դրանով իսկ՝ սովորողների՝ մաթեմատիկայի նկատմամբ գիտակցված հետաքրքրասիրության բարձրացումը: Հատկանշական է, որ, ինչպես ցույց են տալիս վերջին տարիների հետազոտություններն ու փորձարկումները, այդ հիմնախնդրի լուծման համար լավագույն հնարավորություններ են ստեղծվում, երբ ֆինանսական իրադրություններին վերաբերող հարցերը ներառվում են մաթեմատիկական կրթության բովանդակության մեջ:

Մատնանշված այս երկու հիմնախնդիրների կարևորության գիտակցումն ընկած է հանրակրթական դպրոցի մաթեմատիկայի և հանրահաշվի դասընթացներում ֆինանսական կրթության ինտեգրման ծրագրի հիմքում, ինչին ծառայում է նաև սույն ժողովածուն: Անշուշտ, ֆինանսական կրթության ոչ բոլոր հարցերն են, որ ուղղակիորեն են առնչվում մաթեմատիկայի դասընթացի բովանդակությանը: Ուստի՝ ինչպես առարկայական չափորոշչում և ծրագրում, այնպես էլ սույն ժողովածուի մեջ, տեղ են գտել այնպիսի խնդիրներ և առաջադրանքներ, որոնք անմիջական կապ ունեն մաթեմատիկայի դասընթացի այս կամ այն թեմայի հետ:

Ժողովածուի 1-ին գլխում հիմնականում տեքստային խնդիրներ են, որոնցում ներկայացված են ֆինանսներին վերաբերող տարբեր իրադրություններ: Խնդիրները դասակարգված են ըստ կրթական աստիճանների, ըստ դասարանների, ինչպես նաև ըստ ֆինանսական թեմաների (դասարանը և ֆինանսական թեման նշված են յուրաքանչյուր խնդրի համարից հետո): Որոշ խնդիրներ (ընդգրկված են 1.4 կետում) առանձնահատուկ են նրանով, որ դրանք կարող են օգտագործել տարիքային տարբեր խմբերի սովորողներ:

Ի տարբերություն ներկայումս բավականին տարածում գտած մոտեցման՝ ժողովածուի մեջ ընդգրկված խնդիրների մի զգալի մասը տեքստի ազատ շարադրանքով է: Այսինքն՝ այդ խնդիրները ոչ թե ներկայացված են սխեմատիկ, զտված և «չոր», այլ առօրեական իրադրության համեմատաբար ամբողջական և ընդարձակ նկարագրությունների միջոցով: Կրթական մշակույթի պատմության մեջ այդ մոտեցումը որդեգրվել է մեծ Շիրակացու կողմից, ով, կարևորելով մաթեմատիկական խնդրի ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը, նախընտրում էր խնդրի շարադրանքն ուղեկցել ընդարձակ և պատկերավոր նկարագրություններով: Ավելացնենք նաև, որ այդ ոճով շարադրված խնդիրները լուծելու համար պահանջվում են ընթերցելու ուշադրություն, մտքի սթափություն, տեղեկատվության ամբողջական ընկալում և իրադրության բազմակողմանի վերլուծություն: Իսկ դրանք ևս ողջ կյանքի ընթացքում անհրաժեշտ, համապիտանի կարողություններ են, որոնք կարիք ունեն շարունակական զարգացման:

Ժողովածուի 2-րդ գլխում երկու նպատակի ծառայող առաջադրանքներ են: Առաջին խումբ առաջադրանքները (2.1 կետ) նախատեսված են խմբային քննարկումների, գործնական, հետազոտական, այդ թվում նաև նախագծային աշխատանքների իրականացման համար: Դրանց շնորհիվ հնարավորություն է ստեղծվում ուսումնառության գործընթացը դարձնելու ակտիվ՝ ուղղված սովորողների ֆինանսական կոմպետենցիաների զարգացմանը: Ընդ որում՝ շատ առաջադրանքներ ենթադրում են ուսուցման ընթացքում չսահմանափակվել դասասենյակի և դասաժամի շրջանակներում: Այլ խոսքով՝ այդպիսի առաջադրանքների միջոցով իրական կյանքի հետ ուսուցման կապն ամրապնդվում է ոչ միայն ուսումնական նյութի բովանդակությամբ, այլև ուսուցման գործընթացի իրականացման ձևով: Արդյունքում՝ ուսուցումը տեսական և մտահայեցողական մակարդակից փոխադրվում է գործնական դաշտ, որտեղ, ի թիվս բազմաթիվ համապիտանի կարողությունների, սովորողը ձեռք է բերում նաև որոշակի փորձառություն:

Գլխի երկրորդ խումբ առաջադրանքները (2.2 կետ) նախատեսված են ուսումնառության գործընթացի արդյունքների ստուգման և գնահատման համար: Խոսքը վերաբերում է մաթեմատիկայի դասընթացում ինտեգրված ֆինանսական կրթության բաղադրիչի գծով սովորողների բնութագրական և հետազոտական գնահատմանը: Հիշեցնենք, որ այդ գնահատականը մաթեմատիկայի ամփոփիչ՝ թվանշանային գնահատման սանդղակում դեռևս չի ներառվում: Դրա նպատակն է չափելի դարձնել ինտեգրված ուսուցման արդյունավետությունը՝ բացահայտելու համար, թե ինչպես են իրականացվել «Մաթեմատիկա» և «Հանրահաշիվ» առարկաներում ինտեգրված ֆինանսական կրթության չափորոշչային պահանջները: Ի դեպ, այդ խումբ առաջադրանքները հաջողությամբ կարող են ծառայել նաև ինքնաստուգման միջոցով սովորողի պատրաստվածության մակարդակը պարզելու նպատակին:

Ժողովածուի 3-րդ գլխում ուսումնաօժանդակ նյութեր են, որոնք օգտակար կլինեն ինչպես ժողովածուի մեջ ընդգրկված խնդիրների լուծման և

առաջադրանքների կատարման, այնպես էլ առհասարակ ֆինանսական կրթման ընթացքում:

Ժողովածուի վերջում տրված են խնդիրների ու առաջադրանքների պատասխանները և որոշ ցուցումներ համեմատաբար դժվար խնդիրների վերաբերյալ:

Ժողովածուն հասցեագրվում է հանրակրթական դպրոցի աշակերտներին, մաթեմատիկայի ուսուցիչներին, ինչպես նաև մաթեմատիկական և ֆինանսական կրթության նկատմամբ հետաքրքրություն ունեցող ընթերցողներին:

Գլուխ 1. Ֆինանսական իրադրություններին վերաբերող մաթեմատիկական խնդիրներ

1.1. Խնդիրներ 5-6-րդ դասարանների համար

- 1 **(5-րդ, դրամ)** Նարեն ունի 6 ՀՀ թղթադրամ: Դրանց վրա պատկերված են Սևակի, Պետրոսյանի, Սարոյանի, Կոմիտասի և Այվազովսկու դիմանկարները: Առնվազն քանի՞ դրամ ունի Նարեն: Նրա ունեցած գումարը առավելագույնը որքա՞ն կարող է լինել:
- 2 **(5-րդ, դրամ)** Արամի մոտ կա 4 թղթադրամ, իսկ Կամոյի մոտ՝ 2 թղթադրամ, ընդ որում՝ նրանց ունեցած թղթադրամներն անվանական արժեքներով հավասար են: Որքա՞ն գումար կա նրանց մոտ միասին, եթե հայտնի է, որ այդ գումարը՝ ա) 10 000 դրամից քիչ է, բ) 15 000 դրամը չի գերազանցում:
- 3 **(5-րդ, դրամ)** Արամի մոտ կա 3 թղթադրամ, իսկ Կամոյի մոտ՝ 4 թղթադրամ: Որքա՞ն գումար կա նրանցից յուրաքանչյուրի մոտ, եթե հայտնի է, որ երկուսի ունեցած բոլոր թղթադրամների անվանական արժեքների գումարը 10 000 դրամ է: Դիտարկել բոլոր հնարավոր դեպքերը:
- 4 **(5-րդ, դրամ)** Աննային պապիկը ուղարկել էր խանութ՝ իրենց սիրած շոկոլադից գնելու և տվել էր 6 մետաղադրամ, որոնց անվանական արժեքը 800 դրամ էր: Ճանապարհին վազելիս Աննան կորցրել էր 2 մետաղադրամ և չէր նկատել: Խանութում պարզվեց, որ գումարից 300 դրամ պակասում է: Ի՞նչ մետաղադրամներ էր տվել պապիկը Աննային: Դիտարկել բոլոր հնարավոր դեպքերը:
- 5 **(5-րդ, դրամ, գնումներ)** Անին և Աննան բակում խաղալիս հոգնեցին և որոշեցին հանգստանալ՝ պաղպաղակ ուտել և հյութ խմել: Անիի մոտ կար 500 դրամանոց մետաղադրամ, իսկ Աննայի մոտ՝ 1 000 դրամանոց թղթադրամ: Նրանք 1 500 դրամով գնացին խանութ, որտեղից գնեցին 2 հատ միևնույն պաղպաղակից և 2 հատ միևնույն հյութից, դրանց ընդհանուր արժեքը կազմեց 760 դրամ:
ա) Գնումներից հետո աղջիկները իրենց մոտ մնացած գումարը ինչպե՞ս արդարացի բաժանեն:
բ) Երբ վաճառողուհին վերադարձրեց մանրը, աղջիկները տեսան, որ այդ մետաղադրամներով հնարավոր չէ ճիշտ բաժանել իրենց մոտ մնացած գումարը: Ուստի վաճառողուհուն խնդրեցին, որ մետաղադրամներից մեկը փոխարինի մանրադրամներով: Քանի՞ դրամանոց էր փոխարինվող այդ մետաղադրամը:

- 6 **(5-րդ, դրամ, գնումներ)** Նարեն խանութից գնեց 500 գ կոնֆետ, որի 1 կգ-ն արժե 3 200 դրամ, մեկ հաց՝ 170 դրամ արժողությամբ, 10 ձու՝ հատը 70 դրամ արժողությամբ և 200 գ սուրճ, որի 1 կգ-ն արժե 3 300 դրամ: Նա վաճառողուհուն տվեց 5 000 դրամ՝ 1-ական 2 000 և 3 000 դրամանոց թղթադրամներով: Նարեն հաշվեց, որ վաճառողուհին իրեն վերադարձնելու է 1 950 դրամ: Գտեք սխալները և ուղղեք:
- 7 **(5-րդ, գնումներ)** Նարեն գրախանութում 1 000 դրամ արժողությամբ գիրք գնելիս վճարեց 15 մետաղադրամ՝ մի մասը 50 դրամանոց, մյուս մասը՝ 100 դրամանոց: Որոշել դրանց քանակները:
- 8 **(5-րդ, գնումներ)** Գոհար մայրիկի 47 000 դրամ կենսաթոշակը վճարելիս փոստատարը նրան տվեց 16 թղթադրամ՝ 2 000-անոցներ և 5 000-անոցներ: Յուրաքանչյուր թղթադրամից քանի՞ հատ էր տվել:
- 9 **(5-րդ, գնումներ)** Ալենը և Դանիելը միավորեցին իրենց ունեցած 600 դրամ և 400 դրամ գումարները և կատարեցին համատեղ գնումներ: Գնեցին 150 դրամ արժողությամբ 1-ական հյութ, 100 դրամ արժողությամբ 1-ական պաղպաղակ, իսկ մնացած գումարով գնեցին կոնֆետ: Երբ բացեցին վաճառողի կշռած կոնֆետի տոպրակը, տեսան, որ դրանում կա 10 կոնֆետ: Քանի որ նրանք մտերիմ ընկերներ էին, այդ կոնֆետները բաժանեցին հավասարաչափ՝ յուրաքանչյուրին 5-ական: Իսկ ինչպե՞ս բաժանեին այդ կոնֆետները, որ համապատասխանեին նրանց ներդրած գումարներին:
- 10 **(5-րդ, գնումներ)** Անին, Արփին և Նարեն որոշեցին գնել 1 կիլոգրամ շոկոլադե կոնֆետներ՝ 2 600 դրամ արժողությամբ: Անին ուներ 1 300 դրամ, Արփին և Նարեն՝ 650-ական դրամ: Նրանք միացրին իրենց գումարները և գնեցին 1 կգ կոնֆետ, որը 64 հատ էր: Քանի՞ կոնֆետ կհասնի յուրաքանչյուրին, եթե բաժանումը կատարվի ըստ ներդրված գումարի:
- 11 **(5-րդ, գնումներ)** Գագիկն ու քույրը հայրիկի հետ իրենց ավտոմեքենայով Գյումրիից, անցնելով 125 կմ, հասան Երևանի կենդանաբանական այգի: Մի քանի ժամ այնտեղ անցկացնելուց հետո նրանք վերադարձան տուն՝ Գյումրի: Այդ երթևեկության ժամանակ որքա՞ն կազմեց ավտոմեքենայի բենզինի ծախսը, եթե հայտնի է, որ ավտոմեքենան յուրաքանչյուր 100 կմ-ի համար միջին հաշվով ծախսում է 8 լ բենզին, իսկ բենզինի լիտրն արժե 450 դրամ:
- 12 **(5-րդ, գնումներ)** Խաղալիքների տոնավաճառում 2 շնիկ խաղալիքներին և թուփակին կարելի է փոխանակել 4 կատու խաղալիքների հետ, մեկ կատուն՝ 5 ձկնիկի հետ, իսկ մեկ շնիկը՝ 2 թուփակի հետ: Քանի՞ ձուկ պետք է տալ մեկ շնիկ ունենալու համար:
- 13 **(5-րդ, գնումներ)** Տիկին Նունեն և տիկին Սաթենիկը իրենց գյուղի կրպակից հաճախ գնումներ են կատարում ապրանքափոխանակման միջոցով: Օրինակ՝ 1 կգ շաքարավազի դիմաց տիկին Նունեն խանութին տալիս է 6 ձու, իսկ տիկին Սաթենիկը 2 կգ շաքարավազի դիմաց տալիս է

- 3 լ կաթ: Տիկին Նունեն կաթնամթերքը գնում է տիկին Սաթենիկից: Որքա՞ն ձու պետք է տա տիկին Նունեն իր համազյուղացուն, որպեսզի գնի 2 լ կաթ:
- 14 (5-րդ, գնումներ)** Երեք համադասարանցիներ մանկական սրճարանում պատվիրել էին մեկ պիցցա՝ 6 հավասարաչափ կտորներով և երեք հատ միևնույն հյութից: Նրանցից մեկը կերավ մեկ կտոր պիցցա, մյուսը՝ երկու կտոր, իսկ երրորդը՝ երկու կտորը կերավ, իսկ մյուս կտորը որոշեց տանել իր փոքր եղբորը, քանի որ սեղանակիցները հրաժարվել էին այդ կտորը ուտել: Ըստ իրենց օգտագործածի չափի՝ որքա՞ն գումար պետք է վճարի համադասարանցիներից յուրաքանչյուրը, եթե պիցցան արժե 2 400 դրամ, հյութը՝ 300 դրամ, իսկ սպասարկման վճարը՝ յուրաքանչյուրի համար 100 դրամ:
- 15 (5-րդ, գնումներ)** Բակում խաղալիս գնդակը ծակվեց, և հինգ ընկերները ստիպված էին նոր գնդակ գնել: Նրանցից մեկի մոտ կար 300 դրամ, մյուսի մոտ՝ 400 դրամ, երկուսի մոտ՝ 200–ական դրամ, իսկ հինգերորդի մոտ՝ 500 դրամ: Սակայն բակի մոտակայքում գտնվող խանութում գնդակն արժեք 2 500 դրամ: Ընկերներից յուրաքանչյուրը որքա՞ն գումար պետք է ավելացնի, որպեսզի գնդակ գնելու համար հավասարաչափ ներդրում ունենան:
- 16 (5-րդ, գնումներ, խնայողություն)** Անին իր ծննդյան օրվա առիթով ցանկացավ դասընկերների համար թխվածքաբլիթ գնել: Խանութում առանձին 1 թխվածքաբլիթն արժե 150 դրամ, իսկ նույնպիսի 8 թխվածքաբլիթ պարունակող տուփը՝ 1 000 դրամ: Որպեսզի յուրաքանչյուր դասընկերոջը 1 թխվածքաբլիթ հասնի, արդյունավետ գնում կատարելու դեպքում, որքա՞ն գումար է անհրաժեշտ Անիին, եթե դասընկերների (ներառյալ նաև իրեն) թիվը՝ ա) 18 է, բ) 23 է:
- 17 (5-րդ, խնայողություն)** Նարեկը տրանսպորտով դպրոց գնալու և վերադառնալու համար ծնողներից օրական (բացի շաբաթ և կիրակի օրերից) ստանում էր 200 դրամ: Նա կարող էր երթևեկել ինչպես ավտոբուսով, այնպես էլ տրոլեյբուսով: Ավտոբուսի ուղևորավարձը 100 դրամ է, տրոլեյբուսինը՝ 50 դրամ: Փետրվար ամսի 4 շաբաթների ընթացքում Նարեկը 24 անգամ երթևեկեց տրոլեյբուսով, 3 անգամ տուն եկավ դասընկերոջ հայրիկի մեքենայով, իսկ մնացած երթևեկությունները կատարեց ավտոբուսով: Այդ ամսում նա որքա՞ն գումար խնայեց ծնողների կողմից իրեն հատկացված տրանսպորտային ծախսերից: Այդ խնայողությունը հատկացված գումարի ո՞ր մասն է կազմում:
- 18 (5-րդ, գնումներ, խնայողություն)** Մայրաքաղաքային աղցանի բաղադրատոմսը հետևյալն է. 500 գ տավարի միս, 300 գ կարտոֆիլ, 200 գ գազար, 200 գ կանաչ ոլոռ, 200 գ թթու վարունգ, 4 հատ ձվի սպիտակուց, 200 գ թթվասեր, 1 կապ մաղադանոս: ա) Ըստ այս բաղադրատոմսի՝ մոտավորապես որքա՞ն է կշռում մայրաքաղաքային աղցանը: բ) Որոշել որքա՞ն գումար է անհրաժեշտ այս աղցանից պատրաստելու համար, եթե 1 կգ տավարի միսն արժե 3400 դրամ, 1 կգ կարտոֆիլը՝ 300 դրամ, 1 կգ

գազարը՝ 330 դրամ, 1 տուփ (200 գ) կանաչ ոլոռը՝ 460 դրամ, 1 կգ թթու վարունգը՝ 900 դրամ, 1 ձուն՝ 60 դրամ, 1 տուփ թթվասերը (200 գ)՝ 260 դրամ, մաղադանոսը՝ 120 դրամ: գ) Արագ սննդի կետում մեկ բաժին մայրաքաղաքային աղցանն (400 գ) արժե 1 100 դրամ, իսկ առաքման դեպքում արժեքին ավելանում է ևս 400 դրամ: Որքա՞ն ավելի գումար ենք վճարում արագ սննդի կետից 4 բաժին մայրաքաղաքային աղցան պատվիրելու դեպքում:

- 19 **(5-րդ, ծախս)** Սոնան ստիպված էր թատրոնից տուն վերադառնալ տաքսիով, քանի որ անձրև էր, իսկ նա մոռացել էր անձրևանոցը: Տուն հասնելիս տաքսու վարորդը, ներողություն խնդրելով Սոնայից, նշեց, որ մոռացել է միացնել հաշվիչը, բայց վստահ է, որ գումարը կկազմեր 1 600 դրամ: Ցանկանալով պարզել գումարի ճշտությունը՝ Սոնան արագ հաշվարկ կատարեց: Ի՞նչ պարզեց նա, եթե թատրոնից տուն 15 կմ էր, իսկ տվյալ տաքսի ծառայությունում 1-5 կմ երթևեկության նվազագույն արժեքը 600 դրամ է, որից հետո յուրաքանչյուր 1 կմ արժեքը՝ 80 դրամ:
- 20 **(5-րդ, ծախս)** Տոնածառը զարդարելու համար Աննային անհրաժեշտ են 9 մ երկարություն ունեցող շղթա և 20 միանման խաղալիք: Տան մոտակայքում կա երկու խանութ, որտեղից Աննան կարող է իր գնումները կատարել: Ինչպե՞ս կատարի Աննան իր գնումները, որպեսզի ծախսը լինի նվազագույնը, եթե առաջին խանութում իր նախընտրած խաղալիքները վաճառվում են տուփով՝ յուրաքանչյուրում 6 հատ, գինը 3 500 դրամ, իսկ շղթան՝ ըստ երկարության՝ մետրը 500 դրամ արժեքով: Երկրորդ խանութում այդ խաղալիքները վաճառվում են հատով՝ հատը 650 դրամ, իսկ շղթան՝ 2 մետրանոց չափով՝ 950 դրամ արժողությամբ: Որքա՞ն է նվազագույն ծախսը:
- 21 **(5-րդ, ծախս)** «Բարի ակտորժակ» արագ սննդի կետն ամեն երկուշաբթի առաքման պատվերի գումարի 1/25 մասը փոխանցում է քաղցկեղով հիվանդ երեխաների բուժմանը օժանդակող հիմնադրամին: Որքա՞ն գումար կփոխանցվի ձեր պատվերից, եթե պատվիրեք 1 բաժին սպաս՝ 600 դրամ արժողությամբ, 1 պիցցա՝ 2 400 դրամ արժողությամբ և 500 դրամ արժողությամբ լիմոնադ:
- 22 **(5-րդ, ծախս)** Գայանեն, Նարեն և Անուշը կիրակի հանդիպեցին սրճարանում: Գայանեն պատվիրեց թեյ՝ 600 դրամ արժողությամբ և թխվածքաբլիթ՝ 1 200 դրամ արժողությամբ, Նարեն պատվիրեց «Կեսար» աղցան՝ 2 300 դրամ արժողությամբ, իսկ Անուշը՝ մեկ «Ամերիկանո»՝ 1 100 դրամ արժողությամբ և պաղպաղակ՝ 800 դրամ արժողությամբ: ա) Որքա՞ն գումար պետք է վճարեն ընկերուհիները միասին, եթե գումարին ավելացվում է նաև պատվերի 1/10-րդ մասի չափով սպասարկման վճար, բ) Որքա՞ն է կազմում ընկերուհիներից յուրաքանչյուրի վճարելիք գումարը համապատասխան սպասարկման վճարի հետ միասին:
- 23 **(5-րդ, ծախս)** Իրարից ոչ հեռու գտնվող «Արմենիա» և «Էրեբունի» սրճարանները, որոնք առաջարկում են նույն ճաշացանկը, սպասարկման

վճարը հաշվում են հետևյալ սկզբունքով. առաջինում սպասարկման վճարը կազմում է կատարած պատվերի 1/10 մասը, իսկ երկրորդում՝ անկախ պատվերից՝ 600 դրամ:

Անին և Մարին նախընտրել են «Արմենիա» սրճարանը և պատվիրել են 1 պիցցա՝ 2 400 դրամ արժողությամբ, 2 հյութ՝ 350-ական դրամ, 1 «Հունական աղցան»՝ 1 550 դրամ:

Կարինեն և Լիլիթը նախընտրել են «Էրեբունի» սրճարանը և կատարել են նույն պատվերը՝ 1 պիցցա՝ 2 500 դրամ արժողությամբ, 2 հյութ՝ 400-ական դրամ, 1 աղցան՝ 1 600 դրամ:

ա) Հաշվել յուրաքանչյուր սրճարանում որքա՞ն է կազմում սպասարկման վճարը՝ տվյալ պատվերների դեպքում և համեմատել հաշիվները:

բ) Համեմատել սրճարանների հաշիվները, եթե միայն պատվերի գումարը յուրաքանչյուրում կազմել է 6 000 դրամ:

գ) Համեմատել սրճարանների հաշիվները, եթե պատվերի գումարը յուրաքանչյուրում նույնն է, որը մեծ է 6 000 դրամից: Կատարել եզրակացություն:

24 **(5-րդ, ծախս)** Ուսումնական հաստատության մոտ գործում է երկու տպարան: Ուսանողը ցանկանում է պատճենահանել 130 էջանոց գիրք, քանի որ գրախանույթում գիրքը թանկ արժե: Առաջին տպարանը 1-ից 50 էջերը պատճենահանում է էջը 10 դրամով, իսկ 50-ից ավելի էջերի դեպքում, սկսած 51 –րդ էջից, 6 դրամով: Երկրորդ տպարանը, անկախ էջերի քանակից, էջը պատճենահանում է 8 դրամով:

ա) Ո՞ր տպարանից օգտվի ուսանողը, որպեսզի ծախսը լինի նվազագույնը:

բ) Ո՞ր տպարանից օգտվի ուսանողը, եթե ցանկանում է պատճենահանել 60 էջ:

25 **(5-րդ, ծախս)** Դասախոսը կուրսի ավագին էլեկտրոնային տարբերակով փոխանցեց 2 էջանոց հարցաշար, որը պետք է թղթային տարբերակով բազմացվեր կուրսի ուսանողների քանակով: Ուսումնական հաստատությանը կից գտնվող տպարանում 1 էջի տպագրությունն արժե 20 դրամ, իսկ պատճենահանումը՝ 8 դրամ: Կուրսի ավագն ինչպե՞ս ճիշտ կազմակերպի հարցաշարի բազմացումը 41 օրինակով, որպեսզի ծախսը լինի նվազագույնը, և որքա՞ն կկազմի այդ ծախսը:

26 **(5-րդ, ծախս)** Հայրենադարձ Պողոսյանները մրգատու ծառեր ունեցող հողատարածք գնեցին և այնտեղ տնկեցին ևս 30 խնձորենի, 40-ական դեղձենի և նռնենի: Սակայն 15 դեղձենի և 17 նռնենի չարմատակալեցին: Որոշել Պողոսյանների կրած վնասի չափը, եթե խնձորենու տնկին գնել էին 600 դրամով, դեղձենուինը՝ 1 700 դրամով, իսկ նռնենուինը՝ 2 000 դրամով:

Հին ծառերից ստացված բերքի մի մասը ընտանիքը պահեց ուտելու, չիր պատրաստելու համար, նոան մի մասը ուղարկեցին հարազատներին,

ովքեր բնակվում էին արտերկրում, իսկ 250-ական կգ դեղձ և խնձոր վաճառեցին՝ կիրառամը համապատասխանաբար 500 և 300 դրամով: Արդյո՞ք նրանց հաջողվեց փակել տնկիներ գնելու ծախսը:

- 27 **(5-րդ, ծախս)** Սահակն իր տնամերձ հողամասում ցանել էր կարտոֆիլ, կաղամբ և լոբի: Հողի մշակման, սերմերի գնման և այլ անհրաժեշտ աշխատանքների վրա ծախսել էր 50 000 դրամ: Նա իր բերքի մի մասը որոշեց վաճառել: Վաճառքի համար նախատեսել էր 200 կգ կարտոֆիլ, 100 կգ կաղամբ և 50 կգ լոբի: Արդյոք Սահակին հաջողվե՞ց իր ծախսած գումարը «հետ բերել», եթե 1 կգ կարտոֆիլը վաճառեց 150 դրամով, 1 կգ կաղամբը՝ 80 դրամով, իսկ 1 կգ լոբին՝ 250 դրամով:
- 28 **(5-րդ, եկամուտ)** Սոնայի պապիկը, ով ապրում է գյուղում, իրենց անասունների քանակը ևս մեկով ավելացնելու նպատակով մի քանի ամիս առաջ գնել էր 350 000 դրամ արժողությամբ կով: Այդ ընթացքում նա վաճառել էր 800 լիտր կաթ՝ 1 լիտրը 250 դրամ արժողությամբ: Սոնայի պապիկը նույն արժողությամբ քանի՞ լիտր կաթ դեռ պետք է վաճառի, որպեսզի կովը գնելու համար կատարած ծախսը փակվի:
- 29 **(5-րդ, եկամուտ)** Տիկին Նունեն տնային տնտեսուհի է: Նա պատրաստում է խինկալի և տուփը 900 դրամ արժեքով հանձնում խանութներ՝ վաճառքի: Շաբաթական հանձնում է վաճառքի 34 տուփ: ա) Որքա՞ն է կազմում տիկին Նունեի ամսական (4 շաբաթ) շահույթը, եթե նա 34 տուփ խինկալու պատրաստման համար օգտագործում է 7 կգ ալյուր, որի 1 կգ -ն արժե 320 դրամ, 4 կգ միս, որի 1 կգ – ն արժե 3500 դրամ, այլ պարագաներ, որոնց վրա ծախսում է 2 000 դրամ: բ) Ի՞նչ դիսկեր կան՝ կապված տիկին Նունեի ձեռնարկած այդ գործի հետ:
- 30 **(5-րդ, եկամուտ)** Երկու ընկեր որոշեցին գյուղից խնձոր բերել քաղաք և վաճառել: Քանի որ առաջին անգամ էին զբաղվում գործարարությամբ, գնեցին «Դեմիրճյան» տեսակի փոքր և «Կեխուրի» տեսակի 200-ական կգ խնձոր: Նրանցից մեկը գործի մեջ ներդրել էր 90 000 դրամ, իսկ մյուսը՝ 110 000 դրամ: Որքա՞ն զուտ եկամուտ ստացավ նրանցից յուրաքանչյուրը, եթե 1 կգ «Դեմիրճյան» տեսակի խնձորը գյուղացուց գնել էին 270 դրամով և վաճառել 420 դրամով, իսկ 1 կգ «Կեխուրի» տեսակի խնձորը գնել էին 670 դրամով և վաճառել 870 դրամով: Ընդ որում, լրացուցիչ ծախսերը կազմել էին 12000 դրամ:
- 31 **(5-րդ, բյուջե)** Ալենի հայրիկի ամսական եկամուտը 180 000 դրամ է, իսկ մայրիկինը՝ 120 000 դրամ: Ալենի ծնողները եկամուտը ստանալուց անմիջապես հետո եկամտի 10%-ը խնայում են: Հոկտեմբեր ամսվա նրանց եկամտի 1/3 մասը կազմել է սննդի ծախսը, որից 4 անգամ քիչ՝ կոմունալ ծախսերը, 50 000 դրամով պետք է նվեր գնեն պապիկի համար՝ ծննդյան օրվա առիթով, և 35 000 դրամ էլ հատկացվելու էր այլ ծախսերի: Այս ծախսերից հետո որքա՞ն գումար կմնա Ալենի ծնողների մոտ:

32 (5-րդ, բյուջե) Նախորդ շաբաթ Մարին այցելության էր գնացել իր պապիկին, ով նրան տվել էր 2 000 դրամ: Մարիի հայրիկը յուրաքանչյուր շաբաթ նրան 1 500 դրամ է տալիս՝ դպրոցում ընդմիջում անելու համար: Դպրոցում Մարին սովորել էր կազմել անձնական բյուջե և գիտեր, թե դա ինչպես է օգնում ճիշտ տնօրինելու գումարը: Լրացնել Մարիի այս շաբաթվա անձնական բյուջեի աղյուսակը, եթե նա դպրոցում, յուրաքանչյուր օր, ընդմիջմանը հատկացնում է 250 դրամ, 500 դրամը նախատեսել է զցել խնայատուփ, ինչպես նաև ցանկանում է գնել իր հավանած մազկապը, որն արժե 1 200 դրամ:

Եկամուտ	Ծախս
Մնաց՝	

Որքա՞ն գումար մնաց նրա մոտ: Ի՞նչ կարելի է անել այդ գումարով:

**Ցուցում. պարբերաբար կատարվող խնայողություններին հարկավոր է վերաբերվել որպես «ծախսի»:* Դա օգնում է անմիջապես մի կողմ դնել այդ գումարը և ապահով զգալ, որ ընթացքում չես ծախսի: Ցանկալի է դա անել գումարը ստանալուց անմիջապես հետո:

33 (5,6-րդ, բյուջե, խնայողություն) Լևոնը շատ է սիրում բույսեր մշակել, սակայն չունի հողամաս, ապրում է բազմահարկ շենքի բնակարանում: Նրանց ընտանիքն ամսական միջինում օգտագործում է 2 լիմոն: Նա հաշվարկ արեց և որոշեց 15 000 դրամով գնել լիմոնի ծառ: Մեկ տարի հետո ծառը սկսեց բերք տալ՝ տարեկան, միջին հաշվով, 20 հատ լիմոն:

ա) Հաշվել, թե բավարա՞ր է արդյոք այդ քանակը նրանց ընտանիքի համար:

բ) Որքա՞ն ժամանակ հետո ծառի գինը կփոխհատուցվի և կբերի մաքուր եկամուտ, եթե 1 լիմոնը նրանք գնում էին 200 դրամով:

34 (5,6-րդ, գնումներ, խնայողություն) Հայրիկը Սուրենին ամեն օր տալիս էր 500 դրամ՝ առօրյա ծախսերի գումար: Սուրենը որոշեց խնայել և մայրիկի համար գնել գիրք: Նա ամեն օր խնայում էր իրեն տրված գումարի 3/10-ը: Քանի՞ օր հետո Սուրենը կարող է գնել 3 000 դրամ արժողությամբ գիրքը:

- 35 **(5,6-րդ, գնումներ, խնայողություն)** Հայրիկը Ռուբենին ամեն դպրոցական օր տալիս էր 400 դրամ՝ առօրյա ծախսերի գումար, որի 1/4-ը նա խնայում էր: 4 շաբաթ անց Ռուբենը դասընկերոջ հետ վիճելիս պատահաբար վնասեց նրա դասագիրքը և խոստացավ գնել նորը: Իր արարքից ամաչելով՝ Ռուբենը ոչինչ չսասց ծնողներին և որոշեց օգտագործել իր խնայողությունները: Կբավարարի՞ արդյոք նրա գումարը նոր դասագիրք գնելու համար, որն արժե 1 500 դրամ: Եթե այո, ապա որքա՞ն գումար կմնա Ռուբենին իր խնայողություններից:
- 36 **(5,6-րդ, գնումներ, բյուջե)** Անիի հավանած 24 000 դրամ արժողությամբ անվաճմուշկները զեղչվել էին գնի քառորդ մասով: Դիմեց հայրիկին, սակայն նա խորհուրդ տվեց ինքնուրույն աշխատել այդ գումարը՝ հավաքելով ծառի տակ թափված խնձորները: Հավաքած 1 դույլ խնձորի համար հայրիկը խոստացավ վճարել 500 դրամ: Առաջին օրը նա հավաքեց 10 դույլ խնձոր: Քանի՞ դույլ մնաց Անիին հավաքելու, որպեսզի կարողանա գնել զեղչված անվաճմուշկները:
- 37 **(6-րդ, խնայողություն)** Տիգրանենց բնակարանում ջրի փականի թերության պատճառով կար ջրի արտահոսք՝ ժամում 3 լիտր: Դրա հետևանքով նրանք որքա՞ն գումարի անտեղի կորուստ ունեցան մարտ ամսին, եթե ըստ սահմանված սակագնի՝ 1 խորանարդ մետր ջրի համար պետք է վճարել 180 դրամ:
- 38 **(6-րդ, գնումներ, բյուջե)** Ամառվա ամիսներին Աննայի հայրիկի ավտոմեքենան անցել էր՝ հունիսին՝ 950 կմ, հուլիսին՝ 1 250 կմ, օգոստոսին՝ 1 400 կմ: Այդ ամիսներին բենզինի 1 լիտրի միջին գինը 450 դրամ էր, իսկ մեքենան յուրաքանչյուր 100 կմ –ի համար միջինում ծախսում էր 9 լ բենզին: Աննայենց ընտանեկան բյուջեում որքա՞ն էր կազմում ամառվա ընթացքում բենզինի վրա կատարվող միջին ամսական ծախսը:
- 39 **(6-րդ, գնումներ)** Իրարից ոչ շատ հեռու գտնվող երկու գյուղերի երկու բնակիչներ կատարեցին ապրանքափոխանակում: Նրանցից մեկը 40 կգ խոզի միսը, որի կիլոգրամն արժե 2400 դրամ, փոխանակեց խոտի տուկերի հետ՝ 20 կգ քաշով՝ 1 խոտի տուկն արժե 1 200 դրամ:
ա) 1 կգ խոզի մսին քանի՞ խոտի տուկ է համապատասխանում:
բ) Քանի՞ խոտի տուկ փոխանակվեց 40 կգ մսի հետ:
- 40 **(6-րդ, խնայողություն)** Գոհարին պապիկն ամեն ամիս տալիս էր 5 000 դրամ, որի 10 %-ը նա խնայում էր, որպեսզի տատիկի ծննդյան օրը նրան գիրք նվիրի: 8 ամիս անց առավելագույնը ի՞նչ գնի գիրք նա կարող է գնել:
- 41 **(6-րդ, գնումներ)** Սաթենիկի հայրը մայիսին մեկ շաբաթով Սոչի գնալիս երկկողմանի ավիատոմսի համար վճարել էր 125 000 դրամ, իսկ հոկտեմբերին նույն ավիաընկերությունից ձեռք բերեց երկկողմանի ավիատոմս՝ 89 000 դրամով:

ա) Քանի՞ տոկոսով է նվազել ավիատոմսի գինը:

բ) Ըստ ձեզ, ի՞նչը կարող է լինել ավիատոմսերի գների տարբերության պատճառը:

42 (6-րդ, գնումներ) Այս շաբաթ էլեկտրոնիկայի երկու խանութներ սահմանել են զեղչեր բոլոր տեսակի սառնարանների համար: Առաջին խանութը սառնարանի գինը զեղչել է 10 %-ով, իսկ առաքման գումարը կազմում է սառնարանի գնի 5 %-ը: Երկրորդ խանութը սառնարանի գինը զեղչել է 5%-ով, իսկ առաքումը կազմակերպում է անվճար: Նույն մոդելի սառնարանը գնելու համար ո՞ր խանութի առաջարկից կօգտվեիք:

43 (6-րդ, գնումներ) Շուշանը հեռախոս էր ապառիկ ձեռք բերել՝ 4 ամիս ամսական 45 000 դրամ վճարելու պայմանով, որը կազմում էր իր ամսական եկամտի 40 %-ը:

ա) Որքա՞ն է Շուշանի ամսական եկամուտը:

բ) Ի՞նչ պայման հաշվի չէր առել Շուշանը, որի արդյունքում ստիպված էր դիմել ծնողներին՝ ֆինանսական օգնության համար, քանի որ իր աշխատավարձի գումարը իրեն արդեն չէր բավականացնում:

44 (6-րդ, գնումներ, պարտք) Արթուրը որոշել է գնել նոր համակարգիչ՝ 250 000 դրամ արժողությամբ: «Ա» բանկը առաջարկում է վարկ մեկ տարով՝ ամսական 25 000 դրամ մարումով: «Բ» բանկն առաջարկում է վարկ մեկ տարով, տարեկան 20% տոկոսադրույքով և միանվագ վճարումով՝ ժամկետի ավարտին: Դուք ո՞ր տարբերակը կընտրեիք և ինչո՞ւ:

45 (6-րդ, եկամուտ, խնայողություն) Արմենը բանկում ներդրեց ավանդ 400 000 դրամ՝ տարեկան 11% (պարզ) տոկոսադրույքով՝ 2 տարի ժամկետով: Հաշվի առնելով 10% եկամտային հարկը՝ ժամկետի ավարտին ի՞նչ գումար ստացավ Արմենը բանկից:

46 (6-րդ, խնայողություն) Երեք քույրեր միասին որոշեցին կատարել խնայողություն՝ ծնողների ամուսնության տարեդարձի կապակցությամբ նվեր գնելու համար: Անիի խնայողությունը կազմում է ամբողջ խնայողության 36%-ը, Նարեի խնայողությունը՝ Անիի գումարի 75%-ը, իսկ մնացած 18 500 դրամը խնայել է Մանեն: Որքա՞ն գումար են խնայել քույրերը միասին:

47 (6-րդ, գնումներ) Շուկայում հողագործը ելակը վաճառում էր 1 կգ-ը 1 200 դրամով, բայց այդ ելակի մոտ 25%-ն անհաս էր և ուտելու համար ոչ պիտանի: Առևտուրն արագացնելու նպատակով նա ելակը զտեց: Ի՞նչ գնով վաճառեք զտված ելակը, որպեսզի գումարի կորուստ չունենար:

48 (6-րդ, գնումներ) Սուսաննան գնեց վերարկու զեղչված գնով՝ 31 000 դրամ: Զեղչը կազմում էր 38%: Պարզել, թե որքա՞ն էր վերարկուի սկզբնական գինը:

Ըստ ձեզ՝ հնարավոր ի՞նչ պատճառներով կարող էր զեղչված լինել վերարկուն:

- 49 **(6-րդ, բյուջե)** Աշոտը գրենական պիտույքների վրա ծախսեց իր ունեցած գումարի 2/5-ը, իսկ ընկերոջ ծննդյան տարեդարձին նվեր գնելու համար՝ 1 690 դրամ: Նրա մոտ մնաց իր գումարի 34% - ը: Որքա՞ն դրամ ուներ Աշոտը սկզբում:
- 50 **(6-րդ, բյուջե, պարտք)** Լուսինեի հայրը ամսական ստանում է 268 000 դրամ աշխատավարձ, իսկ մայրը՝ 132 000 դրամ: Լուսինեն հաշվել էր, որ եթե յուրաքանչյուր ամիս ծնողներն իրենց աշխատավարձի 1/6-ը հատկացնեն եղբոր ուսման վարձին, ապա, առանց պարտք վերցնելու, կկարողանան վճարել եղբոր 1 տարվա ուսման վարձը: Որոշել եղբոր ուսման վարձի չափը:
- 51 **(6-րդ, գնումներ, խնայողություն)** Մեկ հատ առամի խոզանակն արժե 640 դրամ: Զեղչի ժամանակ առավելագույնը քանի՞ խոզանակ կարելի է գնել 4 000 դրամով, եթե զեղչը 25% է:
- 52 **(6-րդ, բյուջե)** Արայի ընտանիքի ընդհանուր եկամուտը կազմում է ամսական 400 000 դրամ: 210 000 դրամը ծնողների աշխատավարձն է, 96 000 դրամը տատիկի և պապիկի կենսաթոշակն է, 10 000 դրամը ուսանողի կրթաթոշակն է, 84 000 դրամ ստանում են բնակարանի վարձակալությունից: Հաշվել, թե յուրաքանչյուրի եկամուտը ընդհանուրի քանի՞ տոկոսն է կազմում:
- 53 **(6-րդ, գնումներ)** Էլեկտրոնիկայի խանութ-սրահը սահմանել է ակցիա, ըստ որի՝ 500 000 դրամ արժողությամբ մեծ սառնարանների գինը զեղչում է 5% -ով՝ ԽՍՀՄ տարիների արտադրության մեկ աշխատող սառնարանի դիմաց: Արամը, ով իր հայրական տանն ուներ այդպիսի սառնարան, որոշեց ևս երկուսը գտնել և գնել սառնարանը ավելի մեծ զեղչով: Արդյունքում հայտարարություն տվեց և 30 000 դրամով գնեց այդպիսի ևս 2 սառնարան, չնայած ընկերը փորձում էր համոզել, որ այդ գումարը տա որպես կանխավճար, այլ ոչ թե գնի սառնարան: Արդյունքում ու՞մ տարբերակն էր ձեռնտու:
- 54 **(6-րդ, եկամուտ)** Բանվորը 4 օր ժամկետով պատվեր էր վերցրել՝ սալիկապատելու լոգասենյակի պատերը և հատակը՝ ընդամենը 21 մ²: Սակայն պատվերի կատարումից մի քանի օր առաջ արտասահմանից եկամտաբեր առաջարկ էր ստացել՝ 3 ամսով և ստիպված էր մեկնել: Տանտերը խնդրեց նրան գոնե երկու օր աշխատել որքան կարող է, որպեսզի այդ ընթացքում մեկ այլ հմուտ մասնագետ գտնի: Առաջին օրը բանվորը լոգասենյակի 4 մ² հատակը 2 ժամում սալիկապատելուց հետո պատը սկսեց սալիկապատել 10 % նվազ արտադրողականությամբ և աշխատեց ևս 3 ժամ: Հաջորդ օրը սալիկապատեց 5 մ²: Որքա՞ն կազմեց բանվորի երկու օրվա եկամուտը, եթե, պայմանավորվածության

համաձայն, 1 մ²-ի դիմաց վճարվելու էր 2 000 դրամ: Բանվորի ստացած եկամուտը տոմսի գնի ո՞ր տոկոսը կազմեց, եթե այն գնել էր 55 000 դրամով:

- 55 **(6-րդ, պարտք)** Իննան ապառիկով գնեց 115 000 դրամ արժողությամբ լվացքի մեքենա՝ վճարելով 40 000 դրամ կանխավճար: Ըստ վարկային պայմանագրի՝ տրամադրված գումարի 0,99 %-ը գանձվում է որպես վարկային հաշվի ամսական սպասարկման վճար: Որքա՞ն կկազմի ընդհանուր սպասարկման վճարը, եթե պայմանագիրը կնքվել է 12 ամիս ժամկետով:
- 56 **(6-րդ, գնումներ)** Սուրենը ցանկանում էր օնլայն գնում կատարել «Ա» բանկի իր աշխատավարձի քարտով, սակայն գումարը բավարար չէր: Նա այցելեց տան մոտակայքում գտնվող վճարային տերմինալ՝ գումար մուտքագրելու, որտեղ միջնորդավճարը 0.6% էր, մինչդեռ իր բանկում միջնորդավճար չկար: Որքա՞ն ավելի գումար Սուրենը պետք է մուտքագրի տերմինալ, եթե ցանկանում է հաշվին ավելացնել 50 000 դրամ:
- 57 **(6-րդ, գնումներ)** Դեղատունը վաճառում է 500 դրամ արժողությամբ կուտակային քարտ. կատարած գնման 2%-ը փոխանցվում է քարտին: Տիկին Հասմիկը և պարոն Վահանը մշտապես օգտվում են այդ դեղատնից և նպատակահարմար են գտել ձեռք բերել կուտակային քարտ:
- ա) Որքա՞ն է կազմում նրանցից յուրաքանչյուրի կուտակային քարտի գումարը, եթե այս ամիս տիկին Հասմիկը մեկ անգամ կատարել է 4 000 դրամի գնում, մեկ անգամ էլ՝ 7 500 դրամի, իսկ պարոն Վահանը միանգամից կատարել է 11 500 դրամի գնում:
- բ) Որքա՞ն գումարից ավելի գնում դեռ պետք է կատարեն նրանք, որպեսզի յուրաքանչյուրի կուտակային քարտում կուտակված գումարի չափը գերազանցի 500 դրամը:
- 58 **(6-րդ, գնումներ)** Մարինեն իր նախընտրած օժանելիքը ամռանը ձեռք էր բերել 25 000 դրամով: Կանանց միամսյակի առթիվ Մարինեի ընկերը նրան նվիրեց նույն օժանելիքից, որի գինը նույն խանութում դարձել էր 36 000 դրամ և վաճառվում էր 20% զեղչով:
- ա) Որքա՞ն ավելի գումար վճարեց Մարինեի ընկերը:
- բ) Ինչպե՞ս կընտրվեին օժանելիքի խանութի՝ օժանելիքը զեղչելու քայլը:
- 59 **(6-րդ, գնումներ)** Արշավներ կազմակերպող երկու կազմակերպություններից յուրաքանչյուրը դեպի Սիսիանի հանգստյան գոտի մեկօրյա հանգստի համար առաջարկում է հետևյալ փաթեթները.

<i>Առաջին կազմակերպություն</i>	<i>Երկրորդ կազմակերպություն</i>
<p>Մեկ մեծահասակը վճարում է 5 000 դրամ, որի մեջ մտնում են փոխադրումը և էքսկուրսավարի ծառայությունները, ընդ որում՝ երեխաների համար գործում է 30% զեղչ:</p> <p>Հանգստյան գոտում գտնվող հյուրանոցում մեկտեղանոց համարն արժե 15 000 դրամ, երկտեղանոցը՝ 25 000 դրամ, երեքտեղանոցը՝ 35 000 դրամ, ըստ որում՝ գինը ներառում է նախաճաշը:</p>	<p>Մեկ հոգին վճարում է 17 000 դրամ, գինը ներառում է փոխադրումը, էքսկուրսավարի ծառայությունները և գիշերակացը:</p>

ա) Գայանեն իր ամուսնու և 3 տարեկան որդու հետ ցանկանում է գնալ այս հանգստյան գոտի: Ո՞ր կազմակերպության առաջարկն է առավել շահեկան նրա համար:

բ) Աննան ցանկանում է իր ընկերուհու հետ գնալ այս հանգստյան գոտի: Ո՞ր կազմակերպության առաջարկն է ավելի էժան, և որքանո՞վ:

60

(6-րդ, գնումներ) Անին հայրիկին խնդրեց գնել համակարգիչ՝ գրասեղանի հետ միասին: Հայրիկը հանձնարարեց Անիին ուսումնասիրել էլեկտրոնիկայի խանութների առաջարկները՝ պարզել պարանքների գները, ապառիկի պայմանները և ստուգել, թե որ դեպքում պարտքը չի գերազանցի իրենց եկամտի 30%-ը, եթե նրանց ամսական եկամուտը 200 000 դրամ է: Անին ուսումնասիրեց էլեկտրոնիկայի մի քանի խանութներ, որոնցից առանձնացրեց հետևյալ երկու խանութ-սրահի առաջարկները.

«Ա» խանութ	«Բ» խանութ
<p>Համակարգիչ 180 000 դրամ</p> <p>Գրասեղան 35 000 դրամ</p> <p>Ապառիկը ձևակերպում են առանց կանխավճարի, 0% անվանական տոկոսադրույքով, առանց միջնորդավճարների, ընդ որում՝ գումարը մարվում է հավասարաչափ՝ 4 ամիս ժամկետում:</p>	<p>Համակարգիչ 170 000 դրամ</p> <p>Գրասեղան 27 000 դրամ</p> <p>Ապառիկը ձևակերպում են առանց կանխավճարի, 0% անվանական տոկոսադրույքով, 1,5% ամսական միջնորդավճարով, ընդ որում՝ գումարը մարվում է հավասարաչափ՝ 3 ամիս ժամկետում:</p>

Այս երկու խանութների առաջարկներից ո՞րն է ձեռնտու նրանց:

61

(6-րդ, գնումներ) Հեռախոսային կապի գրասենյակն առաջարկում է առանց տոկոսների և միջնորդավճարների ձեռք բերել մինչև 115 000 դրամ արժողությամբ սմարթֆոն՝ «Սմարթ 1 500» հետվճարային սակագնային

փաթեթի հետ միասին, տարաժամկետ վճարման պայմանով՝ 12, 15 կամ 24 ամիսների ընթացքում: Կարենը գնեց 111 000 դրամ արժողությամբ սմարթֆոն և որոշեց վճարել ամսական հաստատուն գումարով:

1) Որքա՞ն գումար կվճարի Կարենը յուրաքանչյուր ամիս, եթե պայմանագիրը կնքի ա) 12 ամսով, բ) 15 ամսով, գ) 24 ամսով:

2) Յուրաքանչյուր դեպքում որոշել սակագնային փաթեթի վրա ծախսված գումարի չափը:


3) Համեմատել յուրաքանչյուր դեպքում ընդհանուր վճարի չափերը:

62

(6-րդ, ծախս) Սոնան «Ա» բանկից ձեռք էր բերել ArCa Classic քարտ, որով առևտրի և սպասարկման կետերում կատարում էր անկանխիկ վճարումներ, բանկումատներից կանխիկացնում էր գումար: Մի օր նա որոշեց հաշվել օրվա ընթացքում կատարած իր գնումներից և կանխիկացումներից հետո գանձվող սպասարկման գումարի չափը: Որքա՞ն էր այդ գումարը, եթե Սոնան կատարել էր տան համար գնումներ, ապա գնել էր հագուստ: Երկու դեպքում էլ վճարել էր անկանխիկ, և բանկից ստացած 2-ական հաղորդագրությունների համար գանձվել էր 20-ական դրամ: Թատրոնի տոմս գնելու, ապա երեկոյան տուն վերադառնալու համար ստիպված էր եղել թատրոնի մոտակայքում գտնվող, ArCa անդամ չհանդիսացող բանկից կանխիկացնել 8000 դրամ, որի հետևանքով քարտային հաշվից գանձվել էր կանխիկացված գումարի 1.5 % -ի չափով սպասարկման վճար:

63

(6-րդ, բյուջե) Ըստ աղյուսակի համեմատել Արամի և Անիի ընտանիքների ծախսերը, եթե նրանց երկուսի ամսական եկամուտն էլ 220 000-ական դրամ է:

<i>Արամի ծախսեր</i>	<i>Անիի ծախսեր</i>												
<ol style="list-style-type: none"> 1. Սնունդ – 90 000 դրամ 2. Կոմունալ ծախսեր – 35 000 դրամ 3. Տնտեսական ծախսեր – 17 000 դրամ 4. Խնայողություն – 22 000 դրամ 	 <p>A pie chart titled 'Անիի ծախսեր' (Ani's expenses) showing the distribution of her expenses. The largest portion is food at 46%, followed by utilities at 20%, savings at 15%, frugality at 10%, and economic expenses at 9%.</p> <table border="1" data-bbox="579 1137 1107 1446"> <thead> <tr> <th>Category</th> <th>Percentage</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Սնունդ (Food)</td> <td>46%</td> </tr> <tr> <td>Կոմունալ ծախս (Utilities)</td> <td>20%</td> </tr> <tr> <td>Մնացորդ (Savings)</td> <td>15%</td> </tr> <tr> <td>Խնայողություն (Frugality)</td> <td>10%</td> </tr> <tr> <td>Տնտեսական ծախսեր (Economic expenses)</td> <td>9%</td> </tr> </tbody> </table>	Category	Percentage	Սնունդ (Food)	46%	Կոմունալ ծախս (Utilities)	20%	Մնացորդ (Savings)	15%	Խնայողություն (Frugality)	10%	Տնտեսական ծախսեր (Economic expenses)	9%
Category	Percentage												
Սնունդ (Food)	46%												
Կոմունալ ծախս (Utilities)	20%												
Մնացորդ (Savings)	15%												
Խնայողություն (Frugality)	10%												
Տնտեսական ծախսեր (Economic expenses)	9%												
Մնացորդ՝ 56 000 դրամ													

Ծախսերից որի՞ համար են երկուսն էլ հատկացրել նույն գումարը:

64 (6-րդ, գնումներ) Սոնան ցանկանում էր երեք օրով գնալ Ստեփանավան: Համապատասխան կայքից տեղեկացավ, որ, 800 դրամ արժողությամբ կտրոն ձեռք բերելով, Ստեփանավանի հանգստյան տներից մեկում ստանում է 20% զեղչի հնարավորություն: Հանգստյան տան օրավարձը, առանց զեղչի, 18 000 դրամ է, ընդ որում՝ գինը ներառում է երեքանգամյա սնունդը և տրանսպորտը: Սոնան գնեց 3 կտրոն, քանի որ մեկ կտրոնը մեկ օրվա համար էր, և գնաց Ստեփանավանի հանգստյան տուն՝ եռօրյա հանգստի: Որքա՞ն արժեցավ Սոնայի հանգիստը:

65 (6-րդ, բյուջե) Անին այս ամիս ցանկանում էր լրացուցիչ գնումներ կատարել և որպեսզի պարզի, թե որքան է այս ամսվա իր ծախսը, կազմեց անձնական բյուջեի աղյուսակ.

<i>Եկամուտ</i>	<i>Ծախս</i>
Աշխատավարձ 120 000 դրամ	Պարտք ընկերուհուն 25 000 դրամ
Ծննդյան նվեր 25 000 դրամ	Վարկի մարում 20 000 դրամ
Խնայողության կատարում 10 %	Լրացուցիչ գնումներ 19 000 դրամ
	Ընդամենը՝ 64 000 դրամ

Գտեք սխալը:

66* (6-րդ, գնումներ) Նարեն անուշադրության պատճառով զցեց և ջարդեց հեռախոսը: Նա ստիպված էր շտապ նորը գնել, քանի որ փոխարինող հեռախոս չուներ և կարևոր զանգի էր սպասում: Ուստի նա գնաց մոտակայքում գտնվող հեռախոսների վաճառքի կետ, որտեղ 111 000 դրամ արժողությամբ իր նախընտրած հեռախոսը ապառիկ էր ձևակերպվում՝ մեկ տարվա ընթացքում մարման պայմանով: Նարեն ապառիկով գնեց այդ հեռախոսը, սակայն երկու օր անց մեկ այլ խանութում տեսավ, որ այդ հեռախոսի գինը կանխիկ վճարման դեպքում 80 000 դրամ է, իսկ մեկ տարով ապառիկի ձևակերպման դեպքում 18% տարեկան փաստացի տոկոսադրույք է սահմանվում (տոկոսագումարների վճարումը՝ կիսամյակային կտրվածքով):

ա) Համեմատել խանութների առաջարկները: Արդյոք Նարեն շահե՞ց ապառիկից:

բ) Արդյոք կարո՞ղ է Նարեն վերադարձնել առաջին վաճառակետից ձեռք բերված հեռախոսը և գնել երկրորդից, եթե պարզվի, որ այդպես ավելի ձեռնտու է:

**Ցուցում. այս խնդրում պետք է ձևավորել մարումների գրաֆիկ և բոլոր վճարումները բերել ներկա արժեքի, համեմատությունը կատարել ժամանակի միևնույն պահին:*

- 67 (6-րդ, բյուջե)** Վահանենց ընտանիքը իրենց այգուց ստացված 1,2 տոննա խաղողն ուզում էր վաճառել: Խաղողի մթերման կայանում յուրաքանչյուր կիլոգրամի համար վճարում էին 180 դրամ, սակայն մինչև մթերակայան տեղափոխելու համար բեռնափոխադրողին պետք էր վճարել 7 500 դրամ: Խաղող մթերող մեկ այլ կազմակերպություն նրանց առաջարկեց մթերումը կատարել այգուց՝ յուրաքանչյուր կիլոգրամի համար վճարելով 165 դրամ: Վաճառքի ո՞ր տարբերակն է ավելի շահավետ Վահանենց համար:
- 68 (6-րդ, բյուջե)** Երիտասարդ ընտանիքի՝ աշխատավարձերից ձևավորվող եկամուտը 350 000 դրամ է, իսկ միջին ամսական անհրաժեշտ ծախսերը (սնունդ, տրանսպորտ, կոմունալ ծառայություններ և այլն)՝ 290 000 դրամ: Նոր տարվա ծախսերը կատարելուց հետո նրանք պարզեցին, որ նախորդ տարվա խնայողությունից այս տարվա սկզբին մնացել է ընդամենը 420 000 դրամ: Որոշեցին առաջիկա ամիսների խնայողությունները ևս հավաքել, որպեսզի կարողանան առանց պարտք վերցնելու գնել կահույք, որն արժե 750 000 դրամ: Ո՞ր ամսին կկարողանան գնել այդ կահույքը (նկատի ունենալ, որ յուրաքանչյուր ամսվա աշխատավարձը ստանում են հաջորդ ամսվա աշխատանքային առաջին օրը):
- 69 (6-րդ, ռիսկեր)** Կարենի ամսական տնօրինելի եկամուտը 250 000 դրամ է: Նա սիրում է խաղադրույքներ կատարել ֆուտբոլային թիմերի վրա, որոնց գործակիցը մեծ է: Այս ամիս նա 100 000 դրամի խաղադրույք է կատարել և միայն երկու անգամ է շահել՝ 5 000 և 15000 դրամ: Արդյունքում իր ամսական եկամտի քանի՞ տոկոսն է ապարդյուն վատնել Կարենը:
- 70 (6-րդ, ռիսկեր)** Փոքրիկ Մարին հայրիկի հետ դուրս էր եկել զբոսանքի: Նկատելով խանութներից մեկի մոտ գտնվող խաղային ապարատը, որի մեջ կային նաև խաղալիք պանդաներ, խնդրեց հայրիկին մոտենալ ապարատին և փորձել դուրս հանել պանդա խաղալիք: Վերջինս խաղալիքների խանութում վաճառվում էր 1 000 դրամով:
- ա) Որքա՞ն է հավանականությունը, որ ապարատից Մարիի հայրիկի հանած խաղալիքը կլինի պանդա, եթե ապարատի մեջ լցված 90 խաղալիքից միայն 10 –ն էր պանդա:
- բ) Հայրիկը Մարիի ցանկությամբ 5 անգամ փորձեց, սակայն չկարողացավ ոչ մի տեսակի խաղալիք հանել: Որքա՞ն գումար ծախսեց հայրիկը, եթե մեկ փորձի համար ապարատի մեջ գցում էր 200 դրամ:
- գ) Ինչպե՞ս եք գնահատում Մարիի և հայրիկի կատարած քայլերը:

1.2. *Խնդիրներ 7-9-րդ դասարանների համար*

- 71 **(7-րդ, գնումներ)** Խանութում երկու տեսակի տետրերը վաճառվում էին տարբեր փաթեթներով: 40 դրամ արժողությամբ տետրերի յուրաքանչյուր փաթեթ պարունակում էր 6 տետր, իսկ 60 դրամ արժողությամբ տետրերի յուրաքանչյուր փաթեթ՝ 5 տետր: Նարեն գնեց 10 փաթեթ տետր, որի համար վճարեց 2 700 դրամ: Քանի՞ տետր գնեց Նարեն:
- 72 **(7-րդ, փոխարժեք)** Հայկը ցանկանում էր 700 ռուբլին փոխանակել ՀՀ դրամով: Բանկում ռուբլու փոխարժեքը հետևյալն էր. Առք՝ 7.7 դրամ, վաճառք՝ 7.85 դրամ: Փոխանակման արդյունքում Հայկն ունեցավ $700 \times 7.85 = 5\,495$ դրամ: Գտեք սխալը:
- 73 **(7-րդ, գնումներ)** Խանութը արևային ակնոցներից ամենաշատ պահանջարկ ունեցող մոդելի գինը ամառվա ընթացքում երկու անգամ հաջորդաբար ավելացրեց 5-ական տոկոսով, իսկ աշնանը երկու անգամ իջեցրեց՝ նախ 4, ապա 6 տոկոսով: Արդյունքում էժանացավ, թե՞ թանկացավ ակնոցի գինը սկզբնականի նկատմամբ:
- 74 **(7-րդ, փոխարժեք)** Նույն գյուղի երեք հարևաններ, հավասարաչափ գումար ներդնելով, գնել են \$9 000 արժողությամբ տրակտոր: Հարևաններից մեկը զբաղվում է խոտի տուկի վաճառքով՝ 18 կիլոգրամանոց խոտի տուկը վաճառելով 1 500 դրամով: Նա ունի հավաքած 600 տուկ խոտ: Որքա՞ն խոտի տուկ դեռ պետք է հավաքի, որ այդ տուկերի վաճառքից գոյացած գումարը հավասարվի տրակտորի գնման իր բաժին ներդրմանը, եթե տրակտոր գնելիս դոլարի փոխարժեքը եղել է 486,5 դրամ:
- 75 **(7-րդ, գնումներ)** Հագուստի խանութ-սրահը նախատեսել էր վաճառքի տվյալ մոդելի 70 վերարկու, որը ձեռք էր բերել 60 դոլարով, իսկ այդ ժամանակ 1 դոլարի փոխարժեքը 484 դրամ էր: Խանութը վաճառեց այդ վերարկուները 40 000 դրամով: Ձմռանը վաճառվեց ընդամենը 25 վերարկու, որից հետո մարտ ամսին գինը զեղչվեց 15 %-ով, և վաճառեցին ևս 18 վերարկու: Ամռանը վերարկուները սկսեցին վաճառել այն գնով, որով ձեռք էին բերել, սակայն 4 վերարկու այդպես էլ չվաճառվեց: Վերարկուների վաճառքից ստացված գումարը որքանո՞վ էր ավելի վերարկուների ձեռք բերման գումարից:
- 76 **(7-րդ, փոխարժեք)** Արաքսը գնել էր տուրիստական ուղևորության ուղեգիր և մեկնելուց առաջ, լրացուցիչ գնումների նպատակով, ձեռք բերեց 700 եվրո՝ 538 դրամ փոխարժեքով: Այդ գումարից այնտեղ ծախսեց 575 եվրոն, իսկ մնացածը հետ բերեց Հայաստան: Վերադարձից հետո այդ գումարը փոխանակեց 532 դրամ փոխարժեքով: Արդյունքում որքա՞ն կորուստ ունեցավ Արաքսը անհրաժեշտից ավելի դրամափոխանակության հետևանքով:

77 (7-րդ, փոխարժեք) Հաշվարկեք ԱՄՆ դոլարի փոխարժեքը՝ ՌԴ ռուբլով արտահայտված, եթե ՀՀ դրամի նկատմամբ 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը 480,75 դրամ է, իսկ 1 ռուբլու փոխարժեքը՝ 7,39 դրամ: Արդյունքը կլորացրեք մինչև հարյուրերորդականը:

Փորձեք կատարել նաև նույնպիսի հաշվարկ տվյալ պահին գործող իրական փոխարժեքներով:

78 (7-րդ, խնայողություն, փոխարժեք) Պողոսյանների ընտանիքի ամսական մշտական եկամուտը կազմում է b դրամ, որի 10%-ը նրանք միշտ խնայում են:

ա) Մեկ տարի անց որքա՞ն խնայած գումար կունենան նրանք:

բ) Նրանք որոշել էին այդ խնայողության 1/3 մասը հատկացնել նոր սառնարան գնելուն, իսկ մնացած գումարը՝ հանգստին: Որքա՞ն գումար մնաց հանգստի համար:

գ) Պողոսյաններն այս տարի նպատակահարմար գտան մեկ շաբաթով գնալ Քոբուլեթի: Գնեցին 3 գնացքի տոմս՝ a -ական դրամ արժողությամբ, որը ներառում էր նաև հետդարձը: Մնացած գումարը փոխանակեցին վրացական լարիով: Որքա՞ն լարի ունեցան նրանք, եթե 1 լարիի փոխարժեքը 184 դրամ էր:

դ) Հաշվել ստացված տառային արտահայտությունների արժեքները, եթե $a = 23\ 000$, $b = 260\ 000$:

79 (7-րդ, փոխարժեք) Հայկը «Ա» բանկի հետ կնքել էր ժամկետային ավանդի պայմանագիր՝ բանկի կողմից հրապարակված պայմաններով: Նա դիմել էր բանկին ավանդի գումարը ստանալու պահանջով, քանի որ ցանկանում էր ձեռք բերել ԱՄՆ դոլար՝ տվյալ օրվա փոխարժեքով: Սակայն բանկը հրաժարվել էր նույն օրը տրամադրել գումարը և տրամադրել էր հաջորդ օրը: Հայկը նույն օրը փոխանակեց գումարը, սակայն կրեց նյութական վնաս՝ փոխարժեքի բարձր լինելու պատճառով: Որքա՞ն ՀՀ դրամ էր կազմում Հայկի վնասը, եթե նրան տրամադրված ավանդի վերջնական չափը 550 000 դրամ էր, դոլարի փոխարժեքը գումարի տրամադրման օրը 483 դրամ էր, իսկ նախորդ օրը՝ 480.5 դրամ:

80 (7-րդ, գնումներ) Արամը իր կնոջ և տղայի համար ամերիկյան խանութներից օնլայն պատվիրեց \$17.25 արժողությամբ պայուսակ և Հարրի Փոթերի՝ \$18.75 արժողությամբ գրքերից: Պատվերն առաքվելու էր օդային ճանապարհով՝ 5 \$/կգ առաքման վճարով: Այդ պահին բանկում գործող դոլարի առքի և վաճառքի փոխարժեքներն էին համապատասխանաբար 475 դրամ և 480 դրամ:

ա) Հաշվել, թե որքան ՀՀ դրամ գանձվեց Արամի քարտային հաշվից, եթե ծանրոցը կշռում էր 1.3 կգ, և հիմնավորել, թե որ փոխարժեքը պետք է կիրառել այս դեպքում:

բ) Նշել օնլայն գնումների մի քանի առավելություն և թերություն:

81 (7-րդ, խնայողություն) Արայի ծնողները նրա՝ բանակից վերադառնալու առիթով պատրաստել են անակնկալ՝ ուղևորություն դեպի Վան: Դեռևս երկու տարի առաջ նրանք սկսել էին յուրաքանչյուր ամիս խնայել իրենց եկամտի 10%-ը, որից հետո մեկ տարի առաջ կուտակված գումարը որպես ավանդ ներդրել էին բանկում՝ 11,7% տարեկան տոկոսային եկամտաբերությամբ և մեկ տարի ժամկետով: Այդ մեկ տարվա ընթացքում նրանք շարունակում էին խնայողություն կատարել՝ գումարը պահելով տանը:

ա) Հաշվել՝ երկու տարվա խնայողության արդյունքում որքա՞ն գումար ունեն Արայի ծնողները նրան Վան ուղարկելու համար, եթե նրանց ամսական եկամուտը 255 000 դրամ է:

բ) Ավանդի տոկոսադրույքը փոխարինել a-ով, իսկ տարեկան խնայողությունը՝ b-ով, և կազմել խնդրի լուծմանը համապատասխան տառային արտահայտություն:

82 (7-րդ, գնումներ) Խանութում ելակի կիլոգրամն արժեր 1 600 դրամ: Աննան գնեց 1 400 դրամի ելակ, իսկ Մանեն՝ 1 կգ ելակ: Այնուհետև, երբ մտան շուկա, տեսան, որ ելակի կիլոգրամն արժեր 1 200 դրամ: Նրանք շուկայից նույնպես գնեցին ելակ՝ Աննան դարձյալ 1 400 դրամի չափով, Մանեն՝ 1 կգ: Նրանցից ո՞վ ավելի շատ ելակ գնեց:

83 (7-րդ, գնումներ, ռիսկեր) 50 կգ զանգվածով մեկ պարկ շաքարավազը գործակատարը, նախքան վաճառելը, պահել էր խոնավ նկուղում: Երբ խոնավության պատճառով շաքարավազի զանգվածը դարձել էր 55 կգ, սկսել էր վաճառել խանութի սահմանած 300 դրամ գնով: Այդ պարկից նա վաճառել էր ընդամենը 11 կգ, որից հետո ստուգմամբ բացահայտվեց նրա խարդախությունը, ինչի համար նրան տուգանեցին 24 000 դրամ: Տուգանքի չափը քանի՞ անգամ է գերազանցում գործակատարի ապօրինի ստացած հավելյալ գումարը:

84 (7-րդ, վարկ) Գրավատունը Գոհարի 2 գրամանոց ոսկյա մատանին գնահատել է 35 000 դրամ: Ըստ գրավի պայմանի՝ Գոհարը որպես տոկոսավճար յուրաքանչյուր ամիս վճարում է վերցրած գումարի 5%-ը, քանի դեռ գումարը չի կարողանում ամբողջությամբ վերադարձնել:

ա) Որքա՞ն ավելի գումար Գոհարը վճարեց գրավատանը, եթե վերցրած գումարն ամբողջությամբ կարողացավ վերադարձնել երրորդ ամսում:

բ) Կազմել տոկոսագումարների փոփոխման ֆունկցիան՝ կախված ամիսների քանակից:

գ) «Կենտրոնական բանկի պաշտոնական կայքում դիտարկել թանկարժեք մետաղներից ոսկու հրապարակված գինը տվյալ օրվա

դրությամբ, համեմատել գրավատան կողմից գնահատված գումարի հետ և նշել նկատված տարբերության մեկ-երկու պատճառ:

**Ցուցում. Մատանին կարող է գնահատվել որպես զարդ, իսկ Կենտրոնական բանկի, Ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող ոսկու միջին գինը ներկայացնում է ոսկու ծուլակտորների հետ կապված գործարքների հաշվարկված միջին գինը:*

- 85 (7-րդ, փոխարժեք)** Հայկը ձեռք բերեց արտարժույթային հաշվով վճարային քարտ, որի վրա մուտքագրեց 20 000 ռուբլի: Նա կարծում էր, թե մուտքագրված գումարը բանկոմատից կարող է կանխիկացնել միայն ՀՀ դրամով՝ ՀՀ ԿԲ կողմից ՌԴ ռուբլու համար հրապարակված այդ օրվա փոխարժեքով: Սակայն երկու անգամ բանկի բանկոմատից գումար կանխիկացնելուց հետո Հայկը նկատեց, որ կրում է վնաս: Պարզվեց, որ կանխիկացման ժամանակ բանկը կիրառում է արտարժույթի համար սահմանած իր փոխարժեքը:

Որքա՞ն է այդ վնասի չափը, եթե Հայկն առաջին անգամ կանխիկացրել էր 5 000 ռուբլի, իսկ երկրորդ անգամ՝ 10 000 ռուբլի: Առաջին դեպքում ԿԲ կողմից ռուբլու համար հրապարակված փոխարժեքը 7.44 դրամ էր, իսկ բանկի կողմից սահմանած փոխարժեքը՝ 7.35 դրամ: Երկրորդ դեպքում համապատասխանաբար՝ 7.50 և 7.38 դրամ: Ի՞նչ կարող է անել Հայկը վնասը վերադարձնելու համար:

- 86 (7-րդ, եկամուտ, փոխարժեք)** Երեք տրակտորավարներ միասին աշխատելով վարել են 82 հա, որի դիմաց վարձատրվել են 410 000 դրամով: Ինչպե՞ս բաժանեն տրակտորավարները գումարը, եթե առաջին տրակտորավարը վարել է 20%-ով ավելի հա, քան երկրորդը և 10% -ով ավելի՝ քան երրորդը:

Առաջին տրակտորավարն իր կուտակային քարտին յուրաքանչյուր աշխատանքի եկամտից միջինում 40 դոլար է փոխանցում: Արդյունքում որքա՞ն գումար կմնա նրան տնօրինելու, եթե դոլարի փոխարժեքը եղել է 482 դրամ:

- 87 (7,8-րդ, պարտք)** Էմիլը բանկից վերցրեց 429 000 դրամ գումար՝ 20% տարեկան տոկոսադրույքով, 4 տարի ժամկետով: Վարկի վճարման պայմանը հետևյալն է. յուրաքանչյուր տարի Էմիլը պետք է վճարի մայր գումարի 1/4 մասը և տոկոսագումարը: Ընդ որում՝ տոկոսագումարը հաշվարկվում է մայր գումարի մնացորդի նկատմամբ: Բացի 429 000 դրամից, որքա՞ն գումար է Էմիլը վճարում բանկին 4 տարիների ընթացքում:

- 88 (7,8-րդ, գնումներ)** Խանութում լվացքի մեքենայի գինն ամեն տարի իջնում է միևնույն տոկոսով՝ նախորդ գնի համեմատ: Անհրաժեշտ է որոշել, թե քանի՞ տոկոսով է ամեն տարի իջնում լվացքի մեքենայի գինը, եթե այն

սկզբում դրվել է վաճառքի 200 000 դրամով, իսկ 2 տարի հետո վաճառվել է 156 000 դրամով:

- 89 (7,8-րդ, խնայողություն)** Դիցուք՝ բանկ է ներդրվել 1 500 դրամական միավոր (ցանկացած ամիս հանելու պայմանով): 2 տարի 3 ամիս հետո ավանդատուն ստացավ 1 837.5 դրամական միավոր: Որքա՞ն է եղել բանկի տարեկան (պարզ) տոկոսադրույքը:
- 90 (7,8-րդ, գնումներ)** Վերարկուի համար Աննան վճարեց 30 000 դրամ՝ 1 000-անոցներ, 2 000-անոցներ և 5 000-անոցներ՝ ընդամենը 14 թղթադրամ: 5 000-անոցները 2 անգամ քիչ էին 1000-անոցներից: Գտնել թղթադրամներից յուրաքանչյուրի քանակը:
- 91 (7,8-րդ, գնումներ)** Ալենի հեծանվի համար հայրիկը վճարեց 1 000-անոցներ, 2 000-անոցներ և 5 000-անոցներ՝ ընդամենը 15 թղթադրամ: 1 000-անոցների քանակը 1-ով շատ էր 5 000-անոցների քանակից և 1-ով պակաս՝ 2 000-անոցների քանակից: Ի՞նչ արժեք հեծանիվը:
- 92 (7,8-րդ, գնումներ)** Տատիկին նվիրելու նպատակով նրա թոռնիկները ուզում էին գնել ծաղկեփունջ՝ կազմված դեղին և կարմիր կակաչներից՝ այնպես, որ դրանցից մեկի քանակը մյուսից 3-ով շատ լիներ: Ծաղկի խանութում դեղին կակաչն արժեք 120 դրամ, կարմիր կակաչը՝ 150 դրամ: Առավելագույնը քանի՞ կակաչ կարող են գնել նրանք, եթե ունեն ընդամենը 2 000 դրամ:
- 93 (7,8-րդ, պարտք, գնումներ)** Անին 150 000 դրամի կահույք գնեց՝ ապառիկ տարբերակով, տարեկան 12% տարեկան տոկոսադրույքով, մեկ տարի ժամկետով: Յուրաքանչյուր ամիս Անին վճարումը կատարում է տերմինալով, որը 300 դրամ միջնորդավճար է պահում:
- ա) Ժամկետի ավարտին Անին, կահույքի գնից բացի, որքա՞ն լրացուցիչ գումար վճարեց:
- բ) Տերմինալի միջնորդավճարները լրացուցիչ ծախսի ո՞ր տոկոսն են կազմում:
- 94 (8-րդ, խնայողություն)** Հայկը գիտեր, որ ավանդի տոկոսային եկամտաբերությունը ներդրման դիմաց ստացված եկամուտն է՝ արտահայտված տոկոսով, և որոշելու համար պետք է հաշվել ստացած եկամտի և ներդրած գումարի տոկոսային հարաբերակցությունը: Նա որպես ավանդ ներդրել էր 200 000 դրամ և ստացել էր 22 000 դրամ եկամուտ: Որքա՞ն է կազմում Հայկի ներդրած ավանդի եկամտաբերությունը:
- 95 (8-րդ, խնայողություն)** Երկու ընկերներ տարբեր բանկերում ներդրել էին՝ մեկը 200 000 դրամ, մյուսը՝ 300 000 դրամ ավանդ, որոնց եկամտաբերությունները նույնն էին: Որոշել երկրորդ ընկերոջ ստացած եկամուտը, եթե առաջին ընկերոջ ստացած եկամուտը 25 000 դրամ էր:

- 96 **(8-րդ, խնայողություն)** Հայկն ու Արան երկու տարբեր բանկերում որպես ավանդ, որոնց եկամտաբերությունները հարաբերում էին ինչպես 10:9, ներդրել էին նույն չափով գումար: Որոշել Արայի ստացած եկամուտը, եթե Հայկի ստացած եկամուտը կազմել է 30 000 դրամ:
- 97 **(8-րդ, խնայողություն)** Հայկը իր խնայած 500 000 դրամը որպես ավանդ ներդրեց բանկում՝ տարեկան 9% տոկոսադրույքով՝ ժամկետի վերջում տոկոսների կապիտալացմամբ: Երկու տարի անց բանկում Հայկի ավանդի գումարի չափը կլինի $500\ 000 (1+9/100)^2 = 594\ 050$ դրամ: Գտեք սխալը:
- 98 **(8-րդ, խնայողություն)** Սիմոնյանների ընտանիքը իրենց երկու երեխաների համար բանկում որպես ավանդ մեկ տարի ժամկետով ներդրել էր որոշակի գումար, ընդ որում՝ մեկի համար ավանդը ներդրել էին ՀՀ դրամով, մյուսի համար՝ ԱՄՆ դոլարով, առաջինի դեպքում տարեկան 9% եկամտաբերությամբ, երկրորդի դեպքում՝ 4,59 %: Որոշել յուրաքանչյուր երեխայի ավանդի գումարի չափը՝ արտահայտված ՀՀ դրամով, եթե ներդրել էին 200 000 դրամ և \$420: Դոլարի փոխարժեքն ընդունել 482 դրամ:
- 99 **(8-րդ, խնայողություն)** Բանկը ընդունում է ավանդ 4 ամիս ժամկետով, տարեկան 6% տոկոսադրույքով՝ տոկոսների ամսական կապիտալացմամբ: Որքա՞ն գումար կլինի հաճախորդի հաշվին ժամկետի վերջում, եթե որպես ավանդ ներդնի 2 000 000 դրամ:
- 100 **(8-րդ, եկամուտ)** Կոշիկի խանութ-սրահն իր աշխատակցուհուն վարձատրում է հետևյալ սկզբունքով. բացի մշտական 50 000 դրամից, յուրաքանչյուր վաճառված ցանկացած գնի կոշիկից՝ 500 դրամ: Ամենաքիչը որքա՞ն կոշիկ պետք է կարողանա վաճառել աշխատակցուհին, որպեսզի նրա ամսական եկամուտը լինի 90 000 դրամից ոչ պակաս:
- 101 **(8-րդ, խնայողություն)** Քանի՞ տարի կպահանջվի ներդրողից, որպեսզի ներդրված ավանդի գումարը կրկնապատկվի, եթե տարեկան տոկոսադրույքը 11% է, որն ավելացվում է մայր գումարին տարին մեկ անգամ:
- 102 **(8-րդ, եկամուտ)** Արտադրության վարպետի սկզբնական աշխատավարձը 160 000 դրամ էր: Արտադրության ծավալների ընդլայնման շնորհիվ տարին մեկ նրա աշխատավարձը, նախորդ տարվա համեմատությամբ, բարձրանում էր 20%-ով: Քանի՞ տարի հետո նրա աշխատավարձը կգերազանցի 300 000 դրամը:
- 103 **(8-րդ, եկամուտ)** Երեք տրակտոր աշխատելով միասին՝ չորս օրում վարեցին 248 հա, որի դիմաց տրակտորավարներին վճարվեց 1240 000 դրամ: Երկրորդ տրակտորը երկու օրում վարում է 2 հա պակաս, քան առաջինը և երրորդը միասին մեկ օրում: Երրորդ տրակտորը 5 օրում վարում է այնքան, որքան երկրորդը 6 օրում:

ա) Տրակտորավարներից յուրաքանչյուրը որքա՞ն գումար ստացավ 4 օրվա աշխատանքի դիմաց, եթե գիտենք, որ յուրաքանչյուր տրակտորավար այդ օրերին աշխատել է հաստատուն արտադրողականությամբ:

բ) Առաջին տրակտորավարը պլանավորել էր իր սեզոնային եկամտից վերադարձնել արտասահմանում բնակվող ընկերոջ պարտքի մի մասը՝ 500 դոլար: Արդյունքում որքա՞ն տնօրինելի գումար մնաց նրա մոտ, եթե դոլարի փոխարժեքը եղել է 481 դրամ:

- 104 (8-րդ, պարտք)** Իր գյուղատնտեսական բիզնեսի զարգացման համար Արմենը ուզում է բանկից վարկ վերցնել 8 400 000 դրամ՝ արտոնյալ պայմաններով: Նա վարկը մարելու է տարեկան 1 անգամ՝ հավասարաչափ վճարելով մայր գումարը և տոկոսագումարը՝ ըստ մայր գումարի մնացորդի: Տվյալ բանկում տարեկան տոկոսադրույքը 10% է: Ամենաքիչը քանի՞ տարով կարող է Արմենը վարկ վերցնել, որպեսզի տարեկան վճարները չգերազանցեն 2 250 000 դրամը:
- 105 (8-րդ, պարտք)** Արամը վարկ է վերցրել բանկից տարեկան 14% փաստացի տոկոսադրույքով և 14 ամիս մարման ժամանակով՝ վարկի հավասար մարման եղանակով: Մոտավորապես որքա՞ն գումար է վերցրել Արամը, եթե նա բանկին ամսական պետք է վճարի 29 065 դրամ:
- 106 (8-րդ, ավանդ, վարկ)** Հայկը մեքենա գնելու նպատակով «Ա» բանկում երկարաժամկետ ավանդ էր ներդրել 550 000 դրամ: Սակայն որոշ կենցաղային խնդիրներ լուծելու նպատակով նրան գումար էր անհրաժեշտ, և նա որոշեց ավանդին ձեռք չտալ, փոխարենը վարկ վերցնել նույն բանկից, քանի որ բանկը իր ավանդատուներին հարմար պայմաններով վարկ էր տալիս ավանդի գումարի առավելագույնը 90 %-ի չափով: Պարզել բանկի կողմից հարմար պայմաններով տրամադրվող վարկի առավելագույն գումարը կբավարարի՞ Հայկին, եթե նրան անհրաժեշտ է 480 000 դրամ:
- 107 (8-րդ, բյուջե)** Ուսանողուհի Աննան և Լիլիթը շաբաթ օրերին խմբագրության համար կատարում էին վճարովի աշխատանք՝ համակարգչով մուտքագրում էին տեքստեր: Դրա դիմաց ամսվա վերջում միասին ստացան 60 000 դրամ: Աշխատած օրերին ընդմիջմանը նրանք միասին ճաշել էին՝ ընդամենը ծախսելով 9 000 դրամ, որի 2/3-ը վճարել էր Աննան, մնացածը՝ Լիլիթը: Արդար լինելու համար ինչպե՞ս պետք է բաշխեն ստացած գումարը, եթե աղջիկներն ընդունում են, որ Լիլիթը մուտքագրել է 2 անգամ շատ, քան Աննան:
- 108 (8-րդ, բյուջե, խնայողություն)** Բանակից զորացրվելուց հետո Տիգրանն աշխատում էր կապի ծառայությունում և ամսական վաստակում 160 000 դրամ տնօրինելի եկամուտ: Դրա 15%-ը խնայում էր իր հետագա ծրագրերի համար, յուրաքանչյուր ամիս 64 000 դրամ տալիս էր ծնողներին՝ ընտանիքի ծախսերին աջակցելու նպատակով, իսկ մնացածն

օգտագործում էր իր ընթացիկ կարիքների ու ցանկությունների համար: Մի քանի ամիս հետո նա որոշեց, որ ընթացիկ ծախսերը պետք է 1/3-ով նվազեցնել և դրա հաշվին ավելացնել հետագա ծրագրերի համար կատարվող խնայողությունները: Դրանից հետո Տիգրանն իր եկամտի ո՞ր տոկոսն էր խնայում:

109 (Ց-րդ, եկամուտ) Երկու քույրերը և նրանց երկու եղբայրները թոշակառու են: Քույրերից մեկի թոշակի չափը ամսական 35 000 դրամ է, մյուսինը՝ 42 000 դրամ, իսկ եղբայրների թոշակներն ավելի բարձր են: Սոցիալական ծառայության աշխատակիցը նկատեց, որ քույրերի թոշակների չափը մի եղբոր թոշակի չափի հետ կազմում են թվաբանական պրոգրեսիա, իսկ մյուս եղբոր թոշակի չափի հետ՝ երկրաչափական պրոգրեսիա: Որքա՞ն թոշակ են ստանում եղբայրները:

110 (Ց-րդ, փոխարժեք) Վարդանն իր ընտանիքի հետ մեկնելու էր Բաթում: Այդ նպատակի համար հատկացրել էր 900 դոլար, որն անհրաժեշտ էր փոխանակել լարիով: Երևանի փոխանակման կետում փոխարժեքներն այդ պահին հետևյալն էին.

Արտարժույթ	Առք (դրամ)	Վաճ. (դրամ)
դոլար	480	482
լարի	186	192

Վարդանի՝ Ց-րդ դասարան փոխադրված աղջիկը պարզել էր, որ Բաթումում դոլարի փոխարժեքը լարիով նպաստավոր է.

Արտարժույթ	Առք. (լարի)	Վաճ. (լարի)
դոլար	2,55	2,58

Հետևելով աղջկա խորհրդին՝ Վարդանը 200 դոլար փոխանակեց Երևանում, որպեսզի մեկնելիս առաջին օրը ապահով զգա, իսկ մնացածը փոխանակեց Բաթումում: Ընդամենը քանի՞ լարի ունեցավ Վարդանենց ընտանիքը, որքա՞ն գումարի կորուստ կունենար, եթե փոխանակումն ամբողջությամբ կատարեր Երևանում:

111 (Ց-րդ, ապահովագրություն) Արթուրն ապահովագրել էր իր 2 մլն դրամ արժողությամբ ավտոմեքենան: Վթարի հետևանքով Արթուրի մեքենայի վնասը գնահատվել էր 300 000 դրամ: Ապահովագրական համակարգում կիրառվող միջին արժեքի պայմանի դեպքում գործում է հատուցման հետևյալ սկզբունքը. եթե մեքենան արժե ավելի, քան ապահովագրական

գումարը, Արթուրի հատուցման գումարը պետք է լինի ապահովագրական գումարի և մեքենայի արժեքի նույն հարաբերակցությամբ:

ա) Որքա՞ն կկազմի ապահովագրական հատուցումը, եթե նա ապահովագրել էր մեքենան 1 մլն ապահովագրական գումարի չափով:

բ) Նվազագույնը որքա՞ն գումարով պետք է Արթուրը ապահովագրեր մեքենան, որպեսզի ապահովագրական հատուցումը լիներ ոչ պակաս, քան 200 000 դրամ:

112 (8-րդ, ապահովագրություն) Արան 4 մլն դրամ արժողությամբ իր մեքենան ապահովագրել էր 1,5 մլն դրամով: Ապահովագրական ընկերությունը կիրառում է ապահովագրական գումարի հաշվարկի նվազող մոտեցումը՝ ամեն պատահարից հետո ապահովագրական գումարը հատուցման չափով նվազեցնելով: Արդյունքում՝ հերթական պատահարի հատուցումն արդեն կատարվում է նվազեցված ապահովագրական գումարի սահմաններում: Ամռանը մեքենան վնասվել էր, և վնասը գնահատվել էր 200 000 դրամ: Այնուհետև, մի քանի ամիս անց, բակում կողոպտել և վնասել էին մեքենան 500 000 դրամ վնասի չափով:

ա) Հաշվի առնելով նախորդ խնդրում նշված միջին արժեքի պայմանը, հաշվել ամռանը որքա՞ն կազմեց հատուցման գումարը:

բ) Հաշվի առնելով նաև ապահովագրական գումարի հաշվարկի նվազող մոտեցումը, հաշվել երկրորդ պատահարի դեպքում որքա՞ն է կազմում հատուցման գումարը:

գ) Կազմել ֆունկցիա՝ վնասի հատուցման գումարի կախումը ապահովագրական գումարից ա) և բ) դեպքերի համար:

113 (8-րդ, գնումներ) Մարզական գույքի խանութում թենիսի սեղանի սկզբնական գինը 240 000 դրամ էր: Վեց ամիս հետո դրա գինը զեղչեցին որոշակի տոկոսով: Այնուհետև, հաջորդ վեց ամսից հետո, դարձյալ զեղչեցին նույն տոկոսով, և սեղանի գինը դարձավ 173400 դրամ: Յուրաքանչյուր անգամ քանի՞ տոկոսով էր կատարվում զեղչը: Իսկ մեկ տարվա արդյունքում քանի՞ տոկոսով զեղչվեց սեղանի սկզբնական գինը:

114* (8-րդ, գնումներ) Նախորդ ուրբաթ և շաբաթ օրերին բենզինի գները տարբեր էին, և այդ երկու օրվա միջին գինը կազմում էր լիտրը 450 դրամ: Ադամն այդ օրերին գնեց 10-ական լիտր բենզին, իսկ Վարազդատը նշված յուրաքանչյուր օր՝ 4 500 դրամի բենզին: Ու՞մ առևտուրն էր ավելի արդյունավետ: Պատասխանը հիմնավորել:

115 (8,9-րդ, բյուջե) Գեորգին երկու տարի առաջ աշնանը գնել էր 30 փեթակ մեղու՝ յուրաքանչյուրը 45 000 դրամով: Առաջին ձմեռումը այնքան էլ հաջող չէր, և գարնանը ողջ էին մնացել դրանցից 24-ը: Նա դիմել էր իր հմուտ ընկեր Վանիկին, ով նրան օգնել էր, որ ամառվա ընթացքում վերականգնվի մեղվաընտանիքների սկզբնական թիվը: Առաջին տարում ստացավ

ընդամենը 210 կգ մեղր: Երկրորդ տարին ավելի բարեհաջող էր, նա ձմռանը կորուստ չունեցավ, և ամռանը բոլոր մեղունները ավելի առատ բերք տվեցին: Իր ապրանքային մեղրը Գեորգին նախընտրում էր ամբողջությամբ հանձնել մթերող կայան, որտեղ մեղրը ընդունում էին 1 կգ–ը 2 500 դրամով: Երբ նա ամփոփում էր երկու տարվա եկամուտներն ու ծախսերը, համոզվեց, որ չնայած այդ ընթացքում անհրաժեշտ պարագաներ գնելու վրա լրացուցիչ ծախսել է նաև 150 000 դրամ, այնուամենայնիվ արդեն ամբողջությամբ վերականգնվել է մեղուններ գնելու համար ներդրած գումարը: Երկրորդ տարում միջին հաշվով որքա՞ն մեղր է ստացվել յուրաքանչյուր մեղվաընտանիքից:

116 (8,9-րդ, բյուջե) Տիկին Գոհարը սահմանամերձ գյուղի դպրոցում ուսուցչուհի էր և հմուտ մեղվապահ: Նա ստանում էր ամսական 84 000 դրամ աշխատավարձ և պահում էր 35 ընտանիք մեղու: Նույն գյուղում էր ապրում նրա թոշակառու հորեղբայրը, ով ստանում էր ամսական 49 000 դրամ թոշակ և նույնպես պահում էր 35 ընտանիք մեղու: Նրանց գյուղում մեղրը վաճառվում էր 1 կգ–ը 3000 դրամով: Ավելի շատ մեղր ստանալու ակնկալիքով՝ հորեղբայրն իր մեղուններն ամռանը տեղափոխել էր մեղրատու բույսերով հարուստ սարալանջ: Վերադարձից հետո տիկին Գոհարը հետաքրքրվեց, թե արդյունավետ էր արդյոք հորեղբոր կատարած քայլը: Հորեղբայրը ժպտով պատասխանեց. «Գոհար ջան, տեղափոխելու շնորհիվ ես քեզանից այնքան ավելի շատ մեղր ստացա, որ եթե հաշվի առնենք նաև իմ թոշակն ու քո աշխատավարձը, ապա տարվա կտրվածքով մեր երկուսի եկամուտները կհավասարվեն»: Յուրաքանչյուր մեղվաընտանիքից միջին հաշվով քանի՞ կգ ավելի մեղր ստացել հորեղբայրը:

117 (8,9-րդ, բյուջե) Սիրիայից Հայաստան ներգաղթած Վրեժը մեղվապահ էր, և որպես աջակցություն՝ նրան անհատույց տվել էին 20 ընտանիք մեղու: 10 մեղվաընտանիք էլ ինքն էր գնել հարազատների դրամական աջակցության շնորհիվ: Առաջին տարում մեղվաընտանիքներից 5–ը ձագ տվեցին, և մեղվաընտանիքների թիվը դարձավ 35: Մեղրաքամի ժամանակ ձագերից և ձագ տվող փեթակներից Վրեժը մեղր չստացավ: Մնացած ընտանիքներից ստացավ միջինը 14–ական կգ ապրանքային մեղր, որը հանձնեց մթերակայան՝ 1 կգ–ը 2 800 դրամով: Որքա՞ն էին կազմում տարվա ընթացքում մեղունների խնամքի համար պարտքով կատարած լրացուցիչ ծախսերը, եթե այդ պարտքերը փակելուց հետո մնաց 865 000 դրամ շահույթ:

118 (8,9-րդ, բյուջե) Ավետի պապիկը մեղվապահ էր, նրանք ունեին 65 մեղվաընտանիք: Քանի որ լորենու մեղրը շատ որակյալ է, ամռանը մեղունները տեղափոխել էին մի տարածք, որտեղ համատարած լորենու անտառ էր: Այդ տեղափոխման ծախսը կազմել էր 80 000 դրամ, նույնքան էլ անհրաժեշտ էր ծախսել աշնանը՝ նորից բնակավայր տեղափոխելու

համար: Բացի այդ, կատարեցին նաև 140 000 դրամի ծախս՝ անհրաժեշտ պարագաներ գնելու նպատակով: Մեղրաքամի ժամանակ մեղվաբնտանիքներից ստացան միջինը 12-ական կիլոգրամ մեղր: Ստացված մեղրը իրացրին հետևյալ կերպ. 30 շրջանակ՝ միջինը 2 կգ քաշով, վաճառեցին մեղրամոմով՝ 1 կգ-ը 4 500 դրամով: Քամած մեղրից 100 կգ-ը պահեցին օգտագործելու և հարազատներին ու հարևաններին նվիրելու համար, իսկ մնացածը վաճառեցին 1 կգ-ը 3 500 դրամով: Արդյունքում՝ որպես շահույթ որքա՞ն գումար ունեցավ Ավետի ընտանիքը նրա պապիկի մեղուների շնորհիվ:

- 119 (8,9-րդ, դրամ)** Նշանավոր հայ բանաստեղծ Վահան Տերյանի ծննդյան 125-ամյակին նվիրված 10 000 դրամ անվանական արժեք ունեցող հուշադրամն ունի 22 մմ տրամագիծ, իսկ աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 100-ամյակին նվիրված 1 000 դրամ անվանական արժեք ունեցող հուշադրամը՝ 40 մմ տրամագիծ: Որոշել յուրաքանչյուրի դիմերեսի (դարձերեսի) մակերեսը և դրամաշուրթի երկարությունը:
- 120 (8,9-րդ, վճարային քարտ)** Վճարային քարտի PIN կոդն ունի 6 նիշ: Հայտնի է, որ կենտ տեղերը զբաղեցնող թվանշանների գումարը հավասար է զույգ տեղերը զբաղեցնող թվանշանների գումարին: Պարզել.
- ա) Արդյոք PIN կոդն արտահայտող թիվը 11-ի բազմապատի՞կ է,
 - բ) Ի՞նչ գիտեք վճարային քարտի մասին,
 - գ) Կարո՞ղ է արդյոք PIN կոդն ունենալ 4 նիշ:
- 121 (8,9-րդ, վճարային քարտ)** Վճարային քարտի PIN կոդը քառանիշ կամ վեցանիշ է, որի վերջին 2 նիշերով կազմված թիվը 75 է:
- ա) Արդյո՞ք քառանիշ թվի դեպքում կոդը կլինի 25-ի բազմապատիկ թիվ:
 - բ) Վեցանիշ թվի դեպքում 25-ը կլինի՞ այդ թվի բաժանարար, թե՞ ոչ:
 - գ) Վճարային քարտի PIN կոդի հետ կապված անվտանգության ի՞նչ կանոնների եք տիրապետում:
- 122 (9-րդ, խնայողություն)** Սոնան որոշել էր գումար խնայել իր նախընտրած մարզակոշիկը գնելու համար: Այդ նպատակով նա յուրաքանչյուր շաբաթ իր ծնողների տված գումարից խնայողություն էր կատարում:
- ա) 6 շաբաթ անց որքա՞ն խնայողություն կունենա Սոնան, եթե առաջին շաբաթը խնայի 500 դրամ, իսկ յուրաքանչյուր հաջորդ շաբաթը՝ նախորդից 100 դրամով ավելի:
 - բ) Նույն սկզբունքով, ամենաքիչը որքա՞ն շաբաթ պետք է նա խնայողություն կատարի, որպեսզի գումարը գերազանցի մարզակոշիկի գինը, եթե մարզակոշիկն արժե 6 800 դրամ:

- 123 (9-րդ, խնայողություն)** Արթուրը որոշել է նվազեցնել իր առօրյա ծախսերը՝ խնայելու նպատակով, ընդ որում՝ աստիճանաբար պակասեցնելով: Առաջին օրը նա ծախսեց 8 000 դրամ, իսկ յուրաքանչյուր հաջորդող օր նա որոշել է ծախսել 250 դրամով պակաս, քան նախորդ օրը: Քանի՞ օրում նրա ծախսած ամբողջ գումարը կկազմի 57 000 դրամ:
- 124 (9-րդ, եկամուտ)** Կամոն, ով զբաղվում է շինարարությամբ, ստացել է խանութի վերանորոգման աշխատանքի երկու առաջարկ: Առաջին գործատուն ցանկանում է, որ խանութը վերանորոգվի 7 օրում և առաջարկում է վարձատրության հետևյալ մոտեցումը. առաջին օրը՝ 2 000 դրամ, իսկ մնացած յուրաքանչյուր հաջորդ օրը՝ նախորդից 1 000 դրամով ավելի: Երկրորդ գործատուն տալիս է 5 օր ժամանակ և առաջարկում է վարձատրության հետևյալ եղանակը՝ առաջին օրը՝ 1 500 դրամ, իսկ մնացած յուրաքանչյուր հաջորդ օրը՝ նախորդից 2 անգամ ավելի:
- ա) Կատարել հաշվարկներ և պարզել՝ ո՞ր առաջարկը ընդունի Կամոն:
- բ) Զրուցել աշխատանքային պայմանագրի մասին՝ կարևորելով դրա պարտադիր ընթերցումը ստորագրելուց առաջ, ծանոթացումը աշխատանքային պայմաններին, պահանջներին, վարձատրությանը:
- 125 (9-րդ, բյուջե, գնումներ)** Անհատ ձեռներեցներ Արամը և Հայկը օգոստոս – սեպտեմբեր ամիսներին զբաղվում էին ձմերուկ վաճառելով: Նրանք պարբերաբար, միմյանցից անկախ, մեկնում էին գյուղական տնտեսություններ, մեծածախ գնով գնված ձմերուկը վերադառնալուց հետո շուկայում վաճառում էին հաճախորդներին: Յուրաքանչյուր անգամ բերում էին 1–ական տոննա ձմերուկ, որի տեղափոխման ծախսը կազմում էր 5 000 դրամ: Շուկայում վաճառելիս մեծածախ գնին Արամն ավելացնում էր՝ 1 կգ-ին 40 դրամ, իսկ Հայկը՝ 50 դրամ: Արդյունքում՝ Արամը ձմերուկն ավելի արագ էր վաճառում: Այդ երկու ամսում նա վաճառեց 14 տոննա ձմերուկ, իսկ Հայկը՝ 11 տոննա: Արդյունքում ո՞վ ավելի շատ շահույթ ստացավ, և ինչքանո՞վ:
- 126 (9-րդ, բյուջե)** Վահեն իրենց այգուց ստացված ծիրանից առանձնացրեց 250 կգ, որի ապրանքային տեսքն այնպիսին էր, որ պիտանի չէր վաճառքի համար: Նա որոշեց դրանից օղի ստանալ և քանի որ ուներ օղի թորելու սարք, իսկ վառելիքի համար օգտագործելու էր իր այգու ծառերից կտրած չոր ճյուղերը, օղի պատրաստելը նրանից լրացուցիչ ծախսեր չէր պահանջում: Աշխատանքները կատարելուց հետո նա ստացավ 24 լիտր 55%-անոց օղի: Օղու քառորդ մասը պահեց օգտագործելու համար, իսկ մնացածը վաճառեց 45 000 դրամով:
- ա) Առանձնացրած ծիրանի յուրաքանչյուր կգ-ից քանի՞ դրամի արդյունք ստացավ Վահեն:
- բ) Առավելագույնը քանի՞ լիտր օղի կստանար, եթե ցանկանար, որ այն պարունակի 66% սպիրտ:

- 127 (9-րդ, բյուջե)** Վանիկ պապին օգտագործում էր միայն թթի օղի: Շուկայից նա գնեց 56 կգ թուֆ՝ կիրագրամը 400 դրամով և լցրեց տակառի մեջ: Այնուհետև պայմանավորվեց հարևան Գառնիկի հետ, որ նա բերի սարքավորումները և կատարի թորման աշխատանքները: Դրա դիմաց խոստացավ նվիրել օղու 20% -ը: Թորելուց հետո պարզվեց, որ միջինում 7 կգ թթից ստացվել է 1 լիտր 55%-անոց օղի:
- ա) Վանիկ պապին խոստումը կատարելուց հետո որքա՞ն օղի ունեցավ, և ի՞նչ արժեքով օղու լիտրը նրա համար:
- բ) Ինչպե՞ս կփոխվեր այդ արժեքը, եթե օղին լիներ 50%-անոց:
- 128*** **(9-րդ, բյուջե)** Գոհար մորաքույրն իրենց այգու բերքից, չիր պատրաստելու նպատակով, առանձնացրել էր 80 կգ ծիրան և նույնքան թուզ: Աշնան վերջում իր պատրաստած չրերից 2-ական կիրագրամ պահեց իրենց համար, իսկ մնացածը վաճառեց միևնույն գնով՝ կիրագրամը 3 000 դրամ և արդյունքում ստացավ 84 000 դրամ: Նա պարզել էր, որ ծիրանի զանգվածի 15%-ի չափով է չիր ստացվում: Իսկ քանի՞ տոկոս չիր էր ստացվել թզից:
- 129 (9-րդ, եկամուտ)** Վազգենը, Տիգրանը և Տարոնը 3 ամսում ստացան 774 000 դրամ աշխատավարձ: Ընդ որում՝ Վազգենը 2 ամսում ստացավ այնքան աշխատավարձ, որքան Տարոնը՝ 3 ամսում, իսկ Տիգրանը 2,5 ամսում ստանում է այնքան աշխատավարձ, որքան Վազգենը 3 ամսում: Որքա՞ն աշխատավարձ է ստանում Տիգրանը:
- 130 (9-րդ, վճարային քարտ)** Դեբետային քարտի PIN կոդը ստացվել էր CVV կոդը հակառակ կարգով գրելով և կցագրելով սկզբնականին աջից կամ ձախից: Սուրենը նկատեց օրինաչափություն՝ 11-ի բազմապատիկ է: Ինչպե՞ս ստուգեց նա: (Ո՞րն էր օրինաչափությունը):
- 131 (9-րդ, եկամուտ)** Գործարանի աշխատակիցները եռամսյակի ավարտին ստանում են հավելավճար՝ ըստ իրենց որակավորման աստիճանի (I- IV աստիճաններ):
- I աստիճանի որակավորում ունենալու դեպքում՝ 17 000 դրամ
 II աստիճանի որակավորում ունենալու դեպքում՝
 III աստիճանի որակավորում ունենալու դեպքում՝
 IV աստիճանի որակավորում ունենալու դեպքում՝ 57 375 դրամ
- Գտնել II և III աստիճանների որակավորում ունեցող աշխատակիցների հավելավճարները, եթե հայտնի է, որ I-IV աստիճանների հավելավճարները արտահայտող թվերը կազմում են երկրաչափական պրոգրեսիա: Որոշել երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը:
- 132 (9-րդ, խնայողություն, պարտք)** Նաիրին իր խնայած 3.5 միլիոն դրամը մեկ տարով որպես ավանդ ներդրեց բանկում՝ տարեկան 11.5% տոկոսադրույքով: Տարին լրանալուց հետո նա իր ամբողջ գումարը ստացավ (նկատի ունենալ, որ ավանդին ավելացված գումարի 10%-ը

պահվում է որպես եկամտային հարկ): Նաիրին ցանկանում էր գնել 4 360 000 դրամ արժողությամբ ավտոմեքենա: Պակասող գումարի կեսը նվիրեց նրա հորեղբայրը, իսկ մնացածը պարտք վերցրեց ընկերոջից: Որքա՞ն էր նրա պարտքը:

133 (9-րդ, ավանդ) Բանկն առաջարկում է ավանդի հետևյալ տեսակը. արժույթի տեսակը՝ ՀՀ դրամ, ժամկետը՝ 2 ամիս՝ 9% տարեկան (պարզ) տոկոսադրույքով:

Հայկը, ով նոր էր վաճառել իր մեքենան 1 500 000 դրամով, որոշեց օգտվել այս առաջարկից և գումարը որպես ավանդ 2 ամսով ներդրեց բանկում:

ա) Որքա՞ն կկազմի Հայկի գումարի չափը ժամկետի վերջում: Հաշվի առնել, որ ավելացած գումարի 10%-ը գանձվում է որպես եկամտային հարկ:

բ) Արդյո՞ք տարբերությունը զգալի կլինե՞ր, եթե տոկոսները յուրաքանչյուր ամսում կապիտալացվեին:

գ) Ըստ ձեզ, ինչու՞ Հայկը նախընտրեց գումարը պահել բանկում, այլ ոչ թե տանը:

134 (9-րդ, ավանդ) Բանկն առաջարկում է երկարաժամկետ՝ 3 տարի ժամկետով «Պարզ» ավանդ: Ընդ որում, եթե տոկոսագումարները ստանում ենք տարեկան կտրվածքով, ապա տարեկան տոկոսադրույքը սահմանվում է 9.15%: Բայց եթե տոկոսագումարները վերցնում ենք ժամկետի վերջում, ապա բանկը տարեկան տոկոսադրույքը սահմանում է 9.4 %:

ա) Ենթադրենք՝ ցանկանում ենք տոկոսագումարները վերցնել տարեկան կտրվածքով, որքա՞ն կկազմի այդ գումարի չափը հարկումից հետո, եթե ներդնենք 200 000 դրամ: Ավանդից ստացված տոկոսային եկամտի վրա կիրառվում է 10% եկամտային հարկ:

բ) Երկրորդ պայմանի դեպքում որքա՞ն ավելի գումար ենք արդյունքում ստանում:

գ) Քննարկել տոկոսադրույքների տարբերության պատճառները:

135 (9-րդ, ավանդ) Բանկն առաջարկում է մեկ տարի և ավելի ժամկետով ավանդ՝ ամսական համալրման հնարավորությամբ: Վահանը որոշեց օգտվել այս ավանդից և ներդրեց 200 000 դրամ՝ մեկ տարի և 5 ամիս ժամկետով, 8.76% տարեկան պարզ տոկոսադրույքով, և տոկոսագումարները ժամկետի վերջում ստանալու պայմանով: Բացի այդ, նա նպատակահարմար գտավ օգտագործել գումարի ամսական համալրման հնարավորությունը և նախավերջին 5 ամիսների վերջում ներդնում էր 5000-ական դրամ: Ավանդի ժամկետի վերջում որքա՞ն է կազմում Վահանի ավանդի չափը, եթե ավելացած գումարի 10%-ը հարկվում է:

- 136 (9-րդ, ավանդ)** Դիցուք՝ Աննան և Արաքսը ներդրեցին ավանդ միևնույն բանկում, միևնույն չափի գումար՝ տարեկան 10% բարդ տոկոսադրույքով: Մեկ տարի անց տոկոսագումարի ավելացումից հետո Աննան հանեց իր հաշվից 50 000 դրամ, որից ևս մեկ տարի հետո ներդրեց 50 000 դրամ: Արաքսը՝ ընդհակառակը, 1 տարի հետո իր հաշիվը համալրեց 50 000 դրամով, իսկ ևս 1 տարի անց տոկոսագումարի ավելացումից հետո հանեց իր հաշվից 50 000 դրամ: Ներդրումից 3 տարի անց ո՞վ կստանա ավելի մեծ գումար, և որքա՞ն կլինի տարբերությունը:
- 137 (9-րդ, եկամուտ)** Երաժշտական դպրոցի սաները կազմակերպել են մեծ համերգ, որի տոմսերը դրվում են վաճառքի 2500 դրամով: Յուրաքանչյուր դասարանի տրամադրվում է 1 շարք, որի տոմսերի գինը հատկացվում է նրանց: Դահլիճում կար 320 տեղ՝ դասավորված միատեսակ շարքերով: Այն բանից հետո, երբ ամեն շարքում տեղերի թիվը մեծացրին 4-ով և ավելացրին ևս մեկ շարք՝ տնօրենության և ուսուցիչների համար (հրավիրատոմսեր), դահլիճում տեղերի թիվը դարձավ 420:
- ա) Քանի՞ շարք եղավ դահլիճում, և քանի՞ դասարան էր մասնակցում համերգին:
- բ) Որքա՞ն եկամուտ ստացավ յուրաքանչյուր դասարան:
- գ) Ինչպե՞ս կտնօրինեիք այդ գումարը դու՛ք:
- 138 (9-րդ, ավանդ)** Մանեն Ա բանկում արտարժույթով ավանդ ներդրեց մեկ տարի ժամկետով, 6% տոկոսադրույքով: Տարին լրանալուց հետո տոկոսագումարն ավելացրեց մայր գումարին և ևս մեկ տարի նույն տոկոսադրույքով շարունակեց ավանդը: Իսկ Նարեն նույն չափի գումար նույն եղանակով ավանդ ներդրեց Բ բանկում՝ մի տարբերությամբ, որ այդտեղ տոկոսադրույքն առաջին տարում 7% էր, երկրորդ տարում՝ 5%: Երկրորդ տարվա վերջում նրանցից ո՞վ ավելի շատ գումար ստացավ և ի՞նչ չափով:
- 139 (9-րդ, ավանդ)** Մանեն և Նարեն ունեին 3-ական միլիոն դրամ և ուզում էին բանկում ավանդ ներդնել 3 տարի ժամկետով: Բանկը 3 տարով ավանդ ընդունելու երկու տարբերակ առաջարկեց՝ կա՛մ տարեկան 9% անվանական տոկոսադրույքով՝ առանց կապիտալացման, կա՛մ տարեկան 8% անվանական տոկոսադրույքով՝ յուրաքանչյուր տարվա վերջում տոկոսագումարն ավելացնելով մայր գումարին: Մանեն ընտրեց առաջին տարբերակը, իսկ Նարեն՝ երկրորդ տարբերակը: Ժամկետի վերջում ո՞վ ավելի շատ գումար ստացավ և որքա՞ն ո՞վ շատ:
- 140 (9-րդ, փոխարժեք, խնայողություն)** Ռուսաստանում գործարարությամբ զբաղվող Վահագնը որոշել էր մեկ տարի հետո վերադառնալ հայրենիք և իր հայաստանաբնակ քրոջն ամռանը փոխանցեց 9,7 միլիոն ռուբլի՝ իր համար բնակարան գնելու նպատակով: Քույրը որոշեց բնակարան գնել գալիք ձմեռվա վերջում: Նա այդ գումարը փոխանակեց դոլարով և 6 ամիս

Ժամկետով ներդրեց բանկում՝ տարեկան 5% տարեկան տոկոսային եկամտաբերությամբ: Ներդրման օրվա փոխարժեքները տրված են աղյուսակում: Ավանդի ժամկետի վերջում որքա՞ն գումար կար բնակարան գնելու համար:

Արտարժույթ	Առք (դրամ)	Վաճ (դրամ)
դոլար	483	485
ռուբլի	7,28	7.33

141 (9-րդ, վարկ) Արան «Ա» բանկում ուներ վարկ, որը բանկը տրամադրել էր տարեկան 21% տոկոսադրույքով: Նա ցանկանում էր այդ բանկում ներդնել ավանդ: Ընկերներից մեկը ներկայացրեց, որ ավանդի տարեկան տոկոսադրույքը կկազմի 24%՝ վարկի տոկոսադրույքին ավելացրած հավելված: Արան հաշվեց, որ եթե ներդնի 200 000 դրամ, ապա մեկ տարի անց իր ներդրած ավանդի գումարի չափը բանկում կկազմի 200 000 $(1+24/100) = 248 000$ դրամ: Գտե՞ք սխալը:

142* (9-րդ, վարկ) Ուսանողը սովորում է պետական բուհում: Նախավերջին կուրսն ավարտելուց հետո հաջորդ ուստարվա ուսման վճարը, որը կազմում է 360000 դրամ, տալու նպատակով նա բանկից ուսանողական վարկ վերցրեց: Բանկը վարկը ձևակերպեց 15 ամիս մարման ժամկետով, տարեկան 16% անվանական տոկոսադրույքով: Վարկի մարումը կատարվելու է հետևյալ սկզբունքով. 12 ամիս մարվում են միայն տոկոսագումարները, իսկ վերջին 3 ամիսներին՝ վարկի մայր գումարը՝ հավասար մասնաբաժիններով՝ գումարած տոկոսագումարները: Պետական ծրագրի շրջանակներում նշված տոկոսադրույքի 2%-ը սուբսիդավորվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

ա) Հաշվել ուսանողի ամսական վճարելիք տոկոսագումարի չափը և վարկի փաստացի տոկոսադրույքը:

բ) Հաշվել վերջին երեք ամիսներին ուսանողի ամսական վճարելիք գումարի չափը:

գ) Որքա՞ն կազմեց պետության աջակցությունն ուսանողին:

143 (9-րդ, վարկ) Արմենը 4 տարի ժամկետով, տարեկան 18% տոկոսադրույքով վարկ վերցրեց Ա վարկային կազմակերպությունից՝ պայմանով, որ առաջին տարիներին վճարելու է միայն տոկոսագումարը, սակայն իրավունք ունի վաղաժամկետ փակելու վարկը: Մեկ տարի անց նա տեղեկացավ, որ Բ բանկը երիտասարդ ընտանիքներին տրամադրում է վարկ՝ տարեկան 12% տոկոսադրույքով: Օգտվելով այդ հնարավորությունից՝ Արմենն անմիջապես իր նախորդ վարկի չափով, 3 տարի ժամկետով վարկ վերցրեց

Բ բանկից և փակեց Ա վարկային կազմակերպության վարկը: Արդյունքում որքա՞ն կազմեց Արմենի վարկի միջին տարեկան տոկոսադրույքը:

- 144 (9-րդ, բյուջե)** Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նախորդ տարվա հաստիքացուցակը հետևյալն էր.

Պաշտոն	Հաստիք	Աշխատավարձ (դրամ)
Տնօրեն	1	340 000
Հաշվապահ	1	270 000
Բաժնի վարիչ	2	240 000
Մասնագետ	4	200 000
Սպասարկող անձնակազմ	5	130 000
Գործավար	1	120 000

Աշխատանքի ծավալները մեծացնելու հետ կապված՝ այս տարվա սկզբին ընկերության հաստիքներն ավելացան երկուսով՝ առաքողի և փորձագետի: Առաքողի աշխատավարձի չափը սահմանվեց աշխատակիցների նախորդ տարվա աշխատավարձերի մոդային հավասար, իսկ փորձագետի աշխատավարձը՝ նախորդ տարվա աշխատավարձերի միջնաթվին հավասար: Դրա արդյունքում արդյոք փոխվե՞ց ընկերության աշխատակիցների աշխատավարձերի թվաբանական միջինը, և ի՞նչ չափով:

- 145 (9-րդ, ռիսկեր)** Նարեն բանկային իր նոր քարտից գումար էր ցանկանում կանխիկացնել: Շտապելուց սխալմամբ հավաքել էր իր նախկին քարտի ծածկագիրը, և բանկոմատը քարտը վերադարձրել էր: Ստուգելով դրամապանակը, պարզեց, որ մոռացել է ծածկագրի թուղթը, սակայն հիշում էր, որ ծածկագիրը հետևյալ երեք դեպքերից մեկն է. 0826, 0862, 2608: Որքա՞ն է հավանականությունը, որ Նարեն ճիշտ կհավաքի ծածկագիրը, և բանկոմատը քարտը «կույ չի տա», եթե հայտնի է, որ երեք անգամ սխալ ծածկագիր հավաքելու դեպքում բանկոմատը քարտը չի վերադարձնում:

- 146 (9-րդ, ապահովագրություն)** Սարգիսը փետրվարի 11-ին ժամը 23:30-ի սահմաններում ապահովագրված իր մեքենայով Գորիս–Սիսիան ավտոմայրուղում ենթարկվել էր վթարի: Բջջային վատ կապի պատճառով չէր կարողացել դիմել ապահովագրական ընկերությանը կամ ոստիկանության բաժին: Բացի այդ, մերկասառույցի պատճառով մեքենաների շարժ չկար, որպեսզի օգնության դիմեր: Արդյունքում Սարգիսը միայն առավոտյան 9:30-ի սահմաններում կարողացավ դիմել ապահովագրական ընկերությանը՝ փոխհատուցում ստանալու պահանջով,

սակայն մերժվեց այն պատճառաբանությամբ, որ ուշ է դիմել: Սարգիսը ստիպված էր դիմել ֆինանսական հաշտարարին, որի ուսումնասիրություններից պարզ էր դարձել, որ նա իսկապես չի կարողացել դիմել ընկերությանը բջջային վատ կապի պատճառով: Ընկերությունը պարտավորվեց բավարարել Սարգիսի պահանջը: Հաշվի առնելով միջին արժեքի պայմանը (տե՛ս խնդիր 111-ը)՝ որոշել վնասի հատուցման չափը, եթե Սարգիսը իր 3 մլն դրամ արժողությամբ մեքենան ապահովագրել էր 1 մլն դրամով, իսկ վնասի չափը 150 հազար դրամ էր:

147* (9-րդ, գնումներ) Ձմեռային երեք ամիսներին շուկայում կարտոֆիլի գները տարբեր էին, և այդ ամիսներին միջին գինը կազմում էր կիլոգրամը 200 դրամ: Նունեն յուրաքանչյուր ամսում գնեց 10–ական կիլոգրամ, իսկ նրա հարևանուհին՝ յուրաքանչյուր ամսում՝ 2 000 դրամի չափով կարտոֆիլ: Համեմատել նրանց ծախսած գումարները և գնած կարտոֆիլի զանգվածները:

148 (9-րդ, դիսկեր) Սոնայի քույրիկը նրան նվիրել էր «6–ը 45–ից» վիճակախաղի մեկ տոմս: Սոնան որոշել էր նշել 6, 11, 19, 21, 40, 44 համարները: Բայց նրա քույրը հայտնեց, որ վերջին 15 վիճակախաղերի ժամանակ 22 համարը 3 անգամ ավելի շատ է եղել շահող համարների վեցյակում, քան 21 համարը: Լսելով այդ մասին՝ Սոնան ընտրած համարներից 21–ի փոխարեն նշեց 22–ը: Դրա հետևանքով արդյոք մեծացավ, թե՞ փոքրացավ Սոնայի շահելու հավանականությունը:

149 (9-րդ, դիսկեր) Էլեկտրոնիկայի խանութ–սրահը յուրաքանչյուր ամսվա վերջում կազմակերպում է վիճակախաղ՝ նվազագույնը 150 000 դրամի գնումներ կատարած հաճախորդների համար: Կախված հաճախորդների քանակից՝ հիմնականում խաղարկվում են ավտոմեքենա, լվացքի մեքենա, սառնարան: Այս ամիս վիճակախաղի մասնակիցները 120 հոգի էին, և խաղարկվում էր ըստ հերթականության 2 սառնարան, 2 լվացքի մեքենա, մեկ ավտոմեքենա:

Ալլան կատարել էր 160 000 դրամի գնումներ և ստացել էր վիճակախաղի մասնակցության համարակալված տոմս: Վիճակախաղի ժամանակ արկղից պատահական հանվում է տոմսի համար, և այդ համարի տոմս ունեցող մասնակիցը շահում է խաղարկվող իրը:

ա) Որքա՞ն է հավանականությունը, որ Ալլան կշահի սառնարան:

բ) Որքա՞ն է հավանականությունը, որ Ալլան կշահի լվացքի մեքենա:

գ) Որքա՞ն է հավանականությունը, որ Ալլան կշահի ավտոմեքենա:

դ) Սոցիալոգումներից պարզ դարձավ, որ վիճակախաղի մասնակիցների 70%-ը, խիստ անհրաժեշտ գնումից զատ, կատարել է ոչ հրատապ գնում, որպեսզի մասնակցի վիճակախաղին: Ի՞նչ խորհուրդ կտայիք նրանց:

- 150 (9-րդ, ռիսկեր)** «5-ը 36-ից» վիճակախաղի մասնակիցը ընտրում է 1-ից 36 համարներից որևէ 5 տարբեր համարներ (հերթականությունը կարևոր չէ), իսկ «6-ը 29-ից» վիճակախաղի մասնակիցը՝ 1-ից 29 համարներից որևէ 6 տարբեր համարներ: Առավելագույն շահում լինում է, եթե ընտրված բոլոր համարները ճիշտ են գուշակված, իսկ նվազագույն շահում՝ եթե ընտրված 2 համարներն են ճիշտ գուշակված: Վիճակախաղերից որում է ավելի մեծ՝
- ա) Առավելագույն շահում լինելու հավանականությունը:
 - բ) Նվազագույն շահում լինելու հավանականությունը:

1.3. *Խնդիրներ 10-11-րդ դասարանների համար*

- 151 (10-րդ, խնայողություն)** Արմենի ընտանիքը բնակարանը ծմռանը տաքացնում էին էլեկտրասալիկներով, և յուրաքանչյուր տարվա ծմռային շրջանում դրանց վրա ծախսված ընդհանուր գումարը կազմում էր 200 000 դրամ: Նրանց հարևանը հաշվարկեց, որ էներգիայի 30%-ը անտեղի կորչում է հնացած պատուհանների պատճառով: Նա առաջարկեց դրանք փոխարինել ջերմամեկուսիչ պատուհաններով, որոնց շնորհիվ էներգիայի կորուստը կնվազի 45%-ով: Որքա՞ն կկազմի պատուհանները փոխելու ծախսը, եթե այն չի գերազանցում դրանց շնորհիվ 4 տարվա խնայված հոսանքի արժեքը:
- 152 (10-րդ, խնայողություն)** Տատիկն ուզում էր պատրաստել մուրաբա, որի համար անհրաժեշտ էր հաղարջ և շաքարավազ: Շաքարավազի գինը խանութում 300 դրամ էր, իսկ հաղարջը շուկայում վաճառվում էր կիլոգրամը 1 200 դրամով: Սակայն կիրակի օրը նա անտառից հավաքեց 5 կգ հաղարջ և ծախսեց ընդամենը 1500 դրամ՝ որպես ճանապարհաձախս, իսկ անհրաժեշտ շաքարավազը գնել էր խանութից: Հայտնի է, որ մուրաբա պատրաստելիս 1 կգ հաղարջին ավելացվում է 1 կգ շաքարավազ: Արդյունքում ստացվում է 1,5 կգ մուրաբա: Որքանո՞վ ավելի շատ կլինե՞ր տատիկի ծախսած գումարը, եթե իր պատրաստած մուրաբայի չափով մուրաբա ունենար՝ ա) հաղարջը շուկայից գնելու դեպքում, բ) խանութից պատրաստի մուրաբա գնելու դեպքում, որտեղ 1 կգ-ն արժե՞ր 1 600 դրամ:
- 153 (10-րդ, բյուջե)** «Ընթերցասեր» սրճարանում յուրաքանչյուր հաճախորդին մատուցվում էր 1 000 դրամի ծառայություն՝ սուրճ, հյուս և թխվածք: Ստացված գումարի 70% -ը կազմում էր սրճարանի ծախսերը, իսկ մնացածը՝ շահույթն էր: Օրական սրճարան էր այցելում միջինում 60 հաճախորդ: Որոշ ժամանակ անց սրճարանի տերը որոշեց այդ ծառայությունների գինը նվազեցնել 10% -ով, և դրա շնորհիվ հաճախորդների թիվն ավելացավ 5%-ով: Դրա արդյունքում արդյոք ավելացա՞վ, թե՞ նվազեց սրճարանի շահույթը, և քանի՞ տոկոսով:
- 154 (10-րդ, բյուջե)** Կոշիկի խանութում աշխատողի աշխատավարձը ձևավորվում է հետևյալ կերպ՝ ամսական 60 000 դրամ հաստիքային բաղադրիչին ավելանում է գործարքային բաղադրիչը՝ յուրաքանչյուր վաճառված զույգի դիմաց 400 դրամ: Նախորդ տարվա վիճակագրության համաձայն՝ խանութում ամսական վաճառվել էր 150 – 200 զույգ կոշիկ, իսկ այս տարի կանխատեսվում է վաճառքի քանակի 10-12 % աճ: Ի՞նչ սահմաններում կարող է լինել աշխատողի աշխատավարձն այս տարի:
- 155 (10-րդ, բյուջե)** Ղազարյանների ընտանիքը որոշել է այս տարվա առաջին 6 ամիսների խնայողության 80%-ը հատկացնել ամառային հանգիստը

կազմակերպելուն: Նրանց միջին ամսական եկամուտը 360 000 դրամ է, իսկ միջին ամսական ծախսերն այսպիսին են՝

- Մնունդ և տրանսպորտ՝ 156 000 դրամ
- Հագուստ և կոշիկ՝ 39 000 դրամ
- Կոմունալ ծառայություններ և այլ ծախսեր՝ 75 000 դրամ:

Որքա՞ն է կազմում Ղազարյանների ընտանիքի ամառային հանգստին հատկացվող գումարը:

156 (10-րդ, բյուջե) Անահիտը Ռուսաստանում բնակվող ազգականին պետք է բանկի միջոցով փոխանցի 200 դոլար գումար: Որպեսզի ազգականը ստանա ամբողջական գումարը, որքա՞ն պետք է կազմի նրա փոխանցումը, եթե բանկի միջնորդավճարը 2,5% է:

157 (10-րդ, բյուջե) Տնտեսական խանութն ունի 2 հսկիչ վաճառող, ովքեր ստանում են 80 000 դրամ աշխատավարձ, 2 գանձապահ, ովքեր ստանում են 100 000 դրամ աշխատավարձ և 1 տնօրեն, ով ստանում է 140 000 դրամ աշխատավարձ: Խանութում յուրաքանչյուր միավոր ապրանք վաճառվում է ձեռք բերված գնից 50 դրամով ավելի: Նվազագույնը քանի՞ ապրանք պետք է վաճառվի ամսվա ընթացքում, որպեսզի խանութն ունենա շահույթ:

158 (10-րդ, գնումներ) Բարեգործական հիմնադրամը ցանկանում է ազատամարտիկների 8 ընտանիքների տրամադրել բնակարաններ:

Բնակարանների արժեքները որոշվում են ըստ մակերեսի՝ յուրաքանչյուր 1 մ²-ի համար 450 հազար դրամ:

Մակերես	Ընտանիքի կազմ	Քանակ
31 մ ²	2 անձ	2
54 մ ²	4 անձ	3
60 մ ²	5 անձ	3

Որքա՞ն գումար է անհրաժեշտ նվիրաբերել բարեգործական հիմնադրամին, որպեսզի հնարավոր լինի տրամադրել այդ բնակարանները:

159 (10-րդ, բյուջե) Կարենի ընտանիքը նախորդ տարում եկամտի մոտ 40%-ը ծախսել է սննդի, մոտ 20%-ը՝ ոչ սննդային ապրանքների, մոտ 25%-ը՝ տարբեր ծառայությունների վրա, իսկ 15%-ը խնայել է: Նոր հեռուստացույց գնելու նպատակով ընտանիքի անդամներն այս տարի 2%-ով նվազեցրին սննդի, 3%-ով՝ ծառայությունների ծախսերը և 5%-ով՝ խնայողությունը: Որքա՞ն էր Կարենի ընտանիքի ամսական եկամուտը, եթե այս տարվա վերջում պարզվեց, որ ոչ սննդային ապրանքների ծախսերը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 246 000 դրամով:

- 160 (10-րդ, բյուջե, գնաճ)** Անին ուսանող է, և ընթացիկ ծախսերի համար հայրիկը նրան տալիս է գումար՝ շաբաթական 8 000 դրամ: Անին այդ գումարի 25% -ը ծախսում է տրանսպորտից օգտվելու, իսկ մնացածը՝ ճաշի և մանր գնումների վրա: Սակայն ծմեռային ամիսներին գնաճի հետևանքով ճաշարանում գները բարձրացան միջինում 15%-ի չափով: Անիի հայրիկը որքանով պետք է ավելացնի աղջկան հատկացվող շաբաթական գումարը, որպեսզի Անիի գնողունակությունը չնվազի:
- 161 (10-րդ, ծախս, գնաճ)** 2 ամիս առաջ 1 լ ռեզույար տեսակի բենզինի գինը 410 դրամ էր, իսկ պրեմիում տեսակի 1 լ բենզինի գինը՝ 430 դրամ: Արամի ավտոմեքենան շաբաթական միջինում ծախսում է 30 լ բենզին, և նա օգտագործում է ռեզույար տեսակի բենզին, իսկ Կարենի ավտոմեքենան՝ շաբաթական միջինում 25 լիտր բենզին, և նա օգտագործում է պրեմիում տեսակի բենզին: Այս ամիսների ընթացքում գնաճի հետևանքով յուրաքանչյուր տեսակի բենզինի գինը ամսական աճեց 2,7%-ով: Հաշվել, թե տղաներից յուրաքանչյուրի բենզինի ծախսը որքանով է ավելացել:
- 162 (10-րդ, վարկ)** Աստղիկը դիմել է բանկ՝ վարկ ստանալու համար: Նա ցանկանում է գնել մեքենա, որն արժե 8 մլն ՀՀ դրամ: Վարկի ամսական մարումները կազմելու են 200 000 ՀՀ դրամ: Բանկի կանոններով սահմանված է, որ վարկ կարող է ստանալ այն անձը, ում ամսական եկամուտն առնվազն երկու անգամ գերազանցում է ամսական մարումները: Եթե վարկառուի եկամուտները բավարար չեն, բանկը կարող է պահանջել վարկի ապահովման այլ միջոցներ: Առնվազն որքա՞ն պետք է լինի Աստղիկի եկամուտը, որպեսզի բանկը նրան վարկ տրամադրի:
- 163 (10-րդ, վարկ)** Տիգրանը մեկ տարի ժամկետով 300 000 դրամ սպառողական վարկ է վերցրել տարեկան 18% անվանական տոկոսադրույքով: Բանկն առաջարկում է վարկի մարման հետևյալ եղանակը՝ տոկոսագումարները վճարել ամսական պարբերականությամբ, իսկ մայր գումարը՝ իրեն նախընտրելի ժամանակացույցով և չափով:
- ա) Միջին հաշվով որքա՞ն է կազմում Տիգրանի ամսական վճարելիք տոկոսագումարը:
- բ) Վարկի դիմաց նա տարվա ընթացքում որքա՞ն է վճարելու բանկին, եթե յուրաքանչյուր ամսում լրացուցիչ վճարելու է սպասարկման վճար մայր գումարի 0,2 %-ի չափով:
- 164 (10-րդ, վարկ)** Տիգրանը երկու տարի ժամկետով 500 000 դրամ սպառողական վարկ էր վերցրել տարեկան 20,7% փաստացի տոկոսադրույքով: Նա ընտրել էր վարկի մարման հետևյալ եղանակը. մայր գումարը վճարել ըստ նախընտրելի ժամանակացույցի, բայց այնպես, որ մեկ տարվա ընթացքում մարվի վարկի մայր գումարի առնվազն 20% -ը, իսկ տոկոսագումարները՝ հավասարաչափ ամսական պարբերականությամբ:

ա) Որքա՞ն էր կազմում ամսական վճարելիք տոկոսագումարը:

բ) Առաջին տարում որքա՞ն գումար էր Տիգրանը վճարել բանկին, եթե մարել էր վարկի մայր գումարի 45% -ը:

165 (10-րդ, հարկեր) Բուհն ավարտելուց հետո Անահիտը ընդունվեց աշխատանքի 150 000 դրամ համախառն աշխատավարձով: Որոշել Անահիտի առաջին ամսվա տնօրինելի եկամուտը՝ հաշվի առնելով եկամտային հարկը (23%), կուտակային կենսաթոշակային (2.5%) և դրոշմանիշային (1 000 դրամ) վճարները, ինչպես նաև աշխատանքի ընդունման առիթով հայրիկի նվիրած 50 000 դրամը:

166 (10-րդ, հարկեր) Արթուրն աշխատում է արդյունաբերական ձեռնարկությունում որպես կշեռքավար՝ 187 200 դրամ հաստիքավճարով:

ա) Հաշվել Արթուրի համախառն աշխատավարձի չափը, եթե, բացի հաստիքավճարից, ստանում է հաստիքավճարի 50%-ի չափով հավելավճար՝ ծանր և վնասակար աշխատանքային պայմանների համար, ինչպես նաև 10 000 դրամ՝ որպես սննդի դիմաց վճարի փոխհատուցում:

բ) Հաշվել Արթուրի տնօրինելի աշխատավարձի չափը՝ հաշվի առնելով դրոշմանիշային վճարը (5 500 դրամ), արհմիության անդամավճարը (1%), եկամտային հարկը (21%), կենսաթոշակային կուտակային վճարը (4,5%):

167 (10-րդ, հարկեր) Անգինն աշխատում է քիմիական լաբորատորիայում: 2019 թ. սեպտեմբերին նա աշխատել է 20 աշխատանքային օր, որի համար նախատեսված աշխատավարձը կազմում է 79 000 դրամ, բացի այդ՝ վնասակար և ծանր աշխատանքի համար այս գումարին ավելանում է վերջինիս 30%-ը, ինչպես նաև որպես հավելավճար՝ աշխատած օրերին համապատասխան՝ 49 000 դրամ:

ա) Հաշվել Անգինի սեպտեմբեր ամսվա համախառն աշխատավարձի չափը:

բ) Որքա՞ն եկամտային հարկ պետք է գանձել, եթե այդ ժամանակ մինչև 150 000 դրամ գրանցված աշխատավարձի դեպքում եկամտային հարկը կազմում էր 23%, իսկ 150 000 դրամից ավելի գրանցված աշխատավարձի դեպքում՝ գերազանցող գումարի 28%-ը:

գ) Որքա՞ն տնօրինելի աշխատավարձ կստանա Անգինն այս ամիս, եթե հաշվի առնենք նաև այն, որ տվյալ ժամանակահատվածում դրոշմանիշային վճարը 1 000 դրամ էր:

168 (10-րդ, հարկեր) Արամի հայրը, ում համախառն աշխատավարձը ամսական 250 000 դրամ է, աշխատում է շինարարական արտադրամասում, մայրը տնային տնտեսուհի է, տատիկն ու պապիկը արդեն 3 տարի է թոշակառու են և ստանում են ամսական համապատասխանաբար 45 000 և 65 000 դրամ թոշակ: Արամը, լսելով,

որ եկամտային հարկը դարձել է 21%, հաշվեց իրենց ընտանիքի ամսական տնօրինելի եկամուտը՝ $360\,000 \cdot 0.79 = 284\,400$ դրամ: Գտեք Արամի սխալը:

169 (10-րդ, հարկեր) Գիտաշխատող Հայկի աշխատավարձն ըստ հաստիքի 120 000 դրամ է, այս տարի նա ստացավ հոնորար՝ 500 000 դրամ: Հայկի տարեկան անվանական եկամուտը կազմել է $12 \cdot 120\,000 + 500\,000 = 1\,940\,000$ դրամ, իսկ եկամտային հարկը՝ $12 \cdot 120\,000 \cdot 0.21 = 302\,400$ դրամ: Գտեք սխալը:

170 (10-րդ, հարկեր) Գնորդը սուպերմարկետից գնել է «Ջերմուկ»՝ 160 դրամ արժողությամբ, 500 գրամ բանան (1 կգ-ը 700 դրամ), երկու պաղպաղակ՝ 120 դրամ արժողությամբ, ծխախոտ՝ 470 դրամ արժողությամբ: Որոշել գնորդի կատարած գնումների մեջ ԱԱՀ-ի (ավելացած արժեքի հարկ) չափը, որի համար հարկավոր է հաշվել գնի 16,67%-ը (2019 թ. դրությամբ): Առաջիկա գնումները կատարելիս ուշադրություն դարձրեք կտրոնին, ստուգեք ԱԱՀ-ի չափը, պարզեք կատարած գնումների քանի՞ տոկոսն է: ԱԱՀ-ի մասին մանրամասն կարող եք տեղեկանալ օրինակ՝ petekamutner.am կայքից:

171 (10-րդ, հարկեր) Ալբերտը ծրագրավորող է: Նրա՝ որպես առաջատար մասնագետի համախառն աշխատավարձը դարձել էր 600 000 դրամ: Աշխատավարձի վերաբերյալ թուղթն ուսումնասիրելիս նրան կասկածելի էր թվացել կենսաթոշակային վճարի չափը և մոտեցել էր հաշվապահին: Հաշվապահը բացատրել էր, որ 500 000 դրամից ավել եւ 1 020 000 դրամից ցածր աշխատավարձի դեպքում կենսաթոշակային վճարը հաշվվում է հետեւյալ կերպ. Կուտակային կենսաթոշակային ֆոնդին պետությունը վճարում է 27 500 դրամ, իսկ աշխատողը վճարում է աշխատավարձի 10%-ի եւ պետության վճարածի տարբերությունը:

ա) Որքա՞ն էր աշխատավարձի թղթում նշված կենսաթոշակային վճարը:

բ) Որքա՞ն է կազմում պետության կողմից Ալբերտի կենսաթոշակային հաշվին փոխանցվող գումարի չափը:

172 (10-րդ, խնայողություն, հարկեր) Կարոն սկսնակ ծրագրավորող է և ամսական ստանում է 200 000 դրամ տնօրինելի եկամուտ: Նա նպատակ ուներ գնելու մոտոցիկլ, իսկ իր նախընտրած մակնիշի մոտոցիկլի արժեքը 960 000 դրամ է: Կարոն որոշել էր 2 տարի խնայողություն անել իր եկամտի 10 %-ի չափով, ապա մնացած գումարը վարկ վերցնել:

ա) Որքա՞ն ՀՀ դրամ վարկ պետք է վերցնի Կարոն 2 տարի անց:

բ) Տարեկան որքա՞ն գույքահարկ կվճարի Կարոն մոտոցիկլի համար, եթե հայտնի է, որ վերջինս հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 40 դրամ դրույքաչափով (2019 թ. դրությամբ), իսկ իր նախընտրած մոտոցիկլն ունի 25 ձիաուժ:

գ) Խնայողության ի՞նչ արդյունավետ եղանակ կառաջարկեիք Կարոյին, որպեսզի վարկի գումարն առավել քիչ լինի:

173 (10-րդ, հարկեր) Պարոն Արտակը, ում համախառն աշխատավարձը 250 հազար դրամ էր, որոշել էր հաշվել մեկ տարվա ընթացում պետությանը տված իր հարկերի չափը՝ եկամտային հարկ, բնակարանի հարկ, ավտոմեքենայի հարկ:

ա) Որքա՞ն էր մեկ տարվա եկամտային հարկի չափը, եթե առաջին 6 ամիսներին եկամտային հարկը գանձվել էր՝ մինչև 150 000 դրամը 23%, իսկ 150 000 դրամը գերազանցող գումարը՝ 28% սկզբունքով, իսկ մյուս 6 ամիսներին եկամտահարկը, օրենքի փոփոխության համաձայն, անկախ գումարի չափից՝ կազմում էր 23%:

ՀՀ պետեկամուտների կոմիտեի կայքից, Հարկային օրենսգրքից պարզել, թե որքան է եկամտային հարկի դրույքաչափն այժմ:

բ) Որքա՞ն էր մեկ տարվա բնակավարձի չափը, եթե, բնակավայրից և բնակարանի մակերեսից կախված, պարոն Արտակը ամսական վճարում էր 810 դրամ:

գ) Որքա՞ն էր մեկ տարվա ավտոմեքենայի հարկը, եթե մեքենան 2 տարվա վաղեմության էր, ուներ 150 ձիաուժ, իսկ այս դեպքում միավոր ձիաուժի դիմաց հարկվում էր 300 դրամ:

դ) Որքա՞ն էր պարոն Արտակի կողմից մեկ տարվա ընթացքում պետությանը վճարված հարկերի չափը:

174 (10-րդ, հարկեր) Հայտնի է, որ մինչև 10 նստատեղ և 121-250 ձիաուժ ունեցող մարդատար ավտոմեքենայի գույքահարկի տարեկան դրույքաչափը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝ յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դր, ընդ որում՝ 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի դիմաց՝ լրացուցիչ 1 000 դրամ: Ենթադրենք՝ գնել եք 4 տարվա վաղեմության, 155 ձիաուժ ունեցող ավտոմեքենա: Հաշվել, թե որքան հարկ պետք է վճարել, եթե երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը:

*Վաղեմության ժամկետը որոշելու համար հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարին:

175 (10-րդ, հարկեր) Գարիկը գնեց վիճակահանության տոմս և շահեց գումար: Նա տեղեկացավ, որ (ըստ ՀՀ հարկային օրենսգրքի 147 հոդվածի 22 և 23 կետերի) մինչև 50 000 դրամ շահումը չի հարկվում, իսկ դա գերազանցող գումարը հարկվում է ք տոկոսով: Որքա՞ն գումար կստանա Գարիկը հարկումից հետո, եթե շահել է 200 000 դրամ:

176 (10-րդ, հարկեր) Երկվորյակ քույրեր Մանեն և Նարեն աշխատում են նույն ձեռնարկությունում: Մանեի աշխատանքային պայմանագրում ամսական աշխատավարձի չափը նշված է 240 000 դրամ, որի 21%-ը պահում են որպես եկամտային հարկ, 4.5%-ը՝ կուտակային կենսաթոշակային վճար և 5 500 դրամ պահում են դրոշմանիշային վճար: Նարեն հաշվեց, որ մեկ տարվա իր աշխատավարձից ստացած տնօրինելի եկամուտը կազմում է 2 մլն դրամ: Քույրերից որի՞ աշխատավարձն է ավելի բարձր:

177 (10-րդ, հարկեր) Վահեն 2019 թվականին հաշվապահ էր մի փոքր ձեռնարկությունում, որում աշխատում էին 12 աշխատակիցներ: Նրանց պայմանագրային միջին աշխատավարձն ամսական 180 000 դրամ էր: Ամեն ամիս Վահեն աշխատակիցներից յուրաքանչյուրի աշխատավարձից կատարում էր 23%-ի չափով եկամտային հարկի և 1 000 դրամ դրոշմանիշային վճարի պահում: Աշխատակիցներից յոթը 1974 թվականից հետո ծնվածներ են, և Վահեն նրանց յուրաքանչյուրի աշխատավարձի 2.5%-ը փոխանցում էր որպես կուտակային կենսաթոշակային վճար: Վահեն ձեռնարկության աշխատավարձի ֆոնդի ո՞ր տոկոսն էր փոխանցում աշխատակիցներին:

Լրացուցիչ հանձնարարություն՝ դիտարկելով այժմ տեղի ունեցած փոփոխությունները՝ պարզել, թե Վահեն ձեռնարկության աշխատավարձի ֆոնդի ո՞ր տոկոսը կփոխացեր աշխատակիցներին:

178 (10-րդ, հարկեր) Արթուրն առցանց աշխատում է եվրոպական երկրներից մեկի ձեռնարկությունում: Այնտեղ գործում է պրոգրեսիվ հարկման համակարգ. եկամտային հարկը տարեկան մինչև 15 000 եվրո եկամտից չի գանձվում, 15 000–25 000 եվրոյի եկամտից գանձվում է 15%-ի չափով, իսկ 25 000 եվրոն գերազանցող եկամտից՝ 27%-ի չափով: Տարվա համար որքա՞ն եկամտային հարկ է վճարելու Արթուրը եվրոպական այդ երկրում, եթե նրա ամսական աշխատավարձը 2 500 եվրո է:

**Ցուցում. Հայաստանը որոշ երկրների հետ ունի կրկնակի հարկումը բացառելու մասին պայմանագրեր, որոնց համաձայն՝ եթե անձը երկու երկրներից մեկում ունի քաղաքացիություն և եկամուտ է ստանում երկու երկրներից մեկում (օրինակ՝ Ավստրիայի քաղաքացի է, եկամուտ է ստացել Հայաստանում), ապա եկամտային հարկ կգանձվի երկրներից միայն մեկում (կհարկվի միայն Հայաստանում):*

179 (10-րդ, ավանդ, գնումներ) Ամալին ուներ կուտակած 5 միլիոն դրամ և ուզում էր գնել ավտոմեքենա, որի գինը խանութ-սրահում 6.2 միլիոն դրամ էր: Որպեսզի մեքենան գնելիս պարտքը քիչ լինի, նա իր գումարը մեկ տարի ժամկետով ավանդ ներդրեց բանկում՝ 10,5% տոկոսադրույքով: Տոկոսագումարի վճարումը՝ 10% եկամտային հարկը պահելուց հետո, կատարվելու էր ժամկետի վերջում: Իսկ եթե ավանդը հետ վերցնելու ժամկետից շուտ, ապա տոկոսագումար չէր ստանա: Ավանդի ժամկետին ընդամենը մեկ ամիս էր մնացել, երբ ավտոմեքենաների խանութը

հայտարարություն տարածեց, որ երեք շաբաթից հետո մեքենայի գինը բարձրանալու է 8%-ով: Ամալին հայտնվեց երկրնտրանքի առաջ՝ ավանդը վերցնել ժամկետից շուտ, թե՛ սպասել մինչև ժամկետի լրանալը: Ինչպե՞ս վարվի նա, որպեսզի մեքենան գնելու համար վերցնելիք պարտքը քիչ լինի: Նրա ճիշտ որոշման շնորհիվ որքանո՞վ քիչ կլինի պարտքը:

180 (10-րդ, ավանդ, գնաճ) Նարինեն տարեսկզբին իր խնայած գումարը մեկ տարի ժամկետով ներդրեց բանկում՝ որպես ավանդ: Տարին լրանալուց հետո, երբ փակում էր ավանդի հաշիվը, իմացավ, որ այդ տարվա ընթացքում երկրում սպառողական ապրանքների գներն աճել են 9%-ով: Ավանդն ստանալիս, 10% եկամտային հարկը պահելուց հետո, նա տեսավ, որ իր ներդրած գումարն ավելացել է 180 000 դրամով և մխիթարվեց նրանով, որ ստացած գումարն ունի ավանդ ներդնելու պահին իր ունեցած գումարի գնողունակությունը: Որքա՞ն էր ավանդի մայր գումարը, և որքա՞ն՝ ավանդի անվանական տոկոսադրույքը:

181 (10-րդ, վարկ) α վարկային կազմակերպությունը վարկեր տալիս է ոսկու գրավադրմամբ: Վարկի չափը որոշվում է գրավադրվող ոսկու գնահատված արժեքի չափով: Արսենը դիմեց α կազմակերպությանը, քանի որ նախընտրած ավտոմեքենան գնելու համար իր ունեցած գումարը պակասում էր: Նրա գրավադրվող ոսկին գնահատվեց 552 000 դրամ, վարկը ձևակերպվեց 2 տարի ժամկետով՝ տարեկան 21% տոկոսադրույքով:

ա) Գտնել Արսենի վճարելիք ամսական տոկոսագումարը:

բ) Նա ամսական որքա՞ն է մայր գումարից վճարելու, եթե վարկը ձևակերպվի մայր գումարը հավասարաչափ մարելու պայմանով:

182 (10-րդ, վարկ, փոխարժեք) α վարկային կազմակերպությունը գյուղի գրանցում ունեցող անձանց գյուղատնտեսական վարկեր տալիս է արտոնյալ պայմաններով, ըստ որի՝ վարկը ձևակերպվում է դոլարով՝ տարեկան 12% տոկոսադրույքով, իսկ վարկը մարելու հաշվարկը կատարվում է դրամով՝ Կենտրոնական բանկի հրապարակած փոխարժեքով: Վահանն այդ վարկից օգտվելու համար գրավադրեց իրենց ոսկեղենը: Ինչքա՞ն է գնահատվել ոսկեղենը դրամով, եթե նրան տրամադրել են 1125 դոլար վարկ, իսկ այդ պահին դոլարի փոխարժեքը սահմանված էր 493,76 դրամ: Որքա՞ն տոկոսագումար էր վճարելու Վահանը այն ամսում, երբ դոլարի փոխարժեքը լինեց 496 դրամ:

183 (10-րդ, առաջարկ, պահանջարկ) Արտադրամասն ունի 12 տոննա ամսական թողունակություն, որը սպառման կետերում ապահովում է 2 000 սպառողի պահանջարկ, ընդ որում՝ յուրաքանչյուր սարքավորում ապահովում է ամսական 3 տոննա թողունակություն: Այդպիսի քանի՞ նոր սարքավորում պետք է ունենա արտադրամասը, որպեսզի սպառողների քանակը մեծացնի 5 անգամ:

184 (10-րդ, ապահովագրություն) Բնակարանի արժեքը 14 մլն դրամ է, սակայն սեփականատերը ապահովագրել է 2 մլն դրամ ապահովագրական գումարի չափով: Տանիքի վնասվելու հետևանքով բնակարանը ևս վնասվել է, ընդ որում՝ վնասի մեծությունը կազմում է 700 000 դրամ: Համաձայն ներքոհիշյալ միջին արժեքի պայմանի՝ որոշել ապահովագրական հատուցման գումարը:

(ապահովագրական գումար)/(ապահովագրված օբյեկտի արժեք)=(ապահովագրական հատուցում)/(վնասի մեծություն)

185 (10-րդ, առաջարկ, պահանջարկ) Ներմուծված ձմերուկը հուլիսին 20%-ով էժան էր տեղականից: Օգոստոսին, տեղափոխման ծախսերի հետ կապված, ներմուծվածի գինը բարձրացավ 8%-ով, իսկ տեղականի գինը, առաջարկի ավելացման պատճառով, իջավ 25%-ով: Օգոստոսին ո՞ր ձմերուկն էր ավելի թանկ և քանի՞ տոկոսով:

186 (10-րդ, առաջարկ, պահանջարկ) 7–12 տարեկան աղջիկների համար արտադրված տվյալ մոդելի կոշիկների առաջարկի ֆունկցիան օգոստոսին ուներ $q=45+p$ տեսքը, իսկ պահանջարկի ֆունկցիան՝ $q=60-2p$ տեսքը (p - ն արտադրանքի միավորի գինն է՝ 1 000 դրամով արտահայտված):

ա) Որոշել կոշիկի հավասարակշիռ գինը:

բ) Կոշիկի ո՞ր գնի դեպքում շուկայում կլինի 30 միավոր կոշիկի ավելցուկ:

187 (10-րդ, առաջարկ, պահանջարկ) Երկու երիտասարդ ընկերներ, օնլայն գովազդելով իրենց մտահղացած օրիգինալ դիզայնով հեռախոսի պատյանները, պարզեցին, որ առկա է 500 միավոր պահանջարկ: Պատվերը կատարելու նպատակով ընկերներից մեկը ներդրեց 350 000 դրամ, մյուսը՝ 250 000 դրամ:

ա) Որքա՞ն է կազմում մեկ պատյանի գինը, եթե պահանջարկի ֆունկցիան ունի.

$q=6\ 000-2p$ տեսքը, որտեղ p -ն պատյանի գինն է, իսկ q -ն՝ քանակը:

բ) Որքա՞ն գումար է ստացվում 500 միավոր պատյանի վաճառքից:

գ) Որքա՞ն է կազմում նրանց զուտ եկամուտը:

դ) Որքա՞ն է յուրաքանչյուրի շահաբաժինը:

188 (10-րդ, առաջարկ, պահանջարկ) Ձկնաբույծները Կապան վաճառքի բերեցին 500 հատ ապխտած ձուկ:

ա) Մեկ ապխտած ձուկը ի՞նչ գնով պետք է վաճառեն, որպեսզի բոլոր ձկները վաճառվեն, եթե պահանջարկի ֆունկցիան ունի $q=800-0.5p$ տեսքը, որտեղ q -ն քանակն է, իսկ p -ն՝ մեկ ապխտած ձկանի գինը:

բ) Հաշվել ավելցուկը, եթե առաջին օրը ապխտած ձուկը վաճառեցին 700 դրամով:

զ) Որքա՞ն գումար ստացվեց 500 ապխտած ձկան վաճառքից, եթե հաջորդ օրը ստիպված եղան մնացած ձկան հատը վաճառել 500 դրամով:

դ) Որքա՞ն պակաս գումար կունենային ձկնաբույծները, եթե բոլոր ձկները վաճառեին 600 դրամով:

ե) Ի՞նչ դիսկերի կարող էին հանդիպել ձկնաբույծները, եթե, գայթակղվելով ձկան վաճառքի տեմպով, փորձեին ձուկն ավելի թանկ գնով վաճառել:

189 (10-րդ, առաջարկ, պահանջարկ) Ձմռանը տվյալ մոդելի գլխարկների պահանջարկը կազմում էր 300 օրինակ:

ա) Օգտվելով $q=1000-140p$ պահանջարկի ֆունկցիայից (p -ն մեկ գլխարկի գինն է՝ արտահայտված 1 000 դրամով)՝ որոշել գլխարկի գինը:

բ) Ի՞նչ գնով պետք է վաճառել գլխարկը, եթե վաճառքի հանվեց պահանջարկից 100 օրինակ ավելի գլխարկ:

գ) Առավելագույնը ի՞նչ գնով պետք է վաճառել գլխարկը, որպեսզի ավելցուկը չգերազանցի 20 օրինակը:

190 (10-րդ, գնումներ) Կավե կարասի պատրաստման առաջարկի ֆունկցիան ունի $q=10,5p-42$ տեսքը, որտեղ q -ն քանակն է, իսկ p -ն՝ միավորի գինը՝ արտահայտված 1 000 դրամներով:

ա) Գտնել կարասի գինը 21 միավոր առաջարկի դեպքում:

բ) Քանի՞ միավորի առաջարկ կլինի կարասի գինը 8 000 դրամ լինելու դեպքում:

191 (10-րդ, գնումներ) Կաղնու փայտից պատրաստված տակառի պահանջարկի ֆունկցիան ունի $q=260-4p$ տեսքը, որտեղ q -ն տակառների քանակն է, իսկ p -ն՝ մեկ տակառի գինը՝ արտահայտված 1 000 դրամներով:

ա) Քանի՞ տակառի պահանջարկի դեպքում մեկ տակառի գինը կլինի 35 000 դրամ:

բ) Որքա՞ն կլինի տակառի գինը 40 տակառի պահանջարկի դեպքում:

192 (10-րդ, գնումներ) Ձեռնարկությունն արտադրում է օդորակիչ, որի առաջարկի ֆունկցիան ունի $q=12,5p-350$ տեսքը, իսկ պահանջարկի ֆունկցիան՝ $q=946-p$ տեսքը, որտեղ q -ն քանակն է, իսկ p -ն՝ միավորի գինը՝ արտահայտված 1 000 դրամներով:

ա) Քանի՞ օդորակիչ արտադրելու դեպքում կստեղծվի շուկայական հավասարակշռություն և ի՞նչ գնով:

բ) Ի՞նչ գնի դեպքում շուկայում օդորակիչի դեֆիցիտը կլինի 230 միավոր:

193 (10-րդ, գնումներ) Ընկերությունը թողարկում է դյուրակիր թվային սարք, որի առաջարկի ֆունկցիան է $q=11,5p-640$, իսկ պահանջարկի ֆունկցիան՝ $q=1360-p$, որտեղ q -ն քանակն է, իսկ p -ն՝ սարքի միավորի գինը՝

արտահայտված 1 000 դրամներով: Շուկայում պակասու՞րդ, թե՞ ավելցուկ կառաջանա, և քանի՞ միավորի, եթե որպես սարքի միավորի գին սահմանվի 148 000 դրամը:

- 194 (10,11-րդ, եկամուտ, հարկեր)** Աննան աշխատավարձից վճարում է եկամտային հարկ՝ տարեկան կտրվածքով 378 000 դրամ: Որոշել, թե ամսական որքան համախառն աշխատավարձ է ստանում Աննան, եթե այն հարկվում է 21%-ով՝ ենթադրելով, որ Աննան այլ հարկեր չի մուծում ու պարտադիր վճարներ չի կատարում: Թիվը
- 195 (10,11-րդ, հարկեր)** Գրքի երեք հեղինակներ ստացան 1 410 000 դրամ հոնորար, ընդ որում՝ երկրորդը ստացավ առաջինի ստացածի 1/3-ը և էլի 60 000 դրամ, իսկ երրորդը՝ երկրորդի ստացածի 1/3-ը և էլի 30 000 դրամ: Որքա՞ն գումար ստացավ հեղինակներից յուրաքանչյուրը՝ հարկումից հետո: (հոնորարից հարկվում է 10%):
- 196 (10,11-րդ, ավանդ, հարկեր)** Ավանդից ստացվող եկամուտը հարկվում է 10% եկամտային հարկով: Արփին ավանդ էր ներդրել բանկում 2 մլն դրամ՝ տարեկան 11% տոկոսադրույքով: Որոշել՝ 2 տարի անց ինչ գումար է հարկվել նրանից, եթե տոկոսագումարը կապիտալացվել է:
- 197 (10,11-րդ, եկամուտ)** Եթե Մարիամի հունվար ամսվա համախառն աշխատավարձից գանձվի 21% եկամտային հարկը, ապա կմնա 158 000 դրամ: Որքա՞ն պետք է նրան տրվի հավելավճար, որպեսզի եկամտային հարկը գանձելուց հետո մնա այնքան, որքան նրա համախառն աշխատավարձն էր:
- 198 (10,11-րդ, գնումներ)** Նոր ավտոմեքենան 2015 թվականին գնեցին 8 միլիոն դրամով: Նորմալ շահագործման դեպքում մեկ տարի հետո դրա արժեքն ընկնում է 15% -ով, իսկ այնուհետև՝ յուրաքանչյուր տարի 10-ական տոկոսով: Ո՞ր թվականին ավտոմեքենայի արժեքը փոքր կլինի 5 միլիոն դրամից:
- 199 (10-11-րդ, գնումներ, կենսաթոշակ)** Սաթենիկ տատիկը որոշեց դեկտեմբեր ամսվա կենսաթոշակից իր 9 թոռնիկներին նոր տարվա առթիվ միանման նվերներ գնել: Նրա մշտական եկամուտը՝ կենսաթոշակը, ամսական 57 000 դրամ է: Գտեք, թե տատիկը որքան գումար էր հատկացնելու նվերներին, եթե հայտնի է, որ յուրաքանչյուր նվերի արժեքը նրա ամսական թոշակի 1/19-ից փոքր է 1/30-ի չափով:
- 200 (10-11-րդ, հարկեր)** Վերնաշապիկի գինը խանութում 6 000 դրամ է, որի մեջ ներառված է նաև ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ): Որքա՞ն կլինի վերնաշապիկի ինքնարժեքը, եթե յուրաքանչյուր վերնաշապիկից նախատեսված է ստանալ 700 դրամի չափով շահույթ, իսկ ԱԱՀ դրույքաչափը 20% է:
- 201 (10,11-րդ, գնաճ)** Քաղաքացին ստանում է 100 000 դրամ աշխատավարձ: Այս տարվա գնաճը կազմել է 4%, իսկ հաջորդ տարի կանխատեսվում է 5%

գնաճ: Այդ երկու տարիներից յուրաքանչյուրում որքանո՞վ պետք է բարձրանա նրա աշխատավարձը, որպեսզի ունենա նույն գնողունակությունը:

- 202 (10,11-րդ, գնաճ)** Տարեսկզբին սպառողական զամբյուղի արժեքը 40 000 դրամ էր, 1 տարի հետո դարձավ 40 800 դրամ:
ա) Քանի՞ տոկոս կազմեց այդ տարվա գնաճը:
բ) Իսկ որքա՞ն կդառնա սպառողական զամբյուղի արժեքը, եթե հաջորդող տարում գնաճը կազմի 5%:
- 203 (10,11-րդ, խնայողություն)** Գոհարն իր խնայողությունը եկամտաբեր դարձնելու նպատակով գնել էր 10 000 դրամ անվանական արժեքով 45 պարտատոմս՝ 12% տարեկան տոկոսադրույքով: Պարտատոմս թողարկող կազմակերպությունը պարտավորվել էր արժեկտրոնները վճարել կիսամյակը մեկ անգամ պարբերականությամբ: Այդ արժեկտրոնների համար կատարելու էր եկամտային հարկի մուծումներ՝ 10%-ի չափով: Գոհարը 1,5 տարի գտնվում էր արտերկրում և արժեկտրոնները չէր ստացել: Այդ ընթացքում որքա՞ն արժեկտրոն էր կուտակվել նրա հաշվում:
- 204 (10,11-րդ, գնումներ, եկամուտ)** Անին որոշել էր երեխայի ծննդյան միանվագ նպաստից գումար հատկացնել 37 000 դրամ արժողությամբ մանկասայլակ գնելու համար: Գնելիս պարզվեց, որ խանութը հատուկ ակցիա է կազմակերպել՝ նվիրված մայրության և գեղեցկության օրվան: Յուրաքանչյուր գնված ապրանքի գնի 1/10-ը վերադարձվում էր գնորդին: Քանի՞ դրամ էր միանվագ նպաստը, եթե հայտնի է, որ այն վերադարձվող գումարի երեսունապատիկն է:
- 205 (10,11-րդ, ավանդ)** Ավանդի գումարի ֆունկցիոնալ կախվածությունը տարիների քանակից արտահայտվում է հետևյալ կերպ. $f(n) = 1\,000\,000 \cdot 1,1^n$:
Գտնել ավանդատուի եկամուտը 3 տարի անց: Որոշել տոկոսադրույքը:
- 206 (10,11-րդ, արժեթղթեր, խնայողություն)** Գործարար Վահանը ձեռք բերեց շինարարական ընկերության 10 բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 16 000 դրամ արժողությամբ: Քանի որ բաժնետոմսերի գինը սկսեց իջնել, Վահանը որոշեց ռիսկի չդիմել և վաճառեց 6 բաժնետոմս՝ երբ գինը իջել էր 10%-ով: Իսկ մնացած 4-ը վաճառեց, երբ բաժնետոմսերի գինը իջնելուց հետո բարձրացավ 5%-ով: Որքա՞ն գումար կորցրեց Վահանը այս գործարքներից հետո:
- 207 (10,11-րդ, ավանդ, վարկ)** Արմենը բանկում ունի ներդրված ավանդ 300 000 դրամ՝ 10% տոկոսադրույքով, 1 տարի ժամկետով: Աշխատանքի բերումով նրան շտապ գումար էր անհրաժեշտ և նա վերցրեց վարկ 600 000 դրամ՝ 16% փաստացի տոկոսադրույքով, 1 տարի ժամկետով՝ ամբողջ պարտքը տարեվերջին մարելու պայմանով: Նա պլանավորում է

տարեվերջին ստանալ ավանդը, հետո այդ գումարով մարել պարտքը: Որքա՞ն գումար պետք է Արմենն ավելացնի պարտքն ամբողջությամբ մարելու համար:

208 (10,11-րդ, արժեթղթեր, եկամուտ) Երկու ընկերներ որոշում են խնայողությունները ներդնել՝ գնելով իրենց հայտնի կազմակերպության պարտատոմսեր: Մի ընկերն առաջարկում է 3 000 000 դրամով գնել «Ա» կազմակերպության վաճառքի հանված բոլոր պարտատոմսերը, իսկ մյուս ընկերն առաջարկում է 2 000 000 դրամով գնել «Բ» կազմակերպության պարտատոմսերի 3/4 մասը: Ո՞ր կազմակերպության պարտատոմսերն են ավելի թանկ:

209 (10,11-րդ, արժեթղթեր) Նորաստեղծ ընկերությունը գերարագ ինտերնետ և թվային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու համար թողարկեց պարտատոմսեր՝ 6.5% տարեկան եկամտաբերությամբ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 2 մլն դոլար ծավալով: Ներդրողները տարեվերջին նկատեցին, որ տոկոսադրույքի դիսկը չգնահատելու պարագայում իրենք նախատեսվածից պակաս եկամուտ են ստացել՝ 65 000 դոլար:

ա) Որոշել նախատեսված եկամուտը:

բ) Որոշել պարտատոմսերի գնանկման տոկոսը:

210 (10,11-րդ, արժեթղթեր) Ընկերությունը ներդրումների համար միջոցներ ստանալու նպատակով թողարկել էր արժեթղթեր: Լևոնը գնել է 27 հատ արժեթուղթ՝ յուրաքանչյուրը 14 000 դրամով: 3 տարի անց արժեթուղթն արժեր 30 000 դրամ: Նա որոշեց երկրորդային շուկայում վերավաճառել դրանք: Որքա՞ն գումար նա աշխատեց արդյունքում:

211 (10,11-րդ, արժեթղթեր) «Ալֆա» բանկի դոլարային պարտատոմսերը ցուցակվել են 3 մլն ԱՄՆ դոլար ծավալով, 50 ԱՄՆ դոլար անվանական արժեքով՝ 36 ամիս շրջանառության ժամկետով և կիսամյակային պարբերականությամբ 2.5% եկամտաբերությամբ:

ա) Քանի՞ պարտատոմս է ցուցակվել:

բ) Վազգենն ուներ 40 պարտատոմս: 1 տարի հետո որքա՞ն էր ավելացել նրա եկամուտը, եթե տոկոսագումարը կապիտալացվել էր:

գ) 3 տարի հետո ստացված եկամուտը ցուցակված ծավալի ո՞ր տոկոսն է կազմում, եթե տոկոսագումարը՝ 1) չի կապիտալացվել, 2) կապիտալացվել է:

212 (10,11-րդ, բյուջե) «Ալֆա» բանկի հովանավորությամբ հայ մեծ երգահանի՝ Կոմիտասի ստեղծագործական ժառանգությունը հասարակությանը նորովի ներկայացվեց՝ իրականացվեցին մի շարք հրատարակումներ: Բանկի նվիրաբերությունը կազմում էր 2 100 000 դրամ, որը բանկի տարեկան շահույթի 7%-ն է կամ ներդրումային ծրագրերի համալիր

իրականացման ծախսերի 14%-ը: Որոշել բանկի տարեկան շահույթը և ներդրումային ծրագրերի ընդհանուր գումարը:

213 (10,11-րդ, բյուջե) Ընկերության բաժնետերերից մեկը բաժնետիրական ընկերությունից ստացավ 200 000 դրամ, որը չէր գերազանցում ընկերության բյուջեի 50/719 մասը: Որքա՞ն էր կազմում ընկերության բյուջեն:

214 (10,11-րդ, պարտատոմս, ավանդ) Հայկական հեռահաղորդակցային ընկերությունն իր բաժանորդներին հնարավորություն է ընձեռում գնելու ընկերության պարտատոմսեր և ապահովելու կայուն եկամուտ: Դրամով պարտատոմսեր ներդնելու տարեկան եկամտաբերությունը 11% է, իսկ դոլարով՝ 7.5%:

Ավանդի դեպքում բանկն առաջարկում է. դրամի ներդրման դեպքում՝ 8% տարեկան եկամտաբերություն, իսկ դոլարի դեպքում՝ 4.5% տարեկան եկամտաբերություն:

Ավանդի և պարտատոմսի ընտրության առջև կանգնած Սոնան ընտրեց պարտատոմսի տարբերակը՝ որպես խնայողության տեսակ:

ա) Արդյոք ճիշտ ընտրություն կատարեց Սոնան: Դիտարկել երկու արժույթների դեպքերը:

բ) Արդյոք գնահատվա՞ծ էր ռիսկը:

գ) Որքա՞ն գումար կունենա նա 2 տարի անց՝ 20 հատ՝ 100 000 դրամանոց պարտատոմս գնելով:

215 (10,11-րդ, խնայողություն) Սամվելը 2 տարի առաջ «7+1» ընկերությունից գնել էր 20 հատ պարտատոմս՝ 100 դոլար անվանական արժեքով, որի արդյունքում ուներ 2 205 դոլար խնայողություն: Որոշել պարտատոմսի տոկոսային եկամտաբերությունը:

216 (10,11-րդ, առաջարկ, պահանջարկ) Սևանի հացի գործարանն ունի լավաշի արտադրության հատուկ հոսքագիծ, որի հզորությունը (արտադրական կարողությունը) օրական 700-800 կգ է: Նվազագույնը քանի՞ սպառող կարող է ունենալ արտադրամասը, եթե ընդունենք, որ, միջին հաշվով, 1 սպառողը օրական օգտագործում է 0,5 կգ լավաշ:

217 (10,11-րդ, առաջարկ, պահանջարկ) Ապրանքի պահանջարկի ֆունկցիան ունի $g(x) = 10 - x$ տեսքը, իսկ առաջարկի ֆունկցիան՝ $f(x) = 3x - 6$ տեսքը, որտեղ x -ը ապրանքի գինն է՝ արտահայտված 1 000 դրամներով: Որոշել հավասարակշիռ գինը: Քանի՞ միավորի դեպքում շուկայում կձևավորվի հավասարակշիռ գին:

218 (10,11-րդ, առաջարկ, պահանջարկ) Ապրանքի պահանջարկի ֆունկցիան ունի $g(x) = 17 - 3x$ տեսքը (որտեղ x -ը միավորի գինն է՝ արտահայտված 1 000 դրամներով), իսկ հավասարակշիռ գինը 1 800 դրամ է: Որոշել առաջարկի ֆունկցիայի տրման բանաձևը, եթե գնի գործակիցը 15 է:

*Ցուցում. պահանջարկի և առաջարկի ֆունկցիաները պարզեցման նպատակով տրված են գծային ֆունկցիայի տեսքով, իրականում դրանք կարող են ներկայացվել ոչ գծային ֆունկցիաներով ևս:

219 (10,11-րդ, առաջարկ, պահանջարկ) Դիցուք՝ արտադրանքի առաջարկի և պահանջարկի ֆունկցիաներում գնի գործակիցների արտադրյալը (-1) է: Որոշել, թե ինչպիսի անկյուն են կազմում այդ ֆունկցիաների գրաֆիկները:

220 (10,11-րդ, ծախս) Կաթնամթերք արտադրող ձեռնարկությունը թթվասեր ապրանքատեսակից շաբաթական թողարկում է x միավոր, իսկ կաթնաշոռ ապրանքատեսակից՝ y միավոր: Ծախսը որոշվում է $C(x;y) = 6x^2 + 12y^2$ բանաձևով: Որքա՞ն է անհրաժեշտ արտադրել յուրաքանչյուր տեսակից նվազագույն ծախսերով, եթե հայտնի է, որ ձեռնարկության շաբաթական թողունակությունը 111 000 միավոր է:

221 (10,11-րդ, ապահովագրություն) Վահեն, ըստ ԱՊՊԱ ոլորտում կիրառվող Բոնուս-Մալուս համակարգի, դասվել էր ոչ ռիսկային վարորդների դասին և ստացել էր 50% զեղչ, իսկ Կարենը վճարել էր 2,5 անգամ ավելի ապահովագրավճար: Որոշել, թե Կարենը և Վահեն որ դասի վարորդների թվին են դասվում:

20, 21, 22-րդ դասերի վարորդները վճարում են 250%, իսկ 1-ին դասի վարորդները՝ 50% => Կարենը դասվում է 20-22-րդ դասերից որևէ մեկին, իսկ Վահեն՝ 1-ին դասի:

ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ դասեր

22	
1-9 բոնուսային (ցածր ռիսկային)	գործակիցը < 100%
10 բազիսային դաս	գործակիցը 100%
11-18 մալուս (միջին ռիսկային)	գործակից > 100%
19-22 մալուս (բարձր ռիսկային)	գործակից > 100%

$$J = (4 (1/C_1 + \dots + 1/C_n))$$

C_1, \dots, C_n հաջորդականություն

ա) Կարենը քանի՞ անգամ շատ վճարեց Վահեից, եթե նրանց երկուսի ավտոմեքենաները բազային նույն դասին էին պատկանում:

բ) Մալուսային դասերը բոլոր դասերի ո՞ր տոկոսն են կազմում:

222 (10,11-րդ, լիզինգ) Արմենը լողավազանի տաք ջրամատակարարումն իրականացնելու համար 25 ամսով ընկերությունից լիզինգով արևային ջրատաքացուցիչ է ձեռք բերել՝ ոչ ճնշումային մոդելը. օրական 200 լ ջուր: Նրան առաջարկված լիզինգի պայմաններն էին՝

Գին – 230 000 դրամ

Կանխավճար – 65 100 դրամ

Մարում ամսական – 7 123.68 դրամ (8% տոկոսադրույք)

Ըստ պայմանագրի՝ մայր գումարը և տոկոսագումարները հավասարաչափ մարումով էին ներկայացված:

Տարեկան խնայողություն՝ 97 400 դրամ:

Որոշեք.

ա) Կանխավճարը գնի ո՞ր տոկոսն է կազմում:

բ) Գինը կանխավճարից քանի՞ տոկոսով էր ավելի:

գ) Յուրաքանչյուր ամիս մայր գումարից քանի՞ դրամ պետք է մարվեր:

դ) 1 և ջրի խնայողությունը քանի՞ դրամ կկազմի այդ ջրատաքացուցչի օգտագործման դեպքում: Արդյունքը կլորացրեք հավելյալորով և պակասորդով՝ մինչև 10^{-5} կարգը:

223 (11-րդ, եկամուտ) Նարեն աշխատում է դպրոցում և օրական ունի 6 դասաժամ: Վարձատրությունը կատարվում է ըստ դասավանդած դասաժամերի, մեկ դասաժամը՝ 2 000 դրամ: Մարտ ամսին 3 օրով իր հաշվին չվարձատրվող արձակուրդ էր վերցրել և այդ ընթացքում չէր դասավանդել: Որքա՞ն կկազմի Նարեի մարտ ամսվա տնօրինելի եկամուտը՝ հաշվի առնելով աշխատանքային օրերը, եկամտային հարկը (21%), դրոշմանիշային վճարը (5 500 դրամ), արհմիության վճարը (1%), իսկ կենսաթոշակային վճար չի պահվում, քանի որ Նարեն ծնվել է 1973 թվականին:

224 (11-րդ, ավանդ) Արևիկը և Վարդանը մեկ տարի ժամկետով բանկում ներդրեցին ավանդ՝ յուրաքանչյուրը 2,2 միլիոն դրամ: Տարին լրանալուց հետո Վարդանն ստացավ ավանդը և տոկոսագումարը, իսկ Արևիկը տոկոսագումարն ավելացրեց մայր գումարին և նույն տոկոսադրույքով ևս մեկ տարի շարունակեց ավանդադրումը: Արդյունքում, երբ լրացավ երկրորդ տարին, Արևիկը 242 000 դրամով ավելի ստացավ, քան ստացել էր Վարդանը: Որքա՞ն էր ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը:

225* (11-րդ, ավանդ, փոխարժեք) Բանկում ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը դրամով ներդրման դեպքում 11% էր, իսկ դուլարով ներդրման դեպքում՝ 4%: Արաքսն իր խնայած դրամները փոխանակել էր դուլարով և մեկ տարի ժամկետով ներդրել որպես ավանդ: Երբ ժամկետը լրացավ, պարզվեց, որ այդ ընթացքում դուլարի փոխարժեքը բարձրացել է 7% -ով: Որոշել՝ եթե Արաքսն իր ստացած դուլարը փոխանակի դրամով, ապա ա՞յդ գումարը մեծ կլինի, թե՞ ավանդը դրամով ներդնելիս ստացվելիք գումարը, և քանի՞ տոկոսով:

226

(11-րդ, ավանդ, փոխարժեք) Ես և իմ ընկերուհին ունենք 200 000–ական դրամ, որը պատրաստվում ենք որպես ավանդ ներդնել բանկում: Բանկը մեզ առաջարկեց ընտրություն կատարել հետևյալ երկու ավանդների միջև:

Առաջին տեսակ՝	Երկրորդ տեսակ՝
Ավանդի արժույթը ՀՀ դրամ, 4 ամիս ժամկետ, 9% տարեկան տոկոսային եկամտաբերությամբ, տոկոսագումարների ամսական կապիտալացում:	Ավանդի արժույթը ԱՄՆ դոլար, 4 ամիս ժամկետ, 4.5% տարեկան տոկոսային եկամտաբերությամբ, տոկոսագումարների ամսական կապիտալացում:

Ես ընտրեցի առաջին տեսակը, իսկ ընկերուհիս՝ երկրորդ:

ա) Կարո՞ղ եք պարզել, թե որքա՞ն կազմեց իմ եկամուտը:

բ) Կարո՞ղ եք պարզել, թե որքա՞ն կազմեց իմ ընկերուհու եկամուտը, եթե ավանդ ներդնելու պահին դոլարի փոխարժեքը 481 դրամ էր, իսկ ավանդի ստացման պահին՝ 483 դրամ:

գ) Եթե ես ցանկանայի երկարաձգել ավանդի ժամկետը, ապա քանի՞ ամիս անց իմ ավանդային հաշվի գումարը կգերազանցի 220 000 դրամը:

դ) Ենթադրենք՝ արտարժույթով ավանդի ձևակերպումից մեկ ամիս անց նկատվում էր դոլարի փոխարժեքի անկում: Նվազագույնը մոտավորապես որքա՞ն պետք է լինի դոլարի փոխարժեքը, որպեսզի իմ ընկերուհին վնաս չկրի:

227

(11-րդ, արժեթղթեր, փոխարժեք) Գյուղացին իր գյուղի մեկ այլ գյուղացուց, ով ունի անասնապահական ֆերմա, պարտքով 200 000 դրամ գումար էր վերցրել և մուրհակ էր ստորագրել, որ 5 ամիս անց կվերադարձնի գումարը՝ 15%-ի չափով հավելավճարի հետ միասին: Մուրհակատերը գումար տրամադրում է միայն դոլարով և նույն արժույթով էլ հետ է պահանջում:

ա) Որքա՞ն դոլար վերցրեց և որքա՞ն դոլար վերադարձրեց գյուղացին 5 ամիս անց, եթե պարտքը վերցնելիս դոլարի փոխարժեքը 480 դրամ էր:

բ) Որքա՞ն ավելի ՀՀ դրամ վճարեց գյուղացին վերցրած պարտքի դիմաց, եթե պարտքը վերադարձնելու ժամանակ դոլարի փոխարժեքը դարձել էր 483 դրամ:

գ) Դիտել և քննարկել «Պեպո» ֆիլմը:

228

(11-րդ, արժեթղթեր) Արամը և Նարեկը հանդիսանում են մեկ տարի առաջ իրենց կողմից հիմնադրված բաժնետիրական ընկերության՝ համապատասխանաբար 40 և 60 տոկոսի, բաժնետերերը: Բաժնետիրական ընկերության մշակած նախագծի իրականացման համար ընկերներին գումար էր հարկավոր: Այդ նպատակով ընկերներից

յուրաքանչյուրը վաճառեց իր բաժնետոմսերի 10 տոկոսը: Նախագիծը հաջող ընթացք ունեցավ, և ընկերությունը ձեռք բերեց 10 մլն դրամի շահույթ: Որքա՞ն է կազմում Արամի և Նարեկի մասնաբաժինը առանձին-առանձին:

- 229 (11-րդ, արժեթղթեր)** Չորս ընկերներ «Ա» բաժնետիրական ընկերության 25, 25, 20 և 30 տոկոսի բաժնետերերն են: Ընկերությունը սնանկացումից փրկելու համար նրանք ստիպված եղան յուրաքանչյուրի բաժնետոմսերի 20 տոկոսը վաճառել: Արդյունավետ աշխատանքի արդյունքում ընկերությունը ստացավ 20 մլն դրամի շահույթ: Որքա՞ն է կազմում ընկերներից յուրաքանչյուրի շահաբաժինը, եթե ընկերությունը որոշի ողջ շահույթը բաշխել որպես շահաբաժին:
- 230 (11-րդ, խնայողություն)** Նունիկն իր դրամական ազատ միջոցներով գնեց դեղորայք ներկրող ընկերության 22 արժեթուղթ՝ յուրաքանչյուրը 6 500 դրամ արժողությամբ և պարարտանյութ արտադրող ընկերության 14 արժեթուղթ՝ յուրաքանչյուրը 12 000 դրամ արժողությամբ: Մեկ տարվա ընթացքում դեղորայքի արժեթղթերը թանկացան 11%-ով, իսկ պարարտանյութի արժեթղթերը էժանացան 7%-ով: Ավելացա՞վ, թե՞ պակասեց Նունիկի խնայողությունը, և քանի՞ տոկոսով:
- 231 (11-րդ, ավանդ, ռիսկեր)** Նույն օրը «Մոլորակ» բանկում մեկ տարով, 12% տարեկան տոկոսային եկամտաբերությամբ ավանդ էին դրել Կարենը՝ 3.2 միլիոն դրամ, Արմենը՝ 20 միլիոն դրամ: Սակայն նրանց բախտը չբերեց. 9 ամիս անց այդ բանկը սնանկ ճանաչվեց: Նրանք Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամից պարզաբանում ստացան, որ մինչև 16 միլիոն դրամը համարվում է երաշխավորված ավանդ, ուստի կհատուցվեն երաշխավորված ավանդը և բանկի՝ մինչև անվճարունակ ճանաչվելու ժամկետին համապատասխանող տոկոսագումարը: Որքա՞ն գումար էր ստանալու նրանցից յուրաքանչյուրը որպես իր ավանդի հատուցում:
- 232 (11-րդ, խնայողություն)** Ավետի հայրիկն իր խնայողությունների հաշվին լրացուցիչ եկամուտ ունենալու նպատակով գնեց արժեթղթեր՝ մրգահյութ արտահանող հայկական ընկերության 30 արժեթուղթ՝ յուրաքանչյուրը 5 000 դրամ արժողությամբ, էլեկտրասարքեր արտադրող ռուսական ընկերության 20 արժեթուղթ՝ յուրաքանչյուրը 7 500 ռուբլի արժողությամբ և հացահատիկ ներկրող ընկերության 10 արժեթուղթ՝ յուրաքանչյուրը 12 000 ռուբլի արժողությամբ: Գնելու օրը 1 ռուբլու փոխարժեքը 7.2 դրամ էր: Մեկ տարվա ընթացքում մրգահյութի արժեթղթերը թանկացան 10%-ով, էլեկտրասարքերի արժեթղթերը էժանացան 8% -ով, իսկ հացահատիկինը թանկացան 25% -ով: Ռուբլու փոխարժեքը դարձել էր 7,3 դրամ: Ավելացա՞վ, թե՞ պակասեց Ավետի հայրիկի խնայողությունը այդ տարվա ընթացքում, դրամով արտահայտելու դեպքում քանի՞ տոկոսով:
- 233 (11-րդ, խնայողություն)** Նունեն ձեռք էր բերել 20 000 դրամ անվանական արժեքով 30 պարտատոմս, որի անվանական տոկոսադրույքը տարեկան

9% էր: Պարտատոմս թողարկող կազմակերպությունը պարտավոր էր տոկոսները վճարել տարին մեկ անգամ, իսկ պարտատոմսի ժամկետի ավարտին մնացել էր մեկ տարի: Սակայն տարին լրանալուց մի քանի շաբաթ առաջ Նունեն կանխիկ գումարի շտապ կարիք ուներ և իր պարտատոմսերից 18-ը շուկայում վաճառեց 378 000 դրամով: Որքա՞ն կկազմեր Նունեի ստանալիք գումարի տարբերությունը, եթե նա համբերել մինչև տարին լրանալը, երբ կկարողանար ստանալ տոկոսագումարը և պարտատոմսերը վերադարձնել անվանական արժեքով:

234 (11-րդ, խնայողություն) Նարինեն ձեռք էր բերել «Ուսումնական սարքեր» նորաստեղծ ընկերության 60 բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 25 000 դրամ արժեքով: Առաջին տարում շուկայում արժեքտոմսերի գինը նվազեց 8%-ով, երկրորդ տարում գնի փոփոխություն տեղի չունեցավ, իսկ երրորդ տարուց սկսած՝ յուրաքանչյուր տարի բաժնետոմսի արժեքը շուկայում բարձրանում էր 5-ական տոկոսով: 6 տարին լրանալուց հետո Նարինեն որոշեց բաժնետոմսերն ամբողջությամբ վաճառել: Որքա՞ն գումար շահեց նա այդ տարիներին:

235 (11-րդ, ավանդ, դիսկեր) Նույն բանկում երեք ընկերներ ավանդ էին ներդրել՝ Աշոտը՝ 4,8 միլիոն դրամ և 5,5 հազար դոլար, Էմիլը՝ 16 հազար դոլար, Ռաֆայելը՝ 2,8 միլիոն դրամ և 3,6 հազար դոլար: Սակայն կարճ ժամանակ անց բանկը սնանկ ճանաչվեց: Նրանք Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամից տեղեկացան, որ միայն արտարժույթով ավանդի դեպքում երաշխավորված է մինչև 7 միլիոն դրամին համարժեք ավանդը, միաժամանակ դրամային և արտարժույթային ավանդներ ունենալու դեպքում՝ եթե դրամային ավանդը փոքր է 7 միլիոն դրամից, ապա երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդն այն չափով, որ գումարային հատուցումը չգերազանցի 7 միլիոն դրամը: Ի՞նչ չափի գումար էր հատուցվելու ընկերներից յուրաքանչյուրին, եթե բանկի անվճարունակ ճանաչվելուց հետո հատուցման պահին դոլարի փոխարժեքը 480 դրամ էր:

236 (11-րդ, գնաճ) Ընտանիքում նախորդ տարվա սննդի, հագուստի և այլ կենցաղային նպատակների համար կատարվող ծախսերը միջինում ամսական կազմել են 180 000 դրամ: Այս տարի սպասվում է 5% գնաճ, իսկ հաջորդ տարիներին կանխատեսվում է 4-ական % գնաճ: Գնաճի հետևանքով որքա՞ն կդառնա ընտանիքի ամսական սպառումը՝ ա) այս տարի, բ) հաջորդ տարի, գ) 3 տարի հետո:

237 (11-րդ, գնաճ) Նախորդ տարում սպառողական զամբյուղն ունեցել է հետևյալ կառուցվածքը՝ ա) պարենային ապրանքներ - 50%, բ) ոչ պարենային ապրանքներ - 30%, գ) տարբեր ծառայություններ - 20%: Այս տարվա ընթացքում պարենային ապրանքների գինն ավելացել է 6% -ով, ծառայությունների գինը նվազել է 5% -ով : Ինչպե՞ս է փոխվել ոչ

պարենային ապրանքների գինը, եթե հայտնի է, որ արդյունքում սպառողական զամբյուղի գինն ավելացել է 2 %-ով:

- 238 (11-րդ, գնաճ)** Այս տարվա սպառողական զամբյուղն ունի հետևյալ կառուցվածքը՝ ա) պարենային ապրանքներ - 52%, բ) ոչ պարենային ապրանքներ - 27%, գ) ծառայություններ - 21%: Հայտնի է, որ նախորդ տարվա համեմատ պարենային ապրանքների գինն ավելացել է 4%-ով, ոչ պարենային ապրանքների գինը՝ 8%-ով, իսկ ծառայությունների գինը նվազել է այնքան, որ սպառողական զամբյուղի գինը չի փոխվել: Ինչպիսի՞ կառուցվածք է ունեցել նախորդ տարվա սպառողական զամբյուղը:
- 239 (11-րդ, գնաճ)** Արտակենց ընտանիքի սննդի, հագուստի և կենցաղային տարբեր նպատակների համար կատարվող ընթացիկ ծախսերը 2 տարի առաջ միջինում ամսական կազմել են 175 000 դրամ: Հաջորդ 2 տարիներին, ինչպես կանխատեսվել էր, գնաճը եղել է նույն տոկոսով, և այս տարի նրանց ընտանիքի ամսական սպառումը միջինում դարձել է 189280 դրամ: Յուրաքանչյուր տարում քանի՞ տոկոս է կազմել գնաճը:
- 240 (11-րդ, գնաճ, ավանդ)** Բանկը դրամով ավանդն ընդունել է մեկ տարի ժամկետով, տարեկան 9% տոկոսադրույքով: Սակայն այդ տարվա ընթացքում տեղի է ունեցել 4% գնաճ: Ավանդի ժամկետի ավարտին որքա՞ն է կազմում ավանդի իրական տոկոսային աճը:
- 241 (11-րդ, գնաճ, ավանդ)** Մեկ տարվա ժամկետով ավանդի համար ի՞նչ տոկոսադրույք առաջարկի բանկը, որ այդ տարվա ընթացքում 5% գնաճի դեպքում ավանդի իրական տոկոսային աճը կազմի 6%:
- 242 (11-րդ, գնաճ, ավանդ)** Բանկը դրամով ավանդն ընդունում է տարեկան 10% տոկոսադրույքով, իսկ դոլարային ավանդը՝ 6% տոկոսադրույքով: Հաշվի առնելով տարվա ընթացքում փոխարժեքի տատանումները՝ հայտնի դարձավ, որ դրամային ավանդի վրա գնաճը ազդել է 5%-ով, իսկ դոլարային ավանդի վրա՝ 1%-ով: Յուրաքանչյուր ավանդի համար հաշվել իրական տոկոսային աճը: Քննարկել տարբեր արժույթներով ավանդի իրական եկամտաբերությունը՝ կախված գումարից և փոխարժեքից:
- 243 (11-րդ, վարկունակություն)** Վահանն ամսական ստանում է 226 000 դրամ աշխատավարձ և ուզում է վերցնել վարկ՝ 1 տարի ժամկետով: Տարեկան 13% փաստացի տոկոսադրույքով առավելագույնը որքա՞ն վարկ կտրամադրի բանկը Վահանին, եթե տրամադրված վարկը, տոկոսագումարի հետ միասին, չպետք է գերազանցի նրա աշխատավարձի 60%-ը:
- 244 (11-րդ, հարկեր)** 3 ընկերներ՝ Հարությունը, Կարենը և Աշոտը 2019 թ-ին ԱՄՆ-ից ավտոմեքենաներ ներկրեցին Հայաստան.

Արտադրության տարեթիվը	2008 թ.	2012 թ.	2016 թ.
Ավտոմեքենայի գինը դոլարով	6 000	7 800	9 000

Որքա՞ն կկազմի յուրաքանչյուր ավտոմեքենայի համար վճարվող մաքսատուրքը, եթե մինչև 5 տարվա հնություն ունենալու դեպքում կազմում է գնի 32%-ը, 5-10 տարվա դեպքում՝ 34%-ը, իսկ 10 և ավելի տարիների հնություն ունենալու դեպքում՝ 42%-ը:

245 (11-րդ, վարկ) Մարինեն 2 տարբեր վարկեր՝ 100 000 ռուբլի և 200 000 ռուբլի, համապատասխանաբար 2 տարվա և 3 տարվա մարման ժամկետներով, միավորեց և ձևակերպեց մեկ վարկ՝ 2,5 տարվա մարման ժամկետով: Միավորման դեպքում օգտագործվում է բարդ տոկոսի կանոնը՝ 20% տարեկան տոկոսադրույքով: Գտնել միավորված վարկի մարման գումարը:

246 (11-րդ, արժեթղթեր) Վահագնը ու Արամայիսը հիմնեցին գրենական պիտույքների արտադրություն իրականացնող ընկերություն: Վահագնի բաժնետոմսերն ամբողջի 3/4-ն էր, իսկ Արամայիսին բաժին էր ընկնում բաժնետոմսերի 1/4-ը: 2018 թ-ին ընկերության շահույթը կազմում էր 728 000 դրամ: Որոշել նրանցից յուրաքանչյուրի շահաբաժինը (դիվիդենտը):

247 (11-րդ, խնայողություն) Տաթևիկը 1 տարեկան Հայկի խնամքի համար ստանում է 31 000 դրամ նպաստ: Նպաստառու մայրիկը որոշել էր իր որդու համար կայուն եկամուտ ապահովել, ուստի նախատեսել էր գնել պարտատոմս՝ 11% տարեկան եկամտաբերությամբ՝ 50 000 դրամ անվանական արժեքով:

Ամսական ամենաքիչը որքա՞ն պետք է նա տնտեսի, որպեսզի մինչև 2 տարեկան երեխայի խնամքի վերջնաժամկետը կարողանա գնել 1 պարտատոմս:

248 (11-րդ, բաժնետոմս) Նունեն, Լիլիթը և Հրայրը ընկերության արտոնյալ բաժնետերեր էին: Նրանց բաժնետոմսերի շահաբաժինները (համապատասխանաբար՝ 2 000 դոլար, 1 900 դոլար և 2 400 դոլար) ամբողջությամբ վճարելուց հետո հասարակ բաժնետոմսերի տերերը՝ Նարինեն և Արմենը, նույնպես ստացան իրենց շահաբաժինները: Նարինեի բաժնետոմսերը կրկնակի շատ էին Արմենի բաժնետոմսերից, իսկ նրանց բաժնեմասերի գումարը հավասար էր արտոնյալ բաժնետոմսերի բաժնեմասերի միջինին: Որքա՞ն գումար ստացավ հասարակ բաժնետոմսերի տերերից յուրաքանչյուրը:

- 249 (11-րդ, կենսաթոշակ)** Բնական թիվը հավասար է իրեն նախորդող թվերի գումարի 31-րդ մասին: Գտեք այդ թիվը և կիմանաք, որ ՀՀ-ում կենսաթոշակային տարիքը որոշվում է այդ թվով:
- 250 (11-րդ, հարկեր)** Դավիթն Իտալիայից ներմուծեց 200 կգ շոկոլադ, որի 1 կգ-ը ձեռք բերեց 5 000 դրամին համարժեք գնով:
 Ի՞նչ գնով պետք է նա վաճառի շոկոլադը, որպեսզի յուրաքանչյուր կիլոգրամի դիմաց ունենա 1 000 դրամի շահույթ, եթե այն հարկվելու է ԱԱՀ-ով (20%):
 Ամբողջ հասույթի ո՞ր տոկոսն է կազմում նրա ստացած շահույթը:
- 251 (11-րդ, գնումներ)** Առցանց վճարային համակարգով դոլարով փոխանցված գումարը բանկից կանխիկացնելու դեպքում գանձվում է 30 դոլար՝ անկախ կանխիկացվող գումարի չափից, իսկ քարտով կանխիկացնելու դեպքում՝ 2,9 %: Ի՞նչ չափի գումարի դեպքում նպատակահարմար կլինի կանխիկացումը կատարել բանկի միջոցով: Նշել լուծումներից ամենափոքր ամբողջ թիվը:
- 252 (11-րդ, գնումներ)** Խանութը ստացավ խնձոր: Որոշել 15 օրվա վաճառքից զոյացած հասույթը, եթե օրը մեջ (զույգ օրերին) 1-ական ցենտները բարեգործական հիմունքներով տրվում է մանկատանը: Իրացումը՝ արտահայտված ցենտներով, որոշվում է հետևյալ բանաձևով՝ $a_n = n + (-1)^{n+1}$, իսկ 1 ցենտները վաճառվում է 15 000 դրամով:
 1 օրը վաճառվեց՝ $a_1 = 1 + (-1)^{1+1} = 2$
 ա) Արդյո՞ք թվաբանական պրոգրեսիա է a_n հաջորդականությունը:
 բ) Թվաբանական պրոգրեսիա՞ է կենտ օրերի վաճառված խնձորի զանգվածը:
 գ) Թվաբանական պրոգրեսիա՞ է զույգ օրերի վաճառված խնձորի զանգվածը:
- 253 (11-րդ, արժեթղթեր)** Գտեք ասույթի ճշմարտային արժեքը:
 ա) Բաժնետոմսը պարտատոմս է:
 բ) Պարտատոմսը բաժնետոմս է:
 գ) Բաժնետոմսը և պարտատոմսը արժեթղթեր են:
- 254 (11-րդ, գնաճ)** Գտեք ասույթի ճշմարտային արժեքը:
 ա) Եթե գների մակարդակի բարձրացում է տեղի ունենում, ապա դրամն արժեզրկվում է:
 բ) Եթե դրամական միավորն արժեզրկվում է, ապա գներն աճում են:
- 255 (11-րդ, արժեթղթեր)** Աղյուսակում զետեղված են արժեթղթերի շուկայի կարևոր բնութագրիչները: Հաշվի առնելով բնութագրիչների առանձնահատկությունները՝ նշեք ասույթի ճշմարտային արժեքը:

ԱՐԺԵԹՂԹԵՐ	
Բաժնետոմս	Պարտատոմս
Թողարկման գին	Առաջարկվող տոկոսադրույք
Ներկա շուկայական գին	Անվանական արժեք
Ապագա շուկայական գին	Մարման ժամկետ
Շահաբաժինների չափ	

- ա) Բաժնետոմսը և պարտատոմսը խնայողության ձևեր են:
- բ) Պարտատոմսը և բաժնետոմսը խնայողության համարժեք ձևեր են:
- գ) Ավանդն ու պարտատոմսը ժամկետ ունեցող խնայողության ձևեր են:
- դ) Եկամուտ չստանալու դիսկն ավելի մեծ է պարտատոմսի, քան բաժնետոմսի դեպքում:

256 (11-րդ, կենսաթոշակ) Արդյոք ճշմարիտ է.

Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակից են՝

- ա) 1974 թվականից հետո ծնված բոլոր պետական ծառայողները,
- բ) 2015 թվականից հետո առաջին աշխատանքի անցնողները:

**Ցուցում. կուտակային կենսաթոշակային համակարգում գործող դրույթներին ծանոթանալու համար կարող ես դիտարկել «ՀՀ օրենքը կուտակային կենսաթոշակների մասին»:*

257 (11-րդ, վարկ, բյուջե) Ձևակերպել ասույթի ժխտումը.

- ա) Ցանկացած վարկ օգտակար չէ վարկառուի համար:
- բ) Ցանկացած դեպքում եկամուտները գերազանցում են ծախսերը:

258 (11-րդ, բյուջե) Շարունակեք նախադասությունն այնպես, որ ստացվի ճշմարիտ պնդում:

Որպեսզի անձը ֆինանսական վնաս չկրի, անհրաժեշտ է և բավարար, որ նրա

- ա) Եկամուտների և ծախսերի տարբերությունը լինի ... թիվ:
- բ) Եկամուտների և ծախսերի հարաբերությունը լինի ... կոտորակ:

259 (11-րդ, վճարային քարտ) Գտեք ասույթի ճշմարտային արժեքը.

ա) Եթե CVV կոդը բաղկացած է 3 հաջորդական բնական միանիշ թվերից, ապա այդ թիվը 3-ի բազմապատիկ է:

բ) Սպառողական վարկը տրամադրվում է միայն դոլարով:

գ) Եթե ֆիզիկական անձը ֆինանսապես ի վիճակի չէ վճարելու իր ունեցած պարտքերը, ապա որոշ դեպքերում պարտքը կարող է «ներվել»:

- 260 (11-րդ, առաջարկ, պահանջարկ)** Նշեք հետևյալ պնդման հակադարձ պնդումը և հակադիր պնդումը:
 Ուղիղ պնդում
 Եթե արտադրողները պատրաստ են վաճառել ավելի քիչ, քան սպառողները պատրաստ են գնել, ապա շուկայում առկա է պակասուրդ:
- 261 (11-րդ, առաջարկ, պահանջարկ)** Ձևակերպեք ասույթի ժխտումը:
 ա) Պակասորդի դեպքում գները շուկայում սովորաբար աճում են:
 բ) Ավելցուկի դեպքում գները շուկայում սովորաբար նվազում են:
- 262 (11-րդ, հարկեր)** Կազմեք տրված ասույթների տրամաբանական գումարն ու արտադրյալը և ձևակերպեք դրանց ժխտումները:
 ա) Նվերից եկամտային հարկ չի գանձվում:
 բ) Թոշակից եկամտային հարկ չի գանձվում:
- 263 (11-րդ, վճարային քարտ)** Ձևակերպեք ասույթի ժխտումը.
 ա) Բոլոր վճարային քարտերի PIN կոդերն ունեն 4 նիշ:
 բ) Գոյություն ունի CVV կոդ, որը բաղկացած է 3 նիշից:
- 264 (11-րդ, ավանդ)** Գտեք սխալ տարբերակը.
 ա) Ցպահանջ ավանդի դեպքում վճարվում է ավելի բարձր տոկոսադրույք, քան ժամկետային ավանդի դեպքում:
 բ) Դրամային ավանդի տոկոսադրույքը սովորաբար դուրային ավանդի տոկոսադրույքից բարձր է:
- 265 (11-րդ, ավանդ)** Արդյոք ճշմարիտ է.
 ա) Ժամկետային ավանդի դեպքում ժամկետից շուտ ավանդը հետ պահանջելու դեպքում վաստակած տոկոսագումարները մնում են անփոփոխ:
 բ) Ժամկետային և ցպահանջ ավանդների դեպքում սովորաբար վճարվում է հավասար տոկոսադրույք:
- 266 (11-րդ, ավանդ)** Գտեք սխալը.
 Եթե բանկն անվճարունակ է, ապա ավանդը կհատուցվի՝
 ա) ՀՀ դրամով ավանդների դեպքում 12 000 000 ՀՀ դրամի չափով:
 բ) Արտարժույթային ավանդի դեպքում 6 000 000 ՀՀ դրամի չափով:
**Ցուցում: Ավանդների հատուցման տվյալ պահի դրությամբ սահմանաչափերը կարող եք գտնել «ՀՀ օրենքը ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքում:*

- 267 (11-րդ, հարկեր, ռիսկեր)** Շարունակեք նախադասությունն այնպես, որ ստացվի ճշմարիտ պնդում.
- ա) Խմիչքների, ծխախոտի, բենզինի և դիզելային վառելիքի համար վճարվում է ... հարկ:
- բ) Ապահովագրական պատահարի վրա հասնելու հավանականությունն անվանում են ...:
- գ) Բյուջետավորումը հավասարակշռում է ծախսերը և ...:
- դ) Ֆինանսական ծառայություններից օգտվելու նպատակով օգտագործվում է տարբերակված մոտեցում, այլ կերպ ասած՝ անվանում են ...:
- ե) Ռիսկերը զսպելու նպատակով օգտագործվում է ...: Այն օգտագործվում է նաև ռիսկերը ... նպատակով:
- 268 (11-րդ, հարկեր)** Հակաօրինակի միջոցով հերքեք հետևյալ պնդումը.
- ա) Եթե եկամտից եկամտահարկ չի պահվում, ապա դա նվեր է:
- բ) Եթե վարկը տրամադրվում է << դրամով, ապա դա սպառողական վարկ է:
- 269 (11-րդ, բյուջե)** A գործարանի շահութաբերությունը արտահայտվում է հետևյալ օրենքով $f(p) = 3p^3 - 18p^2 + 129$, որտեղ p-ն շահույթն է: Գտնել փոքրագույն շահութաբերությունը:
- 270 (11-րդ, բանկային հաշիվ)** Քննարկեք պնդումը.
- Կանխիկի ստացումը իրացվում է միայն բանկոմատի միջոցով:
- 271 (11-րդ, վարկ)** Լուծեք խնդիրը և նշեք թե ինչ մեթոդ եք կիրառել:
- Զրուցում են երեք ընկերներ:
- Աշոտ.
- Ավտովարկը սպառողական վարկ է:
- Սպառողական վարկը հիպոտեկային վարկ է:
- Սուրեն.
- Սպառողական վարկը հիպոտեկային վարկ չէ:
- Ավտովարկը սպառողական վարկ չէ:
- Վահան.
- Ավտովարկը սպառողական վարկ է:
- Սպառողական վարկը հիպոտեկային վարկ չէ:
- Պարզվեց, որ երեք ընկերներից մեկը 2 անգամ ճիշտ է ասել, իսկ մյուսները՝ մեկական ճիշտ, մեկական սխալ: Ո՞վ է միայն ճիշտ ասող ընկերը:

- 272*** **(11-րդ, գնումներ)** 410 մ² պատերի մակերեսով եռահարկ շենքը հարկավոր է երեսպատել սրբատաշ տուֆով: Այդ գործը որակով կարող են անել երկու անհատ ձեռներեցներ: Նրանցից մեկը t ժամում երեսպատում է 5√t մ² պատ, իսկ մյուսը՝ 4√t մ² պատ: Ե՛վ առաջին, և՛ երկրորդ ձեռներեցը իր աշխատանքի դիմաց պահանջում է նույն գինը՝ յուրաքանչյուր ժամի համար 1 000 դրամ: Շենքի տերը ձեռներեցների միջև ինչպե՞ս բաշխի աշխատանքի ծավալը, որպեսզի ամբողջ շենքի երեսպատման ծախսը լինի նվազագույն: Որքա՞ն լրացուցիչ ծախս կպահանջվեր, եթե ամբողջ աշխատանքը պատվիրեր միայն առաջին ձեռներեցին:
- 273*** **(11-րդ, գնումներ)** Երկու արհեստանոցում խանութի պատվերով գործում են միանման գորգեր, սակայն դրանք միմյանցից տարբերվում են զարդապատկերներով: Առաջին արհեստանոցը n հատ գորգը պատրաստում է n²/4 օրում, իսկ երկրորդը՝ n²/9 օրում: Նրանք գորգերը խանութին հանձնում են այնպիսի գնով, որը որոշվում է ըստ ծախսված ժամանակի՝ յուրաքանչյուր օրվա դիմաց 25 000 դրամ: Խանութի տերը 65 գորգ վերցնելու համար քանի՞ գորգ պետք է պատվիրի յուրաքանչյուր արհեստանոցին, որ վճարած գումարը լինի նվազագույն: Այդ դեպքում խանութի տիրոջ համար որքան կկազմի ձեռք բերված 1 գորգի միջին գինը:
- 274** **(11-րդ, գնումներ)** Ըստ նախորդ խնդրի տվյալների՝ ի՞նչ գնով պետք է վաճառի խանութը իր ձեռք բերած գորգերը, որ ևս 24%-ի վաճառքի կազմակերպման ծախսերը (ներառյալ հարկերը) անելուց հետո խանութի շահույթը կազմի ամբողջ ծախսի 10%-ը: Որքա՞ն կկազմի խանութի՝ պատվիրած բոլոր գորգերի վաճառքից ստացված շահույթը:
- 275*** **(11-րդ, գնումներ)** Շուկայում նախորդ ամիս կաթի գինը տարբեր օրերին տարբեր էր, և այդ ամսում միջին գինը կազմում էր 300 դրամ: Աստղիկն ամեն օր շուկայից գնում էր 1 լ կաթ, իսկ Արևիկը՝ 300 դրամի կաթ: Նախորդ ամսում նրանցից ո՞վ ավելի շատ կաթ գնեց: Պատասխանը հիմնավորել:
- 276** **(11-րդ, բյուջե)** Արմենը վարձով տարածք էր վերցրել վարսավիրանոցի համար: Յուրաքանչյուր հաճախորդի սպասարկման վրա իր կողմից կատարված նյութաձախսը (հոսանք, նյութեր և այլն) կազմում էր 200 դրամ, բացի այդ՝ տարածքի համար օրական վճարում էր 3 000 դրամ՝ անկախ հաճախորդների թվից: Դիտարկումներով պարզվել էր, որ հաճախորդների քանակը գծային կախում ունի վարսավիրի կողմից սահմանված գնից: Աղյուսակում ներկայացված է այդ կախվածության երկու արժեք:

<i>Մեկ հաճախորդի սպասարկման գինը (դրամ)</i>	<i>Հաճախորդների քանակը մեկ օրում</i>
800	16
1200	12

ա) Որոշել հաճախորդների քանակի ֆունկցիան՝ կախված սպասարկման գնից:

բ) Ի՞նչ գին պետք է սահմաններ վարսավիրը, որ նրա օրական շահույթը լիներ առավելագույնը: Այդ դեպքում օրական միջինում քանի՞ հաճախորդ կունենար:

277* **(11-րդ, գնումներ)** A խանութն առաջարկում է 50-ական դրամի զեղչ՝ կատարված առևտրի յուրաքանչյուր 1 000 դրամի դիմաց, բայց հայտնի է, որ այնտեղ ապրանքները 4%-ով թանկ են, քան հարևան B խանութում: B խանութում ի՞նչ գումարի գնումներ կատարելու դեպքում հաճախորդը կվճարեր այնքան, որքան այդ ապրանքների համար կվճարեր A խանութում: Որոշել, թե ի՞նչ գումարի առևտրի դեպքում է շահավետ՝ ա) A խանութը, բ) B խանութը:

278 **(11-րդ, ռիսկեր)** Թոշակառու պարոն Արտակը հեռուստացույց դիտելիս հաճախ էր հանդիպում գալիք ամսում մեկնարկող վիճակախաղի գովազդի, որտեղ խաղարկվելու էր 1 մեքենա՝ 3 մլն դրամ արժողությամբ, 4 հատ 500 000 դրամ, 5 լվացքի մեքենա՝ 120 հազար դրամ արժողությամբ, 3 հեռուստացույց՝ 150 000 դրամ արժողությամբ, 500 հատ 5 000 դրամ: Վիճակախաղի մեկնարկին պարոն Արտակը որոշեց իր թոռնիկի համար գնել մեկ վիճակախաղի տոմս, որն արժեք 300 դրամ:

ա) Որքա՞ն է կազմում վիճակախաղը կազմակերպող ընկերության հասույթը, եթե թողարկել են 50 000 տոմս:

բ) Որքա՞ն է կազմում վիճակախաղը կազմակերպող ընկերության ընդհանուր ծախսը, եթե թողարկված տոմսերի վրա ծախսել են 200 000 դրամ:

գ) Որքա՞ն կկազմի վիճակախաղը կազմակերպող ընկերության շահույթը, եթե ենթադրենք, որ բոլոր տոմսերը վաճառվել են:

դ) Որքա՞ն է հավանականությունը, որ պարոն Արտակը վիճակախաղի տոմսը կջնջի և կշահի հեռուստացույց կամ լվացքի մեքենա:

ե) Որքա՞ն է հավանականությունը, որ պարոն Արտակը որևէ բան կշահի:

զ) Պարոն Արտակը որոշել էր, որ եթե ոչինչ չշահի, ապա իր բախտը ևս երկու անգամ կփորձի: Ի՞նչ խորհուրդ կտայիք նրան:

279 **(11-րդ, ռիսկեր)** Պարոն Արտակը և իր որդին խանութից հագուստ էին գնել՝ անցնելով սահմանված գումարի շեմը, որից հետո հաճախորդները հնարավորություն էին ստանում մասնակցելու ամսվա վերջում տեղի ունեցող վիճակախաղի, որտեղ խաղարկվելու էր 2 հատ մեկ միլիոն դրամ: Նրանք ստացել էին 2-ական համարակալված կտրոն: Վիճակախաղին մասնակցում էր պարոն Արտակը՝ 4 կտրոնով, իսկ ընդհանուր մասնակիցների կտրոնների թիվը 100 էր: Խաղարկության ժամանակ 2 անգամ արկղից պատահականորեն հանվում էր մեկական կտրոն. եթե

տվյալ կտրոնի համարը համընկնում էր մասնակցի կտրոնի համարին, ապա նա շահում էր: Որքա՞ն է հավանականությունը, որ պարոն Արտակը կշահի մեկ միլիոն դրամ:

280* **(11-րդ, ռիսկեր)** Սպորտային ապրանքների խանութ-սրահում անցկացվում է «Սիրված մարզիկ» վիճակախաղը: Դարակներում շարված են կանոնական 12-անիստ պատկերազարդ բազմանիստեր՝ անվանի մարզիկների անուններով: Յուրաքանչյուր մարզիկին նվիրված բազմանիստի նիստերը համարակալված են, նիստերից մեկի վրա պատկերված է նրա նկարը, իսկ մնացած 11 նիստերի վրա գրված են տեղեկություններ հաջողությունների ու նվաճումների մասին: Վիճակախաղի մասնակիցը նախ ընտրում է իր սիրած մարզիկի բազմանիստը և, ամեն անգամ վճարելով 100 դրամ, մոտենում է վիճակահանության սեղանին: Սեղանին դրված է բաժակ, իսկ նրա մեջ՝ համարակալված նիստերով փոքրիկ 12-անիստ զառ: Մասնակիցը թափահարում է բաժակը և զառը գցում սեղանին: Եթե զառը կանգնում է այնպես, որ սեղանին հպված նիստի համարը համընկնում է մարզիկի նկարով նիստի համարին, ապա մասնակիցը ստանում է իր ընտրած մարզիկի բազմանիստը: Առնվազն որքա՞ն գումար պետք է նա ծախսի, որ ընտրած բազմանիստը ստանալու հավանականությունը փոքր չլինի 0,9 – ից:

281* **(11-րդ, ռիսկեր)** Կինոթատրոնի նախասրահում տեղադրված է ապակյա արկղի միջից խաղալիքներ հանող «Կռունկ» խաղային ավտոմատ: Խաղացողն ավտոմատի դրամարկղ է գցում 100 դրամանոց և ստանում է ավտոմատի ձեռնաշերտի միջոցով խաղալիք հանելու մեկ փորձի իրավունք: Եթե փորձը հաջող է, ապա նա ստանում է այդ խաղալիքը: Խաղալիքներից Աշոտին շատ էր դուր եկել սպիտակ առյուծը: Յուրաքանչյուր փորձի ժամանակ այդ առյուծը հանելու հավանականությունը 0,04 է: Որքա՞ն գումար պետք է նա ծախսի, որ սպիտակ առյուծը ստանալու հավանականությունը լինի 0,96-ից ոչ պակաս (ի դեպ՝ այդ խաղալիքը մանկական տոնավաճառում արժե 750 դրամ):

1.4. *Լրացուցիչ խնդիրներ տարբեր դասարանների համար*

- 282 (5-7-րդ, գնումներ)** Խանութում վաճառվում էին 45 դրամ և 60 դրամ արժողությամբ երկու տեսակի տետրեր: Մանեն վճարեց 600 դրամ և գնեց 12 տետր:
- ա) Յուրաքանչյուր տեսակից քանի՞ տետր գնեց Մանեն:
- բ) Որքա՞ն է կազմում մեկ տետրի միջին գինը:
- 283 (5-9-րդ, գնումներ)** Գտեք սխալը:
- Երեք ընկերներ ճաշում էին ճաշարանում: Երբ մատուցողը բերեց հաշիվը, նրանցից յուրաքանչյուրը 1–ական 5 000–անոց տվեց նրան՝ ընդամենը 15 000 դրամ: Մատուցողը հաշվի գումարը մուծեց դրամարկղում, մնացորդից 2 000 դրամ իրեն վերցրեց սպասարկման դիմաց և 1 000–ական դրամ վերադարձրեց ընկերներին: Արդյունքում ստացվեց, որ երեք ընկերներից յուրաքանչյուրը մատուցողին տվել է 4 000–ական դրամ՝ ընդամենը 12 000 դրամ, 2 000 դրամ էլ կար մատուցողի մոտ: Ընդամենը կազմեց 14 000 դրամ, բայց սկզբում 15 000 դրամ էր: Ու՞ր կորավ 1 000 դրամը:
- 284 (5-7-րդ, պարտք)** Պարտքը պայմանագրով սահմանված ժամկետում մարելու համար Վարդանը պետք է ամսական վճարեր 35 000 դրամ, բայց ամեն ամիս 15 000 դրամ պակաս էր վճարում, հետևաբար պարտքը մարեց 9 ամիս ուշ: Վարդանը քանի՞ ամսում էր մարելու պարտքը:
- 285 (6,7-րդ, եկամուտ)** Առաջին ամսվա եկամուտը 100 000 դրամի դիմաց կազմում է *p* դրամ, իսկ ամեն հաջորդող ամիսներին ամեն 100 000 դրամի դիմաց կազմում է *q* դրամ: Գտնել երեք ամիսների ընթացքում 1 000 000 դրամից ստացված եկամուտը, եթե հայտնի է, որ յուրաքանչյուր ամսվա եկամուտը սկզբնական գումարին չեն ավելացնում:
- 286 (6,7-րդ, խնայողություն)** Հայրիկը և մայրիկը միասին 700 000 դրամ գումար են ներդրել ավանդ՝ հետագայում իրենց որդու ուսման վարձը վճարելու նպատակով: Եթե հայրիկի ներդրած գումարի 12.5%-ը ավելացնենք մայրիկի ներդրած գումարին, ապա նրանց ներդրումները կհավասարվեն:
- Որքա՞ն գումար է ներդրել նրանցից յուրաքանչյուրը:
- Ուսման վարձը վճարելու ուրիշ ի՞նչ տարբերակ կառաջարկեք:
- 287 (6,7-րդ, գնումներ)** Քանի՞ տոկոսով պետք է իջեցնել խնձորի գինը, որ 10 կգ խնձորն արժենա 1.5 անգամ ավելի, քան մինչև գնի իջեցումն արժեր խնձորի 6 կգ-ը:
- 288 (6,7-րդ, գնումներ)** Քանի՞ տոկոսով ավելի շատ մթերք կարելի է գնել, եթե աշխատավարձը բարձրանա 20%-ով, իսկ մթերքի գինը իջնի 25%-ով:

- 289 (6,7-րդ, խնայողություն)** Հարցման արդյունքում դպրոցի աշակերտական խորհուրդը պարզել է. սովորողների 65%-ը համարում է, որ խնայողությունները պետք է պահել բանկում, 40%-ը՝ տանը, 25%-ը կարծում է, որ պետք է պահել մասամբ և՛ տանը, և՛ բանկում: Գտնել այն սովորողների տոկոսային քանակը, ովքեր խնայողություն չեն անում:
- 290 (6,7-րդ, բյուջե, խնայողություն)** Ձեր ընտանիքի ծախսերը կազմում են 300 000 դրամ, իսկ եկամուտը՝ 320 000 դրամ: Եկամտի քանի՞ տոկոսն է խնայվում: Որպեսզի յուրաքանչյուր ամիս հնարավոր լինի կատարել ընդունված 10%-ի խնայողություն, որքա՞ն պետք է ա) ավելացնել եկամուտը, բ) պակասեցնել ծախսերը:
- 291 (6,7-րդ, պարտք)** Հաճախորդը բանկից վարկ վերցրեց 960 000 դրամ՝ մեկ տարով՝ 16% տարեկան փաստացի տոկոսադրույքով: Նա պետք է մարի պարտքը ամսական հավասար վճարումներով: Քանի՞ դրամ պետք է ամսական վճարի բանկին, որպեսզի մեկ տարվա ընթացքում մարի պարտքը:
- 292 (6,7-րդ, գնումներ)** Ապրանքի գինը սկզբում իջավ 8%-ով, ապա բարձրացավ 8%-ով: Փոխվե՞ց արդյոք ապրանքի սկզբնական գինը, եթե այո՝ քանի՞ %-ով:
- 293 (6,7-րդ, բյուջե)** Ընտանեկան բյուջեում հայրիկի աշխատավարձը կազմում է եկամուտների 60%-ը, իսկ մայրիկինը՝ 40%-ը: Ինչպե՞ս կփոխվի ընտանիքի եկամուտը, եթե մայրիկի աշխատավարձը բարձրանա 10%-ով:
- 294 (6,7-րդ, խնայողություն)** Արմենը որոշել է երկու տարբեր բանկերում գումար ներդնել: «Ա» բանկում նա դրեց 4 000 000 դրամ, որը 1 տարի հետո դարձավ 4 320 000 դրամ: «Բ» բանկում դրեց 7 000 000 դրամ, որը 1 տարի հետո դարձավ 7 525 000 դրամ: Ո՞ր բանկում էր նպատակահարմար ներդնել ամբողջ գումարը: Եթե ո՛չ ամբողջը, ապա որքա՞նը և ինչո՞ւ:
- 295 (6,7-րդ, գնումներ, պարտք)** Խանութից ապառիկ կարելի է գնել հեռախոս՝ 100 000 դրամով: Նախնական վճարումը 10 000 դրամ է, որից հետո յուրաքանչյուր ամիս (12 ամիս) պետք է վճարել 10 000 դրամ: Կարելի է նաև բանկից վարկ վերցնել և վճարել խանութին ամբողջ գումարը՝ 100 000 դրամ, իսկ 1 տարի հետո մարել վարկը՝ բանկին վճարելով տարեկան 25% փաստացի տոկոսագումարի հետ միասին: Ո՞ր տարբերակն է ավելի նպատակահարմար:
- 296 (6,7-րդ, ավանդ)** Որքա՞ն է եղել բանկում ներդրված ցպահանջ ավանդի մայր գումարը, եթե 2 տարի 6 ամիս հետո գումարը կազմում էր 186 000 դրամ, իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը՝ 8%:
- 297 (6,7-րդ, գնումներ)** Դպրոցի ուսուցիչները որոշել են սոցիալաբեթի շրջանակներում գնալ հանգստանալու: Հատկացվող առավելագույն գումարը 72 000 դրամ է: Ընկեր Վարդանյանը տուրիստական գործակալությունից ճշտեց, որ այդ գումարով կարող է հանգստանալ 6 օր՝

իր ընտրած հանգստյան տանը: Բայց աշխատողը տեղեկացրեց, որ եթե դիմեն 5 և ավելի հոգու համար, ապա կգործի 25% զեղչ: Որոշել, թե 7 հոգով նշված առաջարկից օգտվելու դեպքում քանի՞ օր կարող են հանգստանալ:

- 298 (6,7-րդ, եկամուտ)** Երևանում Արամենց գնած բնակարանն արժե 28 800 000 դրամ, որը նրանք հյուրանոցային ընկերությանը վարձակալությամբ հանձնեցին ամսական 160 000 դրամով (փաստացի): Որքա՞ն ժամանակ հետո բնակարանը կգրոյացնի իր ինքնարժեքը և կսկսի բերել եկամուտ:
- 299 (6,7-րդ, գնումներ, խնայողություն)** Արթուրի ամսական աշխատավարձը փաստացի 150 000 դրամ է, որի 30%-ը նա տալիս է մայրիկին, ընդմիջման վրա ծախսում է ամսական 25 000 դրամ, ճանապարհաճախս՝ 12 000 դրամ, նույնքան կինոթատրոն հաճախելու համար, այլ ծախսերը՝ 20 000 դրամ: Մնացածը խնայում է՝ իր երագած սպորտային հեծանիվը գնելու համար: Քանի՞ ամիս հետո նա կկարողանա գնել այն, եթե հեծանիվն արժե 252 000 դրամ:
- 300 (6,7-րդ, բյուջե, գնումներ)** Քնար մայրիկը իրենց այգու բերքից չիր պատրաստելու նպատակով առանձնացրել էր 60 կգ սալոր, 80 կգ բալ և 100 կգ դեղձ: Սալորից ստացվեց 20%-ի, բալից՝ 15%-ի, դեղձից՝ 17%-ի չափով չիր: Ստացվածից 2-ական կգ պահեց իրենց համար, մնացածը շուկայում վաճառեց միևնույն գնով և ստացավ 119 000 դրամ: Որքա՞ն էր չրի վաճառքի գինը:
- 301 (6,7-րդ, գնումներ)** Թաշկինակները վաճառվում են փաթեթներով: «Ա» խանութում յուրաքանչյուր փաթեթում կա 2 թաշկինակ, և գինը 360 դրամ է, իսկ «Բ» խանութում յուրաքանչյուր փաթեթում կա 3 թաշկինակ, և գինը 510 դրամ է: Համեմատել թաշկինակների գները այդ խանութներում՝ հաշվի առնելով, որ «Ա» խանութում գործում է նաև 5 % զեղչ, իսկ «Բ»-ում զեղչ չի գործում:
- 302 (6,7-րդ, գնումներ)** Ալենն ուզում էր Նարեին վարդերի փունջ նվիրել: Ծաղկի խանութում յուրաքանչյուր վարդն արժե 250 դրամ, իսկ փնջի ձևավորման համար հարկավոր էր վճարել ևս 400 դրամ: Ունենալով 2 600 դրամ՝ առավելագույնը քանի՞ ծաղիկ կարող է լինել փնջում, եթե հայտնի է, որ ծաղիկների քանակը պետք է լիներ կենտ թիվ: Որքա՞ն կարժենար այդպիսի ծաղկեփունջը:
- 303 (6,7-րդ, գնումներ, խնայողություն)** Մովսեսը երթևեկում էր իր ավտոմեքենայով և տարվա ընթացքում շաբաթական միջին հաշվով ծախսում էր 25 լ բենզին: Բենզալցման համար նա ուներ երկու տարբերակ.
- ա) A ընկերությունը առաջարկում էր բենզին՝ լիտրը 460 դրամով, վճարումն ընդունում էր ինչպես առձեռն, այնպես էլ վճարային քարտով, ընդ որում՝ վճարային քարտով գնելու դեպքում յուրաքանչյուր լիտրի համար տրվում էր 1 միավոր բոնուս, իսկ կուտակած յուրաքանչյուր 650 միավորի դիմաց կարելի էր անվճար ստանալ 40 լ բենզին:

բ) B ընկերությունն առաջարկում էր բենզին՝ լիտրը 440 դրամով, վճարումն ընդունում էր միայն առձեռն, և բռնուս չէր տրվում:

Եթե ընդունենք, որ տարվա ընթացքում բենզինի գնի փոփոխություն չի լինի, ապա ո՞ր ընկերությունն է նախընտրելի: Այդ ընտրության դեպքում որքա՞ն կլինի Մովսեսի խնայած գումարը մեկ տարվա ընթացքում:

304 (6,7-րդ, գնումներ, խնայողություն) Հասմիկը միջոցառման համար պետք է գներ 8 կգ խնձոր և 6 կգ խաղող: Շուկայում խնձորի գինը 400 դրամ էր, խաղողի գինը՝ 500 դրամ, իսկ հարևանությամբ գործող խանութում՝ համապատասխանաբար 430 դրամ և 540 դրամ: Հասմիկի մոտ կանխիկ գումար չկար, նա ուներ A բանկի քարտ, որի հաշվի վրա կար ընդամենը 6 760 դրամ: Մոտակա տարածքում A բանկի բանկոմատ չկար, առկա էր B բանկի բանկոմատ, որից այլ բանկերի քարտերով կանխիկացում կատարելիս լրացուցիչ գանձվում էր կանխիկացվող գումարի 4%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 250 դրամ: Հասմիկը կկարողանա՞ կատարել նախատեսված գնումները: Եթե այո, ապա որքա՞ն գումար կմնա նրա բանկային քարտի հաշվին:

305 (6,7-րդ, բյուջե) Վահանենց ընտանիքի մշտական եկամտի աղբյուրները հայրիկի ամսական 140 000 դրամ աշխատավարձն էր և պապիկի 52 000 դրամ թոշակը: Մնացած եկամուտը նրանք ստանում էին տնամերձ այգու բարիքներից: Ինքը և քույրիկը սովորում էին դպրոցում և օգնում էին նաև ծնողներին կենցաղային ու այգեգործական աշխատանքներում: Ակնկալում էին, որ հունիսին կունենան վաճառքի մոտ 600 կգ ծիրան և կանխատեսում էին, որ կվաճառեն կիրգրամը 250 դրամով: Եթե ամեն ինչ բարեհաջող լիներ, նրանք ցանկանում էին գնել նոր հեռուստացույց, որի արժեքը 150 000 դրամ էր: Բացի այդ, նրանք ամսական մոտ 35 000 դրամ վճարելու էին հոսանքի, գազի և ջրի համար, իսկ միջինում ամսական 130 000 դրամ ծախսում էին սննդի և տրանսպորտի համար: Բարեբախտաբար, բերքը առատ եղավ. ծիրան ստացան սպասվածից 20%-ով ավելի և վաճառեցին կանխատեսվածից 50 դրամով ավելի գնով:

Կազմեք Վահանենց ընտանիքի հունիս ամսվա բյուջեն: Որքա՞ն գումար մնաց նրանց նշված ծախսերը կատարելուց հետո:

306 (6-8-րդ, բյուջե) Սուրենը ապրում է շուկային մոտ և ամառային արձակուրդի ժամանակ օգնում է վաճառողներից մեկին առավոտյան տեղափոխել և դասավորել մրգերով լի արկղերը: Դրա դիմաց վաճառողը Սուրենի սիրած խնձորները նրան վաճառում է 10% զեղչով: Աշնանը նոր խնձորների գները բարձրացան 10%-ով: Չնայած Սուրենը դպրոց էր հաճախում և այլևս չէր կարող օգնել վաճառողին, միևնույն է՝ նրա 10% զեղչն ուժի մեջ էր:

Թանկացումից հետո ամսական որքա՞ն գումար կծախսի Սուրենը խնձոր գնելու համար, եթե յուրաքանչյուր ամիս գնում է 4 կգ խնձոր, որի 1 կգ-ը մինչև թանկանալն արժեր 500 դրամ:

Քանի՞ դրամի փոփոխություն կկրի նրա ամսական բյուջեն թանկացումից հետո:

307 (6-8-րդ, ավանդ) Բանկ է ներդրվել 250 000 դրամական միավոր ավանդ (ցանկացած ամիս հանելու պայմանով)՝ 7% տարեկան (պարզ) տոկոսադրույքով: Գումարը հանելու պահին այն կազմել է 293 750 դրամական միավոր: Որքա՞ն ժամանակ է գումարը մնացել բանկում:

308 (7-9-րդ, խնայողություն) Անին առօրյա գնումները կատարում է սուպերմարկետից և վճարում «Բոնուս» քարտով: Որոշել, թե որքա՞ն տնտեսեց Անին 30.03 - 01.04 ժամանակահատվածում: Նրա կատարած գնումները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Օր	Ապրանքատեսակ	Գին / 1 կգ	Հատուկ գին	Սուպերգին
30.03	Երշիկ (1կգ)	2 200		-26%
31.03	Նրբերշիկ (1կգ)	2 750	-22%	
01.04	Աղցան «Թաթուլե» (0,5 կգ)	1 800	-12%	

Հիշեցում. «Բոնուս» քարտով գնումներ կատարելը շահավետ է.

մինչև 20 000 դրամ – 1% զեղչ,

մինչև 30 000 դրամ – 2% զեղչ,

30 000 դրամ և ավելի – 3% զեղչ:

309 (7-9-րդ, խնայողություն) Անին ունի 100 000 դրամ: Նա պետք է ընտրի, թե որ տարբերակով ներդնի գումարը որպես ավանդ՝ 2 տարի ժամկետով. տարեկան 12% տոկոսադրույքով՝ պարզ տոկոսի հաշվարկով, թե՞ 10% տարեկան բարդ տոկոսադրույքով: Ո՞ր ներդրումը կլինի ավելի եկամտաբեր:

310 (7-9-րդ, ավանդ) 2 տարով ավանդի ներդրման ո՞ր տարբերակն է ավելի ձեռնտու. ա) տարեկան 10% բարդ տոկոսադրույքով, թե՞ տարեկան 10% պարզ տոկոսադրույքով: բ) Նույն համեմատությունը կատարել 10% բարդ՝ տարեկան կապիտալացումով և 11% պարզ տոկոսադրույքներով ավանդների համար:

311 (7-9-րդ, բյուջե) Ձեռնարկատերը իր բանկային հաշվում ունի 4 000 000 դրամ գումար և կանխատեսում է, որ հաջորդող 2 տարիներին կունենա համապատասխանաբար 6 000 000 և 7 000 000 դրամ եկամուտներ, որոնք կավելանան իր հաշվի վրա: Ընթացիկ տարվա ծախսը կազմում է 2

000 000 դրամ, ընդ որում՝ հաջորդող տարիներին սպասվում է ծախսերի 10-ական տոկոս աճ: Հաշվեք այդ երկու տարիներից յուրաքանչյուրի վերջում հաշվին մնացող գումարները:

- 312 (7-9-րդ, ռիսկեր)** Հովսեփի կինը գնեց 20 հատ 400 դրամ արժողությամբ վիճակահանության տոմս. 2 – ը շահեցին 1 000 և 500-ական դրամ, իսկ մեկը շահեց 5 000 դրամ: Որքա՞ն եկամուտ ունեցավ նա:
- 313 (7-9-րդ, գնումներ, պարտք)** Գովազդային թերթոնի մեջ նշված են սեզոնային լավագույն առաջարկները: Կարելի է ապառիկ գնել 405 000 դրամ արժողությամբ օդորակիչ՝ 2 տարի վճարելով ամսական հաստատուն 20 925 դրամ: Որոշել ապառիկի տարեկան տոկոսադրույքը:
- 314 (7-9-րդ, ավանդ)** Որքա՞ն եկամուտ կբերի 28 800 000 դրամ գումարը, եթե որպես ավանդ ներդրվի 8% տարեկան (պարզ) տոկոսադրույքով, 15 տարի ժամկետով: Ի՞նչ ռիսկեր կան:
- 315 (7-9-րդ, գնումներ)** Ծառայության մատուցման գինը 25%-ով բարձրացնելուց և այնուհետև P%-ով իջեցնելուց հետո մնաց նույնը (նախկինը): Քանի՞ տոկոսով էին իջեցրել այն:
- 316 (7-9-րդ, ավանդ, փոխարժեք)** Լենան որոշել էր իր խնայած 4,8 միլիոն դրամը մեկ տարի ժամկետով որպես ավանդ ներդնել բանկում, որում տոկոսային եկամտաբերությունը 10% էր: Սակայն հետևելով իր եղբայր Վահագնի խորհրդին՝ այդ գումարը փոխանակեց 10 000 դոլարով և ավանդ ներդրեց 6% տոկոսային եկամտաբերությամբ: Վահագնը կանխատեսել էր, որ տարվա ընթացքում դոլարի փոխարժեքը կբարձրանա: Արդյոք շահե՞ց Լենան, եթե այդ տարվա ընթացքում դոլարի փոխարժեքը, իրոք, բարձրացավ՝ 4%-ով: Եթե այո, ապա որքանո՞վ:
- 317 (7-9-րդ, կենսաթոշակ)** Շուշանը, Հասմիկը և Տաթևը արտոնյալ կենսաթոշակառուներ են: Հայտնի է, որ Հասմիկի թոշակը Շուշանի և Տաթևի թոշակների միջին թվաբանականն է: Որքա՞ն թոշակ է ստանում Հասմիկը, եթե հայտնի է, որ նրանց թոշակների գումարային արժեքը կազմում է 360 000 դրամ:
- 318 (8-10-րդ, խնայողություն)** «Դելտա» բանկի դրամային քարտապանները հատուկ առաջարկ էին ստացել, ըստ որի՝ տոնավաճառից կանխիկ և անկանխիկ գնումներ կատարելիս վերադարձվում էր գումարի 10%-ը: Ռուբենը «Դելտա» բանկի քարտապան էր և կատարել էր 165 000 դրամի կանխիկ և 85 000 դրամի անկանխիկ գնումներ: Քանի՞ դրամ նա կարողացավ խնայել հատուկ առաջարկի շնորհիվ:
- 319 (8-11-րդ, ապահովագրություն)** Աստղիկը ԱՊՊԱ պայմանագիր չունենալու պատճառով ենթարկվեց վարչական պատասխանատվության՝ տուգանվեց 15 000 դրամ: Քանի՞ օր է նա առանց ԱՊՊԱ պայմանագիր ունենալու վարել մեքենան, եթե յուրաքանչյուր 10 օրվա համար նախատեսված է 5 000 դրամ տուգանք:

- 320 (6,7,10,11-րդ, պարտք, խնայողություն)** Արմենը բանկից վերցրեց 800 000 դրամ վարկ՝ 18% տարեկան փաստացի տոկոսադրույքով, 1 տարի ժամկետով: Ըստ պայմանի՝ պարտքը ամբողջությամբ մարվելու է ժամկետի ավարտին: Արմենի տնօրինելի եկամուտն ամսական 400 000 դրամ է, որից ամեն ամիս նա խնայում է 20%՝ վարկը մարելու նպատակով: Հաշվել, թե վարկային տարվա վերջում Արմենը կկարողանա՞ իր խնայողություններով մարել պարտքը:
- 321 (9-11-րդ, վարկ)** Անհատ ձեռներեցը պլանավորում է հունիսի 10-ին վերցնել 1 200 000 դրամ վարկ՝ 2 տարի ժամկետով: Պայմաններն այսպիսին են. յուրաքանչյուր ամսվա 1-ին, նախորդ ամսվա վերջի համեմատությամբ, պարտքը մեծանում է 2%-ով, յուրաքանչյուր ամսվա 2-ից 9-ը անհրաժեշտ է վճարել պարտքի մի մասը, յուրաքանչյուր ամսվա 10-ին, նախորդ ամսվա 10-ի համեմատությամբ, պարտքը պետք է փոքրանա միևնույն չափով:
Ի՞նչ գումար պետք է վճարել բանկին 1-ին տարում և ամբողջ ժամանակահատվածի համար:
- 322 (9-11-րդ, վարկ)** Գևորգը բանկից վարկ է վերցրել 270 200 դրամ: Պարտքի վճարման սխեման հետևյալն է. յուրաքանչյուր տարվա վերջին բանկը ավելացնում է պարտքը մնացած գումարի 10%-ով, հետո Գևորգը կատարում է իր հերթական վճարումը: Հայտնի է, որ Գևորգը մարել է պարտքը 3 տարում, ընդ որում՝ նրա կատարած յուրաքանչյուր վճարում 3 անգամ մեծ է նախորդ վճարումից: Ի՞նչ գումար է վճարել Գևորգն առաջին անգամ:
- 323 (6-11-րդ, դրամ)** Մանեն խանութում մանրեց 1000-անոց թղթադրամը, փոխարենը ստացավ 7 հատ մետաղադրամ: Մետաղադրամներից երեքի արժեքների գումարը 3 անգամ մեծ է մնացած չորսի արժեքների գումարից: Ի՞նչ մետաղադրամներ էր ստացել Մանեն:
- 324* (6-11-րդ, դրամ)** 2019 թ. ամռանը Աննան ուներ 8 հատ ՀՀ թղթադրամ: Դրանց անվանական արժեքների գումարը բաժանվում է 9-ի և 11-ի, իսկ չորս հատի գումարը մյուս չորս հատի գումարից մեծ է 10 անգամ: Որքա՞ն գումար կարող էր ունենալ Աննան:
- 325 (9-11-րդ, վճարային քարտ)** Վճարային «Արքա» քարտի PIN կոդն ունի 4 նիշ, որոշել՝ քանի PIN կոդ կարելի է կազմել {0,1,2,3,4,5,6,7,8,9} թվանշաններով, որտեղ՝
ա) Չկան կրկնվող թվանշաններ:
բ) Կան կրկնվող թվանշաններ:
- 326 (9-11-րդ, վարկ)** Ազատը որոշեց վերցնել 15 մլն դրամ հիպոտեկային վարկ՝ 12% փաստացի տոկոսադրույքով, բայց բանկում նրան առաջարկեցին ևս մեկ տարբերակ: Հիպոտեկային վարկը կտրամադրվի 11% փաստացի տոկոսադրույքով, 1 տարի ժամկետով, եթե նրա համար բացվի քարտային հաշիվ, որին ամսական պետք է փոխանցել 5 000 դրամ՝ մինչև

պայմանագրի ժամկետի ավարտը: Նա ընտրեց իր համար ավելի շահավետ տարբերակը՝ ո՞րն էր դա:

- 327*** **(9,10-րդ, եկամուտ)** Ձեռնարկատերը նախատեսում է առավել աչքի ընկած աշխատակիցներին տալ պարգևավճար: Սակայն պարզվեց, որ պարգևի արժանի աշխատակիցները նախատեսվածից 3 հոգով ավելի են: Ուստի հարկ կլինեն աշխատակիցներից յուրաքանչյուրի համար նախատեսված պարգևի չափը պակասեցնել 4000 դրամով: Սակայն ձեռնարկատերը գտավ ուրիշ լուծում. նա որոշեց ընդհանուր գումարն ավելացնել 90 000 դրամով, որի շնորհիվ պարգևատրվողներից յուրաքանչյուրը ստացավ 25 000 դրամ: Քանի՞ հոգի պարգև ստացավ:
- 328*** **(9,10-րդ, բյուջե, գնումներ)** Վահեն վճարելով 90 000 դրամ՝ չիր պատրաստելու նպատակով գյուղատնտեսական տոնավաճառից գնեց հավասար զանգվածներով խնձոր, սալոր և տանձ, որոնք ունեին նույն գինը: Նրա պատրաստած չրերը ևս ստացվեցին հավասար զանգվածներով՝ յուրաքանչյուր 1 կգ չիրը ստացվեց 5 կգ մրգից: Չիր պատրաստելու և տեղափոխելու վրա կատարված ծախսերը կազմեցին 35 000 դրամ: Արդյունքում, երբ ձմռանը վաճառեց չրերը, նա հաշվեց, որ զուտ եկամուտը կազմել է 55 000 դրամ: Պարզել, թե վաճառված 1 կգ չրի արժեքը քանի՞ անգամ է մեծ գնված մրգի 1 կգ –ի արժեքից, եթե հայտնի է, որ տանձի ու խնձորի չրերը վաճառվել են նույն գնով, իսկ սալորի չիրը՝ դրանցից յուրաքանչյուրից կրկնակի թանկ:
- 329** **(5-11-րդ, գնումներ)** Հայր ու տղա զբոսաշրջության ժամանակ հանդիպեցին 3 ճամփորդի և նրանցից ջուր խնդրեցին: Ճամփորդները ջուր չունեին և առաջարկեցին հյուսիս խմել: Նրանցից երկուսի մոտ կար 2–ական, իսկ երրորդի մոտ՝ 3 փոքր շշերով հյուսիս: Այդ ամբողջ հյուսիսը ճանապարհին նրանք հինգով հավասարաչափ խմեցին: Երախտապարտ հայրը իր և որդու խմած հյուսիսի համար ճամփորդներին տվեց 1 400 դրամ: Ինչպե՞ս կբաժանեք այդ գումարը ճամփորդների միջև:
- 330** **(9-11-րդ, արժեթղթեր)** Հինգ ընկերներ ձեռք բերեցին արժեթղթեր, որոնց քանակները՝ a_1, a_2, a_3, a_4, a_5 թվաբանական պրոգրեսիա են կազմում. $a_2=7, a_5=19$: Որոշել առաջին, երրորդ և հինգերորդ ընկերների շահաբաժինները, եթե առաջին տարվա ընթացքում ներդրման արդյունքում ստացվել է 550 000 դրամ շահույթ:
- 331** **(9-11-րդ, ռիսկեր)** Հայտարարված է, որ «Եղևնի» տոնավաճառում մինչև մայիսի 11-ը 5 000 դրամի և ավելի գնումներ կատարողները կարող են իրենց կտրոններով մասնակցել վիճակախաղի, որտեղ խաղարկվելու են 1 ավտոմեքենա և 30 հեռուստացույց: Վիճակահանության 20 000 կտրոններից 5-ը պատկանում էին Համբարձումին: Որոշեք նրա՝ հեռուստացույց և ավտոմեքենա շահելու հավանականությունները:

- 332 (9-11-րդ, աշխատանք)** Առաջին արտադրամասն աշխատում էր $f(t) = 50t^3 - 45t$ օրենքով, որտեղ t -ն ժամանակն էր, $f(t)$ -ն արտադրանքի ծավալը, իսկ երկրորդ արտադրամասը՝ $f(t) = 18t^2 - 13t$ օրենքով: Քանի՞ ժամ հետո նրանք կթողարկեն հավասար քանակով արտադրանք:
- 333 (9-11-րդ, ավանդ)** Աշտուղ 5 տարով a դրամ ավանդ է դրել տարեկան $P\%$ տոկոսադրույքով և տոկոսագումարի կապիտալացումով: Առաջին 5 տարիների տարեկան ցուցանիշներով կազմել հաջորդականություն: Արդյո՞ք պրոգրեսիա է այդ հաջորդականությունը: Եթե այո, ապա գտեք հայտարարը (կամ տարբերությունը):

Գլուխ 2. Ֆինանսական կոմպետենցիաների զարգացման և ստուգման առաջադրանքներ


2.1. Քննարկումների, գործնական և հետազոտական աշխատանքների առաջադրանքներ

5-6-րդ դասարանների համար

334 (5-րդ, բյուջե) Գործնական աշխատանք.

Սաթենիկը իր ծննդյան օրվա կապակցությամբ ընտանիքի կողմից ստացել էր 10 000 դրամ նվեր: Նա նախատեսել էր գնել գրչատուփ՝ 800 դրամ արժողությամբ, գնալ տիկնիկային թատրոն, որի տոմսն արժե 1500 դրամ, 500 դրամն ավելացնել իր խնայողությունների դրամարկղում, գնել «Մաթեմատիկական խնդիրների ժողովածու»՝ 2500 դրամ արժողությամբ:

ա) Լրացնել աղյուսակը:



բ) Կազմել խնդիր հետևյալ հասկացություններով՝ *ընտանեկան բյուջե, եկամուտ, ծախս*:

335 (5-րդ, եկամուտ) Մտազորոհ.

Ինչպիսի՞ եկամուտների տեսակներ գիտեք:

Ի՞նչ կապ ունեն «ունեցվածք» և «եկամուտ» տերմինները:

Կա՞ն արդյոք եկամուտներ, որոնք կախված չեն ունեցվածքից:

Ինչո՞վ են տարբերվում աշխատանքային պայմանները 14 և 18 տարեկան անձանց համար:

Ինչպե՞ս կվարվեք այն իրի հետ, որը Դուք չեք օգտագործում:

Ո՞վ է գործատուն և ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ ունի նա:

Ինչի՞ց է կախված աշխատավարձը:

336 (5-րդ, գնումներ) Քաց պարասխանով խնդիր.

Արեգը, Դավիթը և Արթուրը գումար էին խնայել: Նոյեմբերին նրանք որոշեցին զինվորների համար ձեռնոցներ գնել և Արեգի հայրիկի օգնությամբ ուղարկել որևէ գորամաս: Արեգի և Դավիթի խնայած գումարը 10 000-ական դրամ էր, իսկ Արթուրինը՝ 20 000 դրամ: Պարզեցին, որ 1 զույգ ձեռնոցի գինը 1 000 դրամ է: Ամբողջ գումարին ձեռնոցներ գնեցին և ուղարկեցին: Մեկ ամիս անց նրանք ստացան 20 նամակ՝ զինվորներից: Նրանց ուրախությանը և հպարտությանը չափ չկար: Սակայն սկսեցին վիճել, թե ով քանի նամակ պիտի կարդա: Նրանց դասընկերուհիներից մեկը հուշեց. «Ով քանի զույգ ձեռնոց է ուղարկել, թող դրան համապատասխան էլ հաշվի իր նամակները»: Ի՞նչ լուծում կտաք այս խնդիրն:

337 (5-րդ, դրամ) խնդիր-քննարկում.

Հինգ ընկեր բակում ցատկապարան էին խաղում. Ընկերներից երկուսը պտտեցնում էին պարանը, իսկ մյուս երեքը ցատկում էին: Խաղի ընթացքում լսվեց գետնին ընկնող մետաղադրամների ձայն: Պարզվեց, ընկել են մեկ հատ 100 և երկու հատ 50 դրամանոցներ: Ընկերներից երեքը հայտնեցին, որ իրենք փող չեն ունեցել: Չորրորդ ընկերն ասաց, որ իր մոտ եղել է 500 դրամ, իսկ հինգերորդը հայտնեց, որ մոտի գումարի չափը չի հիշում, բայց հիշում է, որ միայն 50 դրամանոցներ էին: Քննարկման արդյունքում ընկերները կարողացան պարզել, որ ընկած բոլոր մետաղադրամները պատկանում են չորրորդ ընկերոջը:

Ըստ ձեզ՝ ինչպե՞ս կարողացան դա անել: Նշեք պարզելու առնվազն երկու հնարավոր եղանակ:

338 (5,6-րդ, գնումներ) Գործնական աշխատանք.

Տրված է խնդրի լուծումը: Ինքնուրույն կազմեք խնդիր՝ գնումների վերաբերյալ:

Լուծում.

$$1) 10\ 000 + 10\ 000 \cdot 5/100 = 10\ 000 + 500 = 10\ 500$$

$$2) 10\ 500 - 10\ 000 = 500$$

Պատասխան՝ 500 դրամով

339 (5,6-րդ, գնումներ) Հեթազորական աշխատանք.

Սովորողների առանձին խմբերի հանձնարարել «գնել» հայտնի ապրանքանիշների (Այֆոն, Սամսունգ) հեռախոսներ: Կատարել հետազոտություն խանութներում, ինչպես նաև ուսումնասիրել ինտերնետային շուկան: Հավաքագրել տվյալները.

- հեռախոսի գինը կանխիկ և ապառիկ գնելու դեպքում,
- հեռախոսի հետ տրամադրվող արքեստուարներ,

- հեռախոսը գնելու դեպքում առաջարկվող բոնուսներ,
- հեռախոսի երաշխիքային սպասարկման առկայությունը, պայմանները և ժամկետը,
- գնման պահին գործող զեղչեր և այլն (ուսուցիչը կարող է ավելացնել այլ կետեր):

Տվյալների հավաքագրումից հետո կատարել վերլուծություն և կազմել հաշվետվություն: Սովորողները պետք է հայտնեն իրենց կարծիքը հետևյալ հարցերի վերաբերյալ.

Գնել կանխի՞կ, թե՞ ապառիկ:

Գնել ապառիկ տարբերակով խանութի՞ց, թե՞ վերցնել վարկ բանկից (քննարկել տարբերությունը):

340 (5,6-րդ, գնումներ, խնայողություն) Խմբային գործնական աշխատանք.

«Ընթրիքի հրավեր»

ա) Տիկին Հասմիկի ընտանիքը ընթրիքին հյուրերի է սպասում: Ընտանիքի անդամները և հյուրերը միասին կլինեն 12 հոգի: Հյուրասիրության համար տիկին Հասմիկը նախատեսել է պատրաստել ճաշ, որը իրենց ընտանիքի համար՝ 4 հոգու, սովորաբար պատրաստում է հետևյալ բաղադրատոմսով. 350 գ տավարի միս, 150 գ կարտոֆիլ, 50 գ գազար, 60 գ սոխ, 1 տարա թթվասեր, աղ, բիբար, դափնու տերև և այլ համեմունքներ:

Հյուրասիրության համար պետք է գնել նշված բոլոր մթերքները, բացի աղից, բիբարից, դափնու տերևից և համեմունքներից: Տան մոտ գտնվող խանութում նշված մթերքներից որոշները վաճառվում են փաթեթավորված, որոշները՝ հատով, իսկ մսավաճառը միսը վաճառելիս կտրում է այն կտորը, որը գնորդը ցանկանում է:

	Մթերք	Մեկ փաթեթավորման քաշը (հատ), կգ	Միավորի գինը, դրամ
1.	տավարի միս	կգ	3000
2.	Կարտոֆիլ	կգ	300
3.	Կաղամբ	կգ	300
4.	Գազար	կգ	350
5.	Սոխ	կգ	250
6.	Թթվասեր	հատ	380

Որքա՞ն գումար կպահանջվի ծախսել 12 հոգու համար ճաշ պատրաստելու համար: Պատասխանը ներկայացնել մինչև ամբողջը կլորացված թվերով:

բ) Մանեն և Ռուբենը հրավիրել են բարեկամներին ընթրիքի: Ընդհանուր կհավաքվեն 7 հոգի: Հյուրասիրության համար Մանեն նախատեսել է պատրաստել տոլմա: Երկու չափաբաժին պատրաստելու համար (մեկ

չափաբաժինը նախատեսված և մեկ հոգու համար) անհրաժեշտ է 500գր աղացած միս, 400գր կաղամբ, 50գր գազար, 50գր սոխ, 100գր պոմիդոր, 1/3 բաժակ բրինձ, աղ, բիբար, համեմունքներ, յուղ կամ կարագ: Բաժակը տանում է 180գր բրինձ: Յուղը, աղը և համեմունքները Մանեն տանը ունի: Մնացածը պետք է գնել սուպերմարկետից: Խանութում նշված մթերքներից որոշները վաճառվում են փաթեթավորված, որոշները՝ հատով, իսկ աղացած միսը քաշով՝ ըստ գնորդի ցանկության:

	Մթերք	Մեկ փաթեթավորման քաշը (հատ), կգ	Միավորի գինը, դրամ
1.	Աղացած միս	կգ	2800
2.	Կաղամբ	կգ	300
4.	Գազար	կգ	350
5.	Սոխ	կգ	250
6.	Պոմիդոր	կգ	700
7.	Բրինձ	Տուփ – 1կգ	800

Նույն սուպերմարկետում հնարավոր է նաև գնել պատրաստի տոլմա 2000 դրամով՝ մեկ բաժինը (միևնույն քաշով): Պարզել, թե ո՞ր տարբերակն ավելի էժան կ'նստի՝ գնե՞լ, թե՞ պատրաստել տանը, և ո՞րը Դուք կընտրեիք:

341

(5,6-րդ, բյուջե, խնայողություն) Գործնական աշխատանք.

ա) Վերլուծելով գարուն-ամառ կոմունալ վճարները՝ հայրիկը պարզեց, որ այդ ժամանակահատվածի էլեկտրաէներգիայի սպառման միջին ծախսը կազմում է 8 600 դրամ, գազի սպառման միջին ծախսը՝ 7 450 դրամ, խմելու ջրի միջին սպառումը՝ 3 300 դրամ: Յուրաքանչյուր ամսվա վճարման համապատասխան կտրոնների վրա նշված են գումարները, սակայն հուլիս ամսվա կտրոնները տան վերանորոգման ընթացքում կորել են: Ըստ աղյուսակում նշված տվյալների՝ որոշեք հուլիսի ծախսերը:

(Ուսուցիչը կարող է տվյալները փոփոխել)

Ամիս	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս
Էլ. էներգիա	10000	9000	8500	8500	?	7500
Գազ	8000	7800	7800	7500	?	6600
Խմելու ջուր	4000	3800	3500	3000	?	2500

բ) «Հանգու» կազմակերպությունը փորում է մինչև 20 մետր խորությամբ ջրհորներ: Կախված ջրհորի խորությունից՝ 1 մետր փորելու ծախսը կազմում է 20 000 դրամ և այն 2-րդ մետրից սկսած ավելանում է 1 120 դրամով՝ յուրաքանչյուր հաջորդ մետրի համար:

«Ալեն» կազմակերպության սեփականատերը սահմանել է ջրհոր փորելու հետևյալ գները՝ կախված խորությունից:

Ջրհորի խորությունը, մետր	Ջրհորը փորելու գինը, դրամ
1-7	24 000 – յուրաքանչյուր մետրի համար
8-20	168 000՝ գումարած 7 մետրը գերազանցող յուրաքանչյուր մետրի համար 32 000

Ընդ որում՝ ջրհորի խորությունը կլորացվում է մինչև ամբողջ թվով մետրեր: Կա՛ր արդյոք ջրհոր փորելու առաջարկված գին, որը «Զանգու» կազմակերպության ծախսերից ավելի փոքր գումար է կազմում:

342 (5,6-րդ, գնումներ) Խաղ – աճուրդ.

Ուսուցիչը բացատրում է աճուրդի անցկացման կանոնները: Նշանակվում է աճուրդի վարողը, փայտե մուրճը տրվում է նրան: Սովորողներին բաժանվում է «փող»: Բաժանվող դրամական միավորը չպետք է բոլորի մոտ նույնը լինի, յուրաքանչյուր մասնակցի մոտ կարող է լինել 5-ից 15 դրամական միավոր: Աճուրդի է դրվում ցանկացած առարկա. շոկոլադե սալիկ, թխվածքաբլիթ, ամսագիր և այլն:

1-ին փուլ. Մեկնարկային գինը հայտարարվում է 5 դրամական միավոր: Ապրանքի վաճառքի առավելագույն գինը կարող է 15 դրամական միավորից ավելի լինել, քանի որ խելամիտ մասնակիցները կարող են մեկը մյուսից պարտք վերցնել կամ միացնել իրենց ունեցած գումարները:

2-րդ փուլ. Սովորողներին բաժանվում է լրացուցիչ «փող»՝ դարձյալ պատահական քանակի: Աճուրդի է դրվում հաջորդ ապրանքը: Բնականաբար, վաճառքի վերջնական գինն ավելի կբարձրանա:

3-րդ փուլ. Փողի քանակը չի փոխվում, և աճուրդի են դրվում 3 միատեսակ ապրանքներ:

Քննարկման հարց. «Ինչի՞ց է կախված ապրանքի գինը»:

343 (5,6-րդ, աշխատանք, եկամուտ) Թեստ.

Միացնել աշխատանքի տեսակները համապատասխան աշխատավարձի տեսակի հետ, պատասխանները գրել աղյուսակում:

Պատրաստած դետալների քանակի համար	ա) պաշտոնյան ստանում է աշխատավարձ
Աշխատանքում որոշակի հաջողությունների հասնելու համար	բ) աշխատողը ստանում է գործարքային աշխատավարձ
Վաճառած ապրանքների քանակի համար	գ) հեղինակը ստանում է հոնորար

Գիրք գրելու համար	դ) աշխատողը ստանում է պարգևավճար
Ղեկավարելու համար	ե) վաճառողը ստանում է տոկոսային աշխատավարձ

1	2	3	4	5

344 (5,6-րդ, աշխատանք, եկամուտ) Հեղազոտական աշխատանք.


Գտնել տեղեկատվություն այն մասնագիտությունների մասին, որոնց աշխատավարձերը գտնվում են տրված դիագրամի միջակայքերից որևէ մեկում:

Գտնել տեղեկատվություն Հայաստանում գործող միջին աշխատավարձի մասին:

Արդյունքները լրացնել դիագրամի ներքևի վանդակներում:

Նշել տեղեկատվության աղբյուրները (թերթ, ամսագիր, ինտերնետ, ծանոթների և բարեկամների հետ հարցազրույց):

Բացատրել աշխատավարձերի տարբերության պատճառները:



1	2	3	4	5
---	---	---	---	---

Տեղեկատվության աղբյուրներ -----

345 (5,6-րդ, բյուջե) ա) Քննարկման հարցեր.

Ինչն՞վ է տարբերվում ապրանքը ծառայությունից:

Ինչի՞ց է կախված ապրանքի գինը:

Ապրանք գնելիս ի՞նչն է ազդում մարդու որոշման վրա:

Ինչի՞ համար է նախատեսված գովազդը:

Ի՞նչ խմբերի կարելի է բաժանել ընտանեկան ծախսերը:

բ) Խնդիր.

Հայրիկի եկամտի ինչ-որ մաս ծախսվում է ապրանքներ գնելու վրա: Մնացած գումարի քառորդ մասը ծախսվում է կոմունալ ծառայությունների վարձերը վճարելու վրա: Մնացած մասը խնայողության գումարն է, որը կազմում է եկամտի 1/4 մասը: Ճշմարիտ է, որ ապրանքներ գնելու վրա ծախսվում է եկամտի 2/3 մասը:

գ) Գործնական աշխատանք.

Քաղաքացին գնում է կաթ, թխվածքաբլիթ և գրքեր: Ամեն ամիս նա խմում է 15 լիտր կաթ, ուտում է 15 կգ թխվածքաբլիթ և գնում ու կարդում է 2 նոր գիրք:

	1 տարի		2 տարի	
	Գինը դրամով	Արժեքը 1 տարվա	Գինը դրամով	Արժեքը 1 տարվա
Թխվածքաբլիթներ	1 200		1 300	
Գրքեր	2 600		2 400	
Կաթ	300		320	
Ընդամենը	-		-	

Լրացրեք աղյուսակը:

Ինչպե՞ս փոխվեց քաղաքացու սպառողական զամբյուղի գինը:

346 (5,6-րդ, բյուջե) Գործնական աշխատանք.

Պատկերացրեք, որ ձեր ընտանիքի ամսական ծախսերը հետևյալն են.

Կոմունալ ծառայությունների վճարներ – 40 000 դրամ

Սննդամթերք – 110 000 դրամ

Կենցաղային մաքրող նյութեր և անձնական հիգիենայի պարագաներ – 15 000 դրամ

Հագուստ և կոշիկ – 80 000 դրամ

Գնված կենցաղային տեխնիկայի ապահովի վճարում – 50 000 դրամ

Կրթություն (լրացուցիչ պարապմունքներ) – 30 000 դրամ

Տրանսպորտային ծախսեր – 30 000 դրամ

Դեղեր – 18 500 դրամ

Հաշվել ամսական ծախսերը:

Որքա՞ն պետք է կազմի ձեր ընտանիքի ամսական եկամուտը, որպեսզի, այս ծախսերից բացի կարողանաք նաև խնայել 10% եկամտի գումարից:

347 (5,6-րդ, գնումներ, խնայողություն) Խմբային գործնական աշխատանք.

Տուն կառուցելու համար Ստեփան Գալոյանը պետք է գնի և շինհրապարակ հասցնի 45 մ³ ավազ: Խանութն առաջարկում է ավազի առաքման երկու տարբերակ. մեծ և փոքր բեռնաթափերով: Առաքման գինը որոշվում է բեռնաթափի մեկ փոխադրմամբ՝ անկախ դրանում գտնվող ավազի քանակից:

Բեռնաթափի տեսակը	Առավելագույն տարողունակություն մ ³	Մեկ փոխադրման գինը դրամով
Մեծ	12	23 500
Փոքր	6	13 000

Ի տարբերություն փոքրի՝ մեծ բեռնաթափը չի կարող մտնել շինհրապարակ: Այդ դեպքում անհրաժեշտ կլինի վարձել նաև բանվորների՝ ավազը տեղ հասցնելու համար, նրանք մեկ բեռնարկը (1 մ³ տարողությամբ) կտեղափոխեն 1 000 դրամով:

ա) Գտեք ամենաէժան տարբերակը, որով Ստեփան Գալոյանը կարող է գնել և շինհրապարակ հասցնել անհրաժեշտ քանակությամբ ավազը:

բ) Դիցուք՝ 1 օրվա մեջ բեռնաթափը կարող է կատարել 5 փոխադրումից ոչ ավելի, իսկ բանվորները կարող են տեղափոխել 10 մ³-ից ոչ ավելի: Ո՞րն է ամենաէժան տարբերակը ավազը շինհրապարակ հասցնելու համար, որը պետք է արվի 3 օրվա ընթացքում:

348 (5,6-րդ, գնումներ, խնայողություն) Գործնական աշխատանք.

Գագիկը ուզում է գնալ էքստրեմալ ճանապարհորդության՝ 7 օրով դեպի սարեր և պլանավորում է վարձակալել ամենագնաց: Նա ունի ընտրության 2 տարբերակ.

Բնութագիր	Ամենագնաց A	Ամենագնաց B
Վարձակալության գինը	20 000 դրամ օրը	22 000 դրամ օրը
Բենզինի ծախսը 100 կմ-ի համար	10 լիտր	9 լիտր
Օգտագործվող բենզինը և գինը	Ռեգուլյար՝ 400 դրամ 1 լիտրը	Ռեգուլյար՝ 400 դրամ 1 լիտրը

Ճանապարհորդության ժամանակ Գագիկը պլանավորում է գնալ 3 500 կմ և ուզում է ընտրել այն տարբերակը, որը բոլոր հաշվարկների արդյունքում ամենաէժանը կստացվի:

ա) Օգնեք նրան գտնել այդ տարբերակը:

բ) Ինչպիսի՞ն կլինի ընտրությունը, եթե ճանապարհորդությունը տևի 4 օր:

349 (5,6-րդ, գնումներ) Խմբային հեղազոտական աշխատանք.

Յուրաքանչյուր խմբին հանձնարարել մշակել որևէ ապրանքի (օրինակ՝ հեծանիվի, համակարգչի, հեռախոսի) գնման փաթեթ՝ 4 պարտադիր կետերով.

ա) Ձևակերպել նպատակը:

բ) Որոշել կարևոր բնութագրիչները, որպեսզի հնարավոր լինի կատարել համեմատություն: Սահմանել նվազագույն պահանջները, որոնք պարտադիր պետք է ունենա ընտրված ապրանքը, հետազոտել (խանութներից և ինտերնետային կայքերից) և հավաքագրել մի քանի մոդելներ, որոնք համապատասխանում են նվազագույն պահանջներին:

գ) Դասակարգել ընտրված ապրանքի բնութագրիչներն ըստ կարևորության. Օրինակ՝ մեկի համար կարող է կարևոր լինել ֆունկցիոնալությունը, մյուսի համար՝ արտաքին տեսքը, երրորդի համար՝ ամրությունը, ապահովությունը, հզորությունը և այլն:

դ) Գները համեմատել ամենավերջում և կատարել ընտրություն:

ե) Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր ընտրությունը՝ հիմնավորելով: Կազմակերպել քննարկում (ուշադրություն դարձնել այն փաստին, որ ապրանքների համար կան բնութագրիչներ, որոնք ավելի կարևոր են, քան ցածր գին ունենալը):

350 (5,6-րդ, եկամուտ) Շարադրություն.

Գրել շարադրություն հետևյալ վերնագրով. «Ինչպե՞ս հավաքել 500 000 դրամ 2 տարում՝ դարձնելով ավարտելուց հետո»: Հաջորդ դասին կազմակերպել փոքրիկ քննարկում՝ մտքերի փոխանակություն, յուրաքանչյուրը պետք է ներկայացնի գումար ունենալու իր գաղափարը:

351 (5,6-րդ, բյուջե) Գործնական աշխատանք.

Զբոսաշրջիկը մի քաղաքից մյուսը հասավ 3 օրում: Առաջին օրը նա ծախսեց նախատեսած բյուջեի 1/5-ը և էլի 6 000 դրամ, 2-րդ օրը՝ բյուջեի 1/4-ը և էլի 2 000 դրամ, իսկ 3-րդ օրը՝ բյուջեի 23/80-ը և էլի 2 500 դրամ: Որոշել 3 օրերի ընթացքում նրա ծախսած գումարը: Խնդիրը լուծելուց հետո նույն խնդիրը վերաշարադրեք այնպես, որ յուրաքանչյուր օրվա ծախսն արտահայտվի ոչ թե մասով և դրամով, այլ միայն դրամով:

352 (6-րդ, բյուջե) Խմբային աշխատանք.

Պատկերացրեք, որ ձեր ընտանիքը (երկու մեծահասակ և երկու երեխա) պլանավորում է հաջորդ ամսվա բյուջեն: Ձեր ընտանիքի եկամուտը կազմում է 350 000 դրամ: Ընտանեկան խորհրդի ժամանակ կազմվեցին բոլոր ցանկալի կետերը և պարզվեց, որ հենց հաջորդ ամիս լրացուցիչ ծախսերը նախատեսվածից շատ են (կազմում են 400 000 դրամ): Նշվածներից ո՞րը կթողնեք որպես նախընտրելի և որի՞ց կհրաժարվեք հաջորդ ամիս:

Ծախսեր.

Կոմունալ ծառայություններ – 30 000 դրամ

Սննդամթերք – 100 000 դրամ

Վարկի վճարում – 40 000 դրամ

Սեզոնային հագուստի գնում – 30 000 դրամ

Դպրոցական պարագաների գնումներ – 10 000 դրամ

Երեխաների՝ սպորտային խմբակ հաճախելու վարձավճար – 20 000 դրամ

Նոր թեյնիկի գնում – 10 000 դրամ

Երեխաներին առօրյա ծախսերի գումար – 10 000 դրամ

Հայրիկի ծննդյան տոնի նշում – 40 000 դրամ

Դասարանով էքսկուրսիա այլ քաղաք – 10 000 դրամ

Անձնական հիգիենայի և կենցաղային մաքրման նյութերի գնում – 10 000 դրամ

Ավտոմեքենայի վերանորոգման գումար – 20 000 դրամ

Նոր պահարանի գնում – 30 000 դրամ

Մորաքրոջ աղջկա հարսանիքին նվեր – 40 000 դրամ

Կատարել ընտրություն և հիմնավորել:

353 (6-րդ, բյուջե) Խնդիր-քննարկում.

Տիգրանի հայրիկը նրան տալով ապրիլ ամսվա կոմունալների արդյունքները՝ հանձնարարեց հաշվել կոմունալ վճարները: Տիգրանի ընտանիքի ապրիլ ամսվա կոմունալ ծառայությունների արդյունքները և սակագները ներկայացված են աղյուսակում:

Էլեկտրաէներգիա	Գին	Գազ	Գին	Ջուր	Գին
Ցերեկ՝ 96 կՎտ/ժ	1 կՎտ/ժ = 45 դրամ	95 մ ³	1 մ ³ = 146 դրամ	35 մ ³	1 մ ³ = 180 դրամ
Գիշեր՝ 55 կՎտ/ժ	1 կՎտ/ժ = 35 դրամ				

- ա) Որքա՞ն են կազմում նրանց կոմունալ ծախսերը:
- բ) Ընտանեկան բյուջեի մոտավորապես ո՞ր տոկոսն են կոմունալ վճարները, եթե Տիգրանի ընտանիքի ընտանեկան բյուջեն այս ամիս կազմել է 260 000 դրամ:
- գ) Տիգրանն այս հաշվարկներից հետո սկսեց մտածել՝ ինչպե՞ս անել, որ կոմունալ ծախսերը հաջորդ ամիս ավելի քիչ լինեն: Ի՞նչ խորհուրդ կտայիք նրան:

354 (6-րդ, գնումներ) Խնդիր-քննարկում.

Մարին գնումները և վճարումները սովորաբար կատարում է քարտով, ուստի կանխիկ գումար քիչ է պահում իր մոտ: Աշխատանքից տուն գնալիս նկատեց, որ դրսում մատչելի գնով վաճառում են ծիրան և ցանկացած գնել: Սակայն կանխիկ գումարը քիչ էր, և նա ստիպված գումար կանխիկացրեց այլ բանկի բանկոմատից, որի արդյունքում կանխիկացրած գումարի 1%-ի չափով միջնորդավճար գանձվեց:

- ա) Որքա՞ն գումար գանձվեց, եթե Մարին կանխիկացրեց 5 000 դրամ:
- բ) Քննարկել գումարը քարտային հաշվի վրա պահելու և կանխիկ պահելու առավելություններն ու թերությունները:

355 (6-րդ, բյուջե) Գործնական աշխատանք.

Համապատասխանեցնել աջ և ձախ սյունակները.

Եկամուտ	20 000 դրամ
Կոմունալ վճարներ	40 000 դրամ
Սնունդ	55 000 դրամ
Հագուստ	15 000 դրամ
Պարտք	200 000 դրամ
Խնայողություն	25 000 դրամ

Ըստ ձեր կատարած համապատասխանեցման՝

- ա) Ստուգել արդյո՞ք պարտքը չի գերազանցում եկամտի 30%-ը:
- բ) Եկամտի քանի՞ տոկոսն է հատկացվել խնայողությանը:
- գ) Կազմել շրջանաձև դիագրամ:

356 (6-րդ, պարտք) Խնդիր-քննարկում.

Նորաստեղծ ընտանիքը որոշել էր տան վերանորոգումն ավարտելուց հետո փոխել խոհանոցի իրերը: Նրանք ցանկանում էին ապառիկով ձեռք բերել սառնարան, գազօջախ և սեղան: Խանութում նրանց նախընտրած սառնարանն արժեր 220 000 դրամ, գազօջախը՝ 125 000 դրամ, իսկ սեղանը՝ 105 000 դրամ: Խանութն ապառիկը ձևակերպում էր առանց կանխավճարի, 8 ամիս ժամկետով՝ ամսական հաստատուն վճարով:

Հաշվարկներ կատարելուց հետո զույգը որոշեց միանգամից չգնել այդ իրերը:

Ինքներդ կատարեք հաշվարկներ և փորձեք բացատրել, թե ինչո՞ւ զույգը հրաժարվեց իրենց ցանկությունից, եթե նրանց ամսական եկամուտը 180 000 դրամ է:

357 (6-րդ, գնումներ) Խմբային աշխատանք.

Նկարագրված է 4 խմբի համար:

Խմբերից երկուսը, ենթադրվում է, որ պետք է լինեն խոհարարներ, որոնք ուսումնասիրելու են երկու խանութ, կատարելու են արդյունավետ գնումներ տորթի պատվերի կատարման համար և որոշելու են պատվերի գինը, ինչպես նաև բացատրելու են, թե ինչ սկզբունքով են որոշել գինը: Մյուս երկուսը պետք է լինեն շինվերանորոգողներ, որոնք կրկին ուսումնասիրելու են երկու խանութ, կատարելու են արդյունավետ գնումներ և որոշելու են իրենց աշխատանքի գինը՝ նշելով, թե ինչ սկզբունքով են որոշել:

Քայլ 1: Դասարանը բաժանվում է 4 խմբի:

Քայլ 2: Խմբերը վիճակահանությամբ ընտրում են, թե ինչ դեր պետք է ստանձնեն:

Քայլ 3: Այն խմբերը որոնք ընտրել են խոհարարությունը, կազմում են շինարարական խանութի գովազդ, որը պետք ներառի անհրաժեշտ ապրանքների գները, զեղչեր և այլն: Համանման ձևով, շինվերանորոգում ընտրած խմբերը կազմում են խանութի գովազդ, որը կներառի տորթի համար անհրաժեշտ պարագաների գները, զեղչերը և այլն:

Քայլ 4: Ուսուցիչը համապատասխան խմբերին տալիս է երկու խանութի գովազդ, որոնցից մեկը ինքն է կազմել, և խմբերը կատարում են հետազոտություն, որոշում են ինչպես կատարեն արդյունավետ գնումներ, ինչպես որոշեն իրենց աշխատանքի գինը և հիմնավորում:

Քայլ 5: Արդյունքների քննարկում:

**Ցուցում:* Արդյունավետ աշխատանքի համար ցանկալի է, որ ուսուցիչը գրատախտակին ներկայացնի տորթի համար անհրաժեշտ պարագաների և սենյակի չափումների, այն վերանորոգելու համար անհրաժեշտ պարագաների ցանկը և գների միջակայքը:

358 (6-րդ, բյուջե) Հեփազոդական աշխատանք.

Քայլ 1. Դասարանում քննարկել և ընտրել 10 ապրանք:

Քայլ 2. Դասարանի յուրաքանչյուր աշակերտ պատրաստում է հարցաթերթիկ, ապա կատարում է սոցհարցում 5-ից 10 հոգու հետ, որոնք պետք է դասակարգեն այդ ապրանքները ըստ կարիքի և ցանկության:

Քայլ 3. Տվյալների մշակում:

Քայլ 4. Դասարանում բոլորի մշակած արդյունքները ընդհանրացնել և ներկայացնել սյունակաձև դիագրամի տեսքով:

Քայլ 5. Քննարկում, եզրակացությունների ձևակերպում:

359 (6-րդ, գնումներ) Դերային խաղ.

Քայլ 1. Դասարանը բաժանել 5 խմբի՝ 3 խումբը հանդես կգա վաճառողի դերում, իսկ երկուսը՝ գնորդի:

Քայլ 2. Խմբերից 3-ին տալ միևնույն ապրանքների անունները՝ A4 չափսի թղթերի վրա պատկերված նկարներով, գնապիտակներ և հանձնարարել որոշել գներ, սահմանել գեղչեր և այլն:

Քայլ 3. Ծանոթանալ խմբերի աշխատանքին, կատարել ուղղորդումներ, ապա մյուս երկու խմբերին տալ միևնույն ապրանքների ցուցակը, որոնք նրանք պետք է գնեն:

Քայլ 4. Խմբերը ծանոթանում են երեք «խանութներում» գործող գներին, գեղչերին և առաջարկներին, ապա խմբով քննարկում, թե ինչպես կատարեն գնումները, որպեսզի ծախսը լինի նվազագույնը:

Քայլ 5. Արդյունքների վերլուծություն:

360 (6-րդ, եկամուտ) Խնդիր-քննարկում.

Ամռանը գործարանի տնօրենը նպատակահարմար էր գտել գործարանի տարածքը պարսպապատել: Այդ նպատակով նա վարձակալել էր որմնադիրների, որոնց վճարելու էր յուրաքանչյուր օր՝ ըստ կատարած աշխատանքի՝ 1 մ² –ը 1 500 դրամ փաստացի վճարով: Որմնադիրներից մեկը առողջական խնդրի պատճառով 3 ժամում 5 մ² պատ շարելուց հետո արտադրողականությունը նվազեցրեց 25%-ով և աշխատեց ևս 2 ժամ: Որքա՞ն աշխատավարձ ստացավ որմնադիրն այդ օրը:

Քննարկել հետևյալ հարցերը. Արդյո՞ք այս եկամուտը մշտական է: Ի՞նչ դիսկեր կան: Տարվա ո՞ր սեզոններին որմնադիրի եկամուտն առավել շատ կլինի:

361 (6-րդ, բյուջե) Հեղազոտական նախագծային աշխատանք.

«Երթևեկության կանոններ»

Նախ սովորողներին հանձնարարել տանը ուսումնասիրել երթևեկության կանոնները, դասարանում կազմակերպել փոքր քննարկում, ապա տալ հանձնարարական. Օգտվելով ինտերնետային համապատասխան կայքերից՝ հավաքագրել երթևեկության կանոնների խախտումների դիմաց նախատեսվող տույժերը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափը, պարզել, թե երթևեկության կանոնների ո՞ր խախտման տույժի չափը նվազագույն աշխատավարձի քանի՞ տոկոսն է կազմում: Կատարել վերլուծություններ: Հաշվետվությունը կարելի է

ներկայացնել շնորհանդեսի ձևով, որից հետո կազմակերպել քննարկում: Քննարկման հարցերը ուսուցիչը նախօրոք պատրաստում է (հարցեր կարող են առաջարկել նաև սովորողները):

362 (6-րդ, գնումներ) *Խնդրի կազմություն.*

Օգտագործելով հետևյալ բառերը՝ կազմել խնդիր. *խանութ, բաճկոն, փոկոս, գին, գեղջ, քանակ, արժեք:*

363 (6-րդ, խնայողություն) *Խնդիր-քննարկում.*

Պատկերացրեք, որ մտել եք խանութ՝ սպորտային համազգեստ գնելու, որի մասին վաղուց երազում էիք: Այնտեղ տեսնում եք գովազդային վահանակ. «Ձեռք մինչև 60%»: Համազգեստի գնապիտակի վրա փակցված է հին գինը՝ 23 999 դրամ, և նշված է նորը՝ 14 399 դրամ:


Կգնե՞ք արդյոք այդ համազգեստը: Քանի՞ տոկոս է կազմում այդ ապրանքի գեղջը (կլորացրեք մինչև ամբողջ): Ի՞նչ գործոններ կազդեն որոշում կայացնելու վրա:

364 (6-րդ, բյուջե, խնայողություն) *Խնդիր-քննարկում.*

Պատկերացրեք, որ ձեր ընտանիքը կատարում է մեկ շաբաթվա համար գնումներ այնպիսի սուպերմարկետից, որտեղ ստանում եք առևտրի գումարի 5%-ին համարժեք բոնուսային միավորներ, որով կարելի է վճարել նույն խանութում կրկին գնումներ կատարելիս: Այդ սուպերմարկետից ոչ շատ հեռու կա մի խանութ, որտեղ չի գործում քարտային (հետվերադարձի) սկզբունքը, սակայն միևնույն ապրանքներն այնտեղից գնելիս կվճարեք 1 000 դրամ պակաս: Ո՞ր խանութից կկատարեք գնումները, եթե ձեր ընտանիքն այդ ամենի վրա ծախսում է 27 600 դրամ: Քննարկեք այն հարցը, թե ի՞նչ հանգամանքի դեպքում է նպատակահարմար տվյալ գնումը կատարել խանութից, այլ ոչ թե սուպերմարկետից:

365 (6-րդ, բյուջե) *Գործնական աշխատանք.*

Ըստ տրված դիագրամի կազմել խնդիր ընտանեկան բյուջեի վերաբերյալ:



7-9-րդ դասարանների համար

366 (7-րդ, փոխարժեք) Գործնական աշխատանք.

Ըստ *rate.am* կայքի տվյալների (13.04.2019 թ. ժամը 10:40-ի դրությամբ)՝ արտարժույթի՝ դոլարի (USD) և ռուբլու (RUR) փոխարժեքները ըստ դրամի (AMD) տարբեր բանկերում ունեցել են հետևյալ պատկերը.

Բանկ	1 USD		1 RUR	
	<i>Առք</i>	<i>Վաճ.</i>	<i>Առք</i>	<i>Վաճ.</i>
Բանկ 1	483	487	7,40	7,65
Բանկ 2	483	486	7,42	7,65
Բանկ 3	483	486,50	7.46	7.71
Բանկ 4	482,50	486	7.42	7.67
Բանկ 5	484	487	7.48	7.70

ա) Յուրաքանչյուր արժույթի համար որոշել առքի և վաճառքի թվաբանական միջինը:

բ) Յուրաքանչյուր արժույթի համար հաշվել առքի և վաճառքի ամենամեծ արժեքների և ամենափոքր արժեքների տարբերությունը, ապա արդյունքները համեմատել:

գ) Ո՞ր բանկից կօգտվեք, եթե ցանկանում եք 120 000 դրամը փոխանակել դոլարով, և ո՞ր բանկից, եթե ցանկանում եք փոխանակել ռուբլով: Յուրաքանչյուր դեպքում որքա՞ն գումար կստացվի:

դ) Ո՞ր բանկից կօգտվեք, եթե ցանկանում եք \$900 փոխանակել դրամով, և ո՞ր բանկից, եթե ցանկանում եք 5400 ռուբլին փոխանակել դրամով:

ե) \$900 ինչպե՞ս կփոխանակեք ռուբլու, որպեսզի փոխանակումը լինի շահավետ:

367 (7-րդ, փոխարժեք) Խմբային աշխատանք.

Քայլ 1. Նախապես պատրաստել երեք պաստառ՝ որպես փոխանակման կետեր:

Քայլ 2. Դասարանը բաժանել խմբերի:

Քայլ 3. Յուրաքանչյուր խմբի տալ որոշակի չափով գումար՝ որևէ արժույթով, և հանձնարարել փոխանակել մեկ այլ արժույթով, բայց, որ միանգամից հնարավոր չլինի դա անել: Օրինակ՝ դոլար –ռուբլի, եվրո–ռուբլի, լարի–ռուբլի:

Քայլ 4. Խմբերը ուսումնասիրում են երեք փոխանակման կետերի տվյալները և ներկայացնում են, թե ինչպես կատարեն փոխանակում, որ լինի արդյունավետ:

368 (7-րդ, փոխարժեք) Գործնական աշխատանք.

Մեկ շաբաթ առաջ Արամը մեկնել էր Վրաստան՝ 500 000 դրամը փոխանակելով լարիով: Այժմ վերադարձել է՝ իր մոտ ունենալով 1 000 լարի: Օգտվելով տեղեկատվության տարբեր աղբյուրներից՝

ա) Պարզել վրացական լարիի փոխարժեքը մեկ շաբաթ առաջ և հաշվել՝ որքա՞ն լարիով Արամը մեկնեց Վրաստան:

բ) Պարզել լարիի փոխարժեքն այժմ և հաշվել՝ որքա՞ն << դրամով Արամը վերադարձավ:

գ) Որքա՞ն գումար շահեց/կորցրեց Արամը:

369 (7-րդ, փոխարժեք) Գործնական աշխատանք.

Հայրիկը մեկնել էր գործուղման ՌԴ: Երբ վերադարձավ, երկու որդիներին ասաց, որ իր մոտ ռուբլի է մնացել, և նա, ով առաջինը կլուծի հայրիկի առաջադրանքը, կստանա գումարը: Առաջադրանք. Իմ ունեցած գումարը (ռուբլով) եռանիշ թիվ է և վերջանում է 6-ով: Եթե այդ թվանշանը տեղափոխենք թվի սկիզբը, ապա կստացվի սկզբնական թվից 423-ով մեծ թիվ: Քանի՞ ռուբլի ունեմ ես: Լուծեք հայրիկի առաջադրանքը և վերածեք ստացված գումարը դրամի՝ օգտվելով տեղեկատվության տարբեր աղբյուրներից:

370 (7-րդ, վճարային քարտ) Քարտային աշխատանք.

Վճարային քարտի CVV եռանիշ կոդը թույլ է տալիս նույնականացնել քարտի տվյալները՝ օնլայն վճարումներ կատարելիս:

ա) Տրված է $A = \{0; 1; 2; 3; 4; 5; 6\}$ բազմությունը: Գտնել բոլոր այն CVV կոդերի քանակը, որոնց առաջին և վերջին թվանշանները A-ից են:

բ) Գտնել 300-ից մեծ և $B = \{1; 2; 4; 5; 7\}$ բազմության տարրերով գրվող CVV կոդերի քանակը (թվանշանները կարող են կրկնվել):

գ) Չկրկնվող թվանշաններով քանի՞ կենտ CVV կոդ կարելի է գրել:

դ) Չկրկնվող թվանշաններով և 10-ի բազմապատիկ քանի՞ CVV կոդ կարելի է կազմել:

371 (7,8-րդ, խնայողություն) Հեղազոտական նախագծային աշխատանք.

Արմենը ծննդյան օրը նվեր է ստացել 100 000 դրամ: Նա որոշել է օգտագործել այն 3 տարի հետո՝ բուհ ընդունվելիս: Լրացուցիչ եկամուտ ստանալու նպատակով Արմենը որոշեց այն ներդնել բանկում՝ որպես ավանդ: Ներկայացվող առաջարկներից ո՞րն է ավելի նպատակահարմար 3 տարով ավանդ ներդնելու համար. «Ա» բանկն առաջարկում է 10% տարեկան տոկոսադրույք, որը ավելացվելու է գումարին ժամկետի ավարտին, «Բ» բանկն առաջարկում է 9% տարեկան տոկոսադրույք, որն ավելացվելու է գումարին (կապիտալացում) ամեն տարվա վերջում:

Հանձնարարություն. Հետագոտել Հայաստանի բանկերի կողմից առաջարկվող տեղեկատվական թերթիկներն ավանդների մասով, վերլուծել և կատարել եզրակացություններ: Արմենի փոխարեն Դուք հայաստանյան ո՞ր բանկը կընտրեիք: Ինչպիսի՞ն կլինի տարբերությունը, եթե գումարի չափը լինի 300 000 դրամ: Կարող եք օգտվել abcfinance.am և fininfo.am կայքերից:

372 (8-րդ, բյուջե) խնդիր-քննարկում.

Կարո՞ն ապրում է գյուղում: Մայիս ամսին նա խնդրեց հայրիկին հեծանիվ գնել, որպեսզի սեպտեմբերին հեծանվով գնա դպրոց, որը տնից բավականին հեռու էր: Հայրն առաջարկեց օգնել իրեն ազնվամորի և մոշ հավաքել՝ քաղաքում վաճառելու համար և հավաքած հատապտուղների վաճառքից ստացված գումարով էլ հեծանիվ գնել: Հատապտուղների յուրաքանչյուր տեսակից քանի՞ կգ պետք է հավաքի Կարոն, որպեսզի հայրիկը կարողանա գնել նրա նախընտրած 24 000 դրամ արժողությամբ հեծանիվը, եթե 1 կգ ազնվամորին վաճառում են 1 000 դրամով, իսկ մոշը՝ 600 դրամով: Դիտարկել առնվազն երկու դեպք:

Ըստ Ձեզ՝ Կարոյի համար հեծանիվը կարի՞ք է, թե՞ ցանկություն: Ձեր կարծիքով, ինչո՞ւ հայրիկն առաջարկեց Կարոյին հեծանիվ գնելու համար լրացուցիչ քանակի ազնվամորի և մոշ հավաքել:

Ո՞ր հատապտուղն է ավելի հեշտ հավաքել:

373 (8-րդ, վարկ) Գործնական աշխատանք.

Լրացնել համապատասխան տողերը և լուծել խնդիրը:

(22%, 24,4%, հավասար մարում, անվանական, փաստացի, 1 տարի)

Սարգիսը ցանկանում էր «Ա» բանկից _____ ժամկետով վարկ վերցնել: Նա տեղեկացել էր, որ վարկի _____ տոկոսադրույքը _____ է: Տվյալները մուտքագրելով abcfinance.am կայքի վարկային հաշվիչից և ընտրելով վարկի _____ տեսակը՝ պարզեց, որ վարկի _____ տոկոսադրույքը _____ է: Յուրաքանչյուր ամիս որքա՞ն գումար պետք է վճարի Սարգիսը, եթե վերցրել է 350 000 դրամ վարկ:

374 (8-րդ, խնայողություն) Գործնական աշխատանք.

Դասավորել ըստ հերթականության՝ բոլոր հնարավոր եղանակներով: Խնայողության ո՞ր տեսակն է առավել եկամտաբեր (ընդունել, որ պարզ և բարդ տոկոսադրույքները նույնն են):

Եկամուտ x դրամ	2 տարի խնայատույի	բարդ
պարզ	խնայում ենք 10%-ը 6 ամիս	2 տարի բանկ

375 (Ց-րդ, վարկ, ավանդ) ա) Քննարկման հարցեր.

Ինչո՞ւ են զբաղվում բանկերը:

Ինչո՞ւ են մարդիկ օգտվում բանկերի ծառայություններից:

Ինչպե՞ս են բանկերը ստանում եկամուտ:

Ինչո՞ւ են մարդիկ գումարը խնայում բանկում:

Ի՞նչ պայմաններով է բանկը վարկ տրամադրում:

Ի՞նչ կլինի ավանդի հետ, եթե բանկը սնանկ ճանաչվի:

բ) Գործնական աշխատանք.

Ընտրեք տրված պայմանին համապատասխան տարբերակը.

Տարբերակ 1

Եթե բանկ ներդնել ավանդ,	ապա 1 տարի հետո հաշվին կլինի (առանց եկամտային հարկի)
1. 680 000 – 11%-ով	ա) 745 800
2. 720 000 – 8%-ով	բ) 728 000
3. 650 000 – 12%-ով	գ) 754 800
4. 660 000 – 13%-ով	դ) 777 600

1	2	3	4

Տարբերակ 2

Եթե բանկից վարկ եք վերցրել 1 տարով,	ապա 1 տարի հետո %-ը կկազմի.
1. 350 000 – 12%-ով	ա) 44 000
2. 400 000 – 11%-ով	բ) 42 000
3. 380 000 – 13%-ով	գ) 50 400
4. 360 000 – 14%-ով	դ) 49 400

1	2	3	4

376 (Ց-րդ, պարտք) Խնդիր-քննարկում.

Արտակը ուզում է բանկից վարկ վերցնել 3 200 000 դրամ՝ ավտոմեքենա գնելու համար: Նա վարկը մարելու է ամսական հավասարաչափ

գումարներ վճարելով: Եթե Արտակը վարկը վերցնի 2 տարով, ապա ընդհանուր վճարման գումարը կկազմի 3 855 984 դրամ, եթե 3 տարով՝ 4 194 000 դրամ, իսկ եթե 4 տարով, ապա կվճարի 4 560 000 դրամ:

Ի՞նչ ժամկետով կարող է Արտակը վերցնել գումարը, որպեսզի ամսական վճարվող գումարը չգերազանցի 120 000 դրամը:

Ի՞նչ ժամկետով Դուք կվերցնեիք վարկը: Ո՞ր տարբերակը կնախընտրեիք. վճարել քիչ ամսավճար՝ ավելի երկար ժամկետով, թե՛ մեծ ամսավճար, բայց կարճ ժամանակահատվածով:

377 (8,9-րդ, ավանդ) Խմբային աշխատանք.

Հնարավոր է տոկոսների հաշվարկման 2 տարբերակ: Եթե տոկոսները հաշվարկվում են ներդրված սկզբնական գումարից, ապա դա պարզ տոկոսն է: Եթե տոկոսները գումարվեն ամեն տարի՝ նախորդ տարվա վերահաշվարկված գումարին, ապա դա բարդ տոկոսն է: Հաշվեք և լրացրեք աղյուսակը յուրաքանչյուր տարվա համար, եթե սկզբնական ներդրվող գումարը 500 000 դրամ է, իսկ տոկոսադրույքը՝ 10% (հաշվի չառնել եկամտային հարկի պահումները):

սխեմա	1 տարի	2 տարի	3 տարի	4 տարի	5 տարի	6 տարի
Պարզ %						
Բարդ %						

Ո՞ր տարբերակն է ավելի նպատակահարմար. բանկ ներդնել 1 000 000 դրամը երկու տարով 11% տոկոսադրույքով՝ պարզ տոկոսի սխեմայով, թե 10% տոկոսադրույքով՝ բարդ տոկոսի սխեմայով:

Նույն հարցին պատասխանել երեք և չորս տարիներով ներդնելու դեպքում:

378 (8,9-րդ, պարտք) Խնդիր-քննարկում.

Մինասյանների երիտասարդ ընտանիքը բնակարան գնելու համար պատրաստվում է վերցնել վարկ՝ տարեկան 20% տոկոսադրույքով: Ընտանիքը պլանավորում է մարել պարտքը հավասարաչափ վճարներով՝ 4 տարվա ընթացքում: Ընդ որում՝ յուրաքանչյուր տարի տոկոսագումարը հաշվարկվում է մայր գումարից: Ի՞նչ գումար կարող է նրանց տալ բանկը, եթե Մինասյաններն ունեն տարեկան 4 500 000 դրամ վճարելու հնարավորություն: Հաշվի առնելով ՀՀ-ում գործող երիտասարդ ընտանիքներին առաջարկվող վարկերի տեսակները՝ քննարկեք, թե Մինասյաններին արդյոք հարմա՞ր է օգտվել խնդրում նկարագրված վարկից:

379 (8-9-րդ, բյուջե, խնայողություն) Գործնական աշխատանք.

Արփին առաջարկեց ծնողներին տեղադրել հոսանքի հաշվիչ, որով 1 կՎտ-ի ցերեկային արժեքը 44,98 դրամ է, իսկ գիշերայինը՝ 34,98 դրամ: Նրանք

ամսական ծախսում էին ամենաքիչը 100 կՎտ էլեկտրաէներգիա ցերեկային ժամերին և 30 կՎտ՝ գիշերային ժամերին:

Որոշել, թե նվազագույնը որքա՞ն գումար կխնայեն նրանք հաշվիչը փոխելուց հետո 5 եռամսյակում: Հաշվարկը կատարելուց հետո կլորացնել մինչև միավոր:

Կատարել 1 շաբաթվա ընթացքում հաշվիչի ցուցմունքի տվյալների հավաքագրում և դիագրամի կազմում: Յուրաքանչյուր աշակերտ կարող է կատարել իրենց բնակարանի հաշվիչի տվյալների ուսումնասիրությունը:

380 (9-րդ, խնայողություն) Գործնական աշխատանք.

Կարենը բավականին շատ էր ծխում, սակայն հայր դառնալուն պես որոշում կայացրեց այլևս չծխել և առողջ ապրելակերպ վարել: Նա ամեն օր խնայատուփի մեջ էր գցում 450 դրամ, որը մինչ այդ ծախսում էր ծխախոտի վրա: Որդու մեկամյակին Կարենը բացեց խնայատուփը, որպեսզի որդու համար ոսկյա իր գնի: Օգտվելով www.cba.am կայքի տվյալներից՝ պարզել Կենտրոնական բանկի կողմից սահմանված ոսկու գինը և որոշել ամենաշատը քանի՞ գրամանոց ոսկյա իր նա կարող է գնել այդ գումարով:

381 (9-րդ, փոխարժեք) Գործնական աշխատանք.

Ստորև ներկայացված են 2018 և 2019 թվականների ապրիլի 20-ի ժամը 20:00 դրությամբ դոլարի փոխարժեքները հինգ բանկերում:

	2018 թ.		2019 թ.	
	Առք	Վաճ.	Առք	Վաճ.
1	478.5	482.5	480.5	484
2	478.5	482	480	483
3	478	482.5	480	483.5
4	479	482	481	484
5	479.5	482	481	483

ա) Յուրաքանչյուր տարվա համար որոշել դոլարի առքի/վաճառքի փոխարժեքների թվաբանական միջինը, մոդը, միջնաթիվը, տատանումները:

բ) Որոշել 2018 թ. դոլարի առքի/վաճառքի ամենամեծ/ամենափոքր արժեքի և 2019 թ. դոլարի առքի/վաճառքի ամենամեծ/ամենափոքր արժեքի տարբերությունը:

գ) Կառուցել 2018 / 2019 թթ. առքի/վաճառքի գրաֆիկները:

382 (9-րդ, ռիսկեր) Խնդիր-քննարկում.

Բանկի մասնաճյուղը Հայաստանի քաղաքներից մեկում իր բացման մեկամյակի առիթով օրվա հաճախորդների համար կազմակերպել էր վիճակախաղ: Հաճախորդին առաջարկվում էր կռահել քարտի համարի

վերջին քառանիշ թիվը և շահել 100 000 դրամ, կամ կռահել քարտի համարի վերջին երկնիշ թիվը և շահել 30 000 դրամ, կամ էլ քարտի համարի վերջին միանիշ թիվը և շահել 10 000 դրամ:

ա) Հաշվել հաճախորդի շահելու հավանականությունը, եթե նա ընտրել է առաջին առաջարկը, և նրան ներկայացրել են, որ այդ թիվը 5 000-ից փոքր և քարտի CVV-ի՝ 355-ի, պատիկ է:

բ) Հաշվել հաճախորդի շահելու հավանականությունը, եթե նա ընտրել է երկրորդ առաջարկը, և նրան ներկայացրել են, որ այդ թիվը 5-ի պատիկ, 39-ից մեծ և 71-ից փոքր թիվ է:

գ) Հաշվել հաճախորդի շահելու հավանականությունը, եթե նա ընտրել է երրորդ առաջարկը:

դ) Ո՞ր առաջարկից կօգտվեիք Դուք, և ինչու՞:

ե) Քննարկել քարտի պահպանման, անվտանգության հետ կապված հարցերը:

383 (9-րդ, գնումներ) Գործնական աշխատանք.

Չորս ընկերուհիներ որոշել են ինտերնետային կայքից ապրանք պատվիրել: Վաճառողը գրեց հաղորդագրություն, որ բեռնափոխադրման ծախսը պետք է փոխհատուցեն գնորդները: 4 ծանրոց փոստով ուղարկելու համար օգտագործվել են 4 տարբեր նամականիշներ՝ 28 000 դրամ ընդհանուր արժողությամբ: Օգնեք ընկերուհիներին որոշել նամականիշների արժեքները, եթե հայտնի է, որ նրանք կազմում են թվաբանական պրոգրեսիա, իսկ ամենաթանկ նամականիշը 2.5 անգամ թանկ է ամենաէժանից:

Փոստային տարբերակից բացի բեռնափոխադրման ի՞նչ այլ տարբերակներ կառաջարկեք ընկերուհիներին, որոնք ավելի քիչ ծախս կպահանջեն (հետազոտել):

384 (9-րդ, ապահովագրություն) Գործնական աշխատանք.

Երիտասարդ ընտանիքն ունի հետևյալ կազմը. ամուսինը - 30 տարեկան՝ միակ աշխատողը, կինը- 28 տարեկան՝ տնային տնտեսուհի, դուստրը-3 տարեկան, որդին-5 տարեկան: Երկու տարի առաջ երիտասարդ ընտանիքը բնակարան է ձեռք բերել: Անհրաժեշտ գումարի կեսը ընտանիքը կարողացել էր խնայել, իսկ մյուս կեսը պարտք էր վերցրել բարեկամներից և ընկերներից: Մեկ ամիս առաջ ընտանիքն ապառիկ գնեց ավտոմեքենա: Նշեք համեմատաբար ակնառու ռիսկերը (առնվազն երեք), որոնք վտանգ են ներկայացնում երիտասարդ ընտանիքի նյութական բարեկեցությանը և առաջարկեք դրանցից պաշտպանվելու տարբերակներ:

10-11-րդ դասարանների համար

385 (10-րդ, ավանդ) *Խնդիր-քննարկում.*

Երկու հարևաններ միևնույն բանկում ներդրել էին 400 000–ական դրամ ավանդ՝ 10 ամիս տևողությամբ՝ առանց տոկոսագումարների կապիտալացման: Հարևաններից մեկն ընտրել էր ավանդի տոկոսագումարները ժամկետի վերջում վճարման եղանակը, իսկ մյուսը՝ ամենամյա վճարման եղանակը: Առաջին դեպքում տոկոսադրույքը 7.50 % է, իսկ երկրորդ դեպքում՝ 7.38 %:

ա) Հաշվել յուրաքանչյուր հարևանի ավանդից ստացած տոկոսագումարների չափը՝ հաշվի առնելով եկամտահարկը՝ ավելացած գումարի 10%-ի չափով:

բ) Քննարկել ինչո՞ւ է տոկոսադրույքն առաջին դեպքում ավելի մեծ, քան երկրորդ դեպքում:

386 (10-րդ, հարկեր) *ա) Քննարկման հարցեր.*

Ի՞նչը կարելի է տալ վարձակալության:

Ի՞նչ պատճառներով մարդիկ չեն կարող աշխատել:

Ի՞նչ կարող է անել մարդը, ով չի աշխատում և չունի եկամուտ բերող սեփականություն:

Ի՞նչ պայմաններում մարդը կարող է պարտք վերցնել:

Ինչո՞վ է տարբերվում բարեկամներից կամ ընկերներից պարտքով գումար վերցնելը բանկից վարկ վերցնելուց:

բ) Խնդիր.

Մարդը ուզում է իր բնակարանը տալ վարձակալության ամսական 140 000 դրամով: Որքանո՞վ կավելանա նրա տարեկան բյուջեն, եթե եկամտահարկը 10% է:

387 (10-րդ, հարկեր) *ա) Քննարկման հարցեր.*

Ինչո՞ւ է պետությունը գանձում հարկեր:

Ինչպիսի՞ հարկատեսակներ է վճարում ձեր ընտանիքը:

Արդյո՞ք կա դրամական մուտքի տեսակ, որը չի հարկվում:

Ե՞րբ են մարդիկ վճարում ԱԱՀ:

Ո՞ր ապրանքները և ինչի՞ համար են ակցիզավորվում:

բ) Խնդիր.

Ընտանիքի տարեկան եկամուտը հավաքվում է մայրիկի աշխատավարձով և տատիկի կենսաթոշակով և ընդամենը կազմում է 4 680 000 դրամ: Կենսաթոշակն ամսական 60 000 դրամ է: Որքա՞ն ամսական եկամտային

հարկ կվճարի ընտանիքը պետությանը, եթե հայտնի է, որ աշխատավարձից գանձվող եկամտային հարկը կազմում է 21%:

388 (10-րդ, բյուջե) Գործնական աշխատանք.

4 հոգուց կազմված աշխատանքային խումբը պատվիրված աշխատանքն ավարտվելուց հետո ստացավ 1.2 միլիոն դրամ աշխատավարձ: Այդ գումարը նրանց միջև բաշխեք այնպես, որ նրանցից ոչ մեկի աշխատավարձը ընդհանուր գումարի 18%-ից պակաս չլինի, իսկ մասնակիցների աշխատավարձերի միջև տարբերությունը չգերազանցի 50%-ը:

389 (10-րդ, ավանդ, գնաճ) Խնդիր-քննարկում.

Հասմիկը կուտակել էր 600 000 դրամ գումար՝ իր հավանած կահույքը գնելու համար: Բայց նա որոշեց մեկ տարով հետաձգել գնումը և այդ գումարը բանկում ավանդ ներդնելով՝ հավելյալ եկամուտ վաստակել: Իր ընտրած բանկում ավանդի անվանական տոկոսադրույքը 10,5% էր: Սակայն Հասմիկը մի բան հաշվի չէր առել. պարզվեց, որ այդ տարվա ընթացքում դրամն արժեզրկվել էր 8%-ով: Գնողունակության առումով որքա՞ն է կազմում Հասմիկի ակնկալած հավելյալ եկամուտը՝ նկատի ունենալով նաև 10% եկամտային հարկը: Ինչպե՞ս կգնահատեք նրա որոշումը:

390 (10-րդ, բյուջե) Գործնական աշխատանք.

«Նոր տեխնոլոգիաների ուսուցման կենտրոն» ընկերությունը բացի ղեկավարից ունի 8 աշխատակիցներ, որոնցից հինգը դասավանդողներ են, երեքը՝ սպասարկողներ: Ղեկավարն այդ աշխատակիցների մարտ ամսվա աշխատավարձի ֆոնդի համար հատկացրեց 1,5 միլիոն դրամ. դրա 20%-ը սպասարկող անձնակազմին, իսկ մնացածը դասավանդողներին տրամադրելու համար:

Կատարեք աշխատակիցների՝ մարտ ամսվա աշխատավարձի բաշխում այնպես, որ մեկ դասավանդողի աշխատավարձը մյուսի աշխատավարձը 60%-ից ավելի չգերազանցի, իսկ սպասարկող անձնակազմից ոչ մեկի աշխատավարձը դասավանդողներից նվազագույնը ստացողի աշխատավարձի կրկնակիից քիչ չլինի:

391 (10-րդ, բյուջե) Խնդիր.

Նախորդ առաջադրանքի պայմանները բավարարող, ձեր կողմից կատարված աշխատավարձի բաշխման ցուցակի հիման վրա որոշեք տվյալ ընկերության աշխատակիցների աշխատավարձերի թվաբանական միջինը, միջնաթիվը և մոդը, համեմատեք դրանք և եզրակացություն արեք:

392 (10-րդ, բյուջե) Խմբային գործնական աշխատանք.

Նախորդ երկու առաջադրանքների տվյալներն օգտագործելով՝ պատրաստեք գովազդային հայտարարության տեքստ՝ դասավանդող մասնագետի ընկերություն աշխատանքի հրավիրելու նպատակով:

393 (10-րդ, եկամուտ) Գործնական աշխատանք.

Սարգիսն աշխատում էր «Ալֆա» խանութում: Նրա աշխատավարձը գործարքային էր. իր վաճառած յուրաքանչյուր հեռախոսի դիմաց նրա ստացած գումարը կազմում էր գնի 1.05%-ը, ինչպես նաև յուրաքանչյուր շաբաթվա վերջում՝ վաճառքից գոյացած գումարի 1,5%-ը: Աղյուսակում ներկայացված է ապրիլ ամսվա վաճառքը: Լրացնել դատարկ վանդակները և պարզել, թե որքա՞ն գումար աշխատեց Սարգիսը ապրիլ ամսվա 4 շաբաթների ընթացքում:

	Քանակ (արժեք), միավորի գինը՝ 115 000 դր.	1.05%	Քանակ(արժեք), միավորի գինը՝ 102 000 դր.	1.05%	1,5%
I	5 (575000)	6037.5	3 ()	3213	13215
II	7 ()	8452.5	5 (510000)		
III	4 (460000)		4 ()	4284	13020
IV	9 ()	10867.5	6 (612000)		24705

394 (10,11-րդ, ավանդ, հարկեր) Խնդիր-քննարկում.

Ենթադրենք՝ բանկում ավանդ էք դրել 100 000 դրամական միավոր՝ 10% տոկոսադրույքով, 3 տարի ժամկետով:

Հաշվել ժամկետի ավարտին ստացվող եկամուտը 10% եկամտային հարկը պահելուց հետո (ի գիտություն՝ յուրաքանչյուր տարի տոկոսագումարը կապիտալացվելուց առաջ հարկվում է, նոր ավելացվում մայր գումարին):

Քննարկել այն հարցը, որ եթե կապիտալացման ժամանակ տոկոսագումարը չհարկվի, այլ ամբողջությամբ ավելանա մայր գումարին և ստանալու պահին միայն հարկվի, ապա կա՞րողյոք տարբերություն, և բացատրեք, թե ինչու՞:

395 (10,11-րդ, ավանդ) Խնդիր-քննարկում.

Դիցուք՝ բանկում ավանդ է դրվել 500 000 դր. գումար՝ տարեկան 10% բարդ տոկոսադրույքով՝ տարեկան մեկ անգամ հանելու և/կամ համալրելու հնարավորությամբ: 1 տարի հետո ավանդի տեղը հաշվից հանել է 20 000 դրամ, որից մեկ տարի հետո ներդրել է 20 000 դրամ: Սակայն ավանդի ներդրման օրվանից 3 տարի հետո նա ստացավ ավելի քիչ գումար, քան նախատեսել էր (եթե չլինեին ընթացքում կատարված գործողությունները): Արդյունքում որքա՞ն գումար պակաս կստանա ներդրողը (հաշվի առնել 10% եկամտային հարկը): Բացատրեք ստացվող գումարի տարբերության պատճառը:

396 (10,11-րդ, պարտք, հարկեր) Գործնական աշխատանք.

Վարդանը ստանում է ամսական 400 000 դրամ աշխատավարձ, որից պահվում է եկամտահարկ: Նա ուզում է վերանորոգել իր բնակարանը և պլանավորում է վերցնել վարկ 1 տարով՝ 1 800 000 դրամ՝ 16% տարեկան տոկոսադրույքով: Պահանջվում է հաշվել:

Վարդանի աշխատավարձը հարկումից հետո, վարկի ամսական վճարումները: Պարզել՝ կարո՞ղ է արդյոք Վարդանը վերանորոգել բնակարանը տրված պայմաններով, եթե իր ամսական ծախսերը (կոմունալ վճարները և կենցաղային ծախսերը միասին) կազմում են 240 000 դրամ:

397 (10,11-րդ, արժեթղթեր, հարկեր) ա) Քննարկման հարցեր.

Ինչպե՞ս կազմել բյուջեն:

Ինչպե՞ս համադրել ընտանեկան բյուջեում եկամուտները և ծախսերը:

Ի՞նչ կարելի է անել, եթե եկամուտներն ավելի քիչ են, քան ծախսերը:

Ինչու՞ են վարկի համար վերցնում տոկոսներ:

Ինչպե՞ս կարելի է խնայել:

Ինչու՞ են մարդիկ խնայողություններ անում:

բ) Նախագծային աշխատանք.

Հայրիկն աշխատում է և ստանում ամսական 400 000 դրամ համախառն աշխատավարձ, գիրք է գրել և ստացել է 800 000 դրամ հոնորար:

Մայրիկն աշխատում է և ստանում ամսական 240 000 դրամ համախառն աշխատավարձ, ստացել է պարգևավճար 160 000 դրամ:

Տատիկը թոշակառու է և ստանում է ամսական 48 000 դրամ կենսաթոշակ, վիճակախաղով շահել է 20 000 դրամ:

Որդին ուսանող է և ստանում է ամսական 8 000 դրամ կրթաթոշակ, մասնակցել է ծրագրի և ստացել 160 000 դրամ մրցանակ:

Դուստրը դպրոցական է:

Ընտանիքը բանկում ունի ավանդ՝ 6 400 000 դրամ և 20 հատ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 40 000 դրամ արժողությամբ:

Ընթացիկ գնումների համար ծախսել են ամսական 480 000 դրամ, կոմունալ ծախսերի, տրանսպորտի և բուժման համար՝ 160 000 դրամ: Գնել են հեռուստացույց 160 000 դրամով և համակարգիչ՝ 240 000 դրամով: Ընտանիքի բոլոր անդամների հանգիստն արժեցել է 1 600 000 դրամ:

Եկամտահարկը հաշվարկվում է ըստ գործող օրենքի, ավանդը դրված է 10% տոկոսադրույքով, բաժնետոմսերի եկամուտը 5% է, որը վճարվում է տարեկան 2 անգամ:

Հանձնարարություն.

Լրացրեք աղյուսակները՝ «Եկամուտը», «Ծախսը», և հաշվեք յուրաքանչյուր տեսակի եկամտի և ծախսի կազմած մասը, նշեք տարբեր գույներով շրջանաձև դիագրամների վրա:

Կազմեք ընտանիքի տարեկան բյուջեն: Որոշեք ընտանիքի յուրաքանչյուր անդամի տարեկան միջին եկամուտը:

Առաջարկեք, թե ինչպե՞ս կարող է ընտանիքը կառավարել իր խնայողությունները:

Եկամուտներ

Եկամտի տեսակը	Ամսական գումարը	Տարեկան գումարը	Հարկեր

Ծախսեր

Ծախսերի տեսակը	Ամսական գումարը	Տարեկան գումարը

Ընտանիքի տարեկան բյուջեն

Եկամուտներ	Ծախսեր
	Հարկեր
Խնայողություններ	

398 (10,11-րդ, հարկեր) Գործնական աշխատանք.

Անահիտի տարեկան եկամուտը կազմում է. 50 000 դրամ կրթաթոշակ, 900 000 դրամ աշխատավարձ և 400 000 դրամ նվեր ծնողներից: Ի՞նչ հարկեր պետք է վճարի Անահիտը 1 տարվա ընթացքում: Աղյուսակով ներկայացրեք Անահիտի եկամուտներից պահվող հարկերն ու վճարները:

399 (10,11-րդ, հարկեր, արժեթղթեր) Հեղափոխական աշխատանք.

Հովսեփը անցյալ տարի ստացավ հետևյալ եկամուտները. Բաժնետիրական շուկայում կատարված ներդրումից՝ 1 000 000 դրամ, որից 800 000 դրամը ստացել է բաժնետոմսերի վերավաճառքից, իսկ 200 000 դրամը տոկոսագումարն է: Նրա տարեկան աշխատավարձը կազմել է 5 000 000 դրամ: Բացի այդ, անցյալ տարի նա ժառանգություն ստացավ 30 000 000 դրամ արժողությամբ բնակարան: Ի՞նչ հարկեր պետք է վճարի Հովսեփը պետությանը՝ որպես ֆիզիկական անձ:

400 (10,11-րդ, ավանդ, վարկ) Խմբային աշխատանք.

Սովորողներին հանձնարարվում է կազմել Արմենի 1 տարվա ֆինանսական պատմության տեքստային տարբերակը՝ ըստ տրված սխեմայի: Սլաքներով միացնել համապատասխան վանդակները և տալ դրանց ձևակերպումը:

Բացատրել վերջին վանդակի գրառումը:



401 (10,11-րդ, եկամուտ, հարկեր) Գործնական աշխատանք.

Ռուբենն աշխատում է եվրոպական մի երկրում, որտեղ գործում է եկամտային հարկի հետևյալ սանդղակը. տարեկան մինչև 15 000 եվրոն չի հարկվում, տարեկան 15 000-ից 25 000 եվրոն հարկվում է 15%-ով և տարեկան 25 000 եվրոից ավելի եկամուտը հարկվում է 27%-ով: Որքա՞ն հարկ կվճարի Ռուբենը ամսական, եթե ստանում է 1 500 եվրո աշխատավարձ:

Հետագոտել ՀՀ-ում գործող եկամտային հարկի սանդղակը և հաշվել, թե ամսական քանի՞ դրամ կվճարեր Ռուբենը, եթե աշխատեր Հայաստանում և ստանար 2 500 եվրոյին համարժեք (հաշվել տվյալ օրվա փոխարժեքով) դրամ:

402 (11-րդ, ավանդ, փոխարժեք) Գործնական աշխատանք.

Կարինեի հայրիկը, ով 5 ամսով մեկնել էր արտագնա աշխատանքի, վերադարձել էր տուն 300 000 ռուբլի եկամտով: Քանի որ Կարինեն 4 տարի հետո արդեն ուսանող կլինի, ծնողները որոշեցին 100 000 ռուբլին ՀՀ դրամով երկարաժամկետ ավանդ ներդնել բանկում:

ա) Պարզել ռուբլու փոխարժեքը և ըստ դրա որոշել՝ որքա՞ն ՀՀ դրամով գումար նրանք կներդնեն բանկում, և որքա՞ն գումար կմնա ընթացիկ ծախսերի համար:

բ) Քանի՞ տարի անց նրանց հաշվի գումարը կգերազանցի 900 000 դրամը, եթե ավանդի տարեկան տոկոսադրույքը 8 % է, իսկ տոկոսագումարները կապիտալացվում են:

403 (11-րդ, վարկ, փոխարժեք) Խմբային աշխատանք.

Դասարանը բաժանել երեք խմբի: Յուրաքանչյուր խումբ կազմում է խնդիր համապատասխանաբար հետևյալ հասկացություններով. ա) հաստատուն եկամուտ, փոփոխուն եկամուտ, եկամտային հարկ, բ) վարկ, տարեկան փաստացի տոկոսադրույք, մարման տեսակ, գ) դոլար, ռուբլի, առքի/վաճառքի փոխարժեք: Խնդիրները կազմելուց հետո խմբերը փոխանակում են դրանք, լուծում են և հայտնում իրենց վերաբերմունքը:

404 (11-րդ, բյուջե) Հետազոտական աշխատանք.

Մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու համար աշակերտներին հանձնարարել ճշտել իրենց նախընտրած մասնագիտությունների վարձավճարների չափը տարբեր բուհերում և համեմատել ընտանեկան բյուջեի հետ՝ պարզելով ուսման վարձը վճարելու հնարավորությունները, ինչպես նաև ուսումնասիրել տարբեր բանկերի կողմից տրամադրված ուսանողական վարկերը: Հանձնարարությունը կարող են իրականացնել ըստ հոսքերի՝ կենսաքիմիա (բժշկական համալսարան), ֆիզմաթ (տեխնիկական ֆակուլտետ), տնտեսագիտական (տնտեսագիտական ֆակուլտետ), հումանիտար (լեզվաբանական ֆակուլտետ):

Ուսումնասիրի՛ր, համեմատի՛ր, ընտրի՛ր քեզ հարմար տարբերակը (հաշվի առնելով ընտանեկան բյուջեն՝ ընդունել, որ ուսման տարիներին գնաճի փոփոխություն չի լինելու):

Համալսարան	Ֆակուլտետ	Վարձավճար
Երևանի պետական համալսարան	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	540 000 դրամ
Հայ-Ռուսական համալսարան	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	350 000 դրամ
Հայաստանում ֆրանսիական համալսարան	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	1 000 000 դրամ
Հայաստանի ամերիկյան համալսարան	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	1 500 000 դրամ
Ազգային պոլիտեխնիկական համալսարան	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	400 000 դրամ

Բանկ	Տոկոսադրույք
Բանկ 1	12%
Բանկ 2	9%
Բանկ 3	12%
Բանկ 4	12%
Բանկ 5	18%
Բանկ 6	5%

Նախագծային աշխատանքի պլանավորման օրինակ

405 (10,11-րդ, հարկեր) «Հարկեր, մարդու և պեպրոյան փոխհարաբերությունները»

Թեմա. Հարկեր. ինչու՞ պետք է դրանք վճարել, ի՞նչ կլինի չվճարելու դեպքում:

Նպատակային դասարան – 10-11 դասարան

Աշխատանքի ձևը - Արտադասարանական հետազոտություն, դասարանական քննարկումներ, ընդհանրացնել և համակարգել ուսումնասիրված թեմայի վերաբերյալ գիտելիքները և ներկայացնել:

Նպատակը – Համակարգել և ընդհանրացնել սովորողների գիտելիքները << հարկային օրենքների մասին:

Անձնային – Ձևավորել հաստատուն, ուսուցանող, գիտելիքահեն մոտիվացիա և ինքնադաստիարակման պատրաստակամություն:

Ուսուցանող – Գնահատել գործընթացի արդյունքները և ընթացքը, ընդհանրացնել և համեմատել փաստերը, կառուցել խելամիտ և հիմնավորված մտքեր, գնահատել համադասարանցիների կատարած աշխատանքները, աշխատել ներկայացված առաջադրանքին համապատասխան, համեմատել ստացված արդյունքները սպասելիքների հետ:

Համագործակցություն – Խմբում աշխատելու ունակություն, սեփական դիրքորոշումը մյուսներին ներկայացնելու կարողություն, սեփական կարծիքի արտահայտում հիմնավորված փաստերով և օրինակներով:

Հիմնական տերմիններ և հասկացություններ – Հարկ, վճար, տույժ, տուգանք, հարկի կամ վճարի կանխավճար, դեբետային գումար, գանձապետարան, հարկ վճարող, հարկային մարմին, պարտավորություն, եկամուտ, շահաբաժին, տոկոս, վարձակալական վճար, ապրանք, աշխատանք, ծառայություն:

Առաջադրանքի անցկացման պլան

Առաջադրանքի փուլերը	Ուսուցչի գործողությունները	Սովորողների գործողությունները	Արդյունքների գնահատման կոմպետենցիաներ
Խմբերի բաժանում	Ուսուցիչը ներկայացնում է նախագծային աշխատանքի էությունը, փուլերը և հանձնարարում բաժանվել խմբերի:	Սովորողները փորձում են ինքնուրույն բաժանվել խմբերի (խմբի անդամների քանակը կախված է դասարանում սովորողների քանակից): Խմբերում ընտրվում է ավագ:	Սովորողների ինքնակազմա կերպման կարողություններ:

<p>Յուրաքան չյուր խմբին հանձնարա րություն</p>	<p>Ուսուցիչը հանձնարարում է սովորողներին ուսումնասիրել ՀՀ հարկային օրենսգիրքը և առանձին խմբերի հանձնարարում է կատարել հետազոտություն: Անհրաժեշտ տեղեկատվությունը կարող են ստանալ http://www.petekamutner. am կայքից: (1 խումբ) Ուսումնասիրել հարկերի տեսակները, ներկայացնել դրանք, բերել օրինակներ: Անհրաժեշտության դեպքում օգնել մյուս խմբերին: (2-րդ խումբ) Ուսումնասիրել ԱԱՀ-ն: -Ո՞րն է հարկվող շրջանառության շեմը, որը գերազանցելիս անձը համարվում է հարկ վճարող: -Անձը իրականացնում է լիցենզավորման ենթակա գործունեություն, որի համար տարեկան տուրքը 105 000 դրամ է, իսկ շրջանառությունը 50 մլն: Համարվո՞ւմ է արդյոք ԱԱՀ վճարող: -Անձը նախորդ տարում իր խանութում վաճառվող ապրանքների 85%-ը</p>	<p>Սովորողները գրանցում են առաջադրանքը և իրենց խմբերում կատարում աշխատանքի բաշխում:</p>	<p>Առաջադրանք ը ընկալելու, գրառելու և խմբում միասնական աշխատանքի բաժանում կատարելու կարողություն:</p>
---	---	---	---

	<p>ծեռք է բերել միևնույն անձից, իսկ հարկվող շրջանառությունը 30 մլն դրամ է: Արդյոք նա ԱԱՀ վճարող է և ինչո՞ւ:</p> <p>-Ձեռնարկատերը նախորդ տարում իրականացրել է վաճառք, որի 77%-ը գնել է միևնույն անձը: Արդյոք նա համարվո՞ւմ է ԱԱՀ վճարող, եթե տարեկան հարկվող շրջանառությունը 55 մլն դրամ է:</p> <p>-Ո՞ր գործարքներն են հարկվում և որո՞նք չեն հարկվում ԱԱՀ-ով:</p> <p>-Որո՞նք են օրենքով սահմանված ԱԱՀ երկու դրույքաչափերը, ինչպե՞ս է հաշվարկվում ԱԱՀ գումարը, ի՞նչն է ազատվում ԱԱՀ-ից</p> <p>(3-րդ խումբ) Հետազոտում են աշխատավարձից պահվող եկամտային հարկը:</p> <p>-Եկամտային հարկի ի՞նչ դրույքաչափ է սահմանված:</p> <p>-Արդյոք 5 տարի առաջ գործո՞ւմ էր նույն սահմանաչափը, եթե ոչ՝ ապա ինչպիսի՞ն էր այն:</p> <p>-Կատարել համեմատություն նախորդ և ներկայում գործող</p>		
--	---	--	--

	<p>սահմանաչափերի միջև: Ինչպե՞ս կգնահատեք փոփոխությունը:</p> <p>-Կա՞ն արդյոք այլ հարկումներ աշխատավարձից, ներկայացնել դրանք, դիցուք, ընտրված աշխատավարձի օրինակով:</p> <p>(4-րդ խումբ) Ուսումնասիրել անշարժ գույքի հարկերը:</p> <p>-Ըստ սահմանված դրույքաչափի՝ որքա՞ն հարկ պիտի վճարի սեփականատերը, ով ունի գյուղատնտեսական նշանակության հող, որի շուկայական արժեքը սահմանված է 4 800 000 դրամ:</p> <p>-Որքա՞ն են սահմանվում ոչ գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի հարկերը: Համեմատել բնակավայրից դուրս և բնակավայրից ներս գտնվող հողերի հարկերը, եթե դրանց շուկայական արժեքները նույնն են՝ 3 200 000 դրամ:</p> <p>-Որքա՞ն է սահմանված ավտոտնակ հանդիսացող անշարժ գույքի հարկման տոկոսը:</p>		
--	---	--	--

	<p>-Որքա՞ն հարկ կվճարեն 18 մլն, 25 մլն, 36 մլն և 42 մլն շուկայական արժեք ունեցող բնակարանների սեփականատերերը:</p> <p>-Տեղեկատվություն http://taxinfo.am կայքից:</p>		
Սահմանվում է նախնական հետազոտության ժամկետ՝ 2 շաբաթ	2 շաբաթ հետո ուսուցիչը կատարում է հարցում՝ արված աշխատանքների վերաբերյալ:	Խմբերը տեղեկացնում են, թե ինչ հաջողություններ և ինչ դժվարություններ են ունեցել այդ ընթացքում:	Իրավիճակի գնահատման և առաջացած խնդիրների վերհանման կարողություն:
Հաջորդող 1 շաբաթում պատրաստվում են վերջնական արդյունքները ներկայացնելուն	Ուսուցիչը հանձնարարում է վերջնական տեսքի բերել հավաքագրված տեղեկատվությունը՝ հաշվետու դասին ներկայացնելու համար: Ներկայացման ձևը կարող են ընտրել սովորողները:	Խմբերը կատարում են վերջնական վերլուծություն, արդյունքների և համապատասխան օրինակների ձևավորում, պատրաստվում են հաշվետու դասին ներկայացնել իրենց կատարած աշխատանքները: Անհրաժեշտության դեպքում կարող են դիմել նաև մյուս առարկաները դասավանդող ուսուցիչների օգնությանը:	Տվյալների հավաքագրման, վերլուծության և ներկայացման կարողություն:

<p>Հաշվետու դաս</p>	<p>Ուսուցիչը պատրաստում է յուրաքանչյուր հանձնարարված թեմայի վերաբերյալ հարցեր, որոնք պետք է տալ յուրաքանչյուր խմբին՝ ներկայացումից հետո: Դրանք կարող են լինել նաև առաջադրանքի տեսքով: Նույնը հանձնարարում է նաև խմբերին, որպեսզի ներկայացման ընթացքում ուշադիր լսեն և գրանցեն 2 հարց՝ մյուս խմբերից յուրաքանչյուրին տալու համար:</p>	<p>Յուրաքանչյուր խումբ պատրաստվում է պատասխանել իրենց թեմայի շրջանակում տրվելիք հավանական հարցերին, ինչպես նաև ծանոթանում է մյուս խմբերի թեմաներին: Ներկայացման ժամանակ ուշադիր լսում են միմյանց և գրանցում հարցեր, որոնցից խմբով կընտրեն երկուսը: Խմբերին տրվող հարցերի պատասխանները քննարկվում են խմբերում, ապա ներկայացվում:</p>	<p>Լսելու, հասկանալու, հարցեր ձևակերպելու և տրվող հարցերին սպառիչ պատասխան տալու կարողություն:</p>
<p>Հաշվետու դաս – 2 դասաժամ (ուսուցչի ընտրությամբ)</p>	<p>Ուսուցիչը կարող է դասին հրավիրել տնօրինությանը, այլ ուսուցիչների, սովորողների, ինչպես նաև, ըստ ցանկության, կարող են ներկա լինել որոշ ծնողներ: Ուսուցիչը ապահովում է սովորողներին</p>	<p>Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, կատարում եզրակացություններ և պատասխանում հարցերին, տրամադրվում</p>	<p>Հստակ և համոզիչ խոսելու, եզրակացություններ կատարելու և ներկայացնելու կարողություն:</p>

	անհրաժեշտ նյութերով և դպրոցում առկա տեխնիկայով:	է 20-25 բույս յուրաքանչյուր խմբին:	
Ամփոփում	Ուսուցիչը ամփոփում է, հրավիրվածները հայտնում են կարծիքներ:	15 բույս ամփոփում:	

Եզրակացություն. Այս աշխատանքի ընտրության կարևորությունն այն է, որ յուրաքանչյուր մարդ (քաղաքացի) պարտավոր է հասկանալ և ընդունել պետության հետ երկկողմանի համաձայնության պատասխանատվությունը: Քաղաքացիները վճարում են, պետությունը կատարում է իր գործառույթները:

406 (5-7-րդ, բյուջե) Հեղափոխական աշխատանք.

Հանձնարարել սովորողների տարբեր խմբերի ուսումնասիրել Երևանի տարբեր համայնքների բնակարանների վարձավճարները՝ օգտվելով ինտերնետային կայքերից: Հավաքագրել տվյալներ.

1, 2 և 3 սենյականոց բնակարանների վարձակալության ամսավարձերը:

1, 2 և 3 սենյականոց բնակարանների վարձակալության օրավարձերը:

Գործակալությունների առաջարկած տարբերակները:

Համեմատել և հաշվետվության ձևով ներկայացնել: Քննարկել հետևյալ հարցը.

ա) Կնքե՞լ արդյոք վարձակալության պայմանագիր և ինչո՞ւ,

բ) Օգտվե՞լ արդյոք գործակալությունների ծառայություններից և ինչո՞ւ:**407 (6,7-րդ, խնայողություն) Հեղափոխական նախագծային աշխատանք.**

Դասարանուն ստեղծել 3 խումբ և տալ հանձնարարություն:

Ուսումնասիրել, հետազոտել, վերլուծել և ներկայացնել արդյունքները. Հայաստանում գործող բջջային օպերատորների (Բիլայն, Վիվասել, Յուբոմ) առաջարկած սակագները:

Բոպեավճարները ցանցի ներսում և դեպի դուրս:

Ինտերնետի տրամադրման սակագները:

Փաթեթների տեսակները և արժեքները:

Աշխատանքը կարելի է կատարել՝ օգտվելով ինտերնետային համապատասխան կայքերից: Ներկայացնել արդյունքները և վերլուծությունը՝ շեշտադրելով, թե սովորողները ո՞ր փաթեթը կընտրեին, ո՞րն է հարմար ծնողների համար, տատիկ, պապիկների համար, ուսանողների համար, Հայաստանի շրջաններում և Արցախում բնակվողների համար, Հայաստանից դուրս գանգեր կատարելու համար:

Հաշվետվությունը կարելի է ներկայացնել շնորհանդեսի ձևով, յուրաքանչյուր խումբ՝ իրենը: Վերջում կազմակերպել քննարկում հավաքագրված տվյալների շուրջ՝ համեմատելով 3 կազմակերպությունների առաջարկները:

408 (6,7-րդ, գնումներ) Խնդիր-քննարկում.

2013 թվականին Ամանորին կոնֆետներ գնելու համար ծախսվել է միևնույն գումարը, ինչ որ՝ 2012 թվականին: Ի՞նչ տոկոսային փոփոխություն է կրել գնված կոնֆետների քաշը, եթե բոլոր տեսակները թանկացել են 25%-ով:

Հարցումներով պարզեք, թե ինչպե՞ս են փոխվել գները վերջին մեկ տարվա ընթացքում: Փորձեք տալ բացատրություն:

409 (6-րդ և ավելի բարձր, խնայողություն) Հեղաքրքրաշարժ խնդիր.

Ընթերցել, քննարկել, հեղևություն անել. Ամերիկացի մեծ գիտնական գյուտարար Թոմաս Էդիսոնը վատ գործարար էր: Նրա բազմաալիքային հեռագրամեքենայի գյուտը «Վեստերն Յունիոն» կազմակերպությանը բերեց հսկայական եկամուտ: Այդ փոխանցիչ սարքի համար կազմակերպությունն առաջարկեց Էդիսոնին 110 000 դոլար: Նա համաձայնեց, սակայն մեկ պայմանով, որ կազմակերպությունը նրան ամբողջ գումարը միանգամից չտա, այլ վճարի տարեկան 6 000-ական դոլար՝ 17 տարվա ընթացքում: Եթե նա միանգամից ամբողջ գումարը վերցնե՞ր և 100 000 դոլարը ներդնե՞ր ինչ-որ վստահելի կազմակերպությունում, միայն տոկոսագումարը կկազմե՞ր տարեկան 6 000 դոլար: «Վեստերն Յունիոն» կազմակերպությունը, բնականաբար, հենց այդպես էլ վարվեց: 100 000 դոլարը ներդրեց բանկում և 17 տարվա ընթացքում վճարեց Էդիսոնին ներդրման տոկոսները: 17 տարի հետո կազմակերպությունը վերցրեց իր ներդրումը բանկից:

Ինչու՞ կազմակերպությունը միանգամից համաձայնեց Էդիսոնի պայմաններին:

Որքա՞ն արժեցավ Թոմաս Էդիսոնի գյուտը կազմակերպության համար:

410 (6-րդ և ավելի բարձր, բյուջե) Հեղաքրքրաշարժ խնդիր.

Ընթերցել, քննարկել, հեղևություն անել. Ավստրալիայում մի նահանգի ֆերմերները որոշեցին պակասեցնել իրենց ծախսերը՝ խնայելով ցանկապատի կառուցման վրա: Որպեսզի գումար չծախսեն կառուցապատման վրա, նրանք Արգենտինայից գնեցին օպունցիա կակտուսներ, որոնք արագ են աճում և մեծ խնամքի կարիք չունեն: Այդ կակտուսներից ստացվում է ամենաապահով փշոտ, բնական ցանկապատը. ոչ մի գող չի կարող սողոսկել այդ ցանկապատից ներս: Սեմը որոշեց գնել օպունցիա և սերմերի վրա ծախսեց 160 դոլար: Իսկ Դիկը որոշեց ցանկապատել իր հողատարածքը փայտով և դրա համար վարձակալեց երկու աշխատողների՝ վճարելով նրանցից յուրաքանչյուրին 40 դոլար: Սեմը ունեցավ կենդանի ցանկապատ՝ 8 կմ երկարությամբ, իսկ Դիկը՝ փայտե ցանկապատ, որը 2 անգամ կարճ էր Սեմի ցանկապատից: 1 կմ ցանկապատի նյութածախսը կազմեց 20 դոլար:

Հարևաններից ո՞վ ավելի շատ ծախսեց ցանկապատի կառուցման վրա, ով խնայեց:

411 (6-րդ և ավելի բարձր, բյուջե) Հեղաքրքրաշարժ խնդիր.

Նախորդ առաջադրանքի շարունակությունը. Սեմի ցանկապատը հիանալի էր ստացվել: Որոշ ժամանակ անց կակտուսներն այնքան աճեցին, որ սկսեցին նեղել ցորենին: Սեմը վարձեց տասը աշխատողների՝

յուրաքանչյուրին վճարելով 5 դոլար, որպեսզի նրանք կտրեն կակտուսները: Սակայն օպունցիան նորից աճեց: Սեմը վարձեց տրակտորիստի և վճարեց նրան 10 դոլար՝ աշխատանքի համար և 3 դոլար՝ վառելիքի համար, որպեսզի նա փորի և մաքրի հողատարածքը կակտուսներից: Որոշ ժամանակ անց կակտուսը կրկին աճեց: Այդ ժամանակ Դիկը հուշեց հարևանին, որ կան կակտոբլաստիս տեսակի որդեր, որոնք ուտում են կակտուս: Սեմը Արգենտինայից գնեց այդ որդերից, որոնց փաթեթն արժեք 58 դոլար: 3 տարի հետո որդերն ամբողջությամբ կերան կակտուսը և մաքրեցին տարածքը: Այս ամբողջ ընթացքում Սեմը ստիպված էր տարին մեկ անգամ վարձել տրակտորիստի և մաքրել հողը կակտուսներից, իսկ Դիկի փայտե ցանկապատը ինչպես կար, այնպես էլ կանգնած մնաց: Հարևաններից ո՞վ և որքա՞ն գումար իրականում խնայեց:

412 (6,7-րդ, ավանդ, փոխարժեք) Գործնական աշխատանք.

Հայրը 2 տարով 5 000\$ ներդրեց բանկում՝ տարեկան 7% տոկոսադրույքով: Նա որոշել էր ամեն տարվա վերջին վերցնել տոկոսագումարը, իսկ ժամկետի ավարտին ամբողջ գումարը իր 3 տղաների միջև բաժանել հետևյալ կերպ. Արմենի ստացած ամեն դոլարի դիմաց Արտակը կստանա 1.5\$, իսկ Արսենը՝ 2.5\$: Որոշել, թե որքան դրամ ստացան հայրը (առանց պահումների) և երեք տղաներից յուրաքանչյուրը: Տարադրամը վերածեք դրամի՝ տվյալ օրվա փոխարժեքով:

413 (6,7-րդ, գնումներ, խնայողություն) Հետազոտական աշխատանք.

Պարզել Ձեր դասարանի դասագրքերի վարձակալության գները և համեմատել.

Եթե ունեք մեկ փոքր եղբայր կամ քույր, որքանո՞վ է նպատակահարմար գնել այդ դասագրքերը, այլ ոչ թե վարձակալել:

Եթե ունեք երկու փոքր եղբայր կամ քույր, որքանո՞վ է նպատակահարմար գնել այդ դասագրքերը, այլ ոչ թե վարձակալել:

Կազմակերպել քննարկում, մտքերի փոխանակում:

414 (6-8-րդ, բյուջե) Գործնական աշխատանք.

Տատիկը և պապիկը ստանում են 30 000-ական դրամ կենսաթոշակ, հայրիկը ստանում է ամսական 120 000 դրամ աշխատավարձ, իսկ մայրիկը՝ 160 000 դրամ: Բացի այդ, ընտանիքը վարձակալության է տալիս ամառանոցը ամսական 80 000 դրամով՝ ամառվա 3 ամիսների ընթացքում: Հաշվել յուրաքանչյուր տեսակի եկամտի (մոտավոր) մասը՝ տոկոսով կամ մասով արտահայտված՝ տարեկան կտրվածքով: Պատասխանը ներկայացրեք շրջանաձև դիագրամի տեսքով:

415 (6-8-րդ, գնումներ, խնայողություն) *Խնդիր-քննարկում.*

Նարեն գնեց զգեստ՝ 20 000 դրամ արժողությամբ: Վճարումը կատարելիս գանձապահը տեղեկացրեց, որ գնված ապրանքը կարող են փոխանակել կամ հետ վերադարձնել 3 օրվա ընթացքում: Հաջորդ օրը Նարեն տեսավ, որ խանութը գեղչեր է սահմանել, և իր գնած զգեստը գեղչվել է 40%-ով: Նա որոշեց օգտվել հնարավորությունից. վերադարձրեց զգեստը՝ պատճառաբանելով, որ չափսը չի համապատասխանում: Առաջարկեցին փոխանակում, բայց կտրոնի վրա նշված գնով՝ առանց գեղչի կիրառման: Նարեն հրաժարվեց փոխանակումից և հետ վերադարձրեց զգեստը: Երկու ժամ անց նա նորից մտավ այդ խանութը՝ ընտրած զգեստը գեղչով գնելու, սակայն իր չափսը արդեն չկար...

Քանի՞ դրամով էր գեղչվել զգեստը:

Ինչպե՞ս կգնահատեք Նարեի քայլը: Արդյոք նա գո՞հ էր իր խնայողությունից:

Ի՞նչ խորհուրդ կտայիք Նարեին:

416 (6-8-րդ, բյուջե, գնումներ) *Հեղազոտական նախագծային աշխատանք.*

Արաքսը ստանում է 400 000 դրամ աշխատավարձ և ամեն ամիս կատարում է խնայողություն 10%-ի չափով: Նա նպատակ ունի իրականացնելու իր երազանքներից մեկը. կազմակերպել միջոցառումներ եկո՝ նվիրված Կոմիտասին: Պլանավորում է հրավիրել քսան հյուր: Օգնեք Արաքսին կազմակերպել միջոցառումը, որի ընթացում նա ուզում է.

Հյուրերին բաժանել Կոմիտասի մասին տեղեկատվական թերթիկներ:

Նվիրել նրա ստեղծագործություններից՝ կրիչի վրա ձայնագրած:

Փոքրիկ հյուրասիրություն կազմակերպել:

Երեկոյի տեղի ընտրությունը, ձևավորումը, օրակարգը և ընթացքն ու այլ հետաքրքիր մտքեր Արաքսը թողնում է ձեզ վրա: Կատարեք հաշվարկներ, ներկայացրեք միջոցառումը և դրա բյուջեն՝ աղյուսակային տեսքով: Արաքսի քանի՞ ամսվա խնայողություններն եք նախատեսում միջոցառումն իրականացնելու համար, այլընտրանքային ի՞նչ տարբերակ կառաջարկեք:

417 (6-8-րդ, ավանդ, վարկ) *Խաղ-խնդիր.*

Պատրաստել 3 արկղեր, որոնցում համապատասխանաբար դրված են թերթիկներ հետևյալ բովանդակությամբ.


Գումար (այստեղ կարող են լինել տարբեր մեծության ամբողջ թվեր, որոնք բանկը պետք է տրամադրի որպես վարկ կամ ներդրվի բանկում՝ որպես ավանդ: Օրինակ՝ 500 000 դրամ, 1 200 000 դրամ և այլն):

Ծառայության տեսակ և տոկոսադրույք (այս արկղի թերթիկների վրա գրված կլինեն, օրինակ՝ վարկ-18% (փաստացի), կամ ավանդ-8% (պարզ):

Թերթիկների քանակը՝ անսահմանափակ):

Ժամկետ (այս արկղի թերթիկների վրա նշվում է վարկի տրամադրման կամ ավանդի ներդրման ժամանակահատվածը՝ տարիների կամ ամիսների թիվը: Օրինակ՝ 3 տարի, 5 ամիս և այլն):

Խաղի հետաքրքրությունն այն է, որ սովորողը, յուրաքանչյուր արկղից մեկական թերթիկ ընտրելով, ինքն է կազմում իր խնդիրը, լուծում և ներկայացնում: Պատրաստված արկղերով կարելի է անցկացնել բազում խաղեր, ժամանակի ընթացքում կարելի է նաև փոփոխել թերթիկների տվյալները: Խաղի կանոնները բացատրելու համար կոզնի ստորև ներկայացված գծապատկերը:



418 (6-8-րդ, գնումներ) Խնդիր-քննարկում.

Արտակը որոշեց իր խնայած 4 500 դրամից եկամուտ ստանալ: Նա բուլինիստական մեծածախ գրախանութից ամբողջ գումարով գնեց 2 գիրք և վաճառեց դրանք՝ ստանալով 40% եկամուտ:

Որոշեք յուրաքանչյուր գրքի նախնական գինը, եթե առաջին գրքի վաճառքից ստացվեց 25% եկամուտ, երկրորդ գրքի վաճառքից՝ 50% եկամուտ:

Քննարկեք այն հարցը, թե արդյոք օրինակա՞ն էր Արտակի՝ գիրք վաճառելու միջոցով եկամուտ ստանալը:

419 (6-8-րդ, խնայողություն, գնումներ) Նախագծային աշխատանք.

Աշխատանքը սերտ կապված է «Տեխնոլոգիա» առարկայի հետ: Դասարանում սովորող աղջիկները և տղաները կարող են առանձին կատարել աշխատանքը, կա նաև միասին կատարելու տարբերակ:

Աղջիկների առաջադրանքը: Հանձնարարվում է կարել կամ գնել կիսաշրջագգեստ (կատարվում են զուտ հաշվարկները): Նախ ուսումնասիրում են շուկան՝ տարբեր խանութներում կիսաշրջագգեստների գները, հաշվի առնելով նաև բրենդային լինելու հանգամանքը, հավաքագրում են տվյալները, որից հետո, տեխնոլոգիայի ուսուցչի օգնությամբ (կարող են օգնել նաև ծնողները), կատարում են հաշվարկ՝ նույն կիսաշրջագգեստից կարելու համար որքա՞ն կտոր և այլ նյութեր կծախսվեն: Կարող են դիտարկել և՛ իրենց կարելու, և՛ դերձակին պատվիրելու տարբերակները: Վերջում կատարում են հաշվարկների ամփոփում, գների համեմատում և ընտրություն՝ հիմնավորելով այն: Խմբի յուրաքանչյուր անդամ կարող է ներկայացնել իր անձնական ընտրությունը:

Տղաների առաջադրանքը: Հանձնարարվում է պատրաստել կամ գնել գրապահարան: Նախ ուսումնասիրում են շուկան՝ տարբեր խանութներում գրապահարանների գները՝ հաշվի առնելով չափսերը և օգտագործված նյութերի որակը: Հավաքագրում են տվյալները, որից հետո, տեխնոլոգիայի ուսուցչի օգնությամբ (կարող են օգնել նաև ծնողները), կատարում են հաշվարկ՝ որքա՞ն և ինչ տեսակի նյութեր կծախսվեն իրենց ընտրած գրապահարանը պատրաստելու համար: Կարող են դիտարկել և՛ իրենց ձեռքով պատրաստելու, և՛ պատվիրելու տարբերակները: Վերջում կատարում են հաշվարկների ամփոփում, գների համեմատում և ընտրություն՝ հիմնավորելով այն: Խմբի յուրաքանչյուր անդամ կարող է ներկայացնել իր անձնական ընտրությունը:

Ընդհանուր առաջադրանք: (Այն դեպքում, երբ դժվար է առանձնացնել տղա-աղջիկ): Հանձնարարվում է պատրաստել կամ գնել պահածոյացված լոլիկի և վարունգի մարինադ: Նախ ուսումնասիրում են շուկան՝ տարբեր խանութներում և տարբեր ֆիրմաների առաջարկած գները (կարող են խորհրդակցել նաև ծնողների հետ՝ անորակ ապրանքներից խուսափելու համար: Հավաքագրում են տվյալները, որից հետո, տեխնոլոգիայի ուսուցչի օգնությամբ (կարող են օգնել նաև ծնողները), կատարում են հաշվարկ՝ որքա՞ն կարժենա նույն պահածոն, եթե պատրաստեն տանը (հաշվի առնել նաև, թե ո՞ր սեզոնին եք պատրաստում մարինադը՝ անհրաժեշտ

ապրանքների գները և որակը համեմատելով): Վերջում կատարում են հաշվարկների ամփոփում, գների համեմատում և ընտրություն՝ հիմնավորելով այն: Խմբի յուրաքանչյուր անդամ կարող է ներկայացնել իր անձնական ընտրությունը:

420 (6-9-րդ, պարտք) Գործնական աշխատանք.

Անահիտը ուզում էր վարկ վերցնել 1 000 000 դրամ և որպեսզի ժամանակ խնայի, նախ ուսումնասիրեց բանկի էլեկտրոնային էջը, ապա զանգահարեց բանկ: Օպերատորը, լսելով Անահիտի հարցը, միացրեց վարկային մասնագետին: Պարզվեց, որ բանկը կարող է Անահիտին տրամադրել վարկ տարեկան 14% անվանական տոկոսադրույքով և ամսական 0.35% սպասարկման վճարով: Անահիտի ընկերուհին առաջարկեց օգտվել մեկ այլ բանկի ծառայություններից, որից ինքն է օգտվում և վերցրած վարկի համար փաստացի վճարում է տարեկան 18%:

Օգնեք Անահիտին կայացնել որոշում, թե ո՞ր բանկի առաջարկը ընդունի:

Կատարեք հաշվարկներ և պարզեք, թե որքան կկազմի Անահիտի պարտքը մեկ տարի հետո առաջարկներից յուրաքանչյուրի դեպքում:

421 (6-9-րդ, բյուջե) Գործնական աշխատանք.

Գոհարն ու Նունեն սովորում էին, նրանց հայրիկն ու մայրիկը՝ աշխատում: Հայրիկի ամսական եկամուտը 170 000 դրամ էր, մայրիկինը՝ 160 000 դրամ: Նրանց ընտանիքը միջինում ամսական վճարում էր 50 000 դրամ հոսանքի, գազի, ջրի և կապի ծառայությունների համար, 120 000 դրամ՝ սննդի և տրանսպորտի, ինչպես նաև 30 000 դրամ՝ միջոցառումների և այլ ծախսերի համար:

Գոհարիկն ու Նունեն հայրիկի հանձնարարությամբ կազմեցին հոկտեմբեր ամսվա իրենց անձնական բյուջեները:

Գոհարի բյուջե		Նունեի բյուջե	
Եկամուտ	Ծախս	Եկամուտ	Ծախս
Ծնողների հատկացրած գումար՝ 12 000 դրամ	Տրանսպորտ՝ 4 600 դրամ	Ծնողների հատկացրած գումար՝ 12 000 դրամ	Տրանսպորտ՝ 4 600 դրամ
Քեռու նվեր՝ 3 000 դրամ	Սնունդ՝ 6 600 դրամ	Քեռու նվեր՝ 3 000 դրամ	Սնունդ՝ 6 600 դրամ
	Համերգ՝ 1 800 դրամ		Նվեր ընկերուհուն՝ 2 000 դրամ:
Մնացորդ՝ 2 000 դրամ		Մնացորդ՝ 1 800 դրամ	

Հավանություն տալով աղջիկների աշխատանքին՝ հայրիկը նրանց պատվիրեց, որ կազմեն ընտանիքի նույն ամսվա բյուջեն, ընդ որում՝ եկամտի 10% -ը նախատեսեն խնայողության, իսկ ազատ գումարը՝ հագուստի համար: Ինչ տեսք կունենա նրանց ընտանեկան բյուջեն:

422 (7-9-րդ, պարտք) Գործնական աշխատանք.

Հրանտը ապառիկ գնեց 100 000 դրամ արժողությամբ հեռախոս (մարման գրաֆիկը ներկայացված է ստորև): Սակայն 3-րդ ամսից սկսած՝ չնախատեսված այլ ծախսերի պատճառով չկարողացավ վճարել պարտքը: Վճարումները նա կարողացավ վերականգնել սկսած 5-րդ ամսից (գնման պահից սկսած), չվճարեց 2 ամիս:

Հաշվեք Հրանտի պարտքի չափը գումարի տրամադրման օրվանից 5 ամիս հետո, եթե հայտնի է, որ բանկի կողմից սահմանված են հետևյալ տուգանքները՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար 0.5%՝ չմարված գումարից:

Եթե Հրանտը կարողանար պարտաճանաչ վճարել պարտքը, որքա՞ն կկազմեր վճարվող ամբողջ գումարը:

Ամիս	Ամսական վճար	Տոկոսագումար դրամ	Պարտքի վճար	Պարտքի մնացորդ
1	9330	1000	8330	91670
2	9250	920	8330	83330
3	9170	830	8330	75000
4	9080	750	8330	66670
5	9000	670	8330	58330
6	8920	580	8330	50000
7	8830	500	8330	41670
8	8750	420	8330	33330
9	8670	330	8330	25000
10	8580	250	8330	16670
11	8500	170	8330	8330
12	8420	80	8330	0

423 (7-9-րդ, պարտք, ապահովագրություն) Քննարկման հարց-խնդիրներ.

ա) Կարինեին չի բավարարում ներդրված ավանդից ստացվող եկամուտը: Նա գտել է ներդրման այլ տարբերակ՝ առնվազն 25% եկամտաբերությամբ, մի կազմակերպությունում, որը զբաղվում է արտերկրում ինտերնետ-ստարտափներով: Նվազագույն ներդրման գումարը 250 000 դրամ է:

Հանդիպելով այդ կազմակերպության ներկայացուցիչների հետ՝ նա համոզվեց որ առաջարկը խոստումնալից է, սակայն զգուշության համար որոշեց ուսումնասիրել պայմանագիրը տանը: Մտավախություն առաջացրեց պայմանագրում մեկ կետ. «Վեճերի առաջացման դեպքում բոլոր դատական ընթացակարգերն անցկացվում են Կիպրոսում»: Ի՞նչը ձեզ անհանգստություն կպատճառեր և ինչո՞ւ:

բ) *Գովազդ թերթում.* «ՍԻԼՆՈՐ վարկային կազմակերպությունը առաջարկում է ներդնել ավանդ տարեկան 20% տոկոսադրույքով: Բոլոր ներդրումներն ապահովագրված են: Շտապե՛ք: Առաջարկը գործում է մեկ ամսվա ընթացքում»: Մեկնաբանե՛ք և քննարկե՛ք այս գովազդային առաջարկը:

424 (7-9-րդ, խնայողություն, բյուջե) Հեղազոտական աշխատանք.

Հանձնարարել սովորողների տարբեր խմբերի ուսումնասիրել տարբեր բանկերի կողմից առաջարկվող վճարային քարտերի տեսակները՝ ուշադրություն դարձնելով հետևյալ կետերին.

Քարտի սպասարկման վճարի չափին,

Բանկի և այլ բանկերի բանկոմատներով գումարի կանխիկացման միջնորդավճարների չափին,

Գործարքի առավելագույն սահմանաչափերին (օրինակ՝ քարտով կատարվող մեկ գործարքի գումարի կամ օրվա ընթացքում գումարի կանխիկացման առավելագույն չափերին):

Կատարել տվյալների հավաքագրում, վերլուծություն, ներկայացնել հաշվետվություն:

Դասարանում կազմակերպել քննարկում՝ ո՞ր բանկի և ո՞ր վճարային քարտի տեսակը կընտրեն աշակերտները:

425 (9,10-րդ, ավանդ) Հեղազոտական աշխատանք.

Հետազոտել տարբեր երկրների բանկերի առաջարկը՝ ավանդների հետ կապված:

Գերմանական պրակտիկայում տոկոսագումարի հաշվարկները կատարվում են այսպես. տարին ընդունվում է 360 օր, ամսվա տևողությունը՝ 30 օր: Այս դեպքում ավանդի օրերի տևողությունը կլինի.
 $(30 - 6) + 9 \cdot 30 + (30 - 19) = 305$ օր:

Ֆրանսիական պրակտիկայում տոկոսագումարի հաշվարկները կատարվում են այսպես. տարին ընդունվում է 360 օր, իսկ օրերով հաշվարկվում է ստույգ: Այս դեպքում ավանդի օրերի տևողությունը կլինի.
 $(28 - 6) + 31 + 30 + 31 + 30 + 31 + 30 + 31 + 30 + 31 + (31 - 19) = 309$ օր:

Անգլիական պրակտիկայում տոկոսագումարի հաշվարկները կատարվում են այսպես.տարին ընդունվում է 365 կամ 366 օր, այսինքն՝ այնքան,

որքան որ այդ տարին կլինի, իսկ օրերով հաշվարկվում է ստույգ: Այս դեպքում ավանդի օրերի տևողությունը կլինի. $(28 - 6) + 31 + 30 + 31 + 30 + 31 + 30 + 31 + (31 - 19) = 309$ օր:

Դիցուք՝ բանկ է ներդրվել 3 000 դոլար ավանդ՝ տարեկան 10% տոկոսադրույքով: Գումարը ներդրվել է փետրվարի 6-ին և պահանջվել է դեկտեմբերի 20-ին:

Որոշել, թե տոկոսագումարը ինչպե՞ս է բաշխվում նշված ժամանակահատվածի համար:

Հետազոտել <<- ում գործող բանկերի առաջարկները և համեմատել վերոնշյալ օրինակների հետ:

Ո՞ր երկրի տարբերակն է առավել շահավետ:

Նախագծային աշխատանքի պլանավորման օրինակ

426 (7-9-րդ, փոխարժեք) Թեմա. Ինչպե՞ս տնօրինել տարադրամը:

Նպատակային դասարան – 7-րդ դասարան,

Աշխատանքի ձևը – արտադասարանական հետազոտություն, դասարանական քննարկումներ, գործողությունների իրականացում:

Նպատակը – Արագ կողմնորոշվելու կարողություն, արժեքների ձևավորում, համատեղ պլանավորում, մաթեմատիկական և ֆինանսական գիտելիքների համատեղ կիրառում:

Անձնային – Սովորողների մեջ ձևավորել անսպասելի իրավիճակներում խուճապի չմատնվելու, խելամիտ դատողություններ անելու կարողություն, ընկերների կարծիքը և ցանկությունը հաշվի առնելու պատրաստակամություն, հիմնական արժույթների փոխարժեքների փոփոխություններին հետևելու կարևորության գիտակցում, անձնական և ընտանեկան ֆինանսական տվյալները գաղտնի պահելու ունակություն:

Ուսուցանող – Միևնույն արտարժույթի փոխարժեքի վերաբերյալ տարբեր ֆինանսական կառույցներից տվյալների հավաքագրում, համեմատություն և առք ու վաճառքի պարագայում լավագույն տարբերակի ընտրություն: Խելամիտ և հիմնավորված գաղափարների մշակում, համադասարանցիների կատարած աշխատանքների արժևորում և գնահատում, ստացված արդյունքների միասնականացում:

Համագործակցություն – Խմբում աշխատելու ունակություն, սեփական կարծիքը մյուսներին ներկայացնելու և համոզիչ լինելու ընդունակություն: Դիմացիոն լսելու, հարգելու, ընդունելու կամ հիմնավոր առարկելու կարողություն: Փոխզիջումների և բարի մթնոլորտ ստեղծելու ցանկություն:

Հիմնական տերմիններ և հասկացություններ – Արտարժույթ, փոխարժեք, փող, դրամ, դոլար, ռուբլի, եվրո, լարի, առք, վաճառք, փոխանակում, ռիսկեր, բանկ, ֆինանսական կազմակերպություն:

Առաջադրանքի անցկացման պլան

Առաջադրանքի փուլերը	Ուսուցչի գործողությունները	Սովորողների գործողությունները	Արդյունքների գնահատման կոմպետենցիաներ
Խմբերի բաժանում	Ուսուցիչը ներկայացնում է նախագծային աշխատանքի էությունը, փուլերը և հանձնարարում բաժանվել խմբերի:	Սովորողները փորձում են ինքնուրույն բաժանվել խմբերի (խմբի անդամների քանակը կախված է դասարանում սովորողների թվից): Խմբում ընտրվում է ավագ:	Սովորողների ինքնակազմա-կերպման կարողություններ:
Յուրաքանչյուր խմբին հանձնարարություն	Ուսուցիչը տալիս է հանձնարարություն՝ յուրաքանչյուր խմբին. 1 ամսվա կտրվածքով ուսումնասիրել և հավաքագրել տարադրամի փոխանակման կետերի և բանկերի կողմից առաջարկների տվյալները որոշակի տարադրամի արժեքների փոփոխության վերաբերյալ: Կառուցել գրաֆիկ ըստ օրերի և տարադրամի արժեքների:	Սովորողները ծանոթանում են հիմնախնդրին, քննարկում դա խմբում և պլանավորում հետագա աշխատանքները:	Առաջադրանքը ընկալելու, գրառելու և խմբում միասնական քննարկում կազմակերպելու ու միմյանց լսելու կարողություն:

	<p>Գրաֆիկները կառուցելիս կարելի է մի քանի փոխանակման աղբյուրի տվյալներ միջինացնել:</p> <p>Համեմատել մյուս տարադրամների գների փոփոխության հետ:</p> <p>Քննարկել և պարզաբանել տարադրամների գների տատանման պատճառները՝ կախված սեզոնից, գալ եզրահանգման, թե երբ պետք է գնել տվյալ տարադրամը:</p> <p>1-ին խումբ՝ ռուբլի, 2-րդ խումբ՝ լարի, 3-րդ խումբ՝ դոլար, 4-րդ խումբ՝ եվրո:</p>		
<p>Սահմանվում է հետազոտության ժամկետ՝ 1 ամիս</p>	<p>Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում ուսուցիչը կատարում է հարցում՝ արված աշխատանքների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում փոքրիկ հուշումներ անում:</p>	<p>Խմբերը տեղեկացնում են, թե ինչ հաջողություններ և դժվարություններ են ունեցել այդ ընթացքում, հայտնում են իրենց մտքերը, անհրաժեշտության դեպքում ստանում խորհուրդ:</p>	<p>Իրավիճակի գնահատման և առաջացած խնդիրները վեր հանելու կարողություն, ֆինանսական գաղտնիություն:</p>
<p>Ժամկետի ավարտին</p>	<p>Ուսուցիչը հանձնարարում է վերջնական տեսքի</p>	<p>Խմբերը կատարում են վերջնական</p>	<p>Տվյալների կազմման, գրանցման,</p>

	բերել կատարված աշխատանքները և պատրաստվել ներկայացման: Ներկայացման ձևը կարող են ընտրել սովորողները:	վերլուծություն, արդյունքների ներկայացման ձևի ընտրություն, անհրաժեշտ պարագաների նախապատրաստում:	մտքերի ձևակերպման և ներկայացման կարողություն՝ խմբում:
Հաշվետու դաս – 2 դասաժամ	Ուսուցիչը կարող է դասին հրավիրել տնօրինությանը, այլ ուսուցիչների, սովորողների, ինչպես նաև ըստ ցանկության կարող են ներկա լինել որոշ ծնողներ: Ուսուցիչը սովորողներին ապահովում է անհրաժեշտ նյութերով և դպրոցում առկա տեխնիկայով:	Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, կատարում եզրակացություններ և պատասխանում հարցերին, յուրաքանչյուր խմբին տրամադրվում է 15 րոպե:	Հստակ և համոզիչ խոսելու, եզրակացություններ կատարելու և ներկայացնելու կարողություն:
Ամփոփում և գնահատում	Ուսուցիչն ամփոփում է արդյունքները, տալիս գնահատական, ներկաները հայտնում են կարծիքներ:	30 րոպե ամփոփում. կարծիքներ և առաջարկություններ:	

427 (9-11-րդ, բյուջե, պարտքեր, հարկեր) Դերային խաղ.

«Ընտանեկան բյուջե» - 2 դասաժամ

Նպատակը. Օգտագործելով ուսուցման ակտիվ մեթոդները՝ ամրապնդել «Ընտանեկան բյուջե» թեմայի հետ կապված գիտելիքները և կարողությունները, կատարելագործել խմբով աշխատելու հմտությունները:

Գլխավոր հարց, հիմնական հասկացություններ. ինչպե՞ս պլանավորել ընտանեկան բյուջեն: Ընտանեկան բյուջե, եկամուտներ, ծախսեր, խնայողություն, պարտք:

Իրավիճակներ. խմբում պարտականությունների բաշխում, միասնական գործողությունների համակարգում, ժամանակի պլանավորում, միասնական որոշումների ընդունում, նմանատիպ իրավիճակներում որոշումների համեմատում, անձնական և մյուս մասնակիցների կայացրած որոշումների գնահատում:

Կոմպերենցիաներ. կազմել ընտանեկան բյուջե, գնահատել այն իրավիճակները, որոնցում կարող է հայտնվել ընտանիքը, ընդունել որոշում, աշխատել խմբում, գնահատել անձնական և մյուսների կայացրած որոշումները:

Խաղի ընթացքը. խաղին մասնակցում են 4 կամ 6 խումբ՝ 4-5 սովորողներով, յուրաքանչյուր խումբ մեկ ընտանիք է ներկայացնում: Բացի այդ, պետք է լինի ստուգողների խումբ, ովքեր ստուգելու են բյուջեի գրառումները, հաշվարկները, հարկերի վճարումները: Ստուգող խմբին տրվում է հուշող թերթիկ:

Յուրաքանչյուր խումբ ընտրում է քարտ, որտեղ ներկայացված են ընտանիքը և ունեցվածքը: Բացի այդ, խմբերը ստանում են նաև տեղեկատվական թերթիկներ, որտեղ նշված են ծախսերի չափը և ապրանքների ու ծառայությունների գները: Տրված տեղեկատվության հիման վրա խմբերը ձևավորում են իրենց բյուջեն՝ ինքնուրույն որոշելով ծախսերը: Ընթացիկ ծախսերը չպետք է լինեն ավելի քիչ, քան միջին սպառողական զամբյուղի գինը: Ընտանիքը կարող է գնել ապրանքներ, ծառայություններ և կատարել խնայողություն:

Խաղի ընթացքում խմբերը ստանում են իրադարձությունների մասին հաղորդագրություն, որից ելնելով պետք է կայացնել որոշումներ և ընտանեկան բյուջեում կատարել փոփոխություններ: Իրադարձությունները տրվում են ցուցակով: Իրադարձության հերթական համարը որոշում է խմբի ավագը՝ նետելով խաղոսկրեր, հաշվելով ընդհանուր գումարը: Գնահատման թերթիկում նշվում են այն կետերը, որոնք պետք է գնահատվեն: Խմբերը կատարում են ինքնագնահատում, ինչպես նաև մյուս խմբերի գնահատում: Խաղը գնահատվում է ըստ հետևյալ պահանջների.

ա) Ֆինանսական գիտելիքներ և դրանց ճիշտ օգտագործումը ընտանիքում ստեղծված իրավիճակներում:

բ) Տրված տեղեկատվության վերլուծություն և ներկայացում աղյուսակի, գրաֆիկի, դիագրամի տեսքով:

գ) Համեմատում, ընդհանրացում, որակավորում, պատճառահետևանքային կապերի ստեղծում:

դ) Կայացրած որոշումների դրական և բացասական հետևանքների բացահայտում:

ե) Արդյունքների ներկայացում. թեմայի և բովանդակության համապատասխանություն, խելամիտ և հասկանալի պարզաբանում, բանավոր և գրավոր նյութերի որակ, հարցեր տալու և պատասխանելու հմտություններ:

Գնահատման թերթիկը լրացվում է խաղի ավարտից հետո:

Անհրաժեշտ նյութեր. ընտանիքի նկարագրով քարտեր, բյուջեի բլանկ, տեղեկատվական թերթիկ, հուշող թերթիկ, իրադարձությունների ցանկ, գնահատման թերթիկ, խաղոսկրեր, ժամացույց, թղթեր հաշվարկների համար, հաշվիչ, գունավոր մատիտ կամ մարկեր՝ յուրաքանչյուր խմբին 3 տարբեր գույների:

Խաղը անցկացնելու ընթացքը.

Խաղի ներկայացում (3 րոպե):

Խմբերի ձևավորում (5 րոպե):

Քարտերի բաժանում:

Տրված քարտերի և տեղեկատվական թերթիկների հիման վրա ընտանեկան տարեկան բյուջեի հաշվում և գրանցում: Գրանցելիս տեղ թողնել սխալն ուղղելու համար (20 րոպե):

Իրադարձության ընտրություն յուրաքանչյուր ընտանիքի համար: Խմբի ավագները նետում են խաղոսկրերը, որոշում հերթական համարը (1 րոպե):

Ստեղծված իրադրության հիման վրա բյուջեում կատարվում են առաջին փոփոխությունները: Նշումներն արվում են թերթիկի վրա՝ այլ գույնի մարկերով (10 րոպե):

Հաջորդ իրադարձության որոշում յուրաքանչյուր խմբի համար (1 րոպե):

Կատարվում է բյուջեի համապատասխան փոփոխությունը և երկրորդ նշումը թերթիկի վրա (10 րոպե):

Հաջորդ իրադարձության որոշում յուրաքանչյուր խմբի համար (1 րոպե):

Կատարվում է բյուջեի համապատասխան փոփոխությունը և երրորդ նշումը թերթիկի վրա (10 րոպե):

Քննարկում. յուրաքանչյուր խմբի որոշումների ներկայացում, հարցեր, նկատառումներ (20 րոպե):

Արդյունքների ամփոփում, գնահատում և ինքնագնահատում, հաղթողի որոշում (10 րոպե):

Ավագյանների ընտանիք		
Ընտանիքի անդամներ	Եկամուտ	Ունեցվածք
պապիկ (նախկին գինվորական)	կենսաթոշակ՝ 180 000 դրամ	4 սենյականոց բնակարան ավտոմեքենա ամառանոց ավանդ բանկում՝ 5 000 000 դրամ
տատիկ	կենսաթոշակ՝ 45 000 դրամ	
հայրիկ (ավագ ինժեներ)	աշխատավարձ՝ 1 500 000 դրամ	
մայրիկ (բանկային աշխատակից)	աշխատավարձ՝ 450 000 դրամ	
որդի՝ 12-րդ դասարանի աշակերտ		
դուստր՝ 6-րդ դասարանի աշակերտուհի		
դուստր՝ 2-րդ դասարանի աշակերտուհի		

Արամյանների ընտանիք		
Ընտանիքի անդամներ	Եկամուտ	Ունեցվածք
Տատիկ (վաստակավոր ուսուցչուհի)	կենսաթոշակ՝ 120 000 դրամ	3 սենյականոց բնակարան ավտոմեքենա ավանդ բանկում՝ 8 000 000 դրամ
Հայրիկ (շինարար)	աշխատավարձ՝ 750 000 դրամ	
Մայրիկ (բժիշկ)	աշխատավարձ՝ 580 000 դրամ	
որդի՝ համալսարանի ուսանող	կրթաթոշակ՝ 15 000 դրամ	
որդի 12-րդ դասարանի աշակերտ		

	Փևերայանների ընտանիք	
Ընտանիքի անդամներ	Եկամուտ	Ունեցվածք
Հայրիկ (գործարար-գյուղատնտես)	Եկամուտ՝ 500 000 – 1 200 000 դրամ	3 սենյականոց տուն
Մայրիկ (ադմինիստրատիվ աշխատանք)	աշխատավարձ՝ 140 000 դրամ	ավտոմեքենա
դուստր՝ 12-րդ դասարանի աշակերտ		այգի ավանդ բանկում՝ 2 000 000 դրամ

Իրադարձությունների ցանկ

N	Իրադարձություն
1	Ձեր ընտանիքը գնում է արտերկիր՝ զբոսաշրջության
2	Դուք ստացել եք ժառանգություն՝ 1 սենյականոց բնակարան
3	Ոչ Ձեր մեղքով տեղի ունեցած վթարի հետևանքով վնասվել է Ձեր ավտոմեքենան
4	Ձեր մեղքով տեղի ունեցած վթարի հետևանքով վնասվել է Ձեր ավտոմեքենան
5	Ձեր ընտանիքում ծնվել է երեխա
6	Ձեր երեխան ընդունելության քննություններին հավաքել է բավարար միավորներ՝ անվճար սովորելու համար
7	Ձեր երեխան ընդունելության քննություններին չի հավաքել բավարար միավորներ՝ անվճար սովորելու համար
8	Ձեր վերևի հարկի հարևանի լվացքի մեքենայի սխալ օգտագործման հետևանքով ջուր է լցվել, և վնասվել է ձեր բնակարանի առաստաղը
9	Լվացքի մեքենայի սխալ օգտագործման հետևանքով ջուր է լցվել, և վնասվել է ձեր ներքևի հարևանի բնակարանի առաստաղը
10	Հայրիկը ստացել է պարգևավճար՝ աշխատավարձի չափով
11	Մայրիկը մասնակցել է «Ինչպես դառնալ միլիոնատեր» խաղին և ստացել 300 000 դրամ մրցանակ:

Տեղեկատվական թերթիկ

N	Գներ, հարկեր, թոշակներ
1	Մեկ անձի համար նախատեսված սպառողական զամբյուղի միջին արժեքը՝ 76 300 դրամ՝ ամսական
2	Կոմունալ ծառայությունների վճար, ներառյալ՝ հեռախոսի, էլեկտրաէներգիայի, գազի, խմելու ջրի, ինտերնետի վճարները՝ 50 000 – 100 000 դրամ՝ ամսական
3	1 սենյականոց բնակարանի գինը՝ 18 000 000 դրամ
4	2 սենյականոց բնակարանի գինը՝ 22 000 000 դրամ
5	3 սենյականոց բնակարանի գինը՝ 30 000 000 դրամ
6	4 սենյականոց բնակարանի գինը՝ 40 000 000 դրամ
7	Ամառանոցի/այգու գինը՝ 10 000 000 դրամ
8	Անշարժ գույքի համար վճարվող գույքահարկ՝ 5000 դրամ + 10 000 000 դրամը գերազանցող մասի 0.1%-ը՝ տարեկան
9	Ավտոմեքենայի համար վճարվող գույքահարկ՝ 60 000 դրամ՝ տարեկան
10	Եկամտահարկ՝ 21%
11	1 սենյականոց բնակարանի վարձակալության գինը՝ 120 000 դրամ՝ ամսական
12	ԿԱՍԿՈ ապահովագրության արժեքը՝ 55 000 դրամ՝ տարեկան
13	ԱՊՊԱ-ի արժեքը՝ 47 000 դրամ՝ տարեկան
14	Տուրիստական ուղեգրի արժեքը մեկ անձի համար՝ 300 000 դրամ
15	Համալսարանում վճարովի համակարգով սովորելու ուսման վարձը՝ 700 000 դրամ՝ տարեկան
16	Ծննդյան միանվագ նպաստ՝ 300 000 դրամ
17	Երեխայի խնամքի նպաստ՝ 126 624 դրամ՝ 6 ամսվա համար
18	Ավանդի տոկոսադրույքը բանկում՝ 9%՝ տարեկան
19	Վարկավորման տոկոսադրույքը բանկում՝ 16%՝ տարեկան

Տարեկան բյուջե

Ընտանիքի տարեկան բյուջեն ----- դրամ	
Եկամուտներ	Ծախսեր
Խնայողություն կամ պարտքեր	

Փնահատման թերթիկ

Յուրաքանչյուր կետի համար առավելագույն միավորը՝ 5

Փնահատվող պահանջներ	Խումբ 1	Խումբ 2	Խումբ 3	Խումբ 4	Խումբ 5
Ֆինանսական տերմինները հասկանալի և ճիշտ են օգտագործված					
Աղյուսակը լրացված է ճիշտ և խնամքով					
Բյուջեի փոփոխությունները համապատասխանում են իրադարձություններին					

Որոշումները կայացված են ճիշտ					
Խմբի ներկայացումը հստակ է, հարցերը ձևակերպված են գրագետ և տեղին, պատասխանները լիարժեք են					
Ընդամենը					

428 (5-11-րդ, պարտք) Խնդիր-քննարկում.

Երեք հավատարիմ ընկերներ տարվա ընթացքում պարտք վերցնում կամ տալիս էին միայն միմյանց: Նրանցից յուրաքանչյուրն իր մոտ ամեն անգամ բարեխղճորեն գրանցում էր պարտք վերցնելը և պարտք տալը, սակայն նշում էր միայն գումարի չափը, իսկ տվողի կամ վերցնողի անունը չէր նշում: Բացատրեք, թե ընկերներն ինչպես կարողացան տարեվերջին ճշտորեն փակել իրենց պարտքերը:

429 (5-11 -րդ, պարտք) Խնդիր-քննարկում.

Չորս հավատարիմ ընկերներ տարվա ընթացքում պարտք վերցնում կամ տալիս էին միայն միմյանց: Պայմանավորվել էին, որ յուրաքանչյուրն իր մոտ բարեխղճորեն գրանցի պարտքի վերցնելը և պարտքի տալը, ընդ որում, բավարար է նշել միայն գումարի չափը, իսկ պարտք տվողի կամ վերցնողի անունը նշելը կարևոր չէ: Տարեվերջին, երբ ուզում էին փակել պարտքերը, պարզվեց, որ ընկերներից երեքը պայմանավորվածությունը պահել են, սակայն չորրորդ ընկերը գրանցել է միայն իր վերցրած պարտքերը, իսկ իր տված պարտքերը չի գրանցել: Կարողանա՞ն չորս ընկերները ճշտորեն փակել իրենց պարտքերը:

430 (9-11-րդ, ծախսեր) Հեղազոտրական աշխատանք.

Գյուղատնտեսական ֆերմայում աշխատանքները կազմակերպելու համար տեղադրված է 3 կաթսա՝ 1000 լ տարողությամբ, որոնք օրական 2 անգամ տաքացվում են:

Հաշվել յուրաքանչյուր օրվա ջրի ծախսի արժեքը, եթե ջրի սակագինը $1մ^3$ - ի դիմաց 180 դր. է՝ մինչև տաքացնելը:

Պարզել՝ $1մ^3$ ջուրը եռման ջերմաստիճանի հասցնելու համար.

ա) քանի՞ $մ^3$ գազ է անհրաժեշտ, և որքա՞ն գումար է դա կազմում,

բ) քանի՞ կՎտ հոսանք է անհրաժեշտ, և որքա՞ն գումար է դա կազմում:

Ուսումնասիրությունն իրականացնելուց հետո պարզել, թե ո՞ր տարբերակն է ֆինանսական առումով ձեռնտու: Զուրը տաքացնելու համար կա՞ արդյոք այլընտրանք:

Իրավիճակների վերլուծության օրինակներ

- 431 (9-11-րդ, իրավունքներ)** Հաճախորդը դիմել է Հաշտարարի գրասենյակ և նշում է, որ լվացքի մեքենա գնելու համար բանկից 200 000 ՀՀ դրամի չափով վարկ է ստացել: Մի ամիս հետո հաճախորդը տեղափոխվել է նոր աշխատանքի՝ ավելի բարձր եկամտով: Որոշ ժամանակ անց դիմել է բանկ՝ վարկը ժամկետից շուտ ամբողջությամբ մարելու համար, բայց բանկը պահանջել է տուգանք՝ վարկի 5%-ի չափով: Հաճախորդը կարծում է, որ բանկը խախտում է իր իրավունքը և խնդրում է Հաշտարարի օժանդակությունը: Արդյո՞ք Հաշտարարի գրասենյակը կարող է օգնել հաճախորդին:
- 432 (9-11-րդ, իրավունքներ)** Սուսաննա տատիկը դիմել է Հաշտարարի գրասենյակ՝ նշելով, որ Սովետական Միության փլուզումից առաջ Խնայբանկում ներդրել է ավանդ, սակայն մինչ օրս չի կարողանում հետ ստանալ: Խնդրում է Հաշտարարի օժանդակությունը: Արդյո՞ք Հաշտարարի գրասենյակը կարող է օգնել հաճախորդին:
- 433 (9-11-րդ, իրավունքներ)** Աննան պարտքով գումար է վերցրել իր բարեկամուհուց և հրաժարվում է վերադարձնել: Բարեկամուհին դիմում է Հաշտարարի գրասենյակ: Արդյո՞ք Հաշտարարի գրասենյակը կարող է օգնել հաճախորդին:
- 434 (9-11-րդ, իրավունքներ)** Արմենը վարկ է վերցրել բանկից և չի կարողանում մարել: Նա որոշում է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ՝ խնդրելով միջնորդել վարկային բեռը թեթևացնելու հարցում: Արդյո՞ք Հաշտարարի գրասենյակը կարող է օգնել հաճախորդին:

2.2. Ֆինանսական կոմպերենցիաների ստուգման հարցեր

1. Ավանդը.

- 1) Խնայողությունները ցածր ռիսկայնությամբ տեղաբաշխելու հնարավորություն է:
- 2) Խնայողությունները բարձր ռիսկայնությամբ տեղաբաշխելու հնարավորություն է:
- 3) Բարձր ռիսկայնությամբ ներդրումային հնարավորություն է:
- 4) Նշվածներից ոչ մեկը:

2. Ավանդային հաշիվը բացվում է.

- 1) Բանկում:
- 2) Դպրոցում:
- 3) Աշխատավայրում:
- 4) Փոստային բաժանմունքում:

3. Ավանդի դեպքում տոկոսագումարը.

- 1) Վերաբերում է ավանդի երաշխավորման չափին:
- 2) Բանկից տրամադրվող նվեր է:
- 3) Գումար է, որը բանկը վճարում է Ձեզ՝ փոխառած գումարի դիմաց:
- 4) Բանկի կողմից գանձվող ամսական վճար է:

4. Ո՞րն է ավելի իրացվելի ակտիվ.

- 1) Մեքենան:
- 2) Ավանդային հաշիվը:
- 3) Տունը:
- 4) Նավակը:

5. Տոկոսագումարը.

- 1) Լրացուցիչ գումար է, որ Դուք վճարում եք վարկի դիմաց:
- 2) Լրացուցիչ գումար է, որ Դուք վաստակում եք ավանդային հաշվի դիմաց:
- 3) Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի հիմքում է:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

6. Իրացվելի են այն միջոցները, որոնք.

- 1) Տոկոս չեն վաստակում:
- 2) Արագ հասանելի են շատ ցածր տուգանքով կամ առանց դրա:
- 3) Ապահովագրված չեն Ձեր ֆինանսական հաստատության կողմից:
- 4) Համարվում են ռիսկային ներդրում

7. «72-ի կանոնն»* օգնում է Ձեզ որոշել.

- 1) Որքա՞ն է պետք խնայել հիմա, որպեսզի որպես ավանդ ներդրված գումարը կրկնապատկվի մեկ տարի անց:
- 2) Ի՞նչ արագությամբ է կրկնապատկվելու որպես ավանդ ներդրված գումարը:
- 3) Որքա՞ն է կազմում պարզ և բարդ տոկոսով եկամուտ վաստակելու տարբերությունը:
- 4) Որքա՞ն գումար է հարկավոր կուտակել վաստակած տոկոսագումարները կրկնապատկելու համար:

* Ֆինանսներում կիրառվող «72-ի կանոնի» մասին իմանալու համար փնտրեք համացանցում:

8. Այսպես կոչված՝ «վատ պարտքի» օրինակ է.

- 1) Շուկայի ուսումնասիրության արդյունքում նոր ձայնային համակարգ ընտրելն ու դա անմիջապես տեղում գնելը:
- 2) Արձակուրդի համար վարկային քարտով վճարելը, երբ Դուք այն ի վիճակի եք լինելու մարել միայն հինգ տարվա ընթացքում:
- 3) Նոր բնակարանի համար հիպոտեկային վարկ վերցնելը:
- 4) Դասազրքեր ընտրելն ու դրանց համար ամսվա վերջին վճարելը:

9. 10%-ով կրճատելով ամսական 20 000 դրամանոց բյուջեն, որ նախատեսել եք ընդմիջման համար, Դուք մեկ տարում խնայած կլինեք 24 000 դրամ.

- 1) Ճիշտ է:
- 2) Սխալ է:

10. Բյուջե կազմելը լավ միջոց է մշտական ծախսերը պլանավորելու համար.

- 1) Ճիշտ է:
- 2) Սխալ է:

11. Բյուջեն ներառում է.

- 1) Ամսական եկամուտները:
- 2) Հաստատուն ծախսերը:
- 3) Փոփոխուն ծախսերը:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

12. Բյուջեն.

- 1) Համեմատում է Ձեր ամսական եկամուտները և ծախսերը:
- 2) Յուրյց է տալիս միայն ընթացիկ հաշվի մնացորդը:
- 3) Մի բան է, որ Ձեզ է տրամադրում բանկը:
- 4) Վերաբերում է միայն բիզնեսին և կառավարությանը:

13. Ծախս է համարվում.

- 1) Այն ամենը, ինչի համար գումար եք վճարում:
- 2) Ձեր բյուջեի մի մասը:
- 3) Պիցցա գնելը:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

14. Բյուջե ձևավորելը օգնում է Ձեզ.

- 1) Գումար խնայել ապագայի համար:
- 2) Վճարել հաշիվներն ամբողջությամբ և ժամանակին:
- 3) Վերահսկել ծախսերը:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

15. 500 000 դրամ կազմող վարկի գումարում այդ 500 000 դրամը կոչվում է.

- 1) Հիմնական/մայր գումար:
- 2) Տոկոսագումար:
- 3) Բյուջեով նախատեսված գումար:
- 4) Նշվածներից ոչ մեկը:

16. Ձեր անձնական ֆինանսները կառավարելու համար ձեռնարկվող առաջին քայլերից մեկը հետևյալն է.

- 1) Ստեղծել ամսական բյուջե:
- 2) Բացել քարտային հաշիվ, որն առաջարկում է բոնուսային միավորներ:
- 3) Սա անհատական որոշում է, ամեն մարդ ինքն է որոշում՝ որտեղից սկսել
- 4) Գնել նոր հագուստ, եթե դա վաճառվում է զեղչով:

17. Ձեր բանկային հաշվի ամսական քաղվածքներին հետևելը օգնում է Ձեզ.
- 1) Կառավարել Ձեր ներդրումները:
 - 2) Տեղեկանալ Ձեր կատարած ներդրումների մասին:
 - 3) Կատարել ծախսեր Ձեր պլանավորած բյուջեի սահմանում:
 - 4) Կատարել միջոցների փոխանցում:
18. Մարդիկ կենսաթոշակային տարիքի հասնելիս երբեմն մնում են առանց փողի, քանի որ.
- 1) Առողջապահական ծախսերը տարեցտարի ավելանում են:
 - 2) Չեն կառավարում իրենց ընտանեկան բյուջեն:
 - 3) Թերագնահատում են գնաճի ազդեցությունը:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
19. «Կարիքներ» և «ցանկություններ» հակադրությունը գնահատելն արդյունավետ միջոց է.
- 1) Ավելորդ ծախսերը վերահսկելու համար:
 - 2) Սեփական բյուջեն կառավարելու համար:
 - 3) Գումար խնայելու համար:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
20. Վարկային գծի մարման ուշացումը.
- 1) Կարող է Ձեր բյուջեն դուրս բերել հավասարակշռությունից:
 - 2) Գրանցվում է, երբ մարումը կատարվում է սահմանված ամսաթվից հետո:
 - 3) Կարող է ազդել Ձեր վարկունակության վրա:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
21. Անձնական ֆինանսների արդյունավետ կառավարման օրինակ է.
- 1) Անսպասելի իրադարձությունների համար գումար խնայելը:
 - 2) Ունեցած հնարավորություններից ավելի ծախսեր կատարելը:
 - 3) Աշխատավարձի փոփոխության դեպքում սեփական բյուջեն վերանայելը:
 - 4) 1-ին և 3-րդ կետերը:

22. Փոքր բյուջե ունեցող անձի համար ավտոմեքենայի ո՞ր հատկանիշն է համարվում առավել նշանակալի.
- 1) Աուդիո համակարգը:
 - 2) Օդորակիչը:
 - 3) Գույնը:
 - 4) Վառելիքի ծախսը:
23. Գնանկում տեղի է ունենում, երբ նվազում է.
- 1) Գների ընդհանուր մակարդակը տնտեսությունում:
 - 2) Փողի գնողունակությունը:
 - 3) Տվյալ երկրի բանկերում գտնվող ակտիվների ծավալը:
 - 4) Մատչելի բաժնետոմսերի ընդհանուր թիվը:
24. Դիվերսիֆիկացիայի դեպքում.
- 1) Ձեր գումարը տեղաբաշխում եք մի քանի ներդրումներում:
 - 2) Օգտվում եք ավելի քան մեկ բանկից կամ միջնորդից:
 - 3) Ձեռք եք բերում աշխարհի 100 խոշորագույն կազմակերպությունների արժեթղթեր:
 - 4) Անշարժ գույք եք ձեռք բերում տարբեր երկրներում:
25. Հանրության ո՞ր խմբի վրա ավելի մեծ ազդեցություն կթողնի բարձր գնաճը.
- 1) Երիտասարդ աշխատող զույգերի, ովքեր չունեն երեխաներ:
 - 2) Երիտասարդ աշխատող զույգերի, ովքեր ունեն երեխաներ:
 - 3) Տարեց աշխատող զույգերի, ովքեր խնայում են թոշակի համար:
 - 4) Տարեց զույգերի, ովքեր ապրում են հաստատուն եկամտով:
26. Ընթացիկ հաշիվների համար գործող տոկոսադրույքը միշտ գերազանցում է գնաճը.
- 1) Ճիշտ է:
 - 2) Սխալ է:
27. Գնաճի մակարդակը ցույց է տալիս, թե որքանով են ապրանքների ու ծառայությունների գները բարձրանում ժամանակի ընթացքում.
- 1) Ճիշտ է:
 - 2) Սխալ է:

28. Եթե խանութներից մեկը բարձրացնում է տեսախաղի գները, իսկ մյուսը՝ իջեցնում, դա գնաճի օրինակ է.

- 1) Ճիշտ է:
- 2) Սխալ է:

29. Արտարժույթի շուկա գոյություն ունի այնտեղ.

- 1) Որտեղ օտարերկրացիներին թույլատրվում է իրականացնել առևտուր:
- 2) Որտեղ մեկ արժույթը փոխանակվում է մեկ այլ արժույթով:
- 3) Որտեղ օտարերկրյա կազմակերպությունների բաժնետոմսերը մատչելի են առքուվաճառքի համար:
- 4) Որտեղ ընդունվում է տեղական արժույթը:

30. Եթե կարծում եք, որ ապագայում լինելու են չնախատեսված բժշկական ծախսեր, ապա կատարյալ տարբերակ է.

- 1) Վարկային քարտ ունենալը:
- 2) Ձեր բանկում վարկային քարտ բացելը:
- 3) Ընկերոջից գումար վերցնելը:
- 4) Բավարար չափով խնայողություններ ունենալը:

31. Ստորև նշվածներից ո՞րն է քարտային վարկային գծից օգտվելու թերությունը.

- 1) Դուք ավելի շատ տոկոս եք վաստակում Ձեր բանկային կցված հաշիվներում:
- 2) Դուք, հնարավոր է՝ ավելի շատ իմպուլսիվ (չպլանավորված, հանկարծակի) գնումներ կատարեք:
- 3) Պահպանվում է կատարած բոլոր գործարքների հաշվառումը:
- 4) Խոշոր գնումների ֆինանսական ազդեցությունները ժամանակի ընթացքում թուլանում են:

32. Վարկային պատմության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ժամկետանց վարկը մարելը Ձեր վարկային պատմությունից դուրս է բերում այդ ժամկետանցության հանգամանքը փաստող տեղեկությունը:
- 2) Բանկային հին հաշիվները փակելը միշտ բարելավում է Ձեր վարկունակության ցուցանիշը:
- 3) Վարկային քարտի գծով պարտավորությունները ժամանակին կատարելով կարող եք նպաստել Ձեր վարկային պատմության բարելավմանը:
- 4) Մնանկության գործը Ձեր վարկային տվյալներում մնում է ընդմիշտ:

33. Ի՞նչ տարբերություն կա Ձեր սիրած խանութի առաջարկած նվեր քարտի և նույն խանութից ապառիկ գնումներ կատարելու միջև.
- 1) Դրանք նույն բանն են:
 - 2) Ապառիկի քարտը կցված է Ձեր բանկային հաշվին:
 - 3) Նվեր քարտում առկա է նախապես վճարված գումար:
 - 4) Ապառիկը տրվում է նախապես վճարված միջոցներով:
34. Ի՞նչ հետևանք կարող է ունենալ Ձեր անունից խարդախ անձանց հանդես գալու հավանականությունը.
- 1) Առկա վարկային միջոցների ծավալի կրճատում:
 - 2) Ձեր հաշիվներից Ձեր կողմից չկատարված վճարումներ:
 - 3) Ձեր վարկային գնահատականի բարձրացում:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
35. Միջազգային պրակտիկայում ճանապարհորդական ապահովագրությունը նշվածներից ո՞րը կարող է փոխհատուցել.
- 1) Ուղևորության չեղարկումը:
 - 2) Բժշկական արտակարգ իրավիճակները:
 - 3) Ուղեբեռը կորցնելու դեպքը:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
36. Բնակարանի դեպքում նշվածներից ո՞րն է ճշմարիտ գույքի ապահովագրության վերաբերյալ.
- 1) Հատուցում է տրամադրում հրդեհների, վթարների, ավազակության և ըստ պայմանագրի այլ դեպքերի համար:
 - 2) Մշտապես ներառված է հիպոտեկի արժեքում:
 - 3) Հատուցում է տրամադրում միայն գողության, այլ ոչ թե հրդեհի դեպքերի համար:
 - 4) Դուք Ձեր ապահովագրական ծածկույթը պարբերաբար վերստուգելու կարիք չունեք:
37. Ձեր ծախսերի շարժերը հետևելու և վերահսկելու համար լավ կլինի, որ Դուք.
- 1) Մտապահեք Ձեր բոլոր գնումները:
 - 2) Զննեք և ստուգեք վճարային քարտի քաղվածքները յուրաքանչյուր ամիս:
 - 3) Փորձեք ծախսերը կրճատել նախորդ ամսվա համեմատությամբ:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

38. Վարկային գծից դրամական միջոցներ կանխիկացնելու տոկոսադրույքները հաճախ ավելի բարձր են լինում, քան անմիջապես քարտով գնումների համար սահմանված տոկոսադրույքները.

- 1) Ճիշտ է:
- 2) Սխալ է:

39. Վարկային քարտի արտոնյալ ժամանակաշրջանը.

- 1) Կիրառվում է գումարային կանխավճարների, ինչպես նաև գնումների դեպքում:
- 2) Ձեր վճարման համար սահմանված ժամկետն է:
- 3) Նաև անվանում են «լողացող»:
- 4) Դրա ընթացքում Ձեզնից տոկոս չի գանձվում:

40. Երբ գնումներ եք կատարում դեբետային քարտով՝

- 1) Դուք վճարում եք նախապես:
- 2) Դուք վճարում եք հետո:
- 3) Դուք վճարում եք նույն պահին:
- 4) Վերը նշվածներից ոչ մեկը:

41. Երբ գնումներ եք կատարում վարկային քարտով՝

- 1) Վճարում եք նախապես:
- 2) Վճարում եք հետո:
- 3) Վճարում եք նույն պահին:
- 4) Վերը նշվածներից ոչ մեկը:

42. Ֆինանսական խարդախության զոհ կարող է դառնալ՝

- 1) Վարկային քարտապանը:
- 2) Թոշակառուն:
- 3) Առցանց գնումներ կատարողը:
- 4) Ֆինանսական ծառայությունից օգտվող յուրաքանչյուր անձ:

43. Որպեսզի Ձեր առցանց գնումները առավել անվտանգ լինեն.

- 1) Փնտրեք «https://» ինտերնետային սկզբնագիրը վեբ կայքերում:
- 2) Օգտագործեք «Secure Socket Layer» անվտանգության ստանդարտ տեխնոլոգիան:
- 3) Վստահ եղեք, որ լավ գիտեք տվյալ կայքը և հաճախ եք մուտք գործում այդտեղ:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

44. Ու՞մ իրավունքներն է պաշտպանում վարձակալության պայմանագիրը.
- 1) Վարձակալի:
 - 2) Վարձատուի:
 - 3) Ե՛վ՛ վարձակալի, և՛ վարձատուի:
 - 4) Ո՛չ վարձակալի, ո՛չ վարձատուի:
45. Միջազգային պրակտիկայում վարկային քարտ թողարկողների մեծ մասը -----
-----պատասխանատվություն է կրում Ձեր քարտով կատարված
խարդախությունների համար.
- 1) Հետաձգված:
 - 2) Զրոյական:
 - 3) Մասնակի:
 - 4) Կիսով չափ:
46. Դուք արձակուրդի ընթացքում պատասխանատվություն չէք կրում Ձեր
վարկերի գծով ուշ վճարումների համար.
- 1) Ճիշտ է:
 - 2) Սխալ է:
47. Հաստատուն ծախսի օրինակ է.
- 1) Հագուստի գնումը:
 - 2) Ավտոմեքենայի ապահովագրությունը:
 - 3) Զվարճանքի համար կատարված ծախսեր:
 - 4) Սննդամթերքի ամսական ծախսը:
48. Փոփոխուն ծախսի օրինակ է.
- 1) Ավտոմեքենայի վարձակալման վճարը:
 - 2) Նվերների գնումը:
 - 3) Հիպոտեկային վարկը (ամսական հաստատուն վճարումներով):
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
49. Երկարաժամկետ պարտքը մարելու օրինակ է, երբ վճարում եք Ձեր.
- 1) Վարձակալական վճարը:
 - 2) Ավտոմեքենայի վարկը:
 - 3) Կոմունալ վարձավճարները:
 - 4) Վճարային քարտի սպասարկման գումարը:

50. Ենթադրելով, որ այս մարդիկ ստանում են նույն աշխատավարձը, նրանցից ու՞մ է ավելի շատ անհրաժեշտ կյանքի ապահովագրություն.
- 1) Երիտասարդ ամուսնացած տղամարդուն, ով չունի երեխաներ:
 - 2) Միայնակ մորը, ով ունի երկու անչափահաս երեխա:
 - 3) Միայնակ կնոջը, ով չունի երեխաներ:
 - 4) Տարեց թոշակառու ամուսիններից մեկին:
51. Պատահարների հետևանքով Ձեր մեքենային պատճառված վնասի դիմաց վճարման ենթակա գումարը կոչվում է.
- 1) Գույքի ապահովագրություն:
 - 2) Ապահովագրավճար:
 - 3) Ապահովագրական հատուցում:
 - 4) Պատասխանատվության ապահովագրություն:
52. Առողջության ապահովագրավճարը գումար է, որը.
- 1) Վճարվում է ապահովագրություն տրամադրողին՝ հետագայում փոխհատուցում ստանալու դիմաց:
 - 2) Դուք ամեն անգամ վճարում եք բժշկին այցելելիս:
 - 3) Դուք պետք է վճարեք նախքան Ձեր ապահովագրական ծածկույթի օգտագործումը:
 - 4) Դուք ստանում եք, երբ տեղի է ունենում ապահովագրական դեպքը:
53. Հետևյալ բնորոշումները ո՞ր հարկատեսակին են վերաբերում՝ «այս հարկատեսակով հարկվում է ՀՀ ռեզիդենտների եկամուտը», «ՀՀ պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է».
- 1) Ավելացված արժեքի հարկ:
 - 2) Եկամտային հարկ:
 - 3) Շահութահարկ:
 - 4) Կենսաթոշակային վճար:
54. Վարկային քարտը Ձեզ հնարավորություն է տալիս.
- 1) Կանխիկացնելու գումար՝ առանց սահմանափակումների:
 - 2) Կատարել վճարումներն առանց ժամանակային սահմանափակումների:
 - 3) Օգտագործել լրացուցիչ գումար վարկային սահմանաչափից:
 - 4) Ստանալ վարկ վատ վարկային պատմությամբ:

55. Վճարային քարտի տեսակ չէ.

- 1) Մնացորդային:
- 2) Դեբետային:
- 3) Հաշվարկային:
- 4) Կրեդիտային:

56. Ո՞ր վճարային քարտը Ձեզ հնարավորություն կարող է տալ օգտվելու օվերդրաֆտից.

- 1) Դեբետային:
- 2) Հաշվարկային:
- 3) Աճուրդային:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

57. Կենսաթոշակային տարիքի համար խնայելը կարևոր է, որովհետև.

- 1) Ապրելու համար Ձեզ գումար է պետք լինելու, երբ դադարեք աշխատել:
- 2) Դա լավ ներդրում է:
- 3) Դուք ի վիճակի չեք խնայել, երբ արդեն մեծ եք:
- 4) Նշվածներից ոչ մեկը:

58. Նշվածներից ո՞րն է բոլոր ուսանողների կողմից կատարվող ծախս.

- 1) Դասագրքերի գնումը:
- 2) Հիպոտեկային վարկի վճարը:
- 3) Բժշկական ապահովագրության վճարը:
- 4) Կենսաթոշակի խնայողությունը:

59. Դուք կարիք չունեք մտածելու կենսաթոշակային տարիքի համար խնայողություններ սկսելու մասին, քանի դեռ չի լրացել Ձեր 40 տարին.

- 1) Ճիշտ է:
- 2) Սխալ է:

60. Դուք պետք է հաշվի առնեք, թե քանի տարեկանում եք թոշակի անցնելու, երբ հաշվարկում եք կենսաթոշակային տարիքում օգտագործվելիք խնայողության գումարը.

- 1) Ճիշտ է:
- 2) Սխալ է:

61. Վարկային քարտի պայմանագիրը՝
- 1) Ձեր պարտքը միշտ վճարելու լուռ խոստումն է:
 - 2) Պարունակում է վարկային հաշվին վերաբերող բոլոր պայմաններն ու ժամկետները:
 - 3) Առևտրով զբաղվող մարդկանց չի ենթարկում պատասխանատվության՝ խարդախություն կատարելու դեպքում:
 - 4) Հայտնի է նաև որպես վարկային հայտ:
62. Էլեկտրոնային փոստով իրականացվող ֆինանսական խարդախության տարածված և վտանգավոր ձևերից մեկը կոչվում է.
- 1) Ֆիշինգ:
 - 2) Գրիֆտինգ:
 - 3) Դիշինգ:
 - 4) Սփամինգ:
63. Առցանց գնումներ կատարելիս Ձեր անունից կատարվող խարդախությունների հավանականությունը նվազեցնելու համար հարկավոր է.
- 1) Վճարային քարտի տվյալներն ուղարկել էլեկտրոնային փոստով:
 - 2) Վարորդական իրավունքն օգտագործել վաճառողի մոտ Ձեր ինքնությունը ստուգելու համար:
 - 3) Արձագանքել բոլոր այն նամակներին, որոնք Ձեր հաշվի մասին տեղեկություններ են պահանջում:
 - 4) Պատվերներ անել միայն անվտանգ կայքերից, որոնք կրում են «https://» սկզբնագիրը:
64. Խարդախությունների բրգաձև սխեմաներն այդպես են կոչվում, որովհետև դրանց մեծ մասը ծագել է Եգիպտոսում.
- 1) Ճիշտ է:
 - 2) Սխալ է:
65. Ձեր կրեդիտային (վարկային) և դեբետային քարտային հաշիվների առցանց հասանելիությունը.
- 1) Ձեզ հնարավորություն է տալիս դիտելու բոլոր հաշիվների շարժերը:
 - 2) Օգնում է Ձեզ սխալները կամ զեղծարարություններն անմիջապես հայտնաբերել:
 - 3) Ձեզ թույլ է տալիս պլանավորել վճարումներն ըստ ժամանակացույցի:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

66. Օվերդրաֆտը անհատական վարկային սահմանաչափ է, որը կցվում է.
- 1) Հեռախոսի համարին:
 - 2) Կանխավճարային քարտին:
 - 3) Ձեր բանկային հաշվին:
 - 4) Դրամական կանխավճարին:
67. Վարկունակությունը գնահատում է.
- 1) Վարկի մասին Ձեր տեղեկացվածության մակարդակը:
 - 2) Թե քանի դեբետային քարտ ունեք Դուք:
 - 3) Որքան ռիսկային եք Դուք վարկատուների համար:
 - 4) Ձեր բնավորությունը:
68. Ձեր վարկունակության մակարդակը բարձրացնելու համար.
- 1) Վճարեք պարտքերը:
 - 2) Ծախսեք ավելի քիչ, քան վաստակում եք:
 - 3) Վճարումներ կատարելիս թույլ մի տվեք ուշացումներ:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
69. Գրավը ցանկացած _____ է, որը կարող է օգտագործվել վարկի ապահովման համար.
- 1) Պարտավորություն:
 - 2) Եկամուտ:
 - 3) Համաերաշխավորող կողմ:
 - 4) Ակտիվ:
70. Ձեր վերահսկման տակ գտնվող այն ամենը, ինչն ունի արժեք, կոչվում է.
- 1) Բաժնետիրական կապիտալ:
 - 2) Շուկայական արժեք:
 - 3) Ակտիվ:
 - 4) Փոխարժեքային կայունություն:
71. Ըստ «72-ի կանոնի»՝ կպահանջվի ____ տարի, որպեսզի 8% տոկոսադրույքով ներդրված գումարը կրկնապատկվի.
- 1) 11:
 - 2) 10:
 - 3) 9:
 - 4) 5:

72. Կապիտալ է համարվում անձի.

- 1) Հարստությունը:
- 2) Պարտավորությունները:
- 3) Աշխատանքային փորձը:
- 4) Բանկոմատի քարտը:

73. Երկրի արժույթի գնողունակության փոփոխությունները չափվում են.

- 1) Գործազրկության մակարդակով:
- 2) Փողի զանգվածով:
- 3) Սպառողական գների ինդեքսով:
- 4) Տոկոսադրույքներով:

74. Վճարումներն առցանց կատարելու առավելությունն է.

- 1) Հարմարավետությունը:
- 2) Թղթադրամների տպագրության ծախսերի կրճատումը:
- 3) Վճարումները ժամանակին կատարելու հեշտությունը:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

75. Ավտոմեքենայի վարկը օրինակ է.

- 1) Հիպոտեկային վարկի:
- 2) Սպառողական վարկի:
- 3) Գյուղատնտեսական վարկի:
- 4) Մշտական վարկի:

76. Քարտապանի հետ կնքված համաձայնագիրը.

- 1) Ներկայացնում է Ձեր վճարային քարտի պայմաններն ու ժամկետները:
- 2) Ներառում է տեղեկատվություն Ձեր՝ մնացորդի վրա հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքի վերաբերյալ:
- 3) Մանրամասնում է կիրառվող վճարների մասին:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

77. Վարկատուն այն սուբյեկտն է.

- 1) Ում գումար են տալիս փոխառությամբ:
- 2) Ով գումար է տալիս փոխառությամբ:
- 3) Ով վարկի դիմաց տոկոս է վճարում:
- 4) Նշվածներից ոչ մեկը:

78. Հաստատուն ծախս է.

- 1) Վճարումների գրաֆիկից շեղված ծախսը:
- 2) Օրինակ՝ կոմունալ ծառայությունների դիմաց վճարը:
- 3) Վճարում, որը յուրաքանչյուր ամիս մնում է նույնը:
- 4) Ինչ-որ մի բան, որը պետք է ջնջվի Ձեր վարկային պատմությունից:

79. Խնայել սկսելու լավ տարբերակ է մի կողմ դնել որոշակի գումար.

- 1) Ձեր հավաքած մանրադրամի միջոցներից:
- 2) Հիմնական աշխատանքից զատ այլ աշխատանք կատարելով:
- 3) Ձեր ծննդյան օրվա առիթով բարեկամի նվիրած գումարից:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

80. Վճարումների ուշացումները _____ կունենան հետագայում վարկ ստանալու գործընթացի վրա.

- 1) Բացասական ազդեցություն:
- 2) Դրական ազդեցություն:
- 3) Ոչ մի ազդեցություն:
- 4) Խառը ազդեցություն:

81. Լողացող տոկոսադրույքով հիպոտեկային վարկերը.

- 1) Սովորաբար ավելի դժվար են ընտրվում, քան ֆիքսված տոկոսադրույքով հիպոտեկային վարկերը:
- 2) Ավելի դյուրին են երկարաժամկետ հատվածում բյուջեով նախատեսելու համար:
- 3) Ունեն նախնական տոկոսադրույք, որը փոխվում է ժամանակի ընթացքում:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

82. Վարկային քարտի վճարի օրինակ է.

- 1) Օգտագործման սահմանաչափն անցնելու համար գանձվող գումարը:
- 2) Վճարումներն ուշացնելու պատճառով գանձվող տուգանքը:
- 3) Տարեկան վճարը:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

83. Ծախսի օրինակ է.

- 1) Տոկոսադրույքը:
- 2) Խնայողական հաշիվը:
- 3) Կոմունալ վարձավճարները:
- 4) Պետական պարտատոմսը:

84. Վարկային քարտ թողարկողների առաջարկած անվանական տոկոսադրույքը.

- 1) Առնչվում է բոնուսային ծրագրին:
- 2) Տոկոսադրույք է, որը հաճախ տարբերվում է փաստացի տոկոսադրույքից:
- 3) Հասանելի տեղեկատվություն չէ դա ձեռքբերողների համար:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

85. Տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

- 1) Ներառում է վարկի սպասարկման վճարները:
- 2) Ներառում է վարկի տոկոսադրույքը:
- 3) Ֆինանսական ծախսում է:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

86. Ունենալով ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից կանխատեսվող բարձր վարկային սքոր՝

- 1) Դուք շատ գումար եք վաստակում:
- 2) Դուք, ընդհանուր առմամբ, հավակնում եք ավելի լավ պայմաններով վարկերի ստացմանը:
- 3) Դուք չեք մասնակցում ռիսկային սպորտաձևերին:
- 4) Դուք բացում եք այնքան վարկային հաշիվներ, որքան հնարավոր է:

87. Միջազգային պրակտիկայում ընթացիկ հաշվի օվերդրաֆտը.

- 1) Օգնում է կատարել գործարքներ, երբ Ձեր հաշվին չկա բավարար գումար:
- 2) Հասանելի է վճարային քարտի միջոցով:
- 3) Սովորաբար ունենում է սպասարկման վճար:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

88. Սպառողական ծախսերը, ավելի հավանական է, որ կբարձրանան, երբ.

- 1) Գործազրկության մակարդակը բարձր է:
- 2) Տոկոսադրույքները ցածր են:
- 3) Աճում են հարկերը:
- 4) Մարդիկ ավելացնում են խնայողական գումարները:

89. Բարդ է այն տոկոսը, որը.

- 1) Ստացվել է հարկերից ազատված ներդրումներից:
- 2) Նվազում է ժամանակի ընթացքում:
- 3) Չի արտացոլվում ամսական քաղվածքում:
- 4) Արդեն վաստակած տոկոսագումարը կապիտալացվում է մայր գումարին:

90. Եթե Դուք մեղավոր եք ավտովթարում, միջազգային պրակտիկայում մյուս վարորդի ֆիզիկական և գույքային վնասները ծածկվում են.

- 1) Տուժողի բժշկական ապահովագրությամբ:
- 2) Մեղավորի պատասխանատվության ապահովագրությամբ:
- 3) Մարմնական վնասվածքի պատասխանատվության ապահովագրությամբ:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

91. Սնանկ մարդկանց համար դժվար է.

- 1) Աշխատանք գտնելը:
- 2) Բնակարան վարձելը:
- 3) Ավտոմեքենա գնելը:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

92. Ֆիքսված տոկոսադրույքով հիպոտեկային վարկերը.

- 1) Ունենում են ավելի ցածր տոկոսադրույքներ, քան լողացող տոկոսադրույքով հիպոտեկային վարկերը:
- 2) Կցված են ֆիքսված եկամտով արժեթղթերին:
- 3) Ձեզ պաշտպանում են տոկոսադրույքների կտրուկ բարձրացումից:
- 4) Գործում են միայն վարկային կազմակերպություններում:

93. Ինչպե՞ս են խանութները գումար վաստակում՝ ինքնարժեքից ցածր գներով վաճառք կազմակերպելով.

- 1) Ամբողջ գույքը վաճառում են վնասով, որպեսզի խթանեն վաճառքը:
- 2) Առաջարկած գները ցածր են մրցակիցների առաջարկածից:
- 3) Որևէ ապրանք վաճառում են ինքնարժեքից ցածր գնով, որպեսզի Դուք այլ իրեր ևս գնեք:
- 4) Վաճառքը խրախուսելու նպատակով աշխատանքի են ընդունում կեղծ գնորդների:

94. Ինչպե՞ս է ավելի մեծ կանխավճարն ազդում տան հիպոտեկային վարկի վրա.
- 1) Նվազեցնում է փոխառության մեծությունը:
 - 2) Մեծացնում է հիպոտեկային գումարը:
 - 3) Նվազեցնում է վարկի «միավորները»:
 - 4) Ազդեցություն չունի հիպոտեկային գումարի վրա:
95. Որքա՞ն ժամանակ կպահանջվի 200 000 դրամ խնայելու համար, եթե մի կողմ դնեք Ձեր՝ ամիսը 100 000 կազմող աշխատավարձի 5%-ը.
- 1) 12 ամիս:
 - 2) 20 ամիս:
 - 3) 40 ամիս:
 - 4) 52 ամիս:
96. Ե՞րբ է պետք վճարային քարտ թողարկող կառույցին հայտնել վճարային քարտի գողացման մասին.
- 1) Անհապաղ:
 - 2) Աշխատանքային օրվա վերջում:
 - 3) Շաբաթվա վերջում:
 - 4) Ամսական քաղվածքը ստանալուց հետո:
97. Իդեալական դեպքում որքա՞ն գումար է հարկավոր խնայել արտակարգ իրավիճակների Ձեր ֆոնդում.
- 1) Մեկ շաբաթվա աշխատավարձ:
 - 2) Մեկ ամսվա աշխատավարձ:
 - 3) Երկու ամսվա վարձավճարը տալու համար բավարար գումար:
 - 4) Երեքից մինչև վեց ամսվա ծախսերը վճարելու համար բավարար գումար:
98. Եթե 30 000 դրամ արժողությամբ սպորտային կոշիկը վաճառվում է 30% զեղչով, ո՞րն է դրա վաճառքի գինը.
- 1) 20 000 դրամ:
 - 2) 21 000 դրամ:
 - 3) 25 000 դրամ:
 - 4) Ոչ մի տարբերակը ճիշտ չէ:

99. Եթե Դուք ուզում եք փոխել Ձեզ սպասարկող բանկը և դիմել մեկ այլ բանկի.

- 1) Բացեք նոր ընթացիկ հաշիվ նախքան հինը փակելը:
- 2) Նախ փակեք Ձեր հին հաշիվը, հետո բացեք նորը:
- 3) Պահպանեք երկու հաշիվները:
- 4) Նշվածներից ոչ մեկը:

100. Մեքենա ձեռք բերելու նպատակով կանխավճար կուտակելու լավագույն ճանապարհն է.

- 1) Սկսել կուտակել յուրաքանչյուր ամիս՝ խնայելով եկամտի 10%-ը:
- 2) Գումար վերցնել ծնողներից:
- 3) Դրամական կանխավճար ստանալ վարկային քարտից:
- 4) Ներդրում կատարել ֆոնդային շուկայում:

101. Եթե Ձեզ հարկավոր է գումարը դուրս բերել հաշվից կարճ ժամկետում, ապա լավագույն խնայողական տարբերակն է՝

- 1) Կենսաթոշակային հաշիվը:
- 2) Խնայողական հաշիվը:
- 3) Ավանդը:
- 4) Բաժնետոմսը:

102. Եթե Դուք օգտվում եք ոչ Ձեր քարտը թողարկող բանկի բանկոմատից, ապա.

- 1) Դուք չեք կարող գումար կանխիկացնել:
- 2) Դուք կարող եք դրամական միջոցներ փոխանցել Ձեր հաշիվների միջև:
- 3) Ձեզնից կարող է միջնորդավճար գանձվել:
- 4) Դուք բռնուսային միավորներ եք վաստակում:

103. Եթե տունն արժե 15 մլն դրամ, իսկ Ձեր հիպոտեկային վարկը կազմում է 8.5 մլն դրամ, որքա՞ն է Ձեր սեփական ներդրումը.

- 1) 5.5 մլն դրամ:
- 2) 6.5 մլն դրամ:
- 3) 7.5 մլն դրամ:
- 4) Դուք կապիտալ չունեք:

104. Եթե Ձեր եկամուտը տատանվում է ըստ ամիսների, միջին ամսական եկամուտը գնահատելու համար.
- 1) Դիմում եք Ձեր պետին:
 - 2) Նախորդ տարվա ընդհանուր եկամուտը բազմապատկում եք 12-ով:
 - 3) Նախորդ տարվա ընդհանուր եկամուտը բաժանում եք 12-ի:
 - 4) Նախորդ տարվա ընդհանուր եկամուտը բաժանում եք 52-ի:
105. 150 000 դրամի դիմաց հաշվեգրվող 5% և 7% տոկոսադրույքներով ավանդների տոկոսագումարների տարբերությունը մեկ տարի անց կլինի՝
- 1) 4000 դրամ:
 - 2) 3000 դրամ:
 - 3) 5000 դրամ:
 - 4) 10000 դրամ:
106. Վարկունակության գնահատման ժամանակ վարկատուն ուշադրություն է դարձնում.
- 1) Որքան ժամանակ է անձն ունեցել ընթացիկ հաշիվ:
 - 2) Ինչպես է անձը կառավարում ֆինանսական պարտավորությունները:
 - 3) Որքան ժամանակ է անձն ունեցել ավտոմեքենայի վարկ:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
107. Տարվա մեջ մեկ անգամ հաշվարկված և ավելացված տոկոսը _____ տարեկան կտրվածքով.
- 1) Մեծանում է:
 - 2) Կապիտալացվում է:
 - 3) Հավասար բաշխվում է:
 - 4) Էքստրապոլացվում (արտարկվում) է:
108. Ներդրումները, որոնք կանխիկի արագ փոխարկելը դժվար է, ունեն բարձր _____ դիսկ.
- 1) Գնաճի:
 - 2) Տնտեսական:
 - 3) Եկամտային:
 - 4) Իրացվելիության:

109. Այս ներդրումների շարքում ամենամեծ ռիսկայնություն ունի.
- 1) Պետական պարտատոմսը:
 - 2) Խնայողական պարտատոմսը:
 - 3) Կորպորատիվ բաժնետոմսը:
 - 4) Կորպորատիվ պարտատոմսը:
110. Տնտեսությունում ապրանքների և ծառայությունների գների շարունակական բարձրացումը կոչվում է.
- 1) Գնաճ:
 - 2) Արժևորում:
 - 3) Աշխատավարձի բարձրացում:
 - 4) Ծախսատարություն:
111. Կազմակերպության սովորական բաժնետոմսը հավաստում է.
- 1) Սեփականության իրավունք տվյալ կազմակերպության ակտիվների և եկամուտների որոշակի մասի նկատմամբ:
 - 2) Սեփականության իրավունք տվյալ կազմակերպության միայն եկամուտների նկատմամբ:
 - 3) Սեփականության իրավունք տվյալ կազմակերպության միայն երկարաժամկետ ակտիվների նկատմամբ:
 - 4) Սեփականության իրավունք տվյալ կազմակերպության տնօրենների խորհրդին պատկանող ակտիվների նկատմամբ:
112. Տարեկան պարզ տոկոսադրույքը.
- 1) Տարեկան պարբերականությամբ վճարվում է միայն հիմնական գումարի դիմաց:
 - 2) Վճարվում է ներդրումներից ստացվող հասույթի դիմաց:
 - 3) Վճարվում է սովորական տարեկան հաշվի դիմաց:
 - 4) Վճարվում է բաժնեմասերում ունեցած ներդրումների պորտֆելի դիմաց:
113. Վարձակալի և վարձատուի միջև պայմանագիրը կոչվում է.
- 1) Ավանդային պայմանագիր:
 - 2) Հիպոտեկային վարկի պայմանագիր:
 - 3) Վարձակալության պայմանագիր:
 - 4) Ակտ:

114. Ուսանողական վարկի և կրթական դրամաշնորհի տարբերությունն այն է, որ.
- 1) Վարկերն ավելի բարձր շահաբաժիններ են վճարում:
 - 2) Վարկերի համար համաստորագրող կողմի կարիք չկա:
 - 3) Վարկերը ենթակա են մարման:
 - 4) Դրամաշնորհները տրվում են դպրոցներից, իսկ վարկերը՝ կառավարությունից:
115. Տոկոսային ծախսերը նվազագույնի հասցնելու, իսկ այդ ընթացքում նաև մի շարք պարտքեր մարելու համար պետք է.
- 1) Առաջին հերթին վճարել ամենամեծ մնացորդով պարտավորությունը:
 - 2) Առաջին հերթին վճարել ամենահին պարտավորությունը:
 - 3) Առաջին հերթին վճարել ամենաբարձր տոկոսադրույքով պարտավորությունները:
 - 4) Նշվածներից ոչ մեկը:
116. Ապագա արժեքի (Future value) բանաձևն օգնում է Ձեզ հաշվարկել նաև.
- 1) Ֆոնդային ներդրումների ապագա արժեքը:
 - 2) Փողի շուկայի հաշիվների ապագա տոկոսադրույքը:
 - 3) Ձեր ներդրած գումարից ստացվող տոկոսագումարը:
 - 4) Ապագա գումարը, որ Դուք կարող եք խնայել Ձեր հարկերից:
117. Աշխատած ժամերի թիվը բազմապատկած ժամավճարով կոչվում է.
- 1) Տուն մտնող գումար:
 - 2) Զուտ վճար:
 - 3) Համախառն աշխատավարձ:
 - 4) Արտաժամյա վճարում:
118. Ֆոնդային բորսայում արժեթղթերի գները կարող են բարձրանալ և նվազել.
- 1) Մեկ օրում:
 - 2) Մեկ շաբաթում:
 - 3) Մեկ ժամում:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
119. 100 000 դրամից ստացված տոկոսագումարը 2 տարի հետո տարեկան 10% բարդ տոկոսադրույքով կազմում է.
- 1) 200 դրամ:
 - 2) 20 000 դրամ:
 - 3) 21 000 դրամ:
 - 4) 100 000 դրամ:

120. Ձեր գումարը տասը տարում կրկնապատկելու համար կպահանջվի ունենալ
— բարդ տոկոսադրույք.

- 1) 7.2%:
- 2) 0.172%:
- 3) 72%:
- 4) 0.1%:

121. Հասկանալու համար, թե որքան կպահանջվի, որպեսզի Ձեր
խնայողությունները կրկնապատկվեն, 72-ը պետք է բաժանել.

- 1) Մայր գումարին:
- 2) Շահաբաժնի գումարին:
- 3) Տոկոսադրույքին:
- 4) Խնայողական հաշվի մնացորդին:

122. Չապահովված վարկերը.

- 1) Անհատական վարկերի տեսակ են:
- 2) Վարկատուների համար ավելի ռիսկային են, քան ապահովված վարկերը:
- 3) Առավել հազվադեպ են դասակարգվում, քան ապահովված վարկերը:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

123. Ո՞րն է ֆինանսական կազմակերպության հետ ունեցած վեճը
կարգավորելու առաջին քայլը.

- 1) Դիմել ոստիկանություն:
- 2) Դիմել փաստաբանին:
- 3) Դիմել ֆինանսական համակարգի հաշտարարին:
- 4) Դիմել տվյալ ֆինանսական կազմակերպությանը:

124. Եթե երկրի արժույթն արժեզրկվում է, ապա տվյալ երկրի արտահանած
ապրանքների գինը ներմուծող երկրում.

- 1) Աճում է:
- 2) Նվազում է:
- 3) Մեծանում է ՀՆԱ-ին հակառակ համամասնությամբ:
- 4) Մնում է նույնը:

125. Ծնողների համար ե՞րբ է երեխայի ուսման հետ կապված խնայողություն սկսելու լավագույն ժամանակը.
- 1) Երեխայի ծնվելուց անմիջապես հետո:
 - 2) Երբ իրենց երեխան արդեն ավագ դպրոցի աշակերտ է:
 - 3) Երբ նրանց հիպոտեկային վարկն ամբողջովին վճարված է:
 - 4) Նշվածներից ոչ մեկը:
126. Երբ վկայակոչվում է «եկամուտ» հասկացությունը, ի՞նչ է նշանակում «համախառն» եզրույթը.
- 1) Նախքան հարկերի և այլ պարտադիր վճարների նվազեցումը:
 - 2) Հարկերը հանելուց հետո:
 - 3) Հետաձգված հարկեր:
 - 4) Նշվածներից ոչ մեկը:
127. Որո՞նք են կարևորագույն գործոնները հաճախորդի վարկունակությունը գնահատելիս.
- 1) Նրա վարկային պատմությունը և գործող վարկերը:
 - 2) Նրա վարկային պատմությունը և ունեցած եկամուտը:
 - 3) Վարկային հարցումների քանակը և վարկային չմարված պարտավորությունները:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
128. Ներդրումների պարագայում «երկարաժամկետ»-ը սովորաբար նշանակում է.
- 1) Մինչև 1 տարի:
 - 2) 1-3 տարի:
 - 3) 2-3 տարի:
 - 4) Ավելի քան 5 տարի:
129. Դուք հիպոտեկային վարկ եք ստանում.
- 1) Տան ձեռքբերման համար:
 - 2) Նոր վարկային քարտ ստանալու համար:
 - 3) Օգտագործած մեքենա ձեռք բերելու համար:
 - 4) Ձեր վարկունակությունը բարելավելու համար:

130. Ձեր զուտ եկամուտը.
- 1) Կարող է արտացոլված լինել Ձեր վարկային զեկույցում:
 - 2) Համախառն եկամուտն է՝ հանած Ձեր աշխատավարձից պահվող հարկերը և հարակից այլ պարտադիր վճարներ:
 - 3) Երևում է Ձեր վարկային քարտի ամսական քաղվածքի վրա:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
131. 100 000 դրամի տարեկան 4% պարզ տոկոսադրույքը հաշվարկելու համար պետք է կատարել այս գործողությունը.
- 1) $100\ 000 \times 0.04$:
 - 2) $100\ 000 \times 4$:
 - 3) $100\ 000 / 0.04$:
 - 4) Վերը նշվածներից ոչ մեկը:
132. Եթե մտադրվել եք վարկային քարտ ունենալ, ուրեմն խորհուրդ է տրվում.
- 1) Ընտրել տարեկան ցածր փաստացի տոկոսադրույքով տարբերակը:
 - 2) Գտնել քարտ՝ առանց տարեկան սպասարկման վճարի:
 - 3) Ընտրել ամենաբարձր վարկային սահմանաչափ առաջարկող քարտը:
 - 4) Մնացորդային գումարը տարաբաշխել մնացած բոլոր քարտերի վրա:
133. Խելամիտ խնայողության լավագույն տարբերակ կարող է լինել.
- 1) Շաբաթը 15 000 դրամ երաժշտական ներբեռնումների համար վճարելը:
 - 2) Ձեր եկամտի առնվազն 10%-ը խնայելը:
 - 3) Նոր տեսախաղի համար գումար կուտակելը:
 - 4) Շաբաթը մեկ նոր հանդերձանք գնելը:
134. Երբ ապրանքը գնում եք ապառիկ և դրա վճարումն իրականացնում եք ժամանակի ընթացքում, Դուք, ընդհանուր առմամբ.
- 1) Երկարաժամկետ հատվածում վճարում եք ավելի շատ:
 - 2) Երկարաժամկետ հատվածում վճարում եք ավելի քիչ:
 - 3) Վճարում եք այնքան, որքան տվյալ ապրանքի գինն է:
 - 4) Վճարում եք միայն մեծածախ գինը:
135. Ի՞նչը կնվազեցնի Ձեր պարտք/եկամուտ հարաբերակցությունը.
- 1) Ձեր եկամտի ավելացումը:
 - 2) Ձեր պարտքի կրճատումը:
 - 3) Պարտքը մարելու նպատակով վարկ վերցնելը:
 - 4) 1-ին և 2-րդ կետերը:

136. Խնայելու երկարաժամկետ նպատակի օրինակ է.
- 1) Ձմեռային նոր վերարկուի համար կուտակելը:
 - 2) Թոշակային տարիքի համար խնայելը:
 - 3) Մեքենայի կանխավճարի համար կուտակելը:
 - 4) 2-րդ և 3-րդ կետերը:
137. Բնակարան որոնելիս առաջին հերթին պետք է.
- 1) Մեքենայով շրջել՝ «Տրվում է վարձով» հայտարարություններ որոնելու նպատակով:
 - 2) Որոշել, թե որքան վարձ կարող եք Ձեզ թույլ տալ վճարել:
 - 3) Հեղինակավոր վարձակալական ընկերություն կամ վարձատու գտնել:
 - 4) Ապագա բնակարանի համար կահույք ձեռք բերել:
138. Ի՞նչ է նշանակում՝ Ձեր վարկի մարումը ժամկետանց է.
- 1) Դուք բաց եք թողել վճարումը կատարելու համար սահմանված վերջնաժամկետը:
 - 2) Ձեր վարկատուն Ձեզ թույլ է տալիս բաց թողնել այս ամսվա վճարումը:
 - 3) Դուք գերազանցել եք Ձեր վարկային սահմանաչափը:
 - 4) Վերը նշվածներից ոչ մեկը:
139. Ըստ 20-10 կանոնի՝
- 1) Եթե փոխառությամբ գումար եք վերցնում, դա չպետք է գերազանցի Ձեր տարեկան զուտ եկամտի 20%-ը:
 - 2) Ամսական վճարումները չպետք է գերազանցեն Ձեր ամսական զուտ եկամտի 10%-ը:
 - 3) Ավտովարկերն ընդգրկվում են հաշվարկում, իսկ հիպոտեկային վարկերը՝ ոչ:
 - 4) Վերը նշված բոլոր տարբերակները:
140. Ընդհանուր առմամբ, երբ Ձեր պարտք/եկամուտ հարաբերակցությունը _____ է կամ ավելի բարձր, սա նշանակում է, որ Ձեր պարտքային բեռը մոտ է առավելագույնին.
- 1) 5%:
 - 2) 10%:
 - 3) 20%:
 - 4) 15%:

141. Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը.

- 1) Կոչված է լուծելու ֆիզիկական անձանց և ֆինանսական կազմակերպությունների միջև ծագած գույքային վեճերը:
- 2) Կոչված է լուծելու քաղաքացիների միջև ծագած վեճերը:
- 3) Կոչված է լուծելու ֆիզիկական անձանց և ցանկացած կազմակերպության միջև ծագած ֆինանսական խնդիրը:
- 4) Վերը նշված բոլոր տարբերակները:

142. Պահանջը ենթակա է Հաշտարարի կողմից դիտարկման, եթե.

- 1) Պահանջի համար հիմք հանդիսացող գործողությունը տեղի է ունեցել 2008 թ. օգոստոսի 2-ից հետո:
- 2) Գույքային պահանջը պետական կառավարման մարմնի հետ է:
- 3) Հաճախորդը նախապես դիմել է դատարան:
- 4) Հաճախորդը դժգոհ է ֆինանսական կազմակերպության սպասարկումից:

143. Նշվածներից ո՞րը ֆինանսական կազմակերպություն չէ.

- 1) Կապի ծառայություն մատուցող ընկերություն:
- 2) Բանկ:
- 3) Վարկային կազմակերպություն:
- 4) Ապահովագրական ընկերություն:

144. Վճարային քարտերն ըստ պատրաստման տեխնոլոգիայի լինում են.

- 1) Մագնիսական:
- 2) Չիպային:
- 3) Հիբրիդային:
- 4) Ճիշտ են բոլոր պատասխանները:

145. Ո՞րն է տեղական քարտ.

- 1) ArCa:
- 2) Visa:
- 3) MasterCard:
- 4) American Express:

146. Ո՞ր կազմակերպության կողմից է Ձեր գումարը ենթակա վերադարձման Բանկի անվճարունակության դեպքում.

- 1) Ֆինանսների նախարարություն:
- 2) Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ:
- 3) Վերադարձման ենթակա չէ:
- 4) Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ:

147. Ո՞ր ֆինանսական կազմակերպությունից կարող եք վարկ վերցնել.

- 1) Բանկ:
- 2) Վարկային կազմակերպություն:
- 3) Գրավատուն:
- 4) Ճիշտ են բոլոր տարբերակները:

148. Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ցպահանջ ավանդն ունի համեմատաբար ցածր տոկոսադրույք:
- 2) Ժամկետային ավանդի տոկոսադրույքը բարձր է:
- 3) Ժամկետային ավանդը ժամկետից շուտ պահանջելու դեպքում բանկը, հնարավոր է, վճարի տոկոսագումարների մի մասը կամ ընդհանրապես չվճարի տոկոսագումարներ ավանդային պայմանագրով սահմանված կարգով:
- 4) Ավանդատուն իրավունք չունի պահանջել ժամկետային ավանդը պայմանագրում նշված ժամկետից շուտ:

149. Ո՞ր ֆինանսական կազմակերպությունը կարող է ավանդ ներգրավել.

- 1) Բանկ:
- 2) Ապահովագրական ընկերություն:
- 3) Գրավատուն:
- 4) Վարկային կազմակերպություն:

150. Հայաստանում պարտադիր է համարվում.

- 1) Առողջության ապահովագրություն:
- 2) ԿԱՍԿՈ:
- 3) ԱՊՊԱ:
- 4) Աջակցության ապահովագրություն:

151. ԱՊՊԱ պատահարի դեպքում անհրաժեշտ է 40 րոպեի ընթացքում զանգահարել ապահովագրական ընկերություն.

- 1) Ճիշտ է:
- 2) Սխալ է:

152. ՀՀ կենտրոնական բանկը հաստատություն է, որը ներգրավում է ավանդ և տրամադրում վարկ, ինչպես նաև մատուցում այլ ֆինանսական ծառայություններ:
- 1) Ճիշտ է:
 - 2) Սխալ է:
153. Տեղական (ArCa) քարտը կարող եք օգտագործել ՀՀ, ինչպես նաև ԵԱՏՄ երկրների (Ռուսաստան, Ղազախստան, Բելառուս) տարածքում:
- 1) Ճիշտ է:
 - 2) Սխալ է:
154. Ավանդի պարզ տոկոսը սկզբնական գումարի վրա ավելացող տոկոսն է:
- 1) Ճիշտ է:
 - 2) Սխալ է:
155. Բարդ տոկոսը սկզբնական գումարի, ինչպես նաև դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների հանրագումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսն է:
- 1) Ճիշտ է:
 - 2) Սխալ է:

Գլուխ 3. Օժանդակող նյութեր

3.1. Չափորոշչային պահանջներ

Ստորև ներկայացված են «Մաթեմատիկա» և «Հանրահաշիվ» առարկաներում ինտեգրվող ֆինանսական բովանդակության չափորոշչային պահանջները՝ ըստ կրթական աստիճանների:

2-4-րդ դասարաններ

Ֆինանսական բաղադրիչ

Փող. ՀՀ դրամ, գնումներ, անձնական բյուջե: Համեմատություններ, հաշվարկներ և գնումներ, արդյունավետ գնումներ: Մշտական և ոչ մշտական եկամուտներ ու ծախսեր, առաջնահերթությունների որոշում անձնական բյուջեի շրջանակում:

Ակնկալվող արդյունք

Կարողանա կատարել հաշվարկներ՝ օգտագործելով փող/դրամ: Հաշվի առնելով գնի վրա ազդող տարբեր գործոններ՝ կարողանա կատարել արդյունավետ գնումներ: Կարողանա կազմել և հաշվել իր անձնական բյուջեն:

Մաթեմատիկական բաղադրիչ

Բնական թիվ, թվերի համեմատումը, գործողություններ բնական թվերով: Թվաբանական գործողությունների հատկությունները: Ամբողջ և մասեր: Մասերի համեմատում, կոտորակներ: Աղյուսակներ:

5-6-րդ դասարաններ

Ֆինանսական բաղադրիչ

Աշխատանք և եկամուտ: Ընտանեկան բյուջե: Պարզ տոկոսներ: Վարձու աշխատանք և գործարարություն, ստացված եկամուտների բաշխում: Մշտական և ոչ մշտական եկամուտներ ու ծախսեր, առաջնահերթությունների որոշում ընտանեկան բյուջեի շրջանակում: Խնայողության և պարտքի դեպքում կիրառվող տոկոսադրույքներ: Ապրանքների և ծառայությունների գների վրա կիրառվող զեղչեր:

Ակնկալվող արդյունք

Գործողություններ կատարելու միջոցով կարողանա հաշվել ստացված եկամուտները: Կարողանա կազմել և հաշվել ընտանեկան բյուջեն: Կարողանա պարզ տոկոսը կիրառել խնայողության, պարտքի և գնումների համատեքստում:

Մաթեմատիկական բաղադրիչ

Բաժիններ, կոտորակներ, թվաբանական գործողություններ բնական թվերով և կոտորակներով: Տվյալների հավաքում, աղյուսակներ, դիագրամներ, գրաֆիկներ: Մեծությունների համեմատականություն: Տոկոսներ:

7-9-րդ դասարաններ

Ֆինանսական բաղադրիչ

Փողը տարբեր երկրներում: Բարդ տոկոսներ: Անձնական բյուջե, վերահսկողություն: Պարտքերի կառավարում, վարկեր: Դրամախաղ (վիճակախաղ), պատահույթի հավանականություն: Արժույթներ, փոխարժեք, փոխարժեքի փոփոխությունների դերը անձնական և ընտանեկան բյուջեի կառավարման գործում: Խնայողության և պարտքի դեպքում կիրառվող բարդ տոկոսադրույքներ: Կարճաժամկետ և երկարաժամկետ խնայողություններ: Եկամուտների, ծախսերի, դրամական մուտքերի և ելքերի վիճակագրական վերլուծություն: Բյուջեի վերահսկողություն: Վարկեր և դրանց վերաբերյալ հաշվարկներ: Անվանական և փաստացի տոկոսադրույքներ: Հավանականության դերը ֆինանսական որոշումներ կայացնելիս:

Ակնկալվող արդյունք

Կարողանա համեմատել տարբեր արժույթների փոխարժեքները ֆինանսական որոշումներ կայացնելու նպատակով: Կարողանա բարդ տոկոսը կիրառել խնայողություն կատարելու և պարտք վերցնելու դեպքերում: Վիճակագրական տվյալների օգտագործմամբ կարողանա կատարել բյուջեի վերաբերյալ հաշվարկներ: Կարողանա կատարել վարկերի հետ կապված հաշվարկներ, համեմատություններ և արդյունավետ որոշումների կայացում: Կարողանա կատարել պատահույթների հավանականության հաշվարկներ և գնահատում ֆինանսական որոշումներ կայացնելիս:

Մաթեմատիկական բաղադրիչ

Հաստատուն գումարով, տարբերությամբ, արտադրյալով և քանորդով համեմատականություններ: Կշռույթ: Ամբողջ ցուցիչով աստիճան: Աստիճանային աճ: Վիճակագրական տվյալների բնութագրերը՝ միջին, կշռված միջին, մոդա, միջնաթիվ: Թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաներ: Պատահույթ, պատահույթի հավանականություն:

10-11-րդ դասարաններ

Ֆինանսական բաղադրիչ

Հարկեր, եկամտից գանձվող վճարներ և պետությունից ստացվող եկամուտ (օրինակ՝ կենսաթոշակ, նպաստ): Առաջարկ-պահանջարկ, արդյունավետ գնում: Պարտքերի կառավարում, վարկեր: Երկարաժամկետ խնայողություններ, արժեթղթեր: Անձնական բյուջեի վրա ազդող ռիսկեր. գնաճ և փոխարժեք: Հարկեր, դրանց տեսակները: Եկամտից գանձվող այլ վճարներ: Պետության կողմից տրված եկամուտներ: Առաջարկ և պահանջարկ, դրանց վրա ազդող գործոններ: Հավասարակշիռ գին և արդյունավետ գնումներ: Վարկեր և դրանց վերաբերյալ հաշվարկներ: Պարտքերի վերաֆինանսավորում: Վարկունակություն և վարկային պատմություն: Բաժնետոմս և պարտատոմս: Կենսաթոշակային

համակարգ: Արդյունավետ ներդրումային որոշումների կայացում: Գնաճ և գնանկում, փոխարժեք, դրանց դերը անձնական ֆինանսների կառավարման գործում:

Ակնկալվող արդյունք

Կարողանա կատարել եկամտից գանձվող վճարների և պետությունից ստացվող եկամտի հետ կապված հաշվարկներ: Կարողանա որոշել ապրանքների և ծառայությունների գինը, կատարել արդյունավետ գնումներ: Հաշվարկներ կատարելու միջոցով կարողանա կայացնել պարտքերի կառավարման, խնայողությունների և ներդրումների հետ կապված արդյունավետ որոշումներ: Կարողանա գնահատել գնաճի և փոխարժեքի փոփոխության ազդեցությունը անձնական ֆինանսների վրա՝ կատարելով անհրաժեշտ հաշվարկներ:

Մաթեմատիկական բաղադրիչ

Հանրահաշվական արտահայտություններ: Բանաձևեր: Հավասարումներ և անհավասարումներ: Ֆունկցիա: Ֆունկցիայի հետազոտում, աստիճանային, ցուցչային և լոգարիթմական ֆունկցիաներ, հավասարումների և անհավասարումների համակարգեր: Վիճակագրության տարրեր:

3.2 Ֆինանսական տերմինների համառոտ բառարան

Ա

Ազատ դրամական միջոցներ – կուտակված գումար, որը չի ծախսվել և խնայվել է բնակչության կողմից:

Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմ – Արժույթի փոխարժեքի ձևավորումը առաջարկի և պահանջարկի հիման վրա:

Ակտիվ – անհատի, ձեռնարկության կամ պետության կողմից տիրապետվող ռեսուրս, որից ապագայում ակնկալվում է ստանալ հավելյալ օգուտ:

Անկանխիկ – փող, որը կատարում է նույն գործառույթները, սակայն տեսանելի կամ շոշափելի չէ:

Անհատ ներդրող – անձ, ով կատարում է ներդրումներ արժեթղթերում:

Անձնական բյուջե – անհատի եկամուտների և ծախսերի հաշվեկշիռն է: Դա մի կողմից՝ ցույց է տալիս անձի եկամտի գոյացման աղբյուրները, մյուս կողմից՝ դրա ծախսման ուղղությունները:

Անուղղակի հարկ – այն հարկատեսակներն են, որոնք սահմանվում են ապրանքների գների և ծառայությունների սակագների վճարման վրա՝ որպես հավելուրդ: Անուղղակի հարկերը կախված չեն եկամուտներից և ունեցվածքի արժեքից: Օրինակ՝ ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ:

Անվանական եկամուտ – ստացվող եկամտի դրամական արտահայտությունը, օրինակ՝ 100 000 դրամ աշխատավարձ:

Անվանական տոկոսադրույք (տարեկան) – վարկավորող կազմակերպության, օրինակ՝ բանկի, վարկային կազմակերպության կողմից հայտարարվող այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի դիմաց վճարվող տոկոսագումարները:

Ապահովագրական գումար – այն առավելագույն գումարն է (դրամական մեծությամբ), որի սահմաններում ապահովագրական ընկերությունը պարտավորվում է հատուցում վճարել պատահարի դեպքում:

Ապահովագրական պատահար – ապահովագրական պատահարն այն դեպքն է կամ իրադարձությունը, երբ որեւէ կերպ տուժում է, վնաս է պատճառվում, ազդեցության է ենթարկվում ապահովադիրը կամ շահառուն, որի արդյունքում կարող է առաջանալ ապահովագրական հատուցում տրամադրելու կարիք:

Ապահովագրական փոխհատուցում – ապահովագրական պատահարի արդյունքում կրած վնասի գումարային փոխհատուցումը:

Ապահովագրավճար – ապահովադրի կողմից ապահովագրողին վճարվող գումարն է ապահովագրական պայմանագրի համար: Ըստ էության՝ ապահովագրավճարը ապահովագրական պայմանագրի գինն է:

Ապահովագրող - ապահովագրական ընկերությունն է, որը «վաճառում է» ապահովագրական պայմանագրեր և կազմակերպում է ապահովագրության գործընթացը: Ըստ էության՝ ապահովագրողը Ձեզ վաճառում է «խոստում», որ ապագայում անկանխատեսելի վնասներ կրելու դեպքում կհատուցի դրանք:

Ապահովագրություն - ապագայի անկանխատեսելի հնարավոր վնասները ծածկելու միջոց է՝ փոքր և կանխատեսելի ծախսերի դիմաց:

Ապահովագրված անձ - այն անձն է, ում համար կնքվում է ապահովագրական պայմանագիրը, և ում հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումն է այդ պայմանագրի առարկան:

Ապահովագրիչ - ապահովագրական ընկերության հետ ապահովագրական պայմանագիր կնքող անձն է կամ կազմակերպությունը:

Ապահովություն (ներդրման համատեքստում) - ներդրումը չկորցնելու հավանականությունն է:

Ապրանք - նյութական իր, որը բավարարում է որոշակի կարիք կամ ցանկություն:

Առաջարկ - ապրանքների և ծառայությունների այն քանակը, որը արտադրողները ցանկանում և պատրաստ են արտադրել/վաճառել այդ գնով:

Առքի/վաճառքի փոխարժեք - արժույթի փոխանակմամբ զբաղվող ֆինանսական կազմակերպությունները հայտարարում են արժույթի առքի և վաճառքի տարբեր փոխարժեքներ, որոնք ներկայացված են իրենց տեսանկյունից: Այսինքն՝ եթե անձը ցանկանում է ձեռք բերել եվրո, պետք է հաշվի առնի եվրոյի վաճառքի փոխարժեքը: Վաճառքի փոխարժեքը միշտ ավելի մեծ է, քան առքի փոխարժեքը:

Ավանդ - գումար, որը դուք ներդնում եք բանկում, իսկ բանկը պարտավորվում է վերադարձնել ներդրված գումարը և պայմանագրով նախատեսված կարգով ու պայմաններով դրա դիմաց վճարել տոկոսներ:

Ավելցուկ - այն իրավիճակն է, երբ շուկայում ապրանքի/ծառայության քանակը ավելի շատ է, քան պահանջվում է:

Արժեթղթերի շուկա (բորսա) - ֆիզիկական կամ վիրտուալ տարածք, որտեղ բրոքերների, դիլերների և հավատարմագրային կառավարիչների միջոցով տեղի է ունենում արժեթղթերի և այլ ակտիվների (արժույթ, թանկարժեք մետաղներ, նավթ և այլն) առք և վաճառք:

Արժեթուղթ - արժեթուղթը, սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն դա ներկայացնելիս:

Արժեք - տվյալ ապրանքի կամ ծառայության օգտակարությունը՝ արտահայտված գնով:

Արժույթի առաջարկ - արժույթի այն քանակը, որը ցանկանում են և կարող են վաճառել:

Արժույթի պահանջարկ - արժույթի այն քանակը, որը ցանկանում են և կարող են գնել:

Արտադրողականություն – արտադրողականությունը ցույց է տալիս աշխատանքի արդյունավետությունը, այսինքն՝ սահմանված ժամանակի ընթացքում կատարված աշխատանքի ծավալը:

Արտարժույթ – այլ երկրի արժույթ:

Արտարժույթի փոխանակման կետ – ֆինանսական կազմակերպություն, որը ՀՀ ԿԲ-ի կողմից տրված լիցենզիայի համաձայն իրականացնում է արտարժույթի առք և վաճառք:

Արտոնյալ ժամանակահատված – վարկերի դեպքում տրամադրվող ժամանակահատված, որի ընթացքում տոկոսագումարներ չեն գանձվում:

Բ

Բաժնետոմս - արժեթուղթ, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) կողմից բաժնետիրական ընկերությունից շահաբաժին ստանալու և/կամ ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և դրա լուծարումից մաս ստանալու իրավունքը:

Բանկ – ֆինանսական կազմակերպություն, որը Կենտրոնական բանկի տված լիցենզիայի հիման վրա ներգրավում է ավանդներ և տեղաբաշխում է վարկեր, իրականացնում այլ գործառույթներ՝ քարտերի սպասարկում, դրամական փոխանցումներ, տարադրամի փոխանակում և այլն:

Բանկային հաշիվ – բանկում համապատասխան պայմանագրով հաճախորդի բացված հաշիվն է, որի միջոցով իրականացվում են գումարի մուտքագրումներ, փոխանցումներ, կանխիկացումներ և այլ ֆինանսական գործառնություններ:

Բանկային հաշվի քաղվածք – բանկային հաշվի մուտքերի և ելքերի վերաբերյալ մանրամասն տեղեկանք, որը տրամադրում է բանկը:

Բանկոմատ – սարք, որի միջոցով հնարավոր է գումար կանխիկացնել կամ կատարել այլ գործարքներ:

Բարտեր – առևտրի ձև, որը հիմնականում տեղի է ունենում ապրանքափոխանակությամբ, այսինքն՝ ապրանքի դիմաց վճարում կատարվում է մեկ այլ ապրանքի միջոցով:

Բիզնես վարկ - բիզնես վարկերը տրամադրվում են անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տնտեսական գործունեության իրականացման, այդ թվում նաև արտադրության կազմակերպման, առևտրի, ծառայությունների մատուցման, բիզնեսի ընդլայնման և զարգացման նպատակով:

Բյուջեի մուտք/ելք – անձնական կամ ընտանեկան բյուջե փաստացի մտնող/դուրս եկող գումարը:

Գ

Գին – այն գումարը, որը պետք է վճարել տվյալ ապրանքը կամ ծառայությունը ձեռք բերելու համար: Այսինքն՝ գինը երկու կողմերի միջև իրականացվող փոխանակման բաղադրիչն է, որով որոշվում է, թե գնորդը ինչ է տրամադրում վաճառողին՝ իր ցանկացած ապրանքը կամ ծառայությունը ձեռք բերելու համար:

Գյուղատնտեսական վարկ - տրամադրվում է անհատներին, անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց գյուղատնտեսական գործունեության իրականացման նպատակով:

Գնաճ (ինֆլյացիա) – ցույց է տալիս, թե ժամանակի որոշակի հատվածում, օրինակ՝ վերջին մեկ տարում, որքան են աճել (կամ նվազել) ապրանքների և ծառայությունների գները՝ ընդհանուր վերցրած, տոկոսային մեծությամբ:

Գնանկում (դեֆլյացիա) – ժամանակի որոշակի հատվածում, օրինակ՝ վերջին մեկ տարում, որքան են նվազել ապրանքների և ծառայությունների գները՝ ընդհանուր վերցրած, տոկոսային մեծությամբ:

Գործարարություն – գործարարությունը սեփական միջոցներով և սեփական ռիսկով որևէ գործունեությամբ զբաղվելն է՝ շահույթ ստանալու նպատակով: Այլ կերպ նաև անվանում են ձեռնարկատիրություն կամ բիզնեսով զբաղվել:

Գործարքային աշխատավարձ – աշխատավարձի վճարման այն ձևը, որի դեպքում աշխատավարձի չափը անմիջական կապ ունի կատարված աշխատանքի ծավալի հետ: Ենթադրենք՝ հացթուփը յուրաքանչյուր հացի համար վաստակում է 50 դրամ, եթե նա օրական թխի 500 հաց, ապա գործարքային աշխատավարձի չափը այդ օրվա համար կլինի 25000 դրամ:

Գրավ - միջոց, որով ապահովվում է գրավատուի կողմից գրավառուի նկատմամբ պարտավորությունների կատարումը:

Դ

Դիվերսիֆիկացիա - ռիսկերը զսպելու նպատակով ֆինանսական ծառայություններից օգտվելու տարբերակված մոտեցման կիրառում: Օրինակ՝ խնայողությունների ներդրում ավանդի, պարտատոմս գնելու ձևով, տանը և այլն:

Դրամախաղ - կազմակերպված խաղի տեսակ, որում նախատեսված է դրամական մրցանակ:

Դրամական փոխանցում (տրանսֆեր) – դրամական միջոցների փոխանցումը մեկ անձից մյուսին:

Դրամավարկային քաղաքականություն - կենտրոնական բանկերի կողմից վարվող քաղաքականություն, որի նպատակը, տնտեսությունում շրջանառվող փողի քանակը փոփոխելով, գների կայունության ապահովումն է:

Դրոշմանիշային վճար – եկամտից գանձվող պարտադիր վճարի տեսակ, օրինակ՝ ամսական աշխատավարձից պահվող 1000 դրամ գումարը՝ ուղղված Հինձառայողների ապահովագրության հիմնադրամին:

Ե

Եկամուտ – աշխատանքի կամ այլ գործունեության արդյունքում վաստակած գումար:

Եկամտաբերություն - ներդրման դիմաց ստացվող եկամուտն է՝ արտահայտված տոկոսով:

Եկամտային հարկ – հարկի տեսակ է, որը գանձվում է անհատի աշխատավարձից կամ այլ եկամուտներից:

Երաշխավոր - երաշխավորն այլ անձի փոխարեն պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում:

Երկարժամկետ ծախսեր – ծախսեր, որոնք պետք է կատարել մի քանի տարի հետո, սակայն կպահանջվի մեծ գումար, ուստի պետք է խնայել այսօրվանից սկսած:

Զ

Զեղչ – ապրանքի և/կամ ծառայության գնի վրա կիրառվող տոկոս, որը գնումը դարձնում է ավելի մատչելի:

Ը

Ընտանեկան բյուջե – ընտանիքի եկամուտների և ծախսերի համադրությունը մեկ միասնական տեսքով՝ որոշակի ժամանակահատվածի համար:

Թ

Թողարկող – արժեթուղթ թողարկող կազմակերպությունը:

Ի

Ինքնարժեք - ապրանքն արտադրելու կամ ծառայությունը մատուցելու համար կատարվող միջանկյալ ծախսերը. հումքի գնում, աշխատուժի ծախս, վարձակալական վճարներ և այլն:

Իրական եկամուտ – անվանական եկամտի գնողունակությունը, օրինակ՝ ինչ կարելի է գնել ստացված 100 000 դրամով: Իրական եկամուտը հաշվելու համար պետք է անվանական եկամուտը ճշգրտել՝ ըստ գնաճի:

Իրացվելիություն - ցույց է տալիս, թե ինչքան արագ կարելի է ակտիվը վերածել կանխիկ փողի: Օրինակ՝ ինչքան արագ ոսկու ձուլակտորը կարելի է վաճառել և ստանալ փող:

Խ

Խնայողություն - գումարի, ժամանակի կամ այլ ռեսուրսի տնտեսում:

Ծ

Ծախս – ապրանքների և/կամ ծառայությունների ձեռքբերման համար գումարի կամ այլ միջոցի (օրինակ՝ ժամանակ) տրամադրումը:

Ծառայություն – ոչ նյութական իր, որը բավարարում է որոշակի կարիք կամ ցանկություն:

Կ

Կանխիկ – փողը մետաղադրամների կամ թղթադրամների տեսքով, որը հնարավոր է տեսնել և շոշափել:

Կապիտալացում – ավանդի դեպքում որոշակի պարբերականությամբ ստացված տոկոսագումարի ավելացումը մայր գումարին: Կապիտալացման արդյունքում ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը կարող է փոխվել:

Կարիք – այն, առանց որի չեք կարող ապրել: Լավ օրինակ է սնունդը: Դրա բացակայության դեպքում անձը կտուժի կա՛մ ֆիզիկապես, կա՛մ հոգեպես, կա՛մ երկուսը միաժամանակ: Օրինակ՝ առողջ ապրելակերպ ապահովելու համար բավարար սնունդը կլինի կարիք, իսկ շատ ավելին, ինչը պարտադիր չէ բոլորի համար, կդիտվի արդեն որպես ցանկություն:

Կենսաթոշակային վճար – ամեն ամիս կենսաթոշակային ֆոնդ փոխանցվող գումար, որը նվազեցնում է տնօրինելի եկամուտը:

Կենսաթոշակային ֆոնդ - ներդրումային ֆոնդ է, որտեղ կուտակվում են կենսաթոշակային համակարգի մասնակիցների գումարները, և որի հիմնական նպատակը մարդկանց կենսաթոշակի ապահովումն է:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ - կենսաթոշակային հատկացումները կառավարող մասնագիտացված կառավարիչներ, ովքեր միավորում են կուտակված գումարները և կառավարում որպես մեկ միասնական պորտֆել՝ ի շահ ներդրողների:

Կենտրոնական բանկ - ֆինանսական համակարգը կարգավորող և վերահսկող կառույց:

Կուտակային կենսաթոշակային համակարգ - պարտադիր մասնակից են 1974 թ-ից հետո ծնված պետական ծառայողները, աշխատող անձինք (2018 թ. հուլիսից),

2014 թ-ից հետո առաջին անգամ աշխատանքի անցնողները, անհատ ձեռնարկատերեր, նոտարներ: Կամավոր կարող են միանալ բոլոր ցանկացողները:

Հ

Համախառն աշխատավարձ – գործատուի կողմից սահմանված պայմանագրային աշխատավարձի չափը, որը ներառում է նաև հարկերը և այլ պարտադիր վճարներ:

Հանրային բարիք – պետության կողմից տրամադրվող ապրանքներ և ծառայություններ, որոնց օգտագործումը մեկի կողմից չի սահմանափակում մեկ ուրիշի օգտագործումը, ինչպես նաև օգտագործման արդյունքում այն չի սպառվում, օրինակ՝ երկրի անվտանգություն, փողոցային լուսավորություն: Հանրային բարիքները ստեղծվում են պետական բյուջեից կատարված ծախսերի արդյունքում:

Հասանելիություն – խնայողությունները օգտագործելու հնարավորությունը: Որքան ավելի արագ և հեշտությամբ կարող են օգտագործել խնայողությունը/ներդրումը, այնքան դա ավելի հասանելի է:

Հասույթ - վաճառված ապրանքի/ծառայության գնի և քանակի արտադրյալ:

Հավասարակշիռ գին և քանակ – գնի և քանակի այն համադրությունը, որի դեպքում գնորդները պատրաստ են գնել, իսկ վաճառողները՝ վաճառել ապրանքը կամ ծառայությունը:

Հատուկ վարկավորման ծրագրեր – կառավարության աջակցությամբ ստեղծված արտոնյալ պայմաններով նպատակային վարկավորման ծրագրեր:

Հարկ – գումար, որը պարտադիր կարգով վճարում են քաղաքացիները և կազմակերպությունները՝ պետական ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

Հիպոտեկային վարկ - տրամադրվում է տուն ձեռք բերելու, վերանորոգելու կամ կառուցապատելու համար՝ գրավադրելով այդ տունը կամ, հողամասի կառուցապատման դեպքում՝ հողամասի կառուցապատման իրավունքը:

Հնարավորություն – որքան գումար ունեք, որը կարող եք ծախսել՝ հաշվի առնելով այլ ծախսեր:

Հրատապ ծախսեր – ծախսեր, որոնք ժամանակի ազդեցությամբ ցանկությունից վերածվում են կարիքի, օրինակ՝ ցանկալի է պարբերաբար հետևել առողջությանը, սակայն մարդիկ հակված չեն ծախսեր կատարել առողջության համար մինչև այն պահը, երբ դա դառնում է անհրաժեշտություն:

Մ

Մայր գումար - վարկով վերցրած գումարը՝ առանց տոկոսագումարների և այլ վճարների:

Մանրածախ գին – ապրանքի կամ ծառայության գինը մեկ անգամ կամ քիչ քանակով ձեռք բերելու դեպքում:

Մասնագիտացված միջնորդ կազմակերպություններ – այն կազմակերպություններն են, որոնք համապատասխան լիցենզիա ստանալուց հետո զբաղվում են որոշակի մասնագիտացված գործունեությամբ: Դրանք կարող են լինել ինչպես ֆինանսական կազմակերպությունները, այնպես էլ ֆինանսական շուկայում աջակից այլ կազմակերպություններ, օրինակ՝ բրոքերներ, դիլերներ և այլն:

Մարման տեսակ – վարկի մարման գրաֆիկի կառուցման ձևը, որը սահմանում է վարկի մայր գումարի և տոկոսագումարի վճարման հնարավոր մոտեցումները:

Մեծածախ գին – ապրանքի կամ ծառայության գինը ավելի մեծ քանակով կամ ավելի երկարաժամկետ համագործակցելու դեպքում:

Միջին շուկայական փոխարժեք – արտարժույթի շուկայում կատարված գործարքների արդյունքում ձևավորված փոխարժեք, որը հաշվարկվում է առքի և վաճառքի միջին կշռված ցուցանիշների հիման վրա:

Մշտական (հաստատուն) եկամուտ/ծախս – կայուն կերպով ստացվող եկամուտ, օրինակ՝ աշխատավարձ, կամ միշտ կատարվող ծախսեր, օրինակ՝ սնունդ: Բյուջեի տեսանկյունից հեշտ է պլանավորել:

Մուրհակ – խիստ սահմանված ձևի գրավոր պարտավորվածություն, որը նրա տիրոջը (մուրհակատիրոջը) անվիճելի իրավունք է տալիս ժամկետը լրանալուց հետո պարտապանից պահանջելու նշված դրամական գումարի վճարումը: Մուրհակը պետք է ունենա պարտադիր տարրեր (ռեկվիզիտներ), մուրհակի նշան՝ փաստաթղթի տեքստում «մուրհակ» անվանումը, անպայման հրաման կամ պարտավորվածություն որոշակի գումար վճարելու մասին, վճարողի և առաջին պահողի անվանումը, վճարման ժամկետն ու տեղը, ռեմիտենտի անվանումը, փաստաթուղթը կազմելու տեղն ու ժամկետը և մուրհակատուի ստորագրությունը:

Ն

Ներդնել – խնայողությունների միջոցով տարբեր ակտիվների ձեռքբերումը՝ լրացուցիչ եկամուտ ստանալու նպատակով:

Ներդրումային ֆոնդ – ֆինանսական կազմակերպություն է, որի նպատակն է ներդրողներից հավաքագրված միջոցները ներդնել արժեթղթերում և/կամ այլ ակտիվներում՝ եկամուտ ստանալու ակնկալիքով:

Ներդրումային ֆոնդի փայ - ներդրումային ֆոնդի թողարկած անվանական ներդրումային արժեթուղթ, որը հավաստում է իր տիրապետողի՝ տվյալ ֆոնդի ակտիվներում փայամասնակցության իրավունքը:

Շ

Շահաբաժին - շահույթի բաշխումը բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող բաժնետոմսերի քանակին համապատասխան:

Շահառուն - այն անձն է, ով իրավունք ունի ստանալու ապահովագրական հատուցում, եթե տեղի է ունեցել պայմանագրով նախատեսված դեպքը:

Շահույթ - տվյալ ժամանակահատվածում բիզնեսի ստացած հասույթի և կատարած ծախսերի տարբերությունն է: Անհատ ձեռներեցների և անհատների դեպքում հիմնականում օգտագործվում են «զուտ եկամուտ» կամ «տնօրինելի եկամուտ» եզրույթները:

Ո

Ոչ մշտական (փոփոխուն) եկամուտ/ծախս – ժամանակ առ ժամանակ ստացվող եկամուտ, օրինակ՝ նվիրատվություն, կամ երբեմն, առանց որևէ հստակ ժամանակացույցի կատարվող ծախսեր, օրինակ՝ ժամանց: Բյուջեի տեսանկյունից հեշտ չէ պլանավորել, ուստի անհրաժեշտ է ունենալ որոշակի խնայողություն:

Ոչ ֆորմալ խնայողություններ - խնայողություններ, որոնք պահվում են ֆինանսական կարգավորում և վերահսկողություն չունեցող ոչ ֆորմալ միջավայրում. օրինակ՝ տանը, հարևանի մոտ:

Ոչ ֆորմալ պարտք - պարտքեր, որոնք ձեռք են բերվում ֆինանսական կարգավորում և վերահսկողություն չունեցող ոչ ֆորմալ միջավայրում. օրինակ՝ հարևանից, ընկերոջից:

Ու

Ուղղակի հարկ – այն հարկատեսակներն են, որոնք գանձվում են պետության կողմից հարկատուի եկամուտներից և ունեցվածքից: Օրինակ՝ եկամտային հարկ, շահութահարկ:

Պ

Պակասուրդ (դեֆիցիտ) – այն իրավիճակն է, երբ շուկայում ապրանքի/ծառայության քանակն ավելի քիչ է, քան պահանջվում է:

Պահանջարկ - ապրանքների և ծառայությունների այն քանակը, որը գնորդները ցանկանում և պատրաստ են գնել այդ գնով:

Պարտապան - պարտքը վերցնողն է:

Պարտավորություն - ֆինանսական պարտականություն է, որը ենթադրում է ձեռք բերված ակտիվի դիմաց հետագայում գումարի, ապրանքների կամ այլ ակտիվի փոխանցում:

Պարտատեր - պարտքը տրամադրողն է:

Պարտատոմս - արժեթուղթ, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած անձից ստանալու պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք:

Պարտատոմսի անվանական արժեք - գումարն է, որը պարտատոմսը թողարկողը ստանում է որպես պարտքի «մայր գումար», և որը նա պարտավորվում է վճարել պարտատոմսի սեփականատիրոջը՝ պարտատոմսը մարելու կամ հետ գնելու պահին:

Պարտատոմսի եկամտաբերություն - պարտատոմսում ներդրված գումարի դիմաց ակնկալվող /կամ ստացված եկամուտն է: Դա հաճախ արտահայտվում պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների ստացմամբ:

$$\text{Պարտատոմսի ներկա արժեք} = \frac{\text{Արժեկտրոն1}}{(1+\text{ՊՄՄԵ})^1} + \frac{\text{Արժեկտրոն2}}{(1+\text{ՊՄՄԵ})^2} + \dots + \frac{\text{Արժեկտրոնn}}{(1+\text{ՊՄՄԵ})^n} + \frac{\text{ՊԱԱ}_n}{(1+\text{ՊՄՄԵ})^n}$$

ՊՄՄԵ – պարտատոմսի՝ մինչև մարումը եկամտաբերություն,

ՊԱԱ - պարտատոմսի անվանական արժեք,

n - պարտատոմսը ձեռք բերելուց ի վեր անցած տարիների քանակ:

Պարտք - հետագայում վերադարձնելու պայմանով մի կողմից մյուսին փոխանցվող որոշակի գումարն է:

Պարտքի վերաֆինանսավորում – այն հնարավորությունը, որը թույլ է տալիս մարել նախկին պարտքերը/վարկերը՝ նոր պարտք/վարկ վերցնելու միջոցով: Չափազանց կարևոր է, որ նոր պարտքի/վարկի պայմաններն էապես ավելի նպաստավոր լինեն, քան նախկին պարտքին/վարկինը:

Պետական բյուջե - կառավարության եկամուտներն ու ծախսերը ֆինանսական տարվա համար:

Ռ

Ռիսկ - մարդու կամքից անկախ գոյություն ունեցող փաստ, որը կապվում է տեղի ունեցող իրադարձության անորոշ հետևանքների, արդյունքների հետ:

Ռիսկայնություն - ռիսկի ի հայտ գալու հավանականությունը: Սովորաբար որքան ավելի բարձր է ներդրման եկամտաբերությունը, այնքան այն ավելի ռիսկային է:

Ս

Սուբսիդիա – պետության կողմից տրամադրվող աջակցություն արտադրողներին, կազմակերպություններին: Ֆինանսական ոլորտում սուբսիդիայի օրինակ կարող են լինել հատուկ վարկային ծրագրերը, որոնց դեպքում կառավարությունը վարկի տոկոսադրույքի որոշ մաս վճարում է սպառողի փոխարեն:

Սպառողական գների ինդեքս (ՍԳԻ) – Սպառողական զամբյուղում ներառված ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքը՝ կշռված տվյալ տարվա գներով:

Սպառողական զամբյուղ – ներառում է 452 (2017 թվականի տվյալներով) անուն ապրանք և ծառայություն, որը կառուցված է այնպես, որ հնարավորինս ճիշտ արտացոլի ՀՀ տնային տնտեսությունների (ընտանիքների) կողմից միջինում սպառվող ապրանքների և ծառայությունների ամբողջությունը:

Սպառողական վարկ – այն վարկերն են, որոնք տրամադրվում են ֆիզիկական անձ սպառողին՝ ապրանքներ ձեռք բերելու կամ այլ ծախսեր հոգալու համար: Սպառողական վարկերը տրամադրվում են միայն ՀՀ դրամով:

Սպասարկման վճարներ – ֆինանսական ծառայությունների հետ կապված լրացուցիչ վճարներ:

Վ

Վաճառող – արժեթուղթը թողարկող կազմակերպությունը կամ անհատը:

Վարկ – վարկը պայմանավորվածություն է բանկի, վարկային կազմակերպության կամ գրավատան և Ձեր միջև, որի համաձայն, այդ պահին ստանում եք դրամական միջոցներ/ապրանք/ծառայություն՝ հետագայում վճարելու նախապայմանով: Վարկի մայր գումարի հետ հիմնականում վճարում եք նաև տոկոսագումարներ (այսպես կոչված՝ տոկոս):

Վարկային պայմանագիր – պայմանագիր, որը մանրամասն սահմանում է տվյալ վարկի շրջանակում վարկի տրամադրման պայմանները, վարկատուի և վարկառուի իրավունքներն ու պարտականությունները:

Վարկային պատմություն – անձի վերցրած վարկերի և դրանց մարումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, որ մշակվում և պահվում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից: Այս տեղեկությունը հետագայում նոր վարկեր տրամադրելիս օգտագործվում է հաճախորդի մասին կարծիք կազմելու համար:

Վարկային ռեզիստր – սպառողների պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունների շտեմարան, որը հիմնականում օգտագործվում է հետազոտական նպատակներով:

Վարկառու – վարկը վերցնողն է:

Վարկատու – վարկը տրամադրողն է:

Վարկի ապահովվածություն – ցույց է տալիս, թե որքանով է տվյալ վարկի վերադարձելիությունը երաշխավորված: Որպես ապահովության միջոց կարող է լինել երաշխավորը, գրավը, եկամուտների վերաբերյալ տեղեկանքը և այլն:

Վարկի ժամկետ – վարկի ամբողջական մարման համար նախատեսված ժամկետը:

Վարկի մարման գրաֆիկ - այն ժամանակացույցը, որին պետք է հետևել՝ վարկը ժամանակին պատասխանատու ձևով վերադարձնելու համար:

Վարկունակություն - պոտենցիալ վարկառուի ունակությունն է՝ վարկը պատշաճ կերպով և ժամանակին մարելու:

Վերաֆինանսավորման տոկոսադրույք - տոկոսադրույք, որով Կենտրոնական բանկն առևտրային բանկերին տրամադրում է վարկեր:

Վիճակախաղ – կազմակերպված դրամախաղի տեսակ, որում մրցանակը տրվում է ըստ թվերի կամ խաղատոմսերի պատահական ընտրության:

Վճարային քարտ – ժամանակակից վճարային գործիք է, որը հնարավորություն է տալիս քարտատիրոջը առանց բանկ այցելելու տնօրինելու բանկային հաշվին առկա միջոցները՝ վճարել ապրանքների և ծառայությունների դիմաց, գումարներ փոխանցել այլ անձանց քարտերին (քարտային հաշիվներին), ինչպես նաև կանխիկացնել հաշվին առկա միջոցները (կամ դրանց մի մասը):

Վճարում - վճարումը ապրանքների, ծառայությունների, գումարի տրամադրումն է՝ այլ ապրանքներ, ծառայություններ ձեռք բերելու դիմաց:

S

Տարեկան տոկոսային եկամտաբերություն - ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը՝ ավանդատուի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարները կատարելու և ավանդից ստացված տոկոսագումարները ներդրված ավանդի մայր գումարին ավելացնելու արդյունքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույք - ցույց է տալիս վարկի իրական արժեքը՝ հաշվի առնելով տոկոսավճարների կատարման հաճախականությունը և վարկի հետ կապված բոլոր ծախսերը՝ տոկոսավճարները, ինչպես նաև վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր այլ ծախսերը: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե ինչ տոկոսադրույքով կտրամադրվեր վարկը, եթե տոկոսադրույքի հաշվարկման մեջ ներառվեին նաև վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները, ինչպես նաև հաշվի առնվեր տոկոսավճարների կատարման հաճախականությունը:

Տնօրինելի եկամուտ – եկամտի այն մասը, որը կարելի է օգտագործել սեփական հայեցողությամբ՝ հարկերի և այլ պարտադիր վճարների գանձումից հետո:

Տոկոսագումար - դրամական արտահայտությամբ այն գումարը, որը հավելյալ վճարվում է վարկի դիմաց կամ ստացվում է ավանդի դիմաց: Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի կամ ավանդի անվանական տոկոսադրույքի հիման վրա:

Տոկոսադրույք – ֆինանսական և տնտեսագիտական կատեգորիա, որը արտահայտում է փողի գինը:

Ց

Ցանկություն – այն, ինչը կցանկանայիք ունենալ: Կյանքը կարող է շարունակվել նաև առանց դրա, բայց լավ կլիներ, եթե լիներ: Որպես օրինակ կարող է լինել պաղպաղակը, կինո գնալը, ռեստորանում ճաշելը և այլն:

Ցանկություն և կարողություն – ցանկությունը արտահայտում է գնորդի կամ վաճառողի պատրաստակամությունը, իսկ կարողությունը՝ ֆինանսական հնարավորությունը:

Փ

Փոխարժեք – այլ երկրի արժույթի գինը՝ արտահայտված տվյալ երկրի արժույթով:

Փոխարժեքի ռիսկ – փոխարժեքի տատանումների արդյունքում վնասի կամ օգուտի հավանականությունը:

Փոխարինիչ – ապրանքների այն տեսակները, որոնք կարելի է օգտագործել միմյանց փոխարինելով, օրինակ՝ կոնֆետ և խմորեղեն:

Փոխլրացնող – ապրանքների այն տեսակները, որոնք կարելի է օգտագործել միմյանց հետ միասին մեկը մյուսին լրացնելով, օրինակ՝ սուրճ և խմորեղեն:

Փող – ակտիվի տեսակ, սովորաբար՝ արժույթ, որ կարող է փոխանակվել ապրանքների և ծառայությունների հետ՝ հանդես գալով որպես վճարման միջոց:

Փողի պաշտպանական հատկանիշներ – մետաղադրամի կամ թղթադրամի այն առանձնահատկությունները, որոնք հնարավոր չէ կեղծել:

Ք

Քարտային հաշիվ – ընթացիկ բանկային հաշվի տեսակ է, որին կցված է վճարային քարտ: Քարտային հաշվի միջոցով կարելի է իրականացնել բոլոր տեսակի ընթացիկ ֆինանսական գործառնություններն այնպես, ինչպես ընթացիկ հաշվի միջոցով, սակայն ոչ թե բանկին համապատասխան վճարման հանձնարարականներ տալով, այլ օգտագործելով Ձեր քարտը:

Օ

Օգտակարություն – ապրանքի կամ ծառայության՝ կարիքը կամ ցանկությունը բավարարելու կարողության չափը:

Ֆ

Ֆինանսական զեղծարարություններ – լայն հանրությանն ուղղված գործողություններ են, որոնց նպատակն է հափշտակել գումար անձնական տվյալներ կորզելու միջոցով:

Ֆինանսական խարդախություններ - տվյալ անձին ուղղված գործողություններ են՝ նրան ֆինանսապես վնասելու, գումար կորզելու նպատակով:

Ֆինանսական կազմակերպություն – կազմակերպություններ, որոնք ԿԲ-ի կողմից համապատասխան լիցենզիա ստանալուց հետո կարող են զբաղվել ֆինանսական գործունեությամբ: Ֆինանսական կազմակերպություններ են բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, դրամական փոխանցումներով զբաղվող ընկերությունները, ներդրումային և կենսաթոշակային հիմնադրամներ և այլն:

Ֆինանսական շուկա – շուկայի այն տեսակն է, որն ապահովում է ֆինանսական տարբեր ակտիվների առքը և վաճառքը: Գոյություն ունեն ֆինանսական շուկայի տարբեր տեսակներ, ինչպես օրինակ՝ արժեթղթերի շուկա, դրամական միջոցների շուկա և այլն:

Ֆորմալ խնայողություններ - այն խնայողություններն են, որոնք պահվում են ֆինանսական ֆորմալ հաստատություններում: Վերջիններս Կենտրոնական բանկի կողմից համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող, կարգավորվող և վերահսկվող ֆինանսական կազմակերպություններն են:

Ֆորմալ պարտք - այն պարտքերն են, որոնք ձեռք են բերվում ֆինանսական ֆորմալ հաստատություններից՝ բանկերից, վարկային կազմակերպություններից: Վերջիններս Կենտրոնական բանկի կողմից համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող, կարգավորվող և վերահսկվող ֆինանսական կազմակերպություններն են:

3.3. Ուսումնամեթոդական լրացուցիչ գրականություն և տեղեկատվության աղբյուրներ

1. ՖԿԱՌ մշակման և իրագործման հանձնաժողով (2014). Հայաստանի Հանրապետության ֆինանսական կրթման ազգային ռազմավարություն. Երևան.
2. ՖԿԱՌ մշակման և իրագործման հանձնաժողով (2014). Ֆինանսական կոմպետենցիաների մատրիցը մեծահասակների համար. Երևան.
3. ՖԿԱՌ մշակման և իրագործման հանձնաժողով (2015). Ֆինանսական կոմպետենցիաների մատրից սովորողների համար. Երևան.
4. ՖԿԱՌ մշակման և իրագործման հանձնաժողով (2015). Առարկաների բաշխումը ըստ տարիքային խմբերի. Երևան.
5. ՀՀ ԿԳՆ (2009), Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր. հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագիր. Երևան. Տիգրան Մեծ.
6. ՀՀ ԿԳՆ (2007), Մաթեմատիկա. հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր. Երևան.
7. Հակոբյան Ա.Է., Ղազարյան Շ.Մ., Փոքրիկյան Ա.Լ. (2017). Ֆինանսական կրթության մաթեմատիկայի և հանրահաշվի առարկայական չափորոշիչ և ծրագիր. ՀՀ կենտրոնական բանկ. Երևան.
8. Հակոբյան Ա.Է., Ոսկանյան Վ.Կ. (2013). Մաթեմատիկայի ուսուցիչների մասնագիտական զարգացման, վերապատրաստման դասընթացների ծրագիր և ուղեցույց. Երևան. Տիգրան Մեծ.
9. Միքայելյան Օ.Ս., Միքայելյան Ա.Օ. (2010). Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան. Ուսուցչի ձեռնարկ. Երևան. ԿԱԻ.
10. Վարդանյան Շ. (2016). Խմբակային հետազոտություն «Վարկեր» թեմայով. Մաթեմատիկական դպրոցում, թիվ 3 (106). Երևան.
11. Մկրտչյան Ս. և ուրիշներ (2014-2016). Մաթեմատիկա 2-4. դասագիրք հանրակրթական դպրոցի համար. Երևան. Զանգակ.

12. Նահապետյան Բ., Աբրահամյան Ա. (2014-2015). Մաթեմատիկա 5-6. դասագիրք հանրակրթական դպրոցի համար. Երևան. Մարմար.
13. Միքայելյան Հ. (2006-2008). Հանրահաշիվ 7-9. դասագիրք հանրակրթական դպրոցի համար. Երևան. Էդիթ Պրինտ.
14. Գևորգյան Գ., Սահակյան Ա. (2017). Հանրահաշիվ և մաթանալիզի տարրեր 10-12. դասագիրք հանրակրթական դպրոցի համար. Երևան, Էդիթ Պրինտ.
15. ՀՀ կենտրոնական բանկ, «Ֆինանսներ բոլորի համար» կայքի «Ես ուսուցիչ եմ» բաժին՝ <https://abcfinance.am/ifme/teacher.html>, 10/05/2022

Պատասխաններ և ցուցումներ

Գլուխ 1. Ֆինանսական իրադրություններին վերաբերող մաթեմատիկական խնդիրներ

5-6-րդ դասարանների համար

1. 39 000 դրամ, 58 000 դրամ: 2. ա) 8 000 դրամ, բ) կա՛մ 8 000 դրամ, կա՛մ 12 000 դրամ, կա՛մ 14 000 դրամ: 3. 3 000 և 7 000 դրամ կամ 4 000 և 6 000 դրամ, կամ 5 000-ական դրամ, կամ 6 000 և 4 000 դրամ: 4. 2 հատ 200 և 4 հատ 100 դրամանոցներ կամ 3 հատ 200, 1 հատ 100 և 2 հատ 50 դրամանոցներ: 5. ա) Անի՝ 120 դրամ, Աննա՝ 620 դրամ, բ) 200 դրամանոց: 6. 3 000 դրամանոց թղթադրամ չկա, մանրը կազմել է 1 870 դրամ: 7. 50 դրամ՝ 10 հատ, 100 դրամ՝ 5 հատ: 8. 2 000-անոց՝ 11 հատ, 5 000-անոց՝ 5 հատ: 9. 7 և 3: 10. 32; 16; 16: 11. 9 000 դրամ: 12. 8 ձուկ: 13. 8 ձուկ: 14. 800 դրամ, 1 200 դրամ, 1 600 դրամ: 15. 1-ինը՝ 200 դրամ, 2-րդը՝ 100 դրամ, 3-րդ և 4-րդը՝ 300-ական դրամ, 5-րդը չպետք է ավելացնի: 16. ա) 2 300 դրամ, բ) 3 000 դրամ: 17. 1 500 դրամ: 3/8 մասը: 18. ա) ≈ 1 կգ 600 գ, բ) 3 116 դրամ, գ) 1 784 դրամ: 19. Վարորդը 200 դրամ ավելի էր նշել: 20. 16 300 դրամ: 21. 140 դրամ: 22. ա) 6 600 դրամ, բ) 1 980 դրամ, 2 530 դրամ, 2 090 դրամ: 23. ա) 465 դրամ և 600 դրամ, 5 115 դրամ < 5 500 դրամ, բ) Հավասար են, գ) Առաջինի հաշիվն ավելի շատ է: 24. ա) Առաջին, բ) Երկրորդ: 25. 680 դրամ: 26. 59 500 դրամ, այո: 27. Այո: 28. 600 լիտր: 29. ա) 49 440 դրամ: 30. 27 000 դրամ, 33 000 դրամ: 31. 60 000 դրամ: 32. 550 դրամ: 33. ա) 3 տարի, բ) 9 ամիս: 34. 20 օր: 35. Այո, 500 դրամ: 36. 26 դույլ: 37. 402 դրամ: 38. 48 600 դրամ: 39. ա) 2 հատ, բ) 80 հատ: 40. 4 000 դրամ: 41. 0.288: 42. Չկա տարբերություն: 43. ա) 112 500 դրամ: բ) Ցանկալի է, որ պարտքերի համար կատարվող ամսական վճարները չգերազանցեն ամսական եկամտի 30%-ը: 44. Նույնն են: 45. 479 200 դրամ: 46. 50 000 դրամ: 47. 1 600 դրամ: 48. 50 000 դրամ: 49. 6 500 դրամ: 50. 800 000 դրամ: 51. Ամենաշատը՝ 8 հատ: 52. 52.5%; 24%; 21%; 2.5%: 53. Արամի: 54. 28 800 դրամ, $\approx 52.4\%$: 55. 8 910 դրամ: 56. 300 դրամ: 57. ա) 230-ական դրամ, բ) 13 500 դրամ: 58. 3 800 դրամ: 59. ա) Առաջին, բ) Երկրորդ, 1000 դրամով: 60. «Ա» տարբերակ: *Ցուցում. ըստ ընդհանուր գումարի՝ Ա տարբերակը ավելի շատ է, բայց ամսականը չի գերազանցում 30%-ը: Բ տարբերակը՝ հակառակը, քննարկել, թե որ իրավիճակներում տարբերակներից որն է ձեռնտու: 61. 1) ա) 10 750 դրամ, բ) 8 900 դրամ, գ) 6 125 դրամ, 2) ա) 18 000 դրամ, բ) 22 500 դրամ, գ) 36 000 դրամ, 3) 129 000 < 133 500 < 147 000: 62. 160 դրամ: 63. Խնայողության: *Ցուցում. իրականում խնայողությունը ծախս չէ, սակայն կարևոր է դրան՝ որպես ծախսի վերաբերվել և եկամուտը ստանալուն պես դնել մի կողմ: 64. 45 600 դրամ: 65. Խնայողություն կատարելը պետք է ներկայացնել «Ծախս» հատվածում, քանի որ գումարը առանձնացնում ենք հետագա ծախսերի համար: 66. ա) Երկրորդ խանութի

առաջարկը ավելի ձեռնտու է: Ոչ: ք) Այո, ըստ ՀՀ Սպառողների շահերի պաշտպանության մասին օրենքի՝ օրենքներին կամ այլ պաշտոնական ցուցանիշներին կատարված հղումները 2019 թ. դրությամբ են, բովանդակության կիրառման պահին հնարավոր են փոփոխություններ, որոնք, ցանկալի է, պարզել նախօրոք: **67.** 1-ին տարբերակը՝ 10 500 դրամով: **68.** Հուլիս: **69.** 32%: **70.** ա) 1/9, բ) 1 000 դրամ:

7-9-րդ դասարանների համար

71. 55: **72.** $700 \times 7.7 = 5\ 390$: **73.** Էժանացավ: **74.** 373: **75.** 247 120 դրամ: **76.** 750 դրամ: **77.** 65.05 ուրվի: **78.** ա) 1,2b դրամ, բ) 0,8b դրամ, գ) $(0.8b-3a)/184$ լարի, դ) 312 000 դրամ, 208 000 դրամ, ≈ 755 լարի **79.** $\approx 2\ 847$ դրամ: **80.** 20 400 դրամ: **81.** ա) 647 802 դրամ, բ) $b \cdot (2+0.01a)$: **82.** Աննան: **83.** 80 անգամ: **84.** ա) 5 250 դրամ, բ) $y=1750x$, որտեղ y-ը տոկոսագումարի մեծությունն է, իսկ x-ը՝ ամիսների քանակը: **85.** 1 650 դրամ: **86.** 150 000 դրամ, 125 000 դրամ, 135 000 դրամ, 130 720 դրամ: **87.** 214 500 դրամ: **88.** 11%: **89.** 10%: **90.** 1000-անոց՝ 4, 2000-անոց՝ 8, 5000 – անոց՝ 2: **91.** 37 000 դրամ: **92.** 15: **93.** ա) 21 600 դրամ, բ) $\approx 16.67\%$: **94.** 11% : **95.** 37 500 դրամ: **96.** 27 000 դրամ **97.** Տոկոսագումարներն ըստ տարիների չեն կապիտալացվում, պետք է կիրառել պարզ տոկոսը՝ 590 000 դրամ: **98.** 218 000 դրամ և $\approx 211\ 732$ դրամ: **99.** $\approx 2\ 040\ 301$ դրամ: **100.** 80: **101.** 7 տարի: **102.** 4 տարի: **103.** ա) 360 000 դրամ, 480 000 դրամ, 400 000 դրամ, բ) 119 500 դրամ: **104.** 6 տարով: **105.** $\approx 350\ 000$ դրամ: **106.** Այո: **107.** Աննային՝ 21 500 դրամ, Լիլիթին՝ 38 500 դրամ: **108.** 30%: **109.** Ամսական 49 000 դրամ և 50 400 դրամ: **110.** 2 285 լարի, 35 լարի: **111.** ա) 150 000 դրամ, բ) $\approx 1\ 333\ 334$ դրամ: **112.** ա) 75 000 դրամ, բ) 178 125 դրամ, գ) $y=0,05x$, $y=0,11875x$: **113.** 15%-ով, 27,75%-ով: **114.** Վարագրատի: *Ցուցում. օգտվելով այն բանից, որ 1-ից տարբեր դրական թվի և դրա հակադարձի գումարը մեծ է 2-ից, նախ ցույց տալ, որ եթե երկու տարբեր դրական թվերի գումարը 2 է, ապա դրանց հակադարձների գումարը մեծ է 2-ից: **115.** 13 կգ: **116.** 4 կգ –ով: **117.** 115 000 դրամ: **118.** 2 140 000 դրամ: **119.** Վ. Տերյանինը՝ ≈ 380 մմ², ≈ 69 մմ, Վ. Համբարձումյանինը՝ ≈ 1256 մմ², ≈ 125.6 մմ: **120.** ա) Այո, գ) Այո: **121.** ա) Այո, բ) այո: **122.** ա) 4500, բ) 9: **123.** 8 օրում: **124.** Երկրորդ: **125.** Հայկը, 5 000 դրամով: **126.** 240 դրամի, 20 լիտր: **127.** ա) 6,4 լիտր, 3 500 դրամ, բ) Կպակասեր ≈ 320 դրամով: **128.** 25%: **129.** 108 000 դրամ: **130.** Ցուցում. թիվը որոնել $(\overline{xyzzzyx})$ տեսքով: **131.** $a_2=25500$, $a_3=38250$, $q=1.5$: **132.** $\approx 250\ 000$ դրամ: **133.** ա) 1 520 250 դրամ, բ) ≈ 76 դրամ տարբերություն կտա: **134.** ա) Տարեկան 16 470 դրամ, բ) 1 350 դրամով: **135.** $\approx 247\ 831$ դրամ: Ցուցում. նախ որոշել մեկ ամսվա տոկոսադրույքի չափը: **136.** Արաքսը, 11 000 դրամով ավելի: **137.** ա) 21 շաբթ, բ) 20 դասարան, գ) 50 000 դրամ: **138.** Մանեն, 0,009% -ով: **139.** Մանեն, 30 864 դրամով շատ: **140.** 149 240 դրար: **141.** Վարկի տոկոսադրույք = ավանդի տոկոսադրույք + հավելավճար, ավանդի տոկոսադրույքը երբեք չի կարող գերազանցել վարկինը: **142.** ա) 4 200 դրամ, բ) 124 200 դրամ, գ) 9 000 դրամ: **143.**

13.5 %: **144.** Պակասեց, 3 125 դրամով: **145.** 2/3: **146.** 50 000 դրամ: **147.** Ծախսած գումարները հավասար են, հարևանուհու գնածի գանգվածը շատ է: Ցուցում. օգտվել 114 խնդրի ցուցումից՝ դիտարկելով նույնպիսի անհավասարություն երեք թվերի համար, որոնց գումարը 3 է: **148.** Չփոխվեց. վիճակահանությունները միմյանցից անկախ են: **149.** ա) ≈ 0.016 , բ) ≈ 0.017 , գ) ≈ 0.009 : **150.** ա) «5-ը 36-ից», բ) «6-ը 29-ից»:

10-11-րդ դասարանների համար

151. 108 000 դրամից ոչ ավելի: **152.** ա) 4 500 դրամ, բ) 9 000 դրամ: **153.** Նվազեց, 5.5%-ով: **154.** Ամսական 126 000 –ից 149 600 դրամ: **155.** 432 000 դրամ: **156.** 205 դոլար: **157.** 10 001: **158.** 181.8 մլն դրամ: **159.** 205 000 դրամ: **160.** 900 դրամը ավելի քան բավարար է: **161.** Արամ՝ $\approx 2\ 693$ դրամով, Կարեն՝ $\approx 2\ 353$ դրամով: **162.** Ամսական 400 000 դրամ: **163.** ա) 4 500 դրամ, բ) 61 200 դրամ: **164.** ա) 8 625 դրամ, բ) 328 500 դրամ: **165.** 160 750 դրամ: **166.** ա) 290 800 դրամ, բ) 208 238 դրամ: **167.** ա) 151 700 դրամ, բ) 34 976 դրամ, գ) 115 724 դրամ: **168.** Թռչակից եկամտային հարկ չի գանձվում: **169.** Հոնորարից գանձվում է 10% հարկ: **170.** 203.3 դրամ: **171.** ա) 32 500 դրամ, բ) 27 500 դրամ: **172.** 480 000 դրամ, 1 000 դրամ: **173.** ա) 720 000 դրամ, բ) 9 720 դրամ, գ) 45 000 դրամ, դ) 774 720 դրամ: **174.** 46 350 դրամ: **175.** 200 000-1500ք դրամ: **176.** Մանեի: **177.** $\approx 74.99\%$: **178.** 2 850 եվրո: **179.** Ավանդը վերցնի ժամկետից շուտ, 23 000 դրամով: **180.** 1,6 միլիոն, 10%: **181.** ա) 9 660 դրամ, բ) 23 000 դրամ: **182.** 555 480 դրամ, 5 580 դրամ: **183.** 16 սարքավորում: **184.** 100 000 դրամ: **185.** Ներմուծվածը՝ 15.2 % -ով: **186.** ա) 5 000 դրամ, բ) 15 000 դրամ: **187.** ա) 2 750 դրամ, բ) 1 375 000 դրամ, գ) 775 000 դրամ, դ) $\approx 452\ 083$ դրամ և $\approx 322\ 917$ դրամ: **188.** ա) 600 դրամ, բ) 50, գ) 340 000 դրամ, դ) 40 000 դրամով: **189.** ա) 5 000 դրամ, բ) $\approx 4\ 290$ դրամ, գ) $\approx 5\ 143$ դրամ: **190.** ա) 6 000 դրամ, բ) 42: **191.** ա) 120, բ) 55 000 դրամ: **192.** ա) 850, 96 000 դրամ, բ) 76 000 դրամ: **193.** դեֆիցիտ, 150 միավորի: **194.** 150 000 դրամ: **195.** 810 000 դրամ, 324 000 դրամ, 135 000 դրամ: **196.** 46 420 դրամ: **197.** 42 000 դրամ: **198.** 2019 թ.: **199.** 9 900 դրամ: **200.** 4 300 դրամ: **201.** Այս տարի՝ 4 000 դրամով, հաջորդ տարի՝ 5 200 դրամով: **202.** ա) 2%; բ) 42 840 դրամ: **203.** 72 900 դրամ, 81 000 դրամ՝ առանց 10%-ի: **204.** 111 000 դրամ: **205.** 1 331 000 դրամ, 10%: **206.** 13 120 դրամ: **207.** 369 000 դրամ: **208.** «Ա» կազմակերպության: **209.** ա) 130 000 դոլար, բ) 4.25%: **210.** 432 000 դրամ: **211.** ա) 60 000, բ) 101.25 դոլարով, գ) 1) 15%, 2) $\approx 16\%$: **212.** 30 միլիոն և 15 միլիոն դրամ: **213.** 2 876 000 դրամից ոչ պակաս: **214.** գ) 2 464 200 դրամ: **215.** 5% կապիտալացումով: **216.** 1400 սպառող: **217.** 4 000 դրամ, 6 միավորի դեպքում: **218.** $f(x) = 15x - 15.4$: **219.** 90 աստիճան: Ցուցում. օգտվել երկու ուղիղների՝ անկյունային գործակցից կախված, ուղղահայացության պայմանից: **220.** 37 000 միավոր կաթնաշոռ, 74 000 միավոր թթվասեր: Ցուցում. փոփոխականներից մեկը արտահայտել մյուսով և օգտվել ածանցյալից: **221.** ա) 5 անգամ, բ) 55%: **222.** ա) 651/23%; բ) 253197/651%; գ) 6 596 դրամ, դ) 1.33425;

1.33424: **223.** Ցուցում. փակագծերում նշված դրույքաչափերը ներկայացված են գործող օրենսդրությամբ, սակայն դրանք կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում: **224.** 10%: **225.** Մեծ է դուլարով ներդրածի դեպքում, $\approx 0.25\%$ -ով: **226.** ա) $\approx 6\ 068$ դրամ, բ) $\approx 3\ 861$ դրամ, դուլարի փոխարժեքի բարձրացումը նույնպես բերեց լրացուցիչ եկամուտ, գ) 8, դ) ≈ 474 դրամ: **227.** ա) ≈ 417 դուլար, 479,55 դուլար, բ) $\approx 1\ 439$ դրամ: **228.** 3 600 000 դրամ, 5 400 000 դրամ: **229.** 4 մլն, 4 մլն, 3 մլն 200 հազար, 4 մլն 800 հազար: **230.** Ավելացավ, $\approx 1,28\%$ -ով: **231.** Կարենը՝ 3 488 000 դրամ, Արմենը՝ 16 000 000 դրամ: **232.** Ավելացավ, $\approx 8,28\%$ -ով: **233.** 14 400 դրամ: **234.** $\approx 177\ 400$ դրամ: **235.** Աշոտին՝ 7 միլիոն դրամ, Էմիլին՝ 7 միլիոն դրամ, Ռաֆայելին՝ 4 528 000 դրամ: **236.** ա) 189 000 դրամ, բ) 196 560 դրամ, գ) $\approx 212\ 600$ դրամ: **237.** Չի փոխվել: **238.** Պարենային՝ 50%, ոչ պարենային՝ 25 %, ծառայություններ՝ 25%: **239.** 0.04: **240.** $\approx 4,8\%$: **241.** 11.3%: **242.** դրամային՝ 4,5%, դուլարային՝ 4.94%: **243.** 1 440 000 դրամ: **244.** 2 520 դուլար, 2 652 դուլար, 2 880 դուլար: **245.** 473 232 ռուբլի: **246.** Վահագն՝ 546 000 դրամ, Արամայիս՝ 182 000 դրամ: **247.** 4 167 դրամ: **248.** 1 400 դուլար՝ Նարինեն, 700 դուլար՝ Արմենը: **249.** 63: **250.** 7 500 դրամ, 40/3%: **251.** 1034.48 դուլարից ավելի, 1 035 դուլար: **252.** 1 710 000 դրամ, ա) ոչ, բ) 2;4;6;8;10;12;14;16 ԹՊ է: գ) 1;3;5;7;9;11;13 ԹՊ է: **253.** ա-կ, բ – կ, գ-ճ: **254.** ա-ճ, բ-ճ: **255.** ա-ճ, բ-կ, գ-ճ, դ-կ: **256.** ա) Այո, բ) Ոչ: **257.** ա) Գոյություն ունի վարկ, որը շահութաբեր է վարկառուի համար, բ) Գոյություն ունի դեպք, երբ եկամուտները չեն գերազանցում ծախսը: **258.** ա) դրական, բ) անկանոն: **259.** ա-ճ, բ-կ, գ-ճ: **260.** Հակադարձ՝ եթե շուկայում առկա է պակասուրդ, ապա արտադրողները պատրաստ են վաճառել ավելի քիչ, քան սպառողները պատրաստ են գնել: Հակադիր՝ եթե արտադրողները պատրաստ են վաճառել ավելի շատ, քան սպառողները պատրաստ են գնել, ապա շուկայում պակասուրդ առկա չէ: **263.** ա) Գոյություն ունի վճարային քարտի PIN կոդ, որը 4 նիշ չունի, բ) Ցանկացած CVV կոդ բաղկացած է 3 նիշից: **264.** ա: **265.** ա) Ոչ, բ) Ոչ: **266.** 2020 թվականի դեկտեմբեր ամսվա տվյալներով դրամային ավանդների համար 16 մլն դրամ է, արտարժույթային ավանդների համար՝ 7 մլն դրամ: **267.** ա) Ալցիզային, բ) Ապահովագրական ռիսկ, գ) Եկամուտները, դ) Դիվերսիֆիկացիա, ե) Դիվերսիֆիկացիա, նվազեցնելու: **268.** ա) Հակաօրինակ՝ կենսաթոշակը, բ) Հակաօրինակ՝ հիպոտեկային վարկը: **269.** 4: **270.** Բանկերում հնարավոր է նաև POS տերմինալների միջոցով կանխիկացնել: **272.** 1-ինին՝ 250 մ², 2-րդին՝ 160 մ², 2 624 000 դրամ: Ցուցում. նշանակում կատարել յուրաքանչյուրի երեսպատած մակերեսի համար, դրանք արտահայտել պահանջվող համապատասխան ժամանակներով և լուծել ժամանակների գումարի նվազագույն լինելու խնդիր: **273.** 1-ինին՝ 20, 2-րդին՝ 45: 125 000 դրամ: Ցուցում. օգտվել նախորդ խնդրի լուծման մեթոդից: **274.** 170 500 դրամ, 1 007 500 դրամ: **275.** Արևիկը: Ցուցում. օգտվել 147 խնդրի ցուցումից՝ դիտարկելով նույնպիսի անհավասարություն n հատ թվերի համար, որոնց գումարը n է: **276.** ա) $q=24-0.01p$, բ) 1 300 դրամ, 11: **277.** 1 250 դրամ, 2 500 դրամ և 3 750 դրամ: Ցուցում. գնված ապրանքների արժեքը A խանութում, նախքան զեղչ կատարելը, նշանակել 1000n+k, որտեղ n-ը 1000-ների քանակն է, և $k < 1000$, իսկ B խանութում այդ արժեքը կլինի 1,04 անգամ փոքր: **278.**

ա) 15 մլն, բ) 8 մլն 750 հազար գ) 6 մլն 250 հազար դ) 0,00016, ե) $\approx 0,01$ 279. ≈ 0.0804 280. 2700 դրամ: Ցուցում. օգտվել հակադիր պատահույթի հավանականությունը հաշվելու մեթոդից: **281.** 7 900 դրամ: Ցուցում. օգտվել հակադիր պատահույթի հավանականությունը հաշվելու մեթոդից:

Լրացուցիչ առաջադրանքներ տարբեր դասարանների համար

282. 45 դրամանոց՝ 8, 60 դրամանոց՝ 4, 50 դրամ: **284.** 12 ամիս: **285.** $10\rho + 20\rho$: **286.** 400 000 դրամ, 300 000 դրամ: **287.** 10%: **288.** 60%: **289.** 20%: **290.** 6.25%:
ա) 13 333 դրամով, բ) 12 000 դրամով: **291.** ամսական 92 800 դրամ: **292.** 0.64% - ով իջավ: **293.** 4%-ով աճեց: **294.** 10 000 000 դրամ՝ «Ա» բանկ, 1 000 000 դրամ՝ «Բ» բանկ: **295.** Բանկից: **296.** 155 000 դրամ: **297.** 8 օր: **298.** 15 տարի հետո: **299.** 7 ամիս: **300.** կիլոգրամը՝ 3400 դրամ: **301.** «Ա» խանութում 1 դրամով թանկ է: **302.** 7, 2 150 դրամ: **303.** A ընկերությունը, 10 800 դրամ: **304.** Այո, 310 դրամ: **305.** 93 000 դրամ: **306.** 1 980 դրամ, 180 դրամով ավելացավ ծախսը: **307.** 2 տարի 6 ամիս: **308.** 1 429.65 դրամ: **309.** 121 600 դրամ; 118 810 դրամ, 1-ին տարբերակ: **310.** ա) բարդ; բ) պարզ: **311.** 1 տ՝ 5 800 000 դրամ, 2 տ՝ 10 380 000 դրամ: **312.** Շահույթ՝ 0 դրամ, վնասը կազմում է 1 500 դրամ: **313.** 12%: **314.** 34 560 000 դրամ: **315.** 20%: **316.** Շահեց, մոտ 23 դոլարի չափով: **317.** 120 000 դրամ: **318.** 25 000 դրամ: **319.** 30 օր: **320.** Ո՛չ, չի՛ կարող: **321.** 822 000 դրամ, 1 488 000 դրամ: **322.** 26 620 դրամ: **323.** 50, 50, 50, 50, 100, 200, 500 կամ 10, 20, 20, 50, 200, 200, 500: **324.** 99 000 դրամ կամ 198 000 դրամ, կամ 297 000 դրամ: **325.** ա) 5 040; բ) 4 960: **326.** 2-րդ տարբերակը: **327.** 18 հոգի: **328.** տանձ և խնձոր՝ 7 անգամ, սալոր՝ 14 անգամ: **329.** 300 դրամ, 300 դրամ, 800 դրամ: **330.** 30 000 դրամ, 70 000 դրամ, 110 000 դրամ, 150 000 դրամ, 190 000 դրամ: **331.** 0.0075; 0.00025: **332.** 1 ժամ: **333.** Երկրաչափական պրոգրեսիա է, $q = 1 + p/100$:

Գլուխ 2. Ֆինանսական կոմպերենցիաների զարգացման և ստուգման առաջադրանքներ

2.1. Քննարկումների, գործնական և հետազոտական աշխատանքների առաջադրանքներ

340. ա) 4 523 դրամ, բ) Պատրաստել տանը՝ 1 668 դրամ մեկ բաժինը: **341.** ա) 8 100 դրամ, 7 000 դրամ, 3 000 դրամ, բ) 584 000 դրամ: **343.** 1-բ; 2-դ; 3-ե; 4-գ; 5-ա: **345.** բ) Այո, գ) Ծախսը ավելացավ 15 600 դրամով: **346.** 415 000 դրամ: **347.** ա) 104 000 դրամ; բ) Բոլորը՝ փոքրով: **348.** ա) Նույնն է, բ) B: **351.** 40 000 դրամ: **353.** ա) 26 415 դրամ, բ)≈10%: **354.** 50 դրամ: **356.** Պարտքը գերազանցում է եկամտի 30 տոկոսը: **360.** 11 250 դրամ: **363.** 0.4: **364.** Սուպերմարկետից: **369.** 196: **370.** ա) 490; բ) 75; գ) 100; դ) 72: **373.** ≈36 283 դրամ; **375.** բ) 1-ին տարբերակ՝ 1-գ; 2-դ; 3-բ; 4-դ, 2-րդ տարբերակ՝ 1-բ; 2-ա; 3-դ; 4-գ: **376.** 116 500 դրամ; 3 տարով: **377.** 1 220 000 դրամ; 1 210 000 դրամ; պարզ %-ով: **378.** 10 000 000 դրամ: **382.** ա)≈0.08, բ) ≈0,14, գ) ≈0.1 383. 10 000 դրամ, 4 000 դրամ, 6 000 դրամ, 8 000 դրամ: **385.** ա) 27 000 դրամ և 26 568 դրամ: **386.** բ) 1 512 000 դրամ: **387.** բ) 81 900 դրամ: **389.** 4 440 դրամ: **393.** 120 130.5 դրամ: **394.** 129 502,9 դրամ; 129 790 դրամ: **395.** 1 962 դրամ: **396.** 295 500 դրամ; 174 000 դրամ; 55 500 դրամ; ոչ, չի կարող: **400.** 230 400 դրամ պարտք: **401.** 225 եվրո: **408.** 20%-ով կպակասի: **409.** 0 \$: **410.** 80 \$-ով Սեմը խնայեց: **411.** Դիկը խնայեց 80 \$: **412.** 700 \$, 1 000 \$, 1 500 \$, 2 500 \$: **414.** 8.3%; 44.4%; 33.3%, 5.6%: **415.** 8 000 դրամով: **418.** 2 700 դրամ, 1 800 դրամ: **420.** 182 000 դրամ, 180 000 դրամ: **422.** 97 875 դրամ; 106 500 դրամ: **431.** Այո, քանի որ սպառողական վարկը ժամկետից շուտ մարելու դեպքում բանկը իրավունք չունի որևէ տուգանք պահանջելու: **432.** Ոչ, քանի որ դեպքը տեղի է ունեցել 2008 թ. առաջ, իսկ պահանջը ենթակա է քննության Հաշտարարի կողմից, եթե դրա համար հիմք հանդիսացող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008 թ. օգոստոսի 2-ից հետո: **433.** Ոչ, քանի որ գույքային վեճը ֆիզիկական անձանց միջև է: **434.** Ո՛չ, Գրասենյակը միջնորդավորված գործունեություն չի իրականացնում, և չկա խախտում ֆինանսական կազմակերպության կողմից:

2.2. Ֆինանսական կոմպերենցիաների ստուգման հարցեր

1. 1: **2.** 1: **3.** 3: **4.** 2: **5.** 4: **6.** 2: **7.** 2: **8.** 2: **9.** 1: **10.** 1: **11.** 4: **12.** 1: **13.** 4: **14.** 4: **15.** 1: **16.** 3: **17.** 3: **18.** 4: **19.** 4: **20.** 4: **21.** 4: **22.** 4: **23.** 1: **24.** 1: **25.** 4: **26.** 2: **27.** 1: **28.** 2: **29.** 2: **30.** 4: **31.** 2: **32.** 3: **33.** 3: **34.** 2: **35.** 4: **36.** 1: **37.** 2: **38.** 1: **39.** 4: **40.** 3: **41.** 2: **42.** 4: **43.** 4: **44.** 3: **45.** 2: **46.** 2: **47.** 2: **48.** 2: **49.** 2: **50.** 2: **51.** 3: **52.** 1: **53.** 2: **54.** 3: **55.** 1: **56.** 2: **57.** 1: **58.** 1: **59.** 2: **60.** 1: **61.** 2: **62.** 1: **63.** 4: **64.** 2: **65.** 4: **66.** 3: **67.** 3: **68.** 4:

**69. 4: 70. 3: 71. 3: 72. 1: 73. 3: 74. 4: 75. 2: 76. 4: 77. 2: 78. 3: 79. 4: 80. 1: 81. 3:
82. 4: 83. 3: 84. 2: 85. 4: 86. 2: 87. 4: 88. 2: 89. 4: 90. 4: 91. 4: 92. 3: 93. 3: 94.
1: 95. 3: 96. 1: 97. 4: 98. 2: 99. 1: 100. 1: 101. 2: 102. 3: 103. 2: 104. 3: 105. 2: 106.
2: 107. 2: 108. 4: 109. 3: 110. 1: 111. 1: 112. 1: 113. 3: 114. 3: 115. 3: 116. 3: 117. 3: 118.
4: 119. 3: 120. 1: 121. 3: 122. 2: 123. 4: 124. 2: 125. 1: 126. 1: 127. 4: 128. 4: 129. 1:
130. 2: 131. 1: 132. 1: 133. 2: 134. 1: 135. 4: 136. 4: 137. 2: 138. 1: 139. 4: 140. 3: 141.
1: 142. 1: 143. 1: 144. 4: 145. 1: 146. 2: 147. 4: 148. 4: 149. 1: 150. 3: 151. 1: 152. 2:
153. 1: 154. 1: 155. 1:**

Հակոբյան Սարիբեկ, Փոքրիկյան Արթուր, Ղազարյան Շուշանիկ,
Ղազարյան Նարե, Խաչանյան Ալվարդ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Ֆինանսական կրթություն և մաթեմատիկա»
առարկայի ուսուցիչների և աշակերտների համար

Շապիկը և էջադրումը S. Խզմայանի

Ստորագրված է տպագրության 22.07.2022 թ.: Չափսը՝ 70 x 100 1/16:

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:

12.25 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 1650:

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկ

Երևան, 0010, Վ. Սարգսյան 6

www.cba.am

www.abcfinance.am

Տպագրված է «Տպարան.ԷՅԷՄ» ՍՊԸ տպարանում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԱՎՈՐՑԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՅՍԱՐԿԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱՆ ԱԲՎԻ

Սիրելի՛ ուսուցիչ,

Այստեղ ներկայացված են «Ֆինանսական կրթության 10 պատվիրանները».

1. Մենք բոլորս առնչվում ենք ֆինանսական աշխարհի հետ, ուրեմն լինենք նաև **ֆինանսապե՛ս առողջ**:
2. Փողը նպատակ չէ, **պետք չէ փողը ֆետիշացնել**: Փողը գործիք է, որի դերը, սակայն, **չպետք է թերագնահատել**:
3. Ֆինանսական որոշումներում **չկան բացարձակ ճշմարտություններ**, ամեն ինչ կախված է անձից և իրավիճակից:
4. Ֆինանսական **աշխարհն ամեն օր զարգանում է**, և կարևոր է շարունակաբար թարմացնել գիտելիքը, ծանոթանալ նոր գործիքներին, իրավիճակներին:
5. Դպրոցում ֆինանսական կրթությունը ներառված է **2-րդից 11-րդ դասարաններում**: Այդուհանդերձ այն պետք է ունենա շարունակական բնույթ ողջ կյանքի ընթացքում:
6. «**Ես և շրջակա աշխարհը**», «**Մաթեմատիկա**», «**Հանրահաշիվ**», «**Հասարակագիտություն**». այս առարկաները ֆինանսական կրթության առումով փոխլրացնում են միմյանց և ապահովում գիտելիքի սիներգիկ զարգացում: Այդ պատճառով էական է առարկայական ուսուցիչների համագործակցությունը:
7. Ֆինանսները սիրում են ուսուցման **ակտիվ և աշակերտակենտրոն մեթոդներ**. Խաղեր, խմբային, նախագծային և հետազոտական աշխատանքներ:
8. Ֆինանսական կրթությունն օգտակար է ոչ միայն սովորողների համար, այլ նաև նրանց **ընտանիքների և հենց Ձեզ համար**:
9. **Ինտեգրում** նշանակում է **հավասարություն** առարկայական և ֆինանսական կրթական նպատակների միջև:
10. Ֆինանսական գիտելիքը և հմտությունները պետք է փոխանցել կաթիլ-կաթիլ՝ **պարզից անցնելով բարդին**: Պետք է տրամադրել սովորողի տարիքին համապատասխան տեղեկատվություն:

Ավելին իմանալու համար կարող եք այցելել **www.abcfinance.am**: